



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

24712

8

5-46



11 MAY 2005

12 OCT 2009

ԵՂԻՍԱԲԵԹ

56-46 պ.

~~356~~

742

ԿԱԶՄԱՐԱՅ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՎԵՊ ՄԸ

ՉԱՓԱՀԱՄԻՑ ՀԱՄԱՐ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Հ. Ե. Գ.

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՈՒՅԷՆ



ՎԻԷՆՆԱ

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՏՊԱՐԱՆԸ

1858. ՌՅԷ.

Memorandum
1858 P.

150

05 . 0 . . 2013

211

UR



3311
40

Յ Ա Ն Կ

ԳԼ. Ա. Եղիսաբեթին ծնողքը:	1
ԳԼ. Բ. Եղիսաբեթին տղայութիւնը:	5
ԳԼ. Գ. Թուրինգիայի ու Հէսսէնի իշխանական գեր- դաստանը: Կ	18
ԳԼ. Գ. Յուդարկաւորութիւն ու պսակ մի եւ նոյն օրը: Բ	25
ԳԼ. Ե. Լուգովիկոս իշխանը:	29
ԳԼ. Զ. Բեշթի մէջ կոչումները:	39
ԳԼ. Է. Հրաժեշտ եւ ընդունելութիւն:	51
ԳԼ. Ը. Տնական երջանկութիւն:	65
ԳԼ. Թ. Տնական երջանկութեան խռովարար կիներ:	70
ԳԼ. Ժ. Մեծ տրամնութիւն:	81
ԳԼ. ԺԱ. Խաչակիրք:	87
ԳԼ. ԺԲ. Տրամնութեան ու վշտաց մէջ ուրախութիւն:	98
ԳԼ. ԺԳ. Օդրանդոյի նաւահանգիստ մտնելը:	108
ԳԼ. ԺԴ. Յոյս եւ ուրախութիւն:	117
ԳԼ. ԺԵ. Անգթութիւն, սոսկում ու մեծ սուգ:	122
ԳԼ. ԺԶ. Դժբախտներուն փախուստը:	131
ԳԼ. ԺԷ. Անապատական մը:	140

ԳԼ. ԺԸ. Ճշմարիտ ուրախութիւն:	151
ԳԼ. ԺԹ. Կուսանաց վանքը:	161
ԳԼ. Ի. Ուրախութիւն ու ցնծութիւն բոլոր երկրին մէջ:	168
ԳԼ. ԻԱ. Ողորմած քոյրերը:	177
ԳԼ. ԻԲ. Եղիսաբեթին մահը:	1



տուածային օրհնութեամբ, դարձի հզօր սքանչե-
լիքը կատարուեցաւ: Աւետարանին լոյսը՝ երկնաւոր
ճառագայթներովը պատերազմասէրներուն կարծր
սրտերը ջերմացուց ու բորբոքեց, ու զիրենք զար-
մանալի զօրութեամբ մը քաղցր ու սուրբ զգած-
մանց ընդունակ ըրաւ:

Ամիջապէս դարձին երջանիկ հետեւութիւն-
ներն ամէն կողմ երեւցան: Խումբ խումբ թողու-
ցին նորագարձ աւազակները վայրենութեան դա-
տարները, զէնքերնին վար թողուցին եւ զանոնք
արօրի ու բրչի հետ փոխեցին, եւ իրենք զիրենք
երկրագործութեան տուին: Ոմանք ալ դաղթաւ
գերմանացի ընտանիքներու հետ բարեկամութիւն
խառնելով, անոնցմէ տեսակ տեսակ շահաւէտ
արհեստներ ու ձեռագործներ կը սորվէին: Ամէն
նորագարձները մէյմէկ նոր մարդիկ եղած էին
ու սկսան ալ նոր եւ աղէկ կեանք մը վարել:
Ինքնակամ իրենք զիրենք կառավարութեան կար-
գի ու օրինաց տակ ձգեցին. իրենց բարեպաշտ
քահանաները կը սիրէին եւ իբրեւ բարձրագոյն
կարգի մարդիկ կը մեծարէին: Աարգաւորութիւնն
ու բարոյականութիւնը, խաղաղութիւնն եւ աշ-
խատասիրութիւնն իրենց կենացը կանոններն էին:
Շուտ մը սկսան ի գործ դնել ամէն տեսակ ա-
ռաքինութիւններ, որոնք յառաջագոյն իրենց սր-
տին բոլորովին օտար էին, եւ յաւիտեանս ալ
օտար կը մնային, թէ որ քրիստոնէութեան աս-
տուածային զօրութիւնն իրենց սիրտը չփոխեր:

Արբ որ ալ Հունգարիայի բնակչաց մեծ մասը
քրիստոնեայ էր, նոյն ատենն Անգրէաս Բ. իր
հօրը մահուրնէ ետեւ, իբրեւ անոր յաջորդ
գահ ելաւ: Բոլոր գաւառին մէջ հասարակաց ու-
րախութիւն եղաւ. ինչու որ Անգրէասայ վրան էր
բոլոր ժողովրդեան յոյսը: Արդէն իբրեւ թագա-
ժառանգ՝ ամենուն սիրոյ ու յարգութեան առար-
կան եղած էր: Ինք չէ թէ մինակ ժողովրդեան

սիրելին, հապա նաեւ իր ծերունի ու հիւանդոտ
 հօրն աչաց բիւն էր: Տէրութիւնն այսպիսի ժա-
 մանակ մը գլուխ ու սիրտ ունեցող թագաւորի
 մը հարկաւորութիւն ունէր, հայր ու միանգամայն
 տէր ըլլալու այնպիսի աղգի մը, որն որ քրիստո-
 նէութեամբ ալ իր դաժան ու խիստ նկարագիրը
 դեռ բոլորովին թող տուած չէր: Եւ իրօք ալ
 ժողովրդեան ակնկալութիւնը պարապ չէլաւ, վասն
 զի Անդրէաս ժողովրդեան բաղձացած ու թագա-
 ւորութեան արժանի մարդ էր: Ինք չէ թէ մի-
 նակ իմաստուն ու քաջ, այլ նաեւ արգար եւ
 առաքինի էր, եւ մինակ ժողովրդեան բարիքը կը
 բաղձար: Արդարութեամբ ու բարեպաշտութեամբ
 թագաւորեց, եւ քրիստոնէական եկեղեցւոյն զօ-
 րաւոր պաշտպանն էր: Քրիստոնէական կրօնը կը
 սիրէր, եկեղեցականները կը յարգէր, մոլութիւնը
 խստիւ կը պատժէր եւ առաքինութեան արդիւն-
 քն առատ կը վարձատրէր: Ժողովուրդը զինքն
 իբրեւ հայր բովանդակ գաւառին կը սիրէր, եւ
 իբրեւ իշխան ու տէր կը մեծարէր եւ իրմէ կը
 վախնար: Բայց ուրիշ ամէն բարի ու մեծարոյ
 մարդկանց պէս, ինքն ալ երկրին նախարարաց,
 կոմսերու եւ իշխաններու մէջ շատ թշնամի նա-
 խանձոտներ ունէր: Զիրենք՝ հայրենեաց բարւոյն
 վախճանու վաստրկելու համար, պէտք էր քանի
 մը զոհեր ընել: Ամէն կողմ իր համբաւը կը տա-
 րածուէր, ու քանի մը իշխաններ կը բաղձային
 Հունգարիայի հզօր եւ առաքինի թագաւորը ի-
 րենց փեսայ ունենալ: Գերմանիայի բոլոր իշ-
 խանները մեծ յուսոյ մէջ էին, բաց ի Պերգօլտ
 Բ. Պաւլիէրայի Անտէքսի աշխարհակոմսէն, որն
 որ այսպիսի բարձր պատուոյ մը հասնելու ամե-
 նելին չէր յուսար: Բայց նախախնամութիւնն ա-
 սոր դուստրը Հունգարիայի փառաւոր թագաւորին
 ամուսին որոշած էր: Աղջկան անունը Գերգրու-
 տա էր: Անդրէաս աս համեստ ու առաքինի իշ-

խանուհին Աւստրիայի Արքիդքսին արքունեաց մէջ տեսաւ : Զինքը իրեն ամուսին ընտրեց, եւ աս ընտրութիւնը իրօք ալ իր մտացն ու անուան մեծ պատիւ ըրաւ : Աս թագուհոյն բարեպաշտութիւնն եւ առաքինութիւններն աւելի եւս աղէկ պիտ'որ տեսնենք յաջորդ գլխոյն մէջ :

Շքեղ ու փառաւոր հարսնիքէն երկու տարի ետքը Հունգարիայի թագաւորին արքունեաց մէջ նոյնպիսի փառաւոր ու ցնծալից ծնընդեան տօն մ'ալ կատարուեցաւ : Աս տօնը, զորն որ բոլոր երկիրն ուրախութեամբ եւ օրհնութեամբ մէկտեղ կը տօնախմբէր, Եղիսաբեթին ծնընդեան համար էր :

Գ Լ Ո Ւ Մ Բ .

Եղիսաբեթին տղայութիւնը :

Եղիսաբեթին ծնունդը չէ թէ մինակ արքունեաց ու թագաւորանիստ քաղքին՝ հապա նաեւ բովանդակ գաւառին մէջ անպատմելի ուրախութիւն պատճառեց : Թագուհին ինք զինքն արտաքոյ կարգի երջանիկ կը զգար : Օրհնեց շնորհալից արարածը եւ շնորհակալու սրտիւ զանիկա Աստուծոյ հայրենի հովանաւորութեանն յանձնեց : Հօրը խնդութիւնն ալ ասկէ վար չէր մնար :

Թագուհին արգէն շնորհալից տղան առջի անգամ տեսնելուն՝ սրտին մէջ բարի առաջադրութիւն մ'ունեցած էր, զանիկա ինք անձամբ կրթութելու, եւ չէ թէ մինակ աշխարհքիս՝ այլ նաեւ Աստուծոյ ու երկնից համար : Ուստի զանիկակ իր կաթամբը կը սնուցանէր, որոցը իր անկողնոյն քովը կը դնէր, որպէս զի սիրելի արարածը գիշեր ցորեկ գորովագութ մօրմէն հսկուի, պաշտպանուի ու հոգացուի : Թէպէտ եւ քանի մ'արքունեաց տիկիներէն զրպարտուեցաւ, որոնք ի-

րենք զիրենք լաւագոյն ու խոհեմ կը համարէին, բայց համեստ թագուհին ասիկա բանի տեղ չէր դնէր: Ան բանը՝ որն որ ուրիշ մեծատուն մայրեր իբրեւ նեղացուցիչ բեռ մը՝ դայեակներուն կը թողուն, ինք մայրենի ուրախութիւն կ'անուանէր: Եւ ասիկակ աշխարհքիս ուրախութիւններէն ամենեւին մէկուն հետ չէր ուզեր փոխել:

Աս ատենէս ի վեր երջանիկ մայրն ինք զինքն, որչափ որ վայելչութիւնը կը ներէր, արքունեաց աղմկալից հաճութիւններէն կը զրկէր: Իր սիրելի տղուն ունեցած գորովալից ցանկութենէն, սովորականէն շատ կանուխ կը հեռանար մարդկան ընկերութենէն, որոնց շողոքորթութիւնն ու սուտ քաղաքավարութիւնը հիմակ յառաջունէ աւելի իրեն անսիրտ կու գային, եւ պառկելու սենեակը որրոցին քով կը վազէր կու գար: Ո՛հ, ան ժամանակ իր մայրենի սիրտն անպատմելի ուրախութեամբ կը լեցուէր: Տղուն ծիծաղն ու նոյն իսկ լացքը, խօսիլ մըն էր, որն որ իր սրտին մեծ զգածմունք կը պատճառէր. զորն որ մինակ գորու ութ մայր մը կը ճանչնայ: Բայց սակայն առ հասարակ իր վրայ կը նեղանային, ու նոյն իսկ թագաւորն անոր ընկերութիւնը թող տալուն երթալուն վրայ տժգոհ էր:

() ր մէ թագուհին, ըստ սովորութեան, առանձին իր սենեակը կը նստէր ու սիրուն տղան գիրկն առած կը շարժէր: Նոյն ատեն թագաւորը ներս մտաւ, եւ իր ճակտին վրայ սեւ ամպ մը սրտին նեղութիւնը կը յայտնէր: Թագուհին անոր գալըստեան պատճառը գուշակելով ծիծաղական դէմքով մը դիմացն ելաւ: Եւ իսկապէս ալ չէր խաբուած: Թագաւորն՝ անոր խիստ յանդիման ջանքն մը տուաւ բռնած վարմունքին համար, սակայն վրայ բոլոր արքունիքը քանքատ կ'ընէր: Հեզաբարոյ ամուսինը զինքն ամենեւին չընդմիջեց, հապա, երբոր թագաւորը խօսքը լմընցուց

նէ, ան ատեն ինք զինքը հանդարտութեամբ եւ անտարբերութեամբ մը պաշտպանեց, որն որ շատ քիչերուն յատուկ է:

“Սիրելի Անդրէաս, այսպէս սկսաւ խօսելու, մայր մը թագուհի ըլլալուն համար իր որդին պէտք է քիչ սիրել: Ամենէն ստորին հպատակաց պէս թագուհւոյ մը սիրտը մայրենի սիրտ չէ մի: Ստոյգ կ'ըսեմ, նաեւ թագուհի մը իբրեւ ամուսին եւ իբրեւ մայր ասկից զատ բարձր պատիւ ու պարտաւորութիւն մը չիճանչնար, այսինքն իր որդիքները այնպէս մը կրթել, որ Աստուծոյ հաճոյ, թագաւորական ցեղին զարդ, հօրերնուն պարծանք, մօրերնուն ուրախութիւն ու հպատակաց երջանկութիւն ըլլան: Եւ դուն, սիրելի Անդրէաս որ, մեր սիրելի որդւոյն այսպէս ինծմէ քիչ գուժ ու սէր կը զգաս, եւ անոր քով նոյն ուրախութիւնը չես փնտռեր, որն որ իմ սիրտս երջանիկ կ'ընէ, յանդիմանութիւն մը չիկրնար բերել քեզի, հապա մինակ ապացոյց մը կ'ըլլայ թէ ինչպէս հօր մը սիրտը մօր սրտէն տարբեր է, ”:

Հոս թագուհին լսեց, եւ արտասունքն ապրանքեր՝ սիրելի տղան կրծոցը վրայ գորովով արնչեց: Տղան հրեշտակի մը պէս կը ծիծաղէր:

Թագաւորն ամուսնոյն առջեւ ամէցաւ մնաց: Նաեւ իր աչուրներէն ալ արցունք եկաւ: Սիրտն այնպէս լեցուած էր, որ չէր կրնար երկայն ինք զինքը բռնել: Հայրական սիրով մ'առաւ տղան մօրը գրկէն եւ իր կրծոցը վրայ դրաւ ճնշեց, եւ խօսելու սկսաւ: “Ստոյգ է սիրելի Գեղարուտա իրաւունք ունիս. հօր մը սէրը մեծ կրնայ ըլլալ, բայց մօր սէրը անհամեմատ մեծ է: Հայր մը յանձն որդւոյն ինք զինքն աւելի կը սիրէ. բայց մայր մը իր որդւոյն վրայ ինք զինքը կը մտնէ: Հայր մը ծնողաց ուրախութեան քաղցր պատիւ կը քաղէ. բայց մայր մ'անոր մէջ պտուղը տրնկելուն համար քաղցր վայելմունքն արդէն կը

գտնէ: Ա՛ռ ուրեմն աս սիրելի ու երկրային հրեշ-
տակը. արժանի է որ այսպէս մեծ գորովով քեզմէ
սիրուի. աս երկնաւոր տունկը քու մայրենի խնամ-
քովդ հոգալը յառաջ տար. եւ ստուգիւ ալ ու-
րիշ տեղ չիկրնար աւելի աղէկ յաջողիլ, ինչպէս
որ քու խնամակալութեանդ տակ: Թողութիւն
տուր, սիրելի Գեղրուտա, թէ որ զքեզ վշտա-
ցուցի նէ: Ասկից ետքն ալ այսպիսի յանդիմա-
նութիւն մը չեմ տար, եւ քու մայրենի ուրա-
խութեանդ գէ՛մ չեմ կենար,:

Այսպէս խօսեցաւ թագաւորն ու թագուհւոյն
ձեռքը թոթուելով ելաւ իր գործքին գնաց:

Աս օրուրնէ սկսեալ, դարձեալ թագուհին յա-
ռաջուան պէս քաշուած կ'ապրէր, եւ մեծ փու-
թով ինք զինքն որդւոյն խնամակալութեան ու
կրթութեան կու տար: Տղան վարդի կոկոնի մը
պէս երթալով կը բացուէր ու վարդի մը պէս
շնորհօք ու գեղեցկութեամբ, թէ հոգւով ու թէ
մարմնով կը զարգանար: Քանի որ երջանիկ մայրն
անոր մեծնալը կը տեսնէր, ներքուստ կ'ուրախա-
նար, շնորհակալ կ'ըլլար Աստուծոյ եւ օր քան
զօր իր խնամքը կ'աւելցընէր, ու օր աւուր վրայ
աւելի կը տեսնէր թէ ինչպէս արարիչն իր որդին
թէ մարմնաւոր ու թէ մտաւոր ձիրքերով զար-
գարած է:

“Ո՛վ բարերար Աստուած,, այսպէս անգամ մը
թագուհին առտուանցուան աղօթքին մէջ կ'աղօ-
թէր. տուր իմ մայրական սրտիս համբերութիւն,
որ իմ որդիս, զորն որ ինձի պարգեւեցիր ու
յանձնեցիր, կարենամ այնպէս կրթել, որ իր վրայ
հաճիս ու իմ վրաս ալ գոհ ըլլաս: Շատ բան
կրնամ ընել, բայց իզմէ շատ քիչ բան յառաջ
կու գայ, իսկ մեծ մասը քու հայրական օրհնու-
թեանդ կ'ախում ունի: Ո՛վ բարի հայր, աս օրհ-
նութիւնը ինձի ու իմ որդւոյս մի զլանար: Աս
անմեղ արարածը քու հայրենի պաշտպանութեանդ

տակն առ, որպէս զի բարի հոգի մը զինքը կա-
ռավարէ, բարի հրեշտակ մը զինքը պաշտպանէ
ու բարեւոյն սերմը անոր փափուկ սրտին մէջ ա-
ռանց որոման բուսնի եւ աճի հարիւրաւոր պտու-
ղը տալով թէ աս աշխարհքիս ու թէ անդիի
աշխարհքիս համար,, :

Իր օրական աղօթքներովը զօրացած, բարե-
պաշտ թագուհին իր որդւոյն կրթութեան մեծ
գործքը միշտ հաւասար սիրով, համբերութեամբ
ու եռանդեամբ յառաջ կը տանէր: Անոր աւելի
միտ կը դնէր, որ տղուն ամէն թէ մարմնաւոր ու
թէ հոգեւոր տրամագրութիւնը, կամաց կամաց
աճմամբը բարոյական ուղղութիւն մ'ստանայ:
Եւ ասոր համար երեն առաջնորդ՝ իմաստու-
թիւնն ու կրօնն էր: Ասան զի պղտիկ Եղիսաբե-
թին չէ թէ մինակ մտաց՝ հապա նաեւ կրօնական
կամ աստուածապաշտութեան կրթութիւն պէտք
էր տալ:

Տղուն մտաց կարողութիւնը կը կրթէր խելացի
մայրը ընդհանրապէս իրեն հասակին համաձայն
խօսակցութիւններով: Պաճուճապատանքի հետ
խաղալը, պարտէզը ու բաց օդի մէջ մէկտեղ
ժուռ գալը բաւական խօսակցելու նիւթ կը մա-
տակարարէին: Առողջ ու զուարթ աղջկանը աշ-
խուժութիւնը զինքը կը բռնէր, որ մէկ կողմանէ
թեթեւամտութեամբ կամ չարութեամբ չապա-
կանի, եւ միւս կողմանէ ալ բաց սիրտ ունենալը
ու տղայական վստահութիւնը չկորսուի:

Եղիսաբեթին սիրտը մօրը միշտ բաց էր, եւ
անկէ գաղտուկ բան չունէր: Մայրն ալ շարունակ
հոգի մէջ էր որ չըլլայ թէ ծածուկ թշնամի մը
անոր բաց ու դեռ չհոգացուած սրտին մէջ ո-
րով ցանէ: Ասոր համար գիշեր ցորեկ անոր վրայ
իր հսկողութիւնը կ'աւելցընէր:

Անոր փափուկ սրտին տուած առջի սնունդը
սուրբ կրօնին կաթն եղաւ: Աստուծոյ վրայ տուած

դասը կամ ուսումը սիրելի ու բարի հօր մը օրինակաւ սորվեցուց: Անոր ուրիշ յատկութիւնները բնութեան մէջ եղած բաներու օրինակներով իր աղջկանը շօշափելի ու ըմբռնելի կ'ընէր: Եւ ամենէն աւելի Աստուծոյ ամէն տեղ ներկայ ըլլալն եւ ամէն բան գիտնալն ազդու ու դիւր-ըմբռնելի եղանակաւ կը մեկնէր: Վասն զի ասիկակ հիմ գրած էր, որ տղան ան ատեն Աստուծոյ երկիւղ կ'ունենայ՝ երբ որ Աստուծոյ ամէն տեղ ներկայ ըլլալն ու ամէն բան գիտնալը կը հաւտայ:

Աստուծոյ երկիւղը կ'ըսէր, մայրը, ամէն առաքինութեանց մայրն է: Թէ որ իմ տղաս Աստուծոյ երկիւղ կ'ունենայ, ան ատեն կը ջանայ ան բանն ընել՝ որով Աստուծոյ հաճոյ կ'ըլլայ, եւ ան բանը թողուլ, որով որ Աստուծոյ անհաճոյ կ'ըլլայ:

Այսպէս կամաց կամաց աղջկան սրտին մէջ առաքինութեան բողբոջ մը կը բացուէր: Աստուծոյ շնորհքը, կրօնի գօրութիւնը կամ ազգեցութիւնը ու մօրը բարեպաշտ կրթութիւնն՝ անոր սրտին մէջ ցանուած բարի սերմն երթալով հասունացուցին: Որովհետեւ Եղիսաբեթին սիրտը բերրի երկիր մըն էր, որուն մէջ առաքինութեան սերմը շուտով կը ծլէր ու պտուղ բերելու չափ կ'աճէր: Երկնաւոր տունկեր աս բերրի ու պտղաբեր երկրին մէջ կ'աճէին. եւ անոնց աճումը խափանող որով մը երբեք չտեսնուեցաւ: Եւ մայրն ալ քանի որ ան սերմանց յաջողիլը կը տեսնէր հանապազորդ աշխատութեամբ նորէն կը սերմանէր:

Բոլորովին տարբեր դասատուն մըն էր պզտիկ ու աստուածապաշտ Եղիսաբեթին դասատունը, որուն մէջ ամօթղածութեան, Աստուծոյ երկիւղին, բարեպաշտութեան, մարդասիրութեան, մեծանձնութեան, համեստութեան ու հեղութեան առաքինութիւններն եւ ուրիշ ան առաքինութիւնները՝ որոնք ճշմարիտ աղնուականի ու կա-

նանց սեռին զարդն են, աւելի իր ազնուասիրտ մօրն օրինակներէն ճանչնալ ու ի գործ դնել կը սորվէր քան թէ անոր խօսքերէն ու վարդապետութիւններէն :

Այսպէս շատ անգամ մայրն անոր՝ Ս. Գրքէն կամ Սրբոց վարքերէն սուրբ կանանց ու կուսանաց բարձր առաքինութիւնները կը պատմէր : Եղիսաբեթ մտադրութեամբ ու սրտանց մտիկ կ'ընէր եւ իր սիրուն աչուրներուն վրայ արցունքը կը շողար :

Եղիսաբեթին փափուկ սրտին՝ ամենէն աւելի խորունկ ազդեցութիւն ընողը՝ Քրիստոսի Տեառն մերոյ վարուց ու չարչարանաց պատմութիւնն էր :

Անգամ մ'երբ որ մայրը նորէն Փրկչին վարդապետութեանցը, գործածներուն ու չարչարանացը վրայ կը պատմէր, թէ ինչպէս իր երկնաւոր հօրը հնազանդելու համար, եւ մեղաւորները անսահման սիրելուն համար այսչափ բան քաշած է, եւ թէ ինք զինքը զոհ ըրած է, Եղիսաբեթ շնորհակալութեան զգածմամբ մը կանչեց, «Ո՛հ, սիրելի Փրկիչը ինձի համար ամէն բան տուեր է, եւ ես փոխարէն անոր բան մը չեմ կրնար տալ» :

«Արնաս, սիրելի տղաս, կրկնեց մայրն այլայլած, կրնաս մէկ սիրով բորբոքած սիրտ մը տալ» :

«Վկու սիրելի աղջիկս, ըսաւ մայրը քիչ մը կենալէն ետեւ, եկու դուրս ժուռ գալ երթանք, բայց գանձանակդ մէկտեղ առնելու չմոռնաս» :

Խուցերնին ու պալատնին թողուցին, ու պարտեզի դռնէն մէկ ծանօթ փողոց մը մտան : Թագուհւոյն՝ պզտիկ իշխանուհւոյն հետ այսպէս առանձին ժուռ գալը՝ տեսնողներուն զարմանք չէր պատճառեր, վասն զի իրեն այսպէս քաղքին փողոցներուն մէջ պտրտելն ու աղքատաց խրճիթներն երթալը շատ անգամ տեսած էին : Աւերջապէս ցած խղճիթի մը մէջ աղքատին խցիկ մը մտան : Գրան քով մեծ յարգութեամբ իրենց

ընդունելու թիւն ըրաւ աղջիկ մը՝ որուն ողորմելի
 հագուստը, գունատ այտերը ու լացքէն կարմրա-
 ցած աչուրները կարօտութեան ու վշտաց մէջ
 ըլլալը կը յայտնէին: Իր ցաւալի վշտաց գլխաւոր
 պատճառը, ծերունի ու հիւանդ հօրը թշուառ
 վիճակն էր: Ի՛նչ խեղճ տեսարան: Հոն ողորմելի
 անկողնի մը վրայ հիւժած ծերունի մը՝ խեղճ աղ-
 ջըկան հայրը, երկայն ատենէ ի վեր մեծ ցաւոց,
 չքաւորութեան ու վշտաց մէջ հիւանդ պառկած
 էր: Իր ամուսինը քանի մը տարի յառաջ լաւա-
 գոյն կենաց փոխուած էր. իսկ իր վեց տղոցմէ
 մինակ աս աղջիկը մնացած էր, որն որ իրեն միակ
 նեցուկն էր: Բայց հայրն ու աղջիկը շատո՛նց աղ-
 քատութեան վերջին ծագը հասած կ'ըլլային թէ
 որ մարդասէր թագուհին մինչեւ հիմակ իրենց
 ծածուկ բարերարը չըլլար:

Հիւժած ծերունին ազնուական տիկինը տեսաւ
 նէ, կ'ուզէր անկողնոյն վրայ ելլել նստիլ, բայց
 զօրութիւնը կը պակսէր: Իր նիհարացած ու պաղ
 ձեռուրներն երկնցուց բարով եկերէքի նշան ընե-
 լու համար: Բերանը բացաւ, ու չորցած շրթունք-
 ները շարժեց եւ կ'ուզէր խօսիլ, բայց լեզուն
 բռնուեցաւ մնաց: Լեզուով յայտնել չիկրցածը
 իր աչուրներուն յստակ արցունքը կը յայտնէին:

Թագուհին ու երիտասարդ իշխանուհին սաս-
 տիկ այլայլած անկողնոյն քով ապշեցան մնացին.
 իրենց աչուրներէն ալ սկսաւ արցունք գալ: Թա-
 գուհին զանիկակ հանդարտեցուց ու մխիթարեց
 հեզ ու մարդասէր ձայնով մը, որն որ շատ քի-
 չերուն յատուկ է:

«Մ'ա սիրելի Փրկիչ, աս կտոր մը բանը, զորն
 որ հիմա կրնամ քեզի տալ,, կանչեց հեծկլտա-
 լով աղջիկը ու սրտին այլայլութենէն եւ արցուն-
 քէն ձայնը մարեցաւ: Եւ աս միջոցիս մէջ հիւան-
 դին վերմակին վրայ գանձանակը պարպեց մինչեւ
 վերջին դանկը: Աս աղջկան ի սիրոյ ըրած պար-

գեւին վրայ, թագուհին ալ իր կողմանէ քիչ մը բան աւելցուց, եւ այսպէս երկուքն ալ շնորհակալ եղող բնակիչները այլայլած իրենց աղքատին խցկան մէջ թողուցին գացին:

«Մ՛հ, ի՛նչ քաղցր է եղեր աստուածային Փրկիչն աղքատներուն անձին վրայ սիրելը, գոչեց աղջիկը ճամբան գացած ատեն, եւ կարծես թէ իր բորբոքեալ սրտին մէջ բոլոր աշխարհք կ'ուզէր ամփոփել:

«Այս է որ աս երկնաւոր զգածումը պահես, սիրելի աղջիկս, կրկնեց մայրն ուրախութեամբ եւ այլայլած սրտով, եւ գորովով ու մեծ ակրնկալութեամբ աղջիկը գրկեց պագաւ: Անկից ետքը ալ ուրիշ անգամ չէ թէ մինակ հիւանդ ծերին խրճիթը հապա նաեւ ուրիշ աղքատներուն ու հիւանդաց ալ այցելութեան կ'ելլէին, եւ այսպէս շատերուն կարօտութեան ատեն մխիթարիչ ու պաշտպանիչ հրեշտակ մըն էին:

(Օ)ր մը, հունձքի ժամանակ էր, Գեղրուտա ու Եղիսաբեթ առտուանց կանուխ իրենց գործելու սենեակը նստան աղքատաց շապիկ շինելու համար բոք մանելու. որովհետեւ նոյն ժամանակները թագուհի մ'ալ այսպիսի կանացի աշխատութիւններէ չէր ամրնար: Իրենց խօսակցութեան նիւթը՝ ուրիշ անգամներուն պէս աղքատներն էին:

«Մ՛հ, ի՛նչպէս կը ցաւիմ աղքատներուն վրայ, ըսաւ բարեսիրտ Եղիսաբեթը. խեղճերը սաստիկ կ'աշխատին, եւ այնպէսով ալ կարօտութիւն ու չքաւորութիւն կը կրեն. ուր որ այնչափ հարուստներ իրենք զիրենք դատարկութեան ու կեր ու խումի կու տան: Ի՛նչու Աստուած երկրիս հարրստութիւններն այսպէս անհաւասար բաժներ է: Ասով անշուշտ աղքատները ողորմելի ու դժբախտ ըլլան,»:

Մայրը լուութեամբ աղջկանը նայեցաւ եւ երե-

սէն ալ ցուցուց անոր ըսածին անտղի բան ըլլալը: Քիչ մը ետքը աթոռէն ելաւ, ու շատ ընտանութեամբ «եկու սիրելի Եղիսաբեթ, քեզի հետ դաշտ երթանք ըսաւ: Առաւօտը շատ գեղեցիկ եւ հունձքի ալ ժամանակ է,»:

Գացին: Աղասին մ'իրենց ընկերացաւ: Գացած որսի անտառներուն մէջ թռչունները քաղցրաձայն իրենց առաւօտեան երգերը կ'երգէին ու խոտերուն բունոցը ու ծաղկանց բաժակներուն վրայ ցօղի կաթիլները մարգարտի պէս կը շողային: Բնութեան շքեղութիւնը, բաց օդի մէջ ճամբորդութիւն ընողներուն սրտերը հաճութեամբ կը լեցընէր: «Ո՛հ, ինչ շքեղ ու փառաւոր է բնութիւնը, կանչեց Եղիսաբեթ զմայլած, ստուգիւմեր պալատը այսպէս գեղեցիկ չէ,»:

Մայրը, իրեն իրաւունք տալով, Աստուծոյ ամենակարողութեանը, իմաստութեանն ու բարութեանը վրայ շատ բան խօսեցաւ: Մէյ մ'ալ իրենց զարմացած աչուրներնուն առջին մէկ ընդարձակ ու հասունացած ցորենի արտ մը բացուեցաւ: Հեղիկ ու անոյշ հով մը ծանր հասկերը կը ձօձացընէր, ու բոլոր հարթ դաշտին երեսը մէկ խաղաղ ու հանդարտ շարժող ծովու ալեաց կը նմանէր: Բնութեան լուսութիւնն ուրիշ բան չէր ընդմիջեր, բայց եթէ բարեպաշտ երգ մը զուարթ երկրագործներու, որոնք հեռուն հընձելով կ'աշխատէին: Երգածնին հնձոց երգ մըն էր: Ունկնդիրներն երգին մինակ հետեւեալ երկու տուները լսեցին:

Աստուծոյ գործքին անարգը չըկայ,
Ամէն բան իրեն ուժոյն է վըկայ.
Ցորեն ու խոտիկ,
Ծառեր ու ծաղիկ,
Եւ նոյն իսկ պտտիկ
Սերման մ'ալ հատիկ:

ՊԱՐ — Հնչէն անտառ ու բրուր
Աստուծոյ ուժն ընդ հանուր:

Ազուաւի ձագունն, որ կ'ուզէ ապրուստ,
 Զամբ ինք կը շնորհէ, ինք ծաղկին հագուստ.
 Խնամստ հօր մը պէս
 Ամէն օր բզմեղ
 Ալ՝ սովամահէ
 Հացով կը պահէ :

ՊԱՐ — Ուրեմն ամէն մարդ՝ սովէ
 Ըզմեղ պահօղը գովէ :

Երգը լմրննալուն պէս դարձաւ մայրն ու ըսաւ
 Եղիսաբեթին «Տես, սիրելի աղջիկս, ան զուարթ
 ու ժրջան հնձողները հարուստ կալուածատէրի
 մը աւուրչէքով բռնուած վարձուորներն ու նա-
 ռաներն են, զորն որ ես շատ անգամ արքունեաց
 մէջ տեսած եւ անոր հետ խօսած եմ: Կոյն
 վարձուորներն աղքատաց կարգը սեպուելու մար-
 դիկ են. վասն զի ամէն օր իրենց ձեռացը աշ-
 խատութեամբ վաստրկածնին իրենց բովանդակ
 ինչքը կը համարին: Իրենց հարուստ տիրոջը սե-
 ղանէն կ'ուտեն, գործելու ատեն ուրախ են, ինչ-
 պէս որ կը տեսնես, հանգիստ սիրտ մ'ունին, ու
 գիշերներն ալ անհոգ կը քնանան: Ստուգիւ ի-
 րենց տիրոջմէ շատ աւելի ուրախ եւ երջանիկ են:
 Ուստի հիմա, սիրելի աղջիկս ինչ կ'ըսես դուն
 ասոր,» :

«Մինակ հարստութիւնը չէ եղեր մարդս եր-
 ջանիկ ընողը,», պատասխանեց Եղիսաբեթ: «Աս ալ
 վրան աւելցուր, ըսաւ մայրը, որ Աստուած ամէն
 բան աղէկ կարգաւորած է,» :

Ընդիէն հնձողներն ազնուական տիկինը տե-
 սածնուն պէս գործքերնին դադրեցուցին, ու ման-
 գազը ձեռուրնին տեղերնին կեցան, իսկ իրենց
 վերակեցուն, տարւօք ծերունի մը զիրենք դիմա-
 ւորելու գնաց :

Թագուհին ընտանութեամբ բարեւելով հըն-
 ձողներուն մօտիկցաւ: Ասոնք մէկիկ մէկիկ եկան
 յարգութեամբ թագուհւոյն ու իշխանուհւոյն

ձեռքը պագին, ու նորէն պարկեշտութեամբ ամէն մէկն իրենց տեղը դարձաւ: Ասոնք խառն էին, կար մէջերնին այր, կին, երիտասարդ, օրիորդներ. իսկ քանի մը տղաք ու աղջիկներ ալ հնձողներուն ետեւը անդին ասդին ցրուած հասկերը կը ժողվէին: Երեսնուն վրայ սրտի խաղաղութիւնը տպաւորուած էր:

Թագուհին գործավարաց փոյթն ու զուարթութիւնը գովելէն ու զիրենք իրենց երկնաւոր հօրը ու երկրաւոր տիրոջը հաւատարիմ մնալու յորդորելէն ետեւ իրենց առատ պարգեւ տալով բաժնուեցան գացին:

Օերունին իրենց ճամբան առաջնորդեց: Գացած ատեննին հետեւեալ խօսքերը խօսեցաւ: «Մեծափառ Տիկին, ես եւ իմ մարդիկներս շատ երջանիկ ենք: Այո՛, մեր տիրոջմէն ալ աւելի երջանիկ,»: Հոս ծերունին հառաչելով սկսաւ արցունք թափել: «Մեր տէրը, ըսաւ հարուստ ու բարեսիրտ մարդ մըն է. ամէն բան առատութեամբ ունի, բայց ի վերայ այսր ամենայնի բոլորովին երջանիկ չէ: Վիշտն ու տառապանքը, զորն որ իրեն իր անհաւատարիմ ամուսինն եւ ապականած մէկ որդին կը պատճառեն, ուտճի պէս գիշեր ցորեկ անոր սիրտը կը կրծեն: Մինակ ուրախութիւն մը իրեն քանի մը ժամ գիւրութիւն ու սիրոփութիւն կը պատրաստէ, եւ աս սիրոփութիւնն ինք իր ստորակարգեալներուն մէջ կը գանէ, զորոնք երջանկանցընելու կը ջանայ եւ իսկապէս ալ երջանիկ կ'ընէ զանոնք: Ո՛հ, ինչպէս շնորհակալութեան արցունքներով Աստուծոյ կ'աղօթենք որ մեր ազնուական բարերարին սրտին հանգստութիւն շնորհէ,»:

Այսպէս խօսեցաւ ծերն ու բաժնուելու ատեն ինք զինքն եւ իրենները թագուհւոյն պաշտպանութեանը յանձնեց:

«Ո՛հ, ուրեմն հարուստներուն մէջն ալ, աղքա-

Handwritten signature or initials in the top right corner.

տաց պէս, դժբախտ մարդիկ կը գտնուին եղեր,,
գոչեց Եղիսաբեթ կարեկցութեան արտասուօք
մը, նոյնպէս թագուհին եւ աղախինն ալ աս աղ-
նուական ու բարերար կալուածատիրոջ ցաւալի
վիճակին վրայ կը ցաւէին:

«Այո, սիրելի Եղիսաբեթ, կրկնեց մայրն. ամէն
կարգի ու աստիճանի մարդկանց մէջ դժբախտու-
թիւն կրողներ շատ կը գտնուին: Բայց բոլորովին
դժբախտ եւ ապերջանիկ են մոլութեանց տէր
եղող, անասուած, անկրօն, անխիղճ ու անառա-
քինի մարդիկ: Ինչպէս որ մինակ հարստութիւնը
մարդս չ'երջանականքներ, այսպէս ալ աղքատու-
թիւնը բոլորովին դժբախտ չ'ըներ: Աղքատն իր
երջանկութիւնը կը գտնէ աստուածային Նախա-
խնամութեան, բարի խղճի, ժրջան ու գոհ կեան-
քի եւ ան առաքինութեանց մէջ, զորոնք թէ
աղքատն ու թէ հարուստը կրնայ ունենալ: Նաեւ
հարուստն եւ աղնուականը մինակ կրօնի եւ ա-
ռաքինութեան մէջ կը գտնէ իր ճշմարիտ եր-
ջանկութիւնը:

3311-140

«Արեւմտ հարուստ հալուածատէրը, որն որ իր
հարստութիւններովն իր քովն եղող այնչափ մարդ-
կան բազմութիւնը երջանիկ կ'ընէ, վերջապէս ա-
նով ինքն ալ երջանիկ պիտ'որ ըլլայ», կրկնեց
բարի Եղիսաբեթը:

«Մտաբակոյս պատասխանեց մայրը. բայց աս
ալ ստոյգ է որ իր անհաւատարիմ ամուսինն ու
անառակ եւ մոլութեանց տէր որդին ալ աս աչ-
խարհքիս յղիութեանց, ուրախութեանց ու հա-
ճութեանց մէջ երբեք երջանկութեան պիտ'որ
չհասնին:

«Ո՛հ, ես ալ ուրեմն սիրելի մայր, ըսաւ Եղի-
սաբեթ շատ մարդիկ ազատելու եւ երջանկացը-
նելու պիտ'որ աշխատիմ. պիտ'որ ջանամ բարե-
պաշտ եւ առաքինի ըլլալու, որ կենացս մէջ եր-
բեք դժբախտ չ'ըլլամ»:



Մայրը գորովով իր բարի ու մեծ յոյս տուող աղջիկը գիրկն առաւ ու բազկացը մէջ ճնշեց, եւ աչուրններէն ուրախութեան արցունք գալու սկսան: Ներքուստ Աստուծոյ շնորհակալ կ'ըլար, որ իր օրհնութեամբն իր ցանած սերմուկերը աղջկանը սրտին մէջ միշտ այսպէս բերրի երկիր մը կը գանէ:

Այսպէս կրթեց թագուհին իր մէկ հասիկ զաւակը, մինչեւ որ անիկա միշտ երթալով բարեպաշտ եւ առաքինի օրիորդ մ'եղաւ: Եւ այսպէս Եղիսաբեթ պղտիկուց ի վեր իր ծնողացը ուրախութիւնն ու բիւրաւոր հպատակներուն օրհնութիւնն էր:

Գ Լ Ո Ւ Ս Գ .

Թուրինգիայի ու Հեսսէնի իշխանական գերդաստանը:

Թուրինգիայի ու Հեսսէնի երկիրն ալ Հունգարիայէն շատ վար չէր մնար: Գանուբէն մինչեւ Ռենոս կը տարածէր, եւ իրեն սահման ունէր Բոհեմիան ու Ստորին Սաքսոնիան: Արդէն հինգերորդ դարուն՝ արեւմտեան Գոթացի ցեղ մը հոն տարածուած ու բնակած կը համարուի: Աս ցեղը վերջէն Թուրինգացի անունն առաւ:

Մինչեւ ութերորդ դար Թուրինգացիք դեռ հեթանոս էին: Իրենց երկիրը դեռ անապատ ու ամայի էր, եւ ընդարձակ ու անբաւ անտառները մեծաւ մասամբ իրենց բնակութեան տեղն էր: Եւ աս անտառներուն մէկուն մէջ իրենց չաստուածներուն խորան մը նուիրուած էր, որուն վրայ իրենց արիւնոտ զոհերը կը ծխէին:

Երբ որ Գաղղոս, Կիլիան ու Ալախոս սուրբ քահանաները հարաւային Գերմանիայի մէջ հեթանոսները քրիստոնէութեան դարձնելու կ'աշ-

խատէին, անդիէն Աինփրիտիոս վերին Սաքսոնիայի ու Թուրինգիայի, Հէսսէնի ու Փրանկներու երկրին մէջ երկնից արքայութեան աւետարանը կը քարոզէր: Աստուծոյ Հոգին, իրեն հաւատարիմ եւ եռանդնոտ ծառայից ձեռքովը զարմանալի եղանակաւ մ'անտառաց հեթանոս բնակչաց փրկութիւնն յառաջ կը բերէր: Հազարաւորներ թողուցին կռապաշտութիւնն եւ ի հաւատս քրիստոսի մկրտեցան: Եւ շուտ մը Թուրինգիայի ու Հէսսէնի մէջ աւետարանին լուսոյն լուսաւորելն ու բիրտ պատերազմողներուն խրճիթներուն մէջ հեշտ կենաց արեւու մը ծագելը տեսնուեցաւ: Չաստուածներուն անտառակներն ամայի ու դատարկ մնացին, եւ անշունչ ու մեռեալ աստուածներուն տեղը խաչեցելոյն պատկերն եկաւ: Եւ քրիստոնէից աւելնալովը, քրիստոնէական տաճարի մը կարօտութիւնն ալ աւելցաւ: Առջի քրիստոնէական տաճարը Աինփրիտիոս, Գերմանացւոց առաքեալը, Թուրինգիայի դաշտ ըսուած, Ալգենպերկայի քով շինել տուաւ, որուն տեղը, 1811ին 30 ոտք բարձրութեամբ յիշատակարան մը կանգնուեցաւ:

Այսպէս Աինփրիտիոս հիւսիսային գերմանացի ազգաց դարձին համար շատ աշխատելով մեծ արդիւնք ունեցաւ. այնպէս որ Գերմանացիք զինքը աս օրս Ս. Ռնիփակիոսի անուամբ կը պատուեն:

Քանի մը դար ետքը, երբոր ալ Գերմանիայի մեծ մասը քրիստոնէութեան դարձած էր, Թուրինգիան ու Հէսսէնը աշխարհակոմսութեան տիրոջոսն առաւ: Առջի իշխանացեալ աշխարհակոմսերէն մէկն էր Լուդովիկոս Երկաթի կոչուած: Ինք աս մականունը իրաւամբ կրեց. վասն զի երկաթի պէս քաջասրտութիւն ու մարմնոյ զօրութենէն զատ, ունէր նաեւ երկաթի սիրտ մը, կարծր ու անողորբելի: Իր տիրելու ու հարստութիւն դիզելու անյագ ցանկութիւնը, զինքը խիստ, անիրաւ շէ անգութ ըրած էր:

Վրացի ասպետներու ու կոմսներու ու նոյն իսկ իր հնազանդեալներուն հետ շարունակ կռուոյ մէջ էր: Արդէն շատերուն դղեակները կործանած եւ ինչքերնին յափշտակած, եւ զիրենք իրենց ընտանեօքն աքսորած էր: Նաեւ վանքերու ալ չէր խնայած: Անոնց վրայ այնպիսի ծանր հարկեր կը դնէր, որ շատ քիչերը կրնային ճշդիւ վճարել: Ան վանքը՝ որ կը տրտնջար ու հարկ չէր ի տար, դալլել ու կործանել, եւ անոնց հանդարտ բնակիչները, կէս մը մեռցընել ու կէս մ'ալ քշել կու տար:

Այսպէս Լուդովիկոս Երկաթի, փոխանակ իր հպատակեալներուն գթած հայր մ'ըլլալու, իրենց երկեցուցիչ խարաղան մըն էր: Ինք գանձ գանձի վրայ կը դիգէր, իսկ աղքատներն ու նեղեալ հպատակները չքաւորութիւն ու աքսոր կը կրէին: Մեծ էր ողբը, բարձրաձայն տրտունջը ու հասարակաց տժգոհութիւնը: Բայց ոչ դք կը համարձակէր ժողովրդեան աղաչանքն եւ արդար տրտունջն անագորուն իշխանին ականջն հասցընել:

Բայց վերջապէս աս ժողովրդեան ողբը բարեպաշտ մարդու մը սիրտը այնպէս մը խոցեց, որ յանդգնեցաւ իշխանին առջին ելլել, եւ արձակ համարձակ հպատակաց իրաւացի քանքատն առջեւը դնել: Աս մարդը, Մարպուրկի կոնրատ երկիւղած եպիսկոպոսն էր: Ասիկակ առանց վախնալու ելաւ անոր առջեւը, ու համարձակ իր խստութիւններն եւ անիրաւութիւնները յանդիմանեց: Յիշեցուց իրեն յաւիտենական եւ արդար դատաւորը՝ որուն առջեւ նաեւ իշխաններն ու թագաւորները համար պիտ'որ տան, եւ աղաչեց իրեն ծնկան վրայ եւ արտասուօք որ դառնայ ըլլայ գթած ու արդար:

Բայց երկաթի հոգի ու սիրտ ունեցողը յամուութեամբ կեցաւ ու պատուական եպիսկոպոսին աղաչանքը ծաղը ըրաւ եւ բարեպաշտ ու եր-

կիւղած մարդը թողուց գնաց, աս հպարտական խօսքերն ըսելով. «Աստուած երկինքն իրեն կը պահէ, իսկ երկիրը կու տայ մարդկան, որպէս զի ինչպէս որ կ'ուզեն ու կրնան այնպէս օրամադրեն», Աս խօսքերը լմնցուց անգութ իշխանն արհամարհոտ ծիծաղով մը, եւ ազնուական Կոնրատը դղեակը թողուց գնաց:

Մէջ չարութեան չափը լցուած էր, Աստուած ներդալ ժողովրդեան ողբը լսած էր, եւ անկից զիրենք ազատեց: Օր մը Լուդովիկոս որսի գնաց, եւ հոն ձին գահավէժ իյնալով, մահացու վերաւորեցաւ, մօտաւոր վանք մը տարուեցաւ, ուր քանի մ'օր ետքը, չէ թէ իբրեւ ճշմարիտ զղջացեալ, այլ կերպարանաւոր բարեպաշտութեամբ մեռաւ: Ստոյգ է մահուան ժամանակ շատ աղօթք բռաւ, նաեւ վերջին թոշակն ալ առաւ, բայց յափշտակութեամբ ստացած բաներէն դանկ մ'ալ ետ չդարձուց:

Մնոր մահուան լուրը ժողովրդեան մեծ ուրախութիւն պատճառեց. ամէն մարդ Աստուծոյ շնորհակալ կ'ըլլար որ զիրենք վերջապէս ազատեց: Քոյրը երկրին մէջ եւ ոչ կաթիլ մը արցունք թափուեցաւ. մինակ քրիստինէ իր ամուսինն ու Հերման իր որդին, լուութեամբ ու ծածուկ անոր վրայ կու լային:

«Ո՛հ Աստուած անոր հոգւոյն ողորմի. այսպէս կ'աղօթէր արտասուօք բարեպաշտ այրին. թողու իրեն Աստուած ինծի ու իր որդւոյն հասուցած վշտերը»,:

Քրիստինէ բարեպաշտ ու ազնուական կին մըն էր, եւ քսան տարիէ աւելի ցաւալի վշտեր կրած էր: Թէ որ Լուդովիկոս անոր առաքինութեանցն ու առաւելութեանցը կէսը մինակ ունենար, ստուգիւ անոր վիճակը, բախտը նախանձելի բան կ'ըլլար: Ստոյգ է թէ իր մեծամեծ բարերարութիւններովը, իր էրկանը ըրած անիրաւութիւնները նո-

րողած էր: Բայց ամէն բան չէր կրնար նորոգել ազնուական կնիկը. ինչու որ Ղուգովիկոս անիրաւու թիւն անիրաւութեան վրայ կը դիզէր, եւ անոր ըրած գաղտնի չարիքներուն շատերը իրեն ծածկուած կը մնային: Եւ բաց ասկից, իր ձեռուրները այնպէս կ'ապուած էին որ, առանց կարող ըլլալու օգնել, ստիպուած էր լուութեամբ հառաչել ու լալ, ու խեղճ ժողովրդեան վրայ ողբալ: Շատ հեղ ինք եւ ազնիւ որդին անգութ հօրմէն թշնամանուեցան ու չարչարուեցան զինքը զգօնացընելու, մեղմացընելու, եւ կամ թէ անիրաւ գործքէ մը ետ կեցընելու ջանալուն համար: Որովհետեւ բարկութեան ժամանակ Ղուգովիկոս կը նմանէր կատաղի գազանի մը, որմէ որ պէտք է հեռանալ ու փախչիլ անոր զոհ չըլլալու համար: Քրիստինէին աս վշտացը ժամանակ, մի միակ մխիթարութիւնն եւ ուրախութիւնը աս հաստատուն վստահութիւնն էր, թէ շերման, իր մէկհատիկ որդին, որն որ ամէն կողմանէ հօրը հակառակն էր, օր մը դժբախտ ու նեղեալ հպատակները դարձեալ պիտ'որ երջանկացընէ. եւ աս բանս ինք իրաւամբ ալ կրնար յուսալ. վասն զի զշերման շատ աղէկ կրթութած էր, եւ աղէկ ալ նշաններ կը տեսնէր վրան:

Շերման՝ որուն վրայ բոլոր ազգին ակնկալութիւնը կը հանգչէր, անմիջապէս հօրը մահուրնէ ետեւ ընդհանուր ուրախութեամբ աշխարհակոմս հրատարակուեցաւ: Ժողովրդեան ակնկալութիւնն ալ պարապի չելաւ: Նոր աշխարհակոմսը ամէն բանէն յառաջ ջանաց իմաստուն, խղճմտանքաւոր ու արդար խորհրդականներ ընտրելու, ու մէկգիւրջաւ ան թոյլ ու տկար շողոքորդները, որոնք մինակ շահախնդրութեամբ ու փառասիրութեամբ հօրը քով մնուող գտած էին: Ամենէն աւելի պատուական անձ, գտաւ զԱլոյդէրը, ածխագործի մը որդին, որն որ իշխանական տան երջանկութիւնն ինչպէս նաեւ հայրենեաց լաւագունութիւնը սաս-

տիկ կը սիրէր ու կը բաղձար: Իր ամէն կողմանէ ունեցած առաւելութիւններն եւ առաքինութիւնները զինքը երիտասարդ իշխանին աչքին այնպէս հաճոյ ցուցուցած էին որ զինքը իրեն հաւատարիմ բարեկամ ընտրեց:

Հերման ու Վալդէր, որոնց հաւասար հասակն ու հաւասար զգածմունքները բարեկամութեան կապը միշտ սերտ ու հաստատուն կ'ընէին, ծրպտեալ բոլոր Թուրինգիա ու Հէսսէն ճամբորդութեան ելան: Բայց ազնուասիրտ իշխանները ամէն կողմ՝ ազքատութիւն ու թշուառութիւն գտան. ամէն տեղ Լուդովիկոսին անգթութեանց տխուր մնացորդները: Աղքատ հիւղաբնակներուն խեղճութիւնը, կործանուած քանդուած դղեակներն ու վանքերը, եւ անապատ դարձած դաշտերը տեսան նէ, երկու բարեկամները կարեկցութեան դառն արտասուք թափեցին:

«Պէտք ենք օգնութեան հասնիլ, սիրելի Վալդէր, կանչեց, Հերման: Ասան զի, ինչ բանի կը ծառայէ այնչափ դիզուած գանձերը, ինչ բանի կ'օգնէ արքունեաց մէջ անչափ մեծ փառաւորութիւնները, երբ որ իմ հպատակներէս հարիւրաւորները, ինչքերնէն զրկուած ու աքսորուած, կը նեղուին ու կը նուաղին: Չէ. սիրելի բարեկամ. խեղճ ու դժբախտ աքսորեալները նորէն ետ պիտ'որ կանչեմ, եւ յափշտակուած ինչքերնին ետ պիտ'որ տամ, կործանուած ու քանդուած դղեակներն ու վանքերը նորէն պիտ'որ կառուցանեմ, ժողովրդեան խեղճութեանը պիտի օգնեմ ու նորէն երջանիկ պիտ'որ ընեմ»,:

«Վ, յո՛, ազնուական իշխան, այ՛ո սիրելի բարեկամ, կանչեց Վալդէր ուրախութեան արցունքով. Ըրէ ասիկա, եւ ան ատեն հազարաւոր ձեռքեր զքեզ կ'օրհնեն, ու բիւրաւոր բարեպաշտ ու երախտագէտ սրտեր քեզի համար Երկինքէն երջանկութիւն կը խնդրեն: Ստուգիւ սիրելի Հեր-

ման, ասիկա ըրէ, եւ բոլոր հայրենիքը նորէն երջանիկ կ'ըլլայ. նաեւ ի սէր որդւոյն հօրդ գերեզմանին վրայ ալ անէծք չեն կարգար, :

Վ'լ ճամբորդութեան վերջը հասած էր, վասն զի իրենց գլխաւոր վախճանին հասած էին :

Վճնուական բարեկամները թագաւորանիստ քաղաքը դարձան: Ինչչափ մեծ էր երջանիկ մօրն ուրախութիւնը: Այսպիսի ճամբորդութիւն մ'ընելու յատակագիծը իրմէ էր, որուն բարի հետեւութիւններն ինք արդէն յառաջուց տեսած էր. ինչու որ իր որդւոյն սրտին բարութիւնն աղէկ կը ճանչնար, եւ անոր վրայ հիմնեալ, ամէն բարիք իրմէ կը սպասէր:

Հերման իր իշխանական խօսքը բռնեց: Իր նոր խորհրդականները գովեցին անոր ազնուական դիտաւորութիւնը, որն որ անմիջապէս քիչ մը վերջը յուրախութիւն բովանդակ հասարակութեան ի գործ դրուեցաւ: Հարուստ գանձատունը ստոյգ է աղքատացաւ, բայց ժողովուրդը երանիկ ու երջանիկ եղաւ: Նոր շինուած վանքերուն խորաններուն վրայ ջերմ նուէրներ եւ աղօթքներ բարձրացան, ազնուական իշխանական ընտանեաց համար, յաւիտենական պարգեւատուին: Նորոգ շինուած գղեակներուն վրայ ուրախական խնճոյքներու մէջ, երիտասարդ ազնուական իշխանին հազարաւոր Աէցցէներ հնչեցին: Եւ երջանիկ գեղացւոց խրճիթներուն մէջ դարձեալ զուարթ ժողովուրդեան երգեր թնդացին: Մեծն ու պզտիկը, հարուստն ու աղքատը, սիրով ու յարգական երկիւղիւ «Հերման ու Քրիստինէ», անունները կ'արտաբերէին, եւ բոլոր ժողովուրդը իշխանական տունը կ'օրհնէր, եւ ամէն օրուան աղօթքներնուն մէջ զիրենք ալ չէին մոռնար: Նաեւ, Քրիստինէին ու Հերմանին սիրոյն համար, զլուգովիկոսն ալ ամենեւին չէին անիծեր:

ԳԼՈՒԽ Դ.

Յոռոգարկոսթիւնն ու պսակ մի եւ նոյն օրը :

Բովանդակ արքունիքը, եւ մանաւանդ Տիւանդոտ մայրը, սաստիկ բաղձանք կը ցուցնէր, որ իր որդին ամուսին մ'ընտրէ :

Հերման աս բաղձանքը կատարեց, եւ ընտրեց իրեն կողակից զվայելուչ Գոնգորտիան, Մայսենի նշանաւոր Ոգոն կոմսին մէկհատիկ դուստրը : Թէ որ վայելութեանը համեմատ բարի ալ ըլլար, կրնար մարդ ազնուական իշխանին երջանկութիւն մաղթել :

Բայց բարի իշխանը դժբախտ ընտրութիւն ըրած էր : Անոր մարմնոյն վայելութենէն նաեւ հոգւոյն գեղեցկութիւնն ալ հետեւցուցած էր, բայց աս անգամ դժբախտութեամբ ծուռ մտածած էր : Նոյն իսկ անոր գեղեցիկ ու նշանակիչ անունը բարեսիրտ ու ազնուաբարոյ իշխանին մոլորութեան պատճառ եղած էր :

«Գոնգորտիա կը կոչուի իմ հարսս», գոչեց Հերման իր բարեկամին, զինքն ուրախութեամբ գրկելով, «Գոնգորտիա Միութիւն կը նշանակէ. Ո՛հ, ինչ գեղեցիկ ու իմաստալից անուն : Այո՛ Գոնգորտիայով, չէ թէ մինակ արքունեաց, հապա նաեւ բոլոր երկրիս մէջ միութիւն եւ ուրախութիւն պիտ'որ ըլլայ» :

Այլդէր Հերմանին երջանկութեան կը հաւատար, եւ անոր վրայ ներքուստ կ'ուրախանար :

Նաեւ Տիւանդոտ մայրն ալ, թէպէտեւ հարսը մէկ անգամ մինակ, եւ ան ալ անցողաբար տեսած էր, Հերմանին ընտրութեանը վրայ կը ցընծար : Ինք բարեսիրտ ըլլալով, անծանօթ հարսին վրայ ալ այնպէս կը դատէր : «Օրիորդ մը, զորն որ իմ բարի որդիս իրեն ամուսին ընտրած է, պէտք որ բարի ըլլայ», կը մտածէր մայրը, եւ մխի-

Թարուած իր կենացը վերջին ժամուն կը սպասէր :

Ըս վերջին ժամը, որուն բարեպաշտ աշխարհակոմսուհին երկայն ժամանակէ ի վեր կը պատրաստուէր, անակնկալ մերձեցաւ : Իր անգութ էրկանը կողմանէ կրած տառապանքն ու գէշ վարմունքը, անոր առողջութիւնն այնպէս տկարացուցած եւ արմատէն խախտած էին, որ ամենեւին ալ երկայն կենաց յոյս չէր կրնար ունենալ : Անոր համար կը բաղձար, յառաջ քան իր աչուրները մշտնջենաւորս գոցելը, Գոնգորտիա կոմսուհին, իբրեւ ամուսին իր սիրելի որդւոյն քովը տեսնել : Կ'ուզէին բարի մօրը բաղձանքը կատարել, մինակ հարսնիքը լուծեամբ տօնախրմբելով :

Պսակը գղեկին մատրան մէջ կատարուեցաւ : Իշխանական շքեղութեամբ պարտիչ ու շլացուցիչ գեղեցկութեամբ կեցաւ Գոնգորտիան խորանին ոտքը, եւ անոր քով ամեներջանիկ Հերմանը : Մարպուրկի բարեպաշտ եպիսկոպոսը կոնրատ, օրհնելով աս սուրբ դաշինքը կատարեց :

Մատուռէն առաւ զիրենք եպիսկոպոսն եւ իշխանին մօրը անկողնոյն քով տարաւ որպէս զեանկից մայրենի օրհնութիւնն ընդունին :

Իսոյց ինչ սոսկալի տեսարան : Սէգ ու գոռոզ հարսը առջի անգամ տեսնելուն, Քրիստինէին գէմքը բոլորովին խաւարեցաւ, նիհար ձեռուրները գալարեց, տկար աչուրներն արցունքով լեցուեցան, ցամքած շրթունքները ջղաձգութեամբ կը շարժէին, ու խանդակաթ նայուածքով մը, սիրտ ծակող ձայնով մը Հերմանին գոչեց. «՛ն դժբախտ որդի», : Շրթունքն ու աչուրները յաւիտենից համար գոցուեցան, դիակ մը դարձաւ :

Ներկայ եղողներուն վհատութիւնը չիկրնար ստորագրուիլ : Գոնգորտիան ինկաւ մարեցաւ. ու Հերման լալով հոգին փչած մօրը վրայ ինկաւ :

Այսպիսի դէպքի մը պատճառը ինչ բան կըրնար ըլլալ: Արդեօք հանգուցելոյն յստակատես հոգին բաժնուած ատեն, ամբարտաւան հարսին սիրտը տեսաւ, եւ անոր մէջ իր որդւոյն ապերջանիկ բախտը կարդաց: Եւ կամ թէ անոր սրտին մէջ Հերմանին գաղտնի խորհուրդները նշմարեց: Բայց ինչ որ կ'ուզէ ըլլայ, իրը միշտ քիչ պատահելու բան էր: Աս դէպքը, բոլոր ներկայ եղողները սաստիկ զարհուրեցուցած էր: Եւ աս ժամանակ անմխիթար ու շատ գէշ էր Հերմանին վիճակը: Մէկ կողմը անշնչացեալ մայրը, ու մէկալ կողմը նուաղած ու մարած ամուսինը: Երկայն ատեն չէր կրնար ինքն իրեն գալ:

«Նուղարկաւորութիւն ու պսակ մի եւ նոյն օրը,» գոչեց վերջապէս ու սաստիկ ցաւէն որդիական սիրոյ ու շնորհակալութեան արցունքն իր խօսքը հեղձուցին: Իր բարի մօրը ցաւալի կորուստը, եւ անոր խորհրդաւոր մարգարէութիւնը, իր սրտին վրայ արտաքոյ կարգի ծանրութեամբ կը կենար, ու սաստիկ կը ճնշէր: Բայց սակայն արցունքը ճնշուած սիրտը քիչ մը թեթեւցուցած էր:

Մարած հարսը անմիջապէս իր խուցը, անկողնոյն վրայ տարին, ուր շուտ մը նորէն ինք իրեն եկաւ: Իր սիրտը՝ դեղնցած սկեսրին դէմ, քինախնդրութեամբ ու անհաշտ ատելութեամբ լըցուած էր: Եւ երբ որ Հերման քանի մը ժամ ետքն անոր խուցը գնաց զինքը տեսնելու՝ աղախնոյ մը հետ աներեւոյթ եղած էր: Հերմանին տխուր ու ցաւալի վիճակը, չի կրնար մարդ երեւակայել եւ ոչ ալ նկարագրել:

Արկու օր վերջը սիրելի մօր եւ իշխանուհւոյն տխրական յուղարկաւորութիւնն եղաւ: Ամենաբարի ու ամենասիրելի երկրին մօրը կորստեան վրայ եղած կսկիճն ու հասարակաց ողբը մեծ էր: Ո՞վ կրնար ի թիւ անցընել ան արցունքները, որոնք չէ թէ մինակ անոր գերեզմանին վրայ, հապա

նաեւ բովանդակ երկրին մէջ վտակի պէս հեղուեցան: Բայց ոչ դք այնչափ կսկիծ ունեցաւ որչափ աղքատները: Իրենք շատ աղէկ գիտէին պատճառը: Վասն զի իրենց բարերարը մեռած էր, եւ նոր իշխանուհւոյն վրայ քիչ վստահութիւն կ'ուներնային: «Ախ, օգնէ մեզի Աստուած», կը գոչէին. Գոնգորտիան շատ դժուարաւ ազնուական քրիստինէին տեղը պիտ'որ բռնէ: Արդէն անոր արտաքին վարմունքը քիչ ակնկալութիւն կը խոստանայ:

Խորունկ վերաւորուած սրտով Հերման իր սիրելի բարեկամին հետ գացած աներեւոյթ եղած ամուսինը կը փնտռէր: Զանի Մայսէն իր հօրը տունը գտաւ: Բայց ինչպէս իր ցաւն աւելցաւ, երբ որ իր սիրած հարսը այսպէս հպարտ եւ ապրտամբ գտաւ, գեղեցիկ կեղեւ մը առանց կուտի: Անիկակ իր փեսին ճշմարիտ հակում ունենալով Թուրինգիա հարս չէր եկած, հապա մինակ հոն գտնելու շքեղութեան ու փառաւորութեան սիրոյն համար: Խորին հառաչանօք Հերման մեռած մօրը դժբախտ գուշակութեանը վրայ կը մտածէր, եւ անոր կատարումը յառաջուց կը տեսներ: Բայց ամուսնութեան դաշինքն արդէն կատարուած լմընցած էր: Իրը ալ անփոփոխելի անդառնալի էր: Պէտք էր աստուածային Նախախնամութեան վրայ վստահանալով մխիթարուիլ:

Սգոյ ժամանակն անցնելէն ետեւ, որն որ մասնաւոր դիտմամբ կարճուեցաւ, շատ մեծ շքեղութեամբ ու փառաւորութեամբ հարսնիքը կատարուեցաւ, նոյն ժամանակուան սովորութեան համաձայն: Երկրին ամէն ազնուականներն, ու շատ ժողովուրդ աս հանդիսութեան ներկայ էին: Գոնգորտիան իբրեւ թագուհի շլացուցիչ շքեղութեամբ մը հանդեսին մէջ կը փայլէր: Իր վայելչութեանը համար, ամենէն պատիւ ընդունելու ու զարմացուելու ունեցած անկարգ եւ անամօթ ցանկութիւնն իր վարմանցը մէջ յայտնի կը ցուցնէր: Բայց իր

անյագ փառասիրութիւնը բոլորովին շատացած չէր երեւար: Որովհետեւ քանի մ'ասպետներ իր յուսացած վարմունքն իրեն կը զլանային:

Գ Լ Ո Ւ Ս Ե .

Հուղովիկոս իշխանը :

Ամէն օր նոր իշխանուհին իր ինչ բնութեան տէր ըլլալը կամաց կամաց երեւան կը հանէր. ցաւալի իշխանն իր բոլոր մեծութեանն ու հարըստութեան մէջ, ապերջանիկ ըլլալն անմիջապէս ճանչցաւ: Գոնգորտիան՝ Քրիստինէին առաքինութեանց եւ ոչ մէկ հատն ունէր: Ո՛չ իր փեսին եւ ո՛չ ալ ժողովրդեան սէր ունէր: Ազքատութիւնը աչքին ատելի բան մըն էր, ու կարեկցութիւն եւ մարդասիրութիւն անոր սրտին օտար բաներ էին: Իր սրտին բաղձանքները մինակ փառաւորութիւն ու վայելմունք էին: Իր բովանդակ ցանկութիւնը յայնմ կը կայանար, որ ամենէն փառաւորութի ու զարմացուի:

“Ա՛խ, սիրելի Ալադէր, շատ դժբախտ եմ”, գոչեց Հերման իր բարեկամին, մխիթարութիւն մը փնտռելով, “բայց աս դժբախտ ըլլալս իմ կուրութեանս պատիժն է: Պէտք եմ բացայայտ խոստովանիլ, որ ես իմ ընտրութեանս ատեն, աւելի մարմնոյ վայելչութեան քան թէ հոգւոյն ու սրտին առաւելութեանց միտ դրի: Թէ որ իմ հարսիս վրայ աւելի առաքինութիւն փնտռած ըլլայի քան թէ վայելչութիւն, նոյն ատեն իսկապէս աչուրներս կը բացուէին եւ ստուգիւ Գոնգորտիան չէի ընտրեր: Տես, սիրելի բարեկամ, ես ինձի պատրաստած խաչիս մտածութիւնը՝ արտաքոյ կարգի ծանր սրտիս վրայ կը կենայ եւ ինձի իմ դժբախտութիւնս կրկին զգացընել կու տայ: Ուստի պէտք եմ ան ճշմարտութեան ստոյգ փորձն

տունուլ թէ ամենէն մեծ խաչն ան է, զորն որ մարդս ինք իրեն կը պատրաստէ: Ես իշխան մըն եմ. իշխանութիւն, հարստութիւն ու փառաւորութիւն ունիմ, բայց աս ամէնը իմ ինչ բանիս կը ծառայեն, ես զիս իմ ամենէն ստորին հպատակէս ալ դժբախտ կը զգամ,,:

Այսպէս խօսեցաւ դժբախտ իշխանն, ու Ալլդէր, զինքը եղբօր պէս գրկելով, իրեն սէր, բարեկամութիւն ու հաւատարմութիւն երդմամբ խոստացաւ: Իշխանը այրական սրտով ու բարեպաշտ համբերութեամբ ու հպատակութեամբ իր դժբախտ վիճակը տարաւ. իր վերաւորուած սրտին միսիթարութիւն կը գտնէր աղօթքի, Ալլդէրին հաւատարիմ բարեկամութեանն եւ իր հպատակներուն սիրոյն մէջ, ու հաւատարիմ սիրով մը իր անարժան ամուսնոյն կը յարէր: Զանիկա շահելու համար, հանապազորդ մարդասիրական ցոյցերով անոր անչափ ու տարապայման ունայնասիրութեան ու վայելմանց ցանկութիւնը մեծամեծ ծախքերով կը կատարէր: Բայց աս կերպով փառաւորութիւններուն ծախքը իշխանին տան մէջ այնչափ մեծ եղաւ, որ տէրութիւնը շատ զգաց: Հարկերն ու մաքսերը երեւելապէս պէտք էին բարձրանալ. հարուստ հպատակները տժգոհ ըլլալու եւ աղքատներն ալ տրտնջալու սկսան:

Ասիկակ ահեղ ժայռ մըն էր, որուն վրայ Հերմանին թոյլ ու տկար սիրտը կը խորտակէր, եւ այսպէս ակամայ՝ հաւատարիմ հպատակները դժբախտ կ'ընէր, եւ անոնց սէրը բոլորովին կը կորսընցընէր, թէ որ Ալլդէր, իշխանին ու հայրենեաց մեծասիրտ բարեկամը իբրեւ միջնորդ մէջը չմտնէր: Ինք իբրեւ անկեղծ բարեկամ, իշխանին աչուրները բացաւ, յիշեցուց անոր աշխարհակոմսի մ'ունեցած պարտքը, եւ իրեն յառաջագոյն տուած խօսքը, թէ ինք անոր համար մինակ ապրիլ ու կառավարել կ'ուզէ, որպէս զի բոլոր հպատակներն

երջանիկ ընէ: Ազնուական իշխանին սիրտն ելաւ, հնչու որ իր հպատակները կը սիրէր, եւ իր բարեկամին անկեղծութիւնը կը յարգէր: Սոսկալով կը նայէր ապագային վրայ, զորն որ Ալալդէր իրեն աղէկ նկարագրեց, ու դէպ իր բարեկամին գոչեց, «չէ, չէ, իմ սիրելի հպատակներս իմ ձեռքովս դժբախտ պէտք չեն ըլլալ»:

Ասկից սկսեալ Հերման իր տկար սրտին վրայ կը տիրէր, եւ իր վայելք փնտռող ամուսնոյն՝ իր երջանիկ հպատակներուն ծախքովն ալ ամենեւին եւ ոչ փոքր նուէր մը կ'ընէր: Ասով Ալալդէր անհաշտ ատելութիւն մը ձգեց իր վրան աշխարհակոմսուհիէն, որն որ իր զրկանքը չէր կրնար տանիլ: Գաղտուկ ետեւէն ինկաւ որ զանիկա մէջ տեղէն վերցընէ, բայց չյաջողեցաւ: Ալալդէր արքունեաց մէջ հաստատուն մնաց. ինք չէ թէ մինակ իշխանին, հապա նաեւ, բոլոր ժողովուրդեան սիրելին էր. ու նոյն իսկ պալատականները, քանի մը թոյլ եւ երկչոտ շողքորդները դուրս առնելով, զինքը կը սիրէին ու կը մեծարէին: Ասոր համար խորամանկ կ'ինը, ուրիշ միջոցի մը ձեռք զարկաւ, զԱլալդէր նեղելու համար: Բայց ուրիշ պարագայ մը շուտ մը իրը փոխեց, եւ աշխարհակոմսուհւոյն միտքը փոխել տուաւ:

Կոնգորտիան իշխան մը ծնաւ: Ասիկակ արտաքուստ մեծ ուրախութիւն մը կը ցուցընէր, եւ Հերմանին ու նոյն իսկ Ալալդէրին հետ այնպէս բարեկամացաւ, որ անոր սրտին այսպէս բոլորովին փոխուելուն վրայ կ'ուրախանային: Աս բանս նըրմարելով՝ Հերմանին ուրախութիւնը կրկին մեծ էր: Իշխանին ծնունդը չէ թէ մինակ արքունեաց, հապա նաեւ բոլոր երկրին մէջ մեծ ուրախութիւն պատճառեց: Յառաջ քան տղան մկրտելը խորհուրդ հարցուեցաւ թէ ինչ անուն դնեն տղուն: Եւ որովհետեւ անոր վրայ չէին միաբաներ, ասոր որոշումը Մարպուրկի Գեր. Կոնրատ եպիսկո-

պոսին թող տրուեցաւ, որն որ իշխանը պիտ'որ մկրտէր:

“Իշխանը թող հաւուն անունն առնու եւ մամուն առաքինութիւնները ժառանգէ,, ըսաւ ծերունին. “Ստուգիւ մեծ մօրը ոգին իրեն պիտ'որ առաջնորդէ, անիկա, իր հաւուն յանցանքները բոլոր թուրինգիացիներուն յիշատակէն պիտ'որ ջնջէ, եւ այսպէս Լուսինն անունը բոլոր թուրինգիայի մէջ օրհնութեամբ պիտի յիշուի: Անոր ժամանակը թուրինգիայի մէջ ոսկեղէն դար մը պիտ'որ ծաղկի, որուն վրայ շատ դարերէն ետքը պիտ'որ պատմուի,,: Աս խօսքերը, պատուական ծերունին մարգարէական հոգւով մը խօսեցաւ, իր դէմքը շատ լուսաւորուած էր ու կը փայլէր, եւ ամէն իր քովը կեցողները խորունկ այլայլութեան մէջ էին:

Լսկից ետքը իշխանը դղեկին մատրան մէջ ջերմ աղօթքներով ու մաղթանքներով մկրտուեցաւ: Անոր կնքահայրը Վալդէրն էր, աշխարհակոմսին բարեկամը, ու կնքամայրն ալ եպիսկոպոսին քոյրը, Շգրալէնպօւրկի Կունիգունտ կոմսին այրին, որն որ իր ամուսնոյն մահուրէն ետեւ անորդի եղբօրը քով կ'ապրէր: Երբ որ տղան դարձեալ մօրը գիրկը տուին, զմայլած զինքն առաւ կրծոցը վրայ ճնշեց ու շատ անգամ ուրախութեամբ անոր անունը կու տար:

“Ուրեմն Լուգովիկոս է տղուս անունը,, կրկնեց աշխարհակոմսուհին ուրախութեան արցունքով, “աս մեծ անունը բոլորովին բաղձանացս համաձայն է: Ստուգիւ, իմ որդիս իր հաւուն պէս քաջ, հզօր ու հարուստ պիտ'որ ըլլայ, եւ ան ատեն նաեւ իմ պարծանքս եւ ուրախութիւնս պիտ'որ աւելցընէ,,: Աս ունայնասէր ու հպարտ խօսքերը լսելով Հերման ու Վալդեր արտաքոյ կարգի այլայլեցան ու խռոված իրարու կը նայէին. քիչ մ'ետքը լուութեամբ ու ցաւելով հեռացան գացին: Աս

բանս ամբարտաւան աշխարհակոմսուհւոյն ամե-
նեւին հոգը չեղաւ:

Պզտիկ իշխանը առողջ ու գեղեցիկ կը մեծնար
ծառատունկի մը պէս, որն որ ապագային համար
քաղցր պտուղ կը խոստանայ: Թէ մայրն ու թէ
հայրը կ'ուրախանային ասոր վրայ, միայն թէ մօրը
տղուն վրայ ունեցած սէրը ճշմարիտ մայրական
սէր չէր: Բայց այնպէս կ'երեւար որ իբր թէ Նա-
խախնամութիւնը աս զուարթ տղան, հօրն ու մօրը
մէջ հաշտութեան հրեշտակ մը որոշած է: Ասոր
վրայ լուութեամբ ներքուստ ոչ դք այնչափ կ'ու-
րախանար որչափ աղնուական Ալլիգէրը: Բայց մեծ
սրտի ցաւով աս գեղեցիկ ակնկալութեան բոլո-
րովին վերնալը տեսաւ:

Աշխարհակոմսուհին, սկեսրին մահուան օրէն ի
վեր, անոր դէմ սրտին մէջ անհաշտ ատելութիւն
մը կը սնուցանէր, գլխաւորաբար անոր աս վեր-
ջին "Ո՛վ դժբախտ որդի", խօսքերուն համար: Իր
սրտին մէջ ծածկուած կայծը, մէկ պարագայ մը
նորէն արծարծեց, որն որ անշիջանելի բոցը բո-
լորովին բորբոքեց, եւ անոր սիրտը միշտ ամու-
սինէն ու տղէն բաժնեց: Արովհետեւ պզտիկ Լու-
գովիկոսը, մեծ մօրը քրիստինէին հետ արտաքոյ
կարգի նմանութիւն ունէր, զորն որ մինչեւ հի-
մա, բաց ի Գոնգորտիայէն ամէն մարդ, տեսած
էր: Հերմանն ու Ալլիգէր ասիկա շատոնց ուրա-
խութեամբ, բայց միանգամայն անհանգարտ սրը-
տով, ճանչցած էին. բայց ցասկոտ մօրը առջին
խօսք մ'ալ չէին ըսած: Նաեւ արքունեաց մէջ
ծառայք աս դիտմամբ լուելու պատուէր ընդու-
նած էին: Եւ Գոնգորտիային աս նշմարուած նմա-
նութիւնը չտեսները, իր ատելի սկեսրին վրայ ու-
նեցած տգեղ գաղափարէն էր: Բայց անմիջապէս
աստուածային Նախախնամութեան առանձին դիտ-
մամբն աչուրները բացուեցան:

(Ր) մը, աշխարհակոմսուհին բոլորովին առան-

ձին իր տղուն հետ ննջելու սենեակը նստած ա-
տեն, կնքամայրն այցելութեան եկաւ, պարզապէս
իրեն ինչպէս ըլլալն իմանալու ու պզտիկ Լուգո-
վիկոսը տեսնելու համար: Տղան, հրեշտակի մը
պէս մօրը գրկէն իրեն դարձած կը ծիծաղէր:
Չափէ դուրս ուրախացած ու զմայլած, կնքամայ-
րը զուարթ տղան մօրը գրկէն առաւ, ու սիրելով
զանիկա կրծոցը վրայ ճնշեց, եւ պարզմտութեամբ
մը գոչեց, «Ո՛հ, երանի՛ թէ իմ սիրելի ֆրիստի-
նէս գեռ ողջ ըլլար: Ի՛նչպէս մեծ պիտ'որ ըլլար
մամուն ուրախութիւնը, իր գեղեցիկ թոռանը
վրայ, երբ որ զանիկա իրեն նման տեսնէր,,:

Լշխարհակոմսուհին աս խօսքը լսելուն պէս
յանկարծ գոյնը նետեց, եւ հին ատելութիւնը
բախտելով սրտին մէջ նորոգեցաւ: Անմիջապէս
տղուն մօտիկցաւ, անոր երեսը աղէկ մ'աչքէ ան-
ցուց. եւ բազդատեց ասիկակ ատելի սկեսրին հետ,
որուն պատկերը հիմակուան պէս գեռ իր աշխոյժ
մտաց առջին այնպէս կենդանի եկած չէր: Եւ
ահարկու ձայնով ու կատղած՝ կնքամայրը տղուն
հետ մէկդի հրեց, ու սենեկէն դուրս ելաւ գնաց:

Վողալով կնքամայրը տղան գետինը դրաւ, որն
որ խեղճ խեղճ լալու սկսաւ: Անմիջապէս իմա-
ցաւ աշխարհակոմսուհոյն կատաղութեան պատ-
ճառը, եւ լալով զղջաց իր անխոհեմութեանը վրայ:
Առանց յապաղելու աս բանս աշխարհակոմսին եւ
անոր բարեկամին ծանոյց: Երկուքն ալ սոսկացին:
Քայց վալդեր նորէն ինքն իրեն եկաւ եւ այսպէս
խօսելու սկսաւ: «Ինծի այնպէս կ'երեւայ թէ, ա-
սիկակ Աստուծոյ իմաստուն Նախախնամութեամբը
պատահեցաւ, որուն վրայ մենք աւելի պէտք ենք
ուրախանալ քան թէ տրտմիլ: Ինչու որ պզտիկ
իշխանը իր մոլութիւններով լեցուն աշխարհա-
կոմսուհոյն վերակեցութեան տակ ի՛նչ պիտ'որ
ըլլար: Ինք որ ամենեւին առաքինութիւն մը չու-
նի, տղուն սրտին մէջն ալ ամենեւին հատ մ'ալ

պիտ'որ չտնկէր, բայց իր ախտերէն ու մոլութիւններէն: Եւ, նոյն ատեն խեղճ Թուրինգիանինչ կ'ըլլար,:

«Այս աղէկ խորհուրդ մ'ունիմ տալու: Ար մտածեմ, որ շատ աղէկ կ'ըլլայ, եթէ ազնուական Աունիգունտ կոմսուհին, իր պատուական եղբօրը հրամանաւ, հանգուցեալ աշխարհակոմսուհւոյն երեսի վրայ ձգուած սենեակները գայ բնակի, եւ պզտիկ իշխանը կրթէ,»: Շատ աղէկ խորհուրդ գոչեցին միաբերան աշխարհակոմսն ու Աունիգունտ կոմսուհին:

«Այո՛, ազնիւ աշխարհակոմս, աւելցուց Աունիգունտ, թէ որ աս բանս ձեզի ուրախութիւն ու մխիթարութիւն կը պատճառէ, ես շատ սիրով վաղուրնէ իմ երջանիկ բարեկամիս սենեակները պզտիկ իշխանին հետ բնակելու կը սկսիմ, եւ հոն լուսթեամբ եւ անծանօթ, առանձին իմ սիրելի Ղուգովիկոսիս համար կ'ապրիմ: Զինքը իր հօրը առաքինութիւններովը կը կրթեմ, անոր մեծ մօրը հոգին միշտ իր քովը օրհնելով պիտ'որ շողայ, եւ յուսամ որ Թուրինգիան օր մ'ուրախութեան արցունքով ինծի շնորհակալ կ'ըլլայ: Եւ ապահով եմ որ եղբայրս ասոր ամենեւին ընդդիմութիւն չ'ունենար. ինչու որ իշխանական տան ու հայրենեաց բարիքը սիրող իրեն պէս մէկը չկայ: Թէպէտ գիտեմ, որ մեր բաժանումը թէ իրեն ու թէ ինծի դժուար պիտ'որ գայ եւ շատ արցունք պիտ'որ արժէ, ինչու որ քսան տարուրնէ աւելի իբրեւ սիրելի եղբայր ու քոյր մէկտեղ բնակած ենք: Բայց իշխանական տան ու հայրենեաց բարւոյն համար, աւելի մեծ զոհեր ընելու պատրաստ ենք,»:

Աշխարհակոմսը մեծ շնորհակալութեամբ ազնիւ կոմսուհւոյն ձեռքը թոխութեց, եւ պլպլած գոչեց. «Այսպէս բարի հպատակներ ունեցող իշխան մը բոլորովին դժբախտ չիկրնար ըլլալ: Ո՛վ, իմ

Հանգուցեալ մօրս ազնիւ բարեկամը: Ուրեմն ձեզի կը յանձնեմ իմ ազնիւ գոհարս. քու ձեռքդ կու տամ հազարաւոր հպատակաց ապագայ բարիքը: Մայր եղիբ իմ տղուս ու կրթիչ թուրինգիայի ժառանգին: Երկինք, այսպիսի մեծ գործքի մը մէջ զքեզ օրհնէ, եւ թէ որ աս գործքը կատարուելու կ'ըլլայ, օր մը Աստուած զքեզ առատութեամբ կը վարձատրէ, ինչու որ ես չեմ կրնար փոխարէն հատուցում մ'ընել թուրինգիայի բոլոր գանձերովն ալ, : Խիստ այլայլած, կոմսուհին աճապարելով տուն գնաց, ամէն բան շուտով մը կարգի գնելու համար, եւ հիմա թէ իր եւ թէ անոր բարեկամին սրտին վրայէն ծանր քար մը վերցուեցաւ:

Մոլութեանց տէր եղող աշխարհակոմսուհին շատ օրերով իր սենեակներուն մէկուն մէջ փակուած էր, եւ իրեն ծառայող աղախնէ մը զատ քովը մարդ թող չէր ի տար: Այսպէս շաբաթներ անցան, մինչեւ որ տղան տեսնելու բաղձանք ունենալը յայտնեց: Եւ երբ որ իրեն ըսին թէ, Շգրալէնպուրկի կոմսուհին իր հոգաբարձութեան տակ առած է, ու հանգուցեալ աշխարհակոմսուհւոյն սենեակները կը բնակի, այնպէս արհամարհոտ ծիծաղ մ'ըրաւ, որ ամէն ներկայ եղողներուն գարշիլ մը պատճառեց: Աս օրէն ի վեր ալ մէյ մ'ալ տղան չհարցուց:

Տմարդի ու անողորմ կոմսուհւոյն օտար հաճութիւն եւ ուրախութիւն որսալու ետեւէ եղած, ու պարապ տեղ իր վառուած ախտերը աղմկալից զբաղմանց մէջ զովացընել փնտուած ատեն, կու նիգունտ կոմսուհին հանդարտութեան մէջ նոյն մայրենի ուրախութիւնները կը վայելէր, որն որ իրեն համար որոշուած էին, զորոնք անոր մոլեկան սիրտը չէր ճանչնար: Ո՞վ կրնար կու նիգունտին զգացած ուրախութիւնն ու հաճութիւնն ստորագրել, երբ որ շնորհալից մանուկը առջի

անգամ իրեն մայր կանչեց: Եւ ո՛վ կրնար Տօրը անպատմելի ուրախութիւնը նկարագրել, երբ որ տեսաւ թէ ինչպէս իր որդին գեղեցիկ ու բարեպաշտ կը մեծնար: Օր չանցաւ, որ Վալդերին հետ իր տղուն այց չելէ: Եւ ասի իր ամենէն աւելի գեղեցիկ ու քաղցր ժամերն էին: Հերման, յուսալից տղան գիրկն առած ու կրծոցը վրայ ճնշած ատեն՝ ամէն վիշտ ու տրտմութիւն կը մոռնար, որոնք իր սիրտը կը տանջէին:

Երբ որ Լուդովիկոս տասը տարուան տղայ մ'եղած էր, աշխարհակոմսը հարկաւոր սեպեց, անոր կրթութիւնը իմաստուն ու առաքինի մարդու մը ձեռքով կատարելագործել տալու: Աս ընտրութիւնը Վալդերին վրայ ինկաւ: Կրնա՞ր արդեօք իշխանը ասկից աւելի աղէկ մէկն ընտրել: Ստուգիւ չէ. ապագան պիտ'որ ցուցնէ, թէ շատ աղէկ ընտրութիւն ըրած էր:

Վալդեր սիրով յանձն առաւ, հայրական սիրով մը բարեպաշտ ու բարի իշխանը կրթելու պաշտօնը. եւ տեսաւ իմացաւ թէ ինչպէս աղէկ կրթեր էր զանիկա խնամակալ մայրը: Ինք անոր դրած աղէկ հիման վրայ շէնքը յառաջ տարաւ, ու Լուդովիկոս այսպէս մեծցաւ մինչեւ որ չափահաս բարի պատանի մ'եղաւ: Ունէր անիկա հաւուն քաջասրտութիւնը, մեծ մօրը քաղցր զգածմունքները, Տօրը առաքինութիւններն ու մօրը վայելչութիւնը: Ամէն բան էրկան ուրախութիւն կը պատճառէր, բաց ի տմարդի եւ անողորմ մօրմէն՝ որն որ զտղան չէր սիրեր, բայց անոր արտաքոյ կարգի գեղեցկութեան ու քաջութեան համար ալ չէր կրնար ատել:

Որչափ որ աշխարհակոմսին ուրախութիւնն իր ազնիւ որդւոյն վրայ մեծ էր, միւս կողմանէ իր անգութ ամուսնոյն իրեն պատճառած վիշտն ալ նուազ չէր: Շատ անգամ, երբ որ գիշերը արթունեաց մէջ ամէնը խորունկ քնոյ մէջ կ'ըլ-

լային, աշխարհակոմսը իր հանգուցեալ մօրը շի-
րիմը կ'երթար, հոն աղօթքով եւ արցունք թա-
փելով, վշտացեալ սիրտը քիչ մը սփոփելու հա-
մար: Ամէն անգամուն քնարը մէկտեղ կ'առնէր,
զորն որ կը զարնէր հետեւեալ երգը երգելով:

Քունդ անդ՛շ, մայր, հանգչէ ընդ միշտ,
Աւ մ'արթըննար՝ տեսներ նոր վիշտ:
Ճամբան կարճ է,
Չուն երկար չէ:
Ըսպասէ, ես ալ քիչ մը ետ
Կու գամ կը հանգչիմ՝ քեզի հետ:

Իջիր գահէդ, ո՛վ լոյս հոգի,
Ուր սուրբ կրրակ կը բորբոքի.
Ուր սրբոց կարգը
Աստուծոյ փառքը
Կ'երգես դուն ալ հրեշտակներու
Հետ՝ հոս տեղաց վտանգէն հեռու:

Օրհնէ, եղիր դուն հովանի,
Պահպան հրեշտակ, ու զեղանի
Օրհնենքդ իշխան
Ցեղին վերան:
Ատելութիւնը դուն մարէ,
Տըրտում որդիդ մըխիթարէ:

Լուսաւորեալդ, իս մի թողուր,
Երբ կենցաղոյս ակօք արխուր
Յաւերով լի
Սիրտըս ճըմիի,
Որ վայրապար յուսով տարտամ
Քեզ օգնութեանըս չըկարգամ:

Ա՛խ, մայր. ազնիւ թուրինգեանց տունկ,
Աշխարհակոմս ծնանող զաւկունք,
Յաւս ընդունէ
Որ ծընողն է
Ողբանըւագ աս տաղերու
Գառնակրակիծ բողբոքներու:

Բայց դուն քու տեղդ հանգչէ անոյշ,
Որդւոյդ միայն թող ողբն ու գոյժ.
Յոյսն իր ընաւ
Գընաց թըւաւ.

Թողը միայն բոլոր անձնէ
Քու գըթութեանըդ կը յանձնէ:

Երկրի սնտաի բարեացը տեղ,
Եւ խաղալկաց փոխան շըքեղ,
Քու հոգիդ վէ՛հ
Մարց պարգեւէ՛
Որ վայելեն հոս արժանի
Իրենց վայլած փառքն իշխանի:

Գ Լ Ո Ւ Խ Զ.

Բեշթի մեջ կոչուանքը:

Թուրինգիայի մէջ Լուդովիկոս իշխանին նշա-
նաւոր եւ երեւելի պատանեակ մ'եղած ատեն,
անդին Բեշթի մէջ ալ Եղիսաբեթ մեծցած ու
սքանչելի օրիորդ մ'եղած էր: Արդէն տասնու-
վեց տարուան կոխած էր, եւ իր սեռին զարդը,
մօրն ուրախութիւնը, հօրը պարծանքն ու բոլոր
թագաւորական քաղքին եւ ամէն զինքը ճանչող-
ներուն սիրելին եղած էր: Ով որ զինքը կը ճանչ-
նար, պէտք էր անկեղծութեամբ խոստովանիլ,
թէ շատ քիչ եւ կամ թէ երբեք աղջկան մը
վրայ այնպիսի թէ մարմնական ու թէ հոգեւոր
առաւելութիւններ այնչափ համեստութեան ու
պարկեշտութեան հետ միացեալ գտնուած չէ:
Անոր համար բովանդակ թագաւորական քաղքին
մէջ այսպէս կ'ըսէին: Եղիսաբեթ իշխանուհին ի-
րեն կին առնող իշխանը, թէ որ անոր առաքի-
նութեանց մինակ կէսն ալ ունենայ, պէտք է
աշխարհքիս վրայ եղող երջանիկ մարդիկներուն
կարգը սեպել: Ա՛խ, շատ փնաս կ'ըլլայ, թէ որ
անարժան մէկն իրեն ամուսին ըլլայ: Անոր՝ աշ-
խարհքիս ամենէն պատուական անձը փեսայ կը
բաղձանք, ինչու որ ինք այնպիսի մարդու մ'ար-
ժանի է: Եւ ստուգիւ ալ շատ հզօր ու հարուստ
իշխաններ գաղտուկ կը ցանկային Հունգարիայի

Թագաւորին ազնիւ դուստրն իրենց ամուսին ունենալ. բայց ոչ որ դեռ իր անձին վրայ վստահութիւն ունեցաւ անոր հետ կարգուելու: Ինչու որ առաքինի Եղիսաբեթն իր արտաքին վարմանցը մէջ այնպէս բան մ'ունէր, որ զինքը ճանչցող երիտասարդք անոր վրայ յարգական երկիւղ մը կ'ունենային, ու մոլութեանց տէր եղողներն ալ իրմէ կը փախչէին: Ինքն ալ աշխարհք մտնելու վրայ քիչ չէր մտածեր: Իր անմեղ սիրտն ու որդիական սէրը, ուրիշ մեծ երջանկութիւն չէր գիտեր բայց եթէ իր բարի մօրը քովը մնալ:

Եղիսաբեթին ծնողքն ալ շատոնց ծանրութեամբ աս գործքիս վրայ կը մտածէին: Ստէպասոր վրայ կը խօսէին, աս կամ ան իշխանին որդւոյն վրայ խորհուրդ կու տային, բայց պատշաճ մէկը չիկրցան որոշել:

«Թողունք որ Նախախնամութիւնը զանի ընտրէ, ըսաւ անգամ մը Թագուհին, երբ որ նորէն իր էրկանը հետ աս նիւթիս վրայ կը խօսէր: Թող տանք որ մեր անմեղ ու բարի դուստրը ընտրութիւն ընէ. եւ իր ընտրութիւնը ստուգիւ մերինէն շատ աւելի աղէկ կ'ըլլայ: Տարակոյս չկայ որ Նախախնամութիւնը մեր սիրելի աղջկան ամուսին մ'արդէն որոշած պիտ'որ ըլլայ: Թէ ինչպէս ասոնք իրար պիտ'որ գտնեն, ասի մեզի անծանօթէ, բայց ասիկակ ալ նոյն իսկ Նախախնամութիւնը կը հոգայ»: Այսպէս խօսեցաւ Թագուհին, եւ ասկից ի վեր երկուքն ալ աս գործքիս վրայ հանդարտ ու անհոգ կը կենային:

Ասոր նման հոգ կամ գործք մը ինչպէս Հունգարիայի մէջ Թագաւորն ու Թագուհին, այսպէս նաեւ Թուրինգիայի արքունեաց մէջ երկու մտերիմ բարեկամներ, Հերմանն ու Ալլգէր, ունէին: Հերմանն իր մարմնոյն զօրութեան տկարանալը խիստ կը զգար, ասոր համար ալ սաստիկ կը բաղձար, մեռնելէն յառաջ իր սիրելի որդին, առաքինի կո-

ղակցի մը քով տեսնել: Եւ անոր համար աս նիւթիս վրայ շատ անգամ Վալդերին հետ կը խօսէր:

“Ա՛խ, երանի թէ իմ Լուդովիկոսս, ըսաւ անգամ մը Վալդերին, իր ապագայ ամուսին ընտրելու մէջ հօրը պէս դժբախտ չըլլար: Քաջ պատանին ստուգիւ ան ատեն սիրտս սաստիկ կը վերաւորէ, ”:

“Ապահով եղէք որ անիկա շատ երջանիկ պիտ'որ ըլլայ, կրկնեց բարեկամը. իմ սիրտս միշտ այսպէս կը վկայէ: Բայց թէ ո՛ւր արդեօք ան ազնիւ էակը կը ծաղկի կը պայծառանայ ու ի չափ կը հասնի, որն որ մեր սիրելի իշխանը պիտ'որ երջանկացընէ, ստոյգ է որ չեմ գիտեր, բայց Աստուած գիտէ, եւ ստուգիւ ալ անոր ապագայ ամուսինն արդէն որոշած պիտ'որ ըլլայ”:

“Այն մխիթարական զգացումն իմ սիրտս ալ կ'ունենայ պատասխանեց Հերման, բայց Աստուած տար որ չխաբուէինք, ”:

“Սիրելի բարեկամ կրկնեց Վալդեր, մի տարակուսիր, քու յաջորդը եւ իր հպատակներն երջանիկ պիտ'որ ըլլան: Ի՛նչ, Լուդովիկոսին ծնընդեան օրը բարեպաշտ եպիսկոպոսին ըրած մարգարէութիւնը մոռցար, ”:

Հոս՝ իրարու հետ վստահութեամբ խօսած ատեննին, դղեկին գաւթին մէջ զարնուած թմբուկը, զերենք ընդմիջեց: Եւ շուտ մը Հունգարիայի հզօր թագաւորէն խրկուած սուրհանգակի մը գալուստը ծանուցին: Ասիկա ներս մտաւ եւ աշխարհակոմսին՝ Անդրէաս թագաւորէն գրուած մը տուաւ: Մէջը շատ բարեկամաբար մեծ կոչունքի մը հրաւեր կը պարունակէր, զորն որ թագաւորն իր նոր ծնած Պելա իշխանին համար պիտ'որ տար, եւ որուն՝ արդէն մերձակայ երկիրներուն բոլոր իշխանները, կոմսերն եւ ասպետները հրաւիրուած էին: Աշխարհակոմսը մեծ յարգութեամբ գրուածքը կարդացած ատեն, Վալդեր սուրհանգակը

Տիրանոց տարաւ եւ անոր պատուական կերակուր
հանեց: Երբոր նորէն իրեն եկաւ, աշխարհակոմսը
թագաւորին գրած թուղթը Վալդէրին տուաւ որ
կարդայ: Վալդէր կարդացած ատեն այլայլութե-
նէն չկրցաւ ինք զինքը բռնել, լացաւ:

«Միրտ առ ու քաջալերուէ սիրելի բարեկամ»,
գոչեց Վալդէր ուրախութեամբ լցուած: Ուրա-
խացիր ինձի հետ, ինչու որ աս պատուաւոր նա-
մակը, ինչպէս նաեւ կոչուէքը, ինձի Աստուծոյ
մէկ նախախնամութեան գործքը կ'երեւայ, որն որ
քիչ մ'ետքը Թուրինգիայի մէջ մեծ երջանկու-
թիւն մը պիտ'որ բերէ: Ունեցած յոյսս օգի վրայ
հիմնեալ չէ, հապա ունեցած հաւատքիս վրայ
հաստատուած է, եւ ամէն յաջող պարագաները
զիս կը քաջալերեն ու կը հաստատեն: Լսէ ինձի,
սիրելի բարեկամ, եւ ան ատեն կրնաս դուն քեզմէ
դատել իմ յոյսս ինչ բանի վրայ հաստատուած
ըլլալը:

Ընդրէաս թագաւորը՝ չափահաս աղջիկ մ'ու-
նի, որն որ ազնիւ մօրը հաւատարիմ պատկերը,
չունգարիայի զարդն եւ ամէն ազնուական իշխա-
նաց, կոմսերու եւ ասպետաց զարմացման արժա-
նի առարկան եղած է: Ով որ զինքը կը տեսնէ
եւ իրեն հետ կը խօսի, զանիկայ կանանց սեռին
մարգարիտը կը կոչէ: Եւ աս պատուական մար-
գարիտը դեռ կրնայ ստացուիլ, վասն զի դեռ
ազատորդի մը չէ ցուցուած, որ համարձակի զա-
նիկա ձեռք բերելու: Աս տեղեկութիւնն ես ար-
քունեաց մէջ գտնուած այնպիսի մարդիկներէն
առած եմ, որոնց արդարասիրութեանը վրայ կրնամ
վստահ ըլլալ:

Ըս թանկագին ու պատուական մարգարիտը,
աս յաջող ու յարմար առթին մեր հոյակապ Լու-
դովիկոս իշխանը պիտ'որ ճանչնայ: Ինք պիտ'որ
ըլլայ որ միւս իշխաններուն մէջէն, իր ունեցած
քաջասրտութեամբն ու առաւելութեամբը զանիկայ

իրեն պիտ'որ ժառանգէ, ու հայրենիք պիտ'որ բերէ յերջանկութիւն բովանդակ թուրինգիայի: Սիրելի բարեկամ, երջանիկ ըլլալու համար մեզի ալ ինչ կը պակտի, երբոր մեռած ատեննիս գիտնանք որ նաեւ թուրինգիան, սիրելի հայրենիքը երջանիկ է,»:

«Սիրելի Վալդէր, դուն կ'երազես, ըսաւ աշխարհակոմսը: Ասի մէկ շատ սիրուն ու քաղցր երազ մըն է, բայց ի վերայ այսր ամենայնի երազ է, որուն կատարուելուն վրայ թուրինգիայի աննշանաւոր աշխարհակոմսը եւ ոչ կրնայ մտածել,»:

«Վմենելին աննշանաւոր չէ թուրինգիայի աշխարհակոմսը կրկնեց Վալդէր. ստոյգ է քու աչացդ առջին այնպէս է, բայց աշխարհքիս աչքին առջեւ այնպէս չէ: Քու արդիւնքդ հազարաւոր մարդիկ քիչ շատ ճանչցած են, գիտեն, որոնց մէջ հզօր թագաւորներ եւ իշխաններ կան. ասոր՝ նոյն իսկ Հունգարիայի թագաւորին գրուածքը հաստատուն ցոյց մըն է: Աս հզօր թագաւորը քեզի՝ արժանի եղած գովութիւնը չխօսեցա՞ւ, ու իր բարեկամութիւնը քեզի չընծայեց: Անոր խօսքերը ոչ կեղծաւորութիւն է եւ ոչ ալ շողքորթութիւն, ինչու որ անոր արդարասիրութիւնը ճանչցողը, գիտէ որ անիկակ աս պակտութիւնները չունի: Նոյն իսկ ես Անգրէաս թագաւորին արդարասիրութեան ու մեծասրտութեան վրայ դրած եմ իմ յոյսս: Երբ որ դեռ անիկա կարգուած չէր, հզօր ու հարուստ իշխաններ, իրենց դուստրը անոր կին տալու համար շատ ջանացին: Բայց ինչ ըրաւ ազնիւ ու հզօր թագաւորը, որն որ առաքինութիւնը մեծութենէ, փառաւորութենէ ու հարստութենէ վեր կը դասէր. ամէն իշխանաց ազգանց մէջէն, առաքինի Կերդրուտան, Բերթոլտ Բ. Պաւիէրայի աշխարհակոմսին դուստրը իրեն կին ընտրեց: Կրնայ արդեօք այսպիսի

մարդէ մը սպասուիլ, որ ինք այսպիսի սկզբունքներով, Թուրքինգիայի աշխարհակոմսին առաքինի ու քաջ որդին արհամարհէ ու մերժէ: Ա՛հ, չէ. անգամ մը Լուդովիկոս իշխանը արգարասէր թագաւորին արքունիքն որ երթայ ու հոն անոր՝ իր առաքինութիւնն ու քաջութիւնը ցուցնէ, ու մտտանց թագաւորական ընտանեաց հետ ծանօթութիւն ընէ, հաւատա որ, ես նոյն ատեն իմ խոհեմ՝ ակնկալութեանս կատարումը պսակուած պիտ'որ տեսնեմ,,:

«Վկնկալութիւնդ խիստ շատ է, յանսահմանս շատ, սիրելի Վալդէր, ըսաւ աշխարհակոմսը քիչ մ'աւելի զուարթ գէմքով. եւ ան պատճառները, որոնց վրայ որ դուն քու յոյսդ հիմնած ես, իմ սիրտս ալ կը մոլորցընեն, որ ան ակնկալութեանդ հաւանի: Բայց Վալդէր, Վալդէր, գիտնաս որ մարդկային սիրտը շատ դիւրաւ կը խաբուի: Եւ ան ատեն մտածէ, աս խաբուիլը ինչպէս դառն կ'ըլլայ թէ քեզի ու թէ ինձի: Բաց ասկից շնորհակալ կ'ըլլամ քեզի, հաւատարիմ ու ազնիւ բարեկամ, քու իմ ու որդւոյս վրայ ունեցած սիրոյդ ու մտադրութեանդ վրայ, եւ ուրիշ բան այնչափ սրտանց չեմ բաղձար, բայց եթէ քու բաղձանացդ կատարումը, որն որ նաեւ ստուգիլ իմ բաղձանքս ալ է,,:

«Ուրեմն երթամ Բեշթ ճամբայ ելլելու պատրաստութիւն տեսնեմ, գոչեց Վալդէր ուրախութեամբ. երթամ նաեւ իշխանին ալ ծանուցանեմ, բաց ի մեր ունեցած ակնկալութենէն, ինչու որ ասի պէտք է գաղտուկ մնալ: Ի՛նչպէս պիտ'որ ուրախանայ բարի իշխանն այսպիսի յարմար առթի մը համար, որ կրնայ այնպիսի փառաւոր արքունեաց մէջ ինք զինքն երեւելի ու նշանաւոր ցուցընել: Եւ ստուգիլ ալ առաքինի ու քաջ պատանին ինք զինքը խիստ պատուաւոր պիտ'որ երեւցընէ, Լուդովիկոս իբրեւ աղէկ կրո-

Թեալ աշակերտ մը իր ուսուցչին պատիւ պիտ'որ
ընէ, : Ալլդէր ասոնք խօսելէն ետեւ սկսաւ անմի-
ջապէս ընելու ճամբորդութեան պատրաստութիւն
տեսնել : Ամենէն փութաջանն ու զուարթացողը
Ղուդովիկոսն էր, որն որ մեծ անհամբերութեամբ
ճամբայ ելլելու օրուան կը սպասէր :

Ա երջապէս աս օրն երեւցաւ : Աշխարհակոմսը
շատ ընտանութեամբ իր ամուսինն ալ աս ճամ-
բորդութեան հրաւիրած էր : Բայց անիկա տմար-
դութեամբ աս հրաւերը մերժեց : Ասկից աւելի
ինչ բան կրնար յուսացուիլ այսպիսի հպարտ իշ-
խանուհիէ մը, որն որ այնպիսի տեղեր սիրով
գտնուիլ չէր ուզեր, ուր իրմէ վեր անձինքներ
պիտ'որ տեսնէր : Ալլդէր անոր տունը մնալուն
վրայ խիստ կ'ուրախանար : Ասն զի անհիմն չէր
ունեցած երկիւղը, թէ հպարտ ու փառասէր աշ-
խարհակոմսուհոյն Բեշթի թագաւորական դար-
պասին մէջ ներկայ ըլլալը կրնայ իր գեղեցիկ
յոյսերը պարապի հանել : Ա երջապէս շքեղ ու
փառաւոր զարդարուած ու յիսունի չափ ճամ-
բորդներու բազմութեամբ ճամբայ ելաւ աշխար-
հակոմսն իր բարեկամին ու որդւոյն հետ : Իրենց
ճամբորդութիւնը շատ երջանիկ ու յաջող եղաւ .
եւ Բեշթի մէջ թագաւորական արքունիքէն շատ
փառաւորութեամբ ու պատուով ընդունուեցան :

Ի եշթի մէջ ամենայն ինչ հանգիստական էր, եւ
ուրախութեան համար կարգադրուած եւ արքու-
նեաց մէջ արդէն երեւելի ու հոյակապ կալուա-
ծատէրներ զանազան, մտ ու հեռու կողմերէն
եկած ժողովուած էին : Ամենայն ինչ հոն փառաւոր
ու վեհ էր : Առջի օրերը Ալլդէրին շատ անհա-
ճոյ եկաւ աս կերպ վարմունքը՝ որոնց ինք ամե-
նեւին վարժած չէր : Բայց իր տհաճութիւնը ան-
միջապէս ներքին ուրախութեան մը փոխուեցաւ,
երբ որ աշխարհակոմսը իշխանին հետ մեկտեղ,
թագաւորական ընտանիքէն առանձին ունկնդրու-

Թեան կոչուեցաւ, ու հոն խիստ ընտանեկան ընդունելութիւն գտաւ: Աշխարհակոմսը թագաւորական ընտանեաց ներկայացուց նախ իր որդին, եւ ետքէն Ալլդէրը՝ անոր իբրեւ դաստիարակն եւ իր ներքին բարեկամը: Ալլդէր հազիւ կրնար իր ականջին հաւատալ, երբ որ թագաւորին բերնէն լսեց, որ ինք ակնկալութենէ դուրս, Թուրինգիայի իշխանական տան ամէն ընտանեկան յարաբերութեանց տեղեակ է: Անոր համար ալ աշխարհակոմսին հետ իբրեւ ծանօթ մէկուն հետ կը խօսէր: Եւ տեսնելով խելացի ու համեստ իշխանին՝ առջի անգամ ըրած ունկնդրութեան ատեն թագաւորական ընտանեաց վրայ ըրած տրպաւորութիւնը, ներքուստ կ'ուրախանար ու կը զմայլէր: Եւ այսպիսի սիրելի տեղոյ մը մէջ սիրտը այնպէս հաճութիւն մը կը զգար, որ ժամերը բոպէի մը պէս կ'անցնէին:

Աս առանձին գաղտնի ունկնդրութենէ ետքը, Ալլդէր ալ առաջուան զուարթ մարդն էր, եւ երբոր աշխարհակոմսին եւ իշխանին հետ նորէն իրենց սենեակը դարձան, պէտք էր գովեստներն ու մեծարանքները լսել: Իսկզբան անիմանալի շփոթութիւն մըն էր, ինչու որ ամէն մէկն իր սիրտը պարպել կ'ուզէր, ամէն մէկը կը խօսէր, եւ ամենեւին իրարու ըսածին միտ չէին դներ:

Ա երջապէս կարգաւորեալ խօսելու սկսան, եւ ամէնն ալ միաբան սկսան գովել, որ թագաւորը շատ իմաստուն ու մարդասէր մարդ մըն է. թագուհին երկրորդ ֆրիստինէ մը, եւ իշխանուհին ալ իր ազնիւ մօրը ճշմարիտ պատկերն է, եւ թէ իրենց գովասանքին մէջ չափազանցութիւն չկայ: Թէպէտեւ իշխանը բան մը չէր ըսեր, բայց սրտտես Ալլդէրը նշմարած էր թէ իշխանուհին անոր հակում մ'ունեցած է: Իր ուրախութիւնն արդէն լցուած էր, երբ որ թագաւորին ու թագուհւոյն ըրած մտերիմ խօսակցութեանց ներկայ

գտնուեցաւ : Ասոնց այսպէս իրենց խուցին մէջ
 թագաւորական ընտանեաց վրայ դատաստան ըրած
 ատեն, անդիէն թագաւորն ու թագուհին ալ
 աս թուրինգիայէն եկող արժանի հիւրերուն վրայ
 դատաստաններ կ'ընէին : Ամէն մէկուն արժանաւոր
 գովութիւններ տրուեցան, բայց թագուհին ամե-
 նէն աւելի ու լեցուն բերնով Լուգովիկոս իշխա-
 նին վրայ խօսեցաւ :

«Չեմ կրնար քեզի ըսել, սիրելի Անդրէաս,
 ըսաւ, թագուհին, թէ ինչպիսի տպաւորութիւն
 ըրաւ իմ վրաս առջի անգամ տեսնուելունս, աս
 երիտասարդ պատանին. իրեն մէկ հակում մը
 կ'ունենայի, իբրեւ թէ որդիս ըլլար : Մէկ ան-
 մեկների բան մը սրտիս կը խօսէր. եւ իբր թէ
 ներսիդիս ձայն մը կը լսէի որ կը գոչէր. աս է,
 եւ ոչ թէ ուրիշ մը, քու Աստուծմէ ընտրուած
 ու որոշուած փեսագ : Նաեւ ինծի այնպէս կու-
 գար որ իբրեւ թէ զինքը շատոնցուրնէ ճանչցած
 ըլլամ, եւ մեր ընտանիքը թուրինգիայի ընտանեաց
 հետ շատ տարիներէ ի վեր սերտ բարեկամութեան
 մէջ ըլլայ : Եւ բաց ասկից, պէտք եմ քեզի յայտ-
 նել, որ նաեւ իշխանն ալ, ինչպէս որ տեսայ,
 Եղիսաբեթին վրայ քիչ տպաւորութիւն չըրաւ,» :

Թագաւորն ալ նոյնպիսի նպաստաւոր վճիռ մը
 տուաւ Լուգովիկոսին վրայ, եւ ինք զինքը խիստ
 միտեալ ցուցուց մէկ սերտ խնամութիւն մ'ընե-
 լու թուրինգիայի իշխանական ընտանեաց հետ,
 որուն վրայ շատ գովելի ու պատուաւոր բաներ
 լսած էր : Բայց իրեն այնպէս կ'երեւար, որ պէտք
 է հանգեսին լմրննալուն սպասել, եւ վերջէն նախ
 աշխարհակոմսոյն հետ գաղանի աս բանիս վրայ
 խօսիլ, ու թէ իշխանին ու թէ Եղիսաբեթին ի-
 րարու ունեցած փոփոխ միտութիւնը քննել ի-
 մանալ : «Ինչու որ չեմ ուզեր ըսաւ, թագաւո-
 րը, մեր աղջիկը այնպիսի մարդու մը հետ կարգել,
 զորն որ ինքը չէ ընտրած : Նոյն սկզբան կը հե-

տեւի անտարակոյս նաեւ աշխարհակոմսը: Ինչու որ ինծի շատ բարի հայր մը ու ազնուական մարդ մը կ'երեւայ: Այսպէս կը նկարագրեն ամէն զինքը ճանչցողները,):

Արդ, երեքամսեայ Պելլա իշխանին ծննդեան հանդէսը սկսաւ աստուածային պաշտամամբ մը, զորն որ կատարեց Բեշթի եպիսկոպոսը, որն որ յարգելի ծեր մըն էր: Զանազան հանդիսութիւններով, ուրախութիւններով ու ժողովրդեան խաղերով շատ օրեր տեւեց, եւ վերջացաւ նիզակախաղութեամբ մը: Յաղթողին՝ դափնիէ պսակ մը կը սպասէր, եւ Եղիսաբեթ, թագաւորին աղջիկն որոշուած էր, անոր գլուխը ան պսակով զարդարելու:

Ասպարեզին մէջ մեծ մասը երիտասարդ մարդիկներ էին, որոնց մէջ շատ սրտտաներ ու քաջեր կը գտնուէին: Ըմբիշներուն ծնողքը հանդիսատեսներուն մէջ խառնուած էին, իրենց քաջ որդւոց կռուիլը տեսնելու համար: Աս վերջիններուն մէջն էին նաեւ Հերման աշխարհակոմսն եւ իր բարեկամը Ալլդէր: Ասոնք թագաւորական ընտանեաց մօտ առջի վերնատունը նստած էին:

Առիւր նիզակախաղով մ'եղաւ, եւ այնչափ քաջերուն մէջէն Աւստրիայի իշխանը շատ նշանաւոր գտնուեցաւ: Ամէն կողմանէ հաճութեան աղաղակներ կը հնչէին: Մինակ Ալլդէր չէր ուզեր իր հաճութեան աղաղակը միւսներուն հետ խառնել, ինչու որ իր սրտին դիւցազնը դեռ ասպարեզին մէջ մինակ մնացած էր: Ի՛նչպէս սիրտն ելաւ, երբ որ Լուդովիկոս քաջութեամբ արդէն յաղթութիւնը ստացած կարծուած դիւցազնին հետ կռիւն սկսաւ: Ամենուն աչքն ու սիրտը յաջողութիւն բաղձալով իրեն հետ ընկերացաւ: Ալլդէր մէյ մը աչքը թագաւորական ընտանեաց վրայ դարձուց, եւ ներքին ցնծութեամբ մը թագուհւոյն եւ իշխանուհւոյն աչուրները լեցուած տեսաւ:

Այլ մ'ալ անդիէն յաղթութիւն թուրին գիայի իշխանին աղաղակն հնչեց ամէն կողմանէ ցնծութեամբ ու ծափահարութեամբ :

« Եւ դովիկոս յաղթող եղաւ, » գոչեց Վալդէր ուրախութեամբ ու խնդութեամբ, իսկ Հերմանն այլայլութենէն դողալու սկսաւ : Թագաւորական ընտանիքն իրեն մերձեցաւ եւ բարեմաղթութիւն ըրաւ այսպիսի քաջ ու ազնիւ որդւոյ մը համար : Երջանիկ հայրը մինակ ուրախութեան արտասուօք կրնար իր շնորհակալութիւնն յայտնել :

Երկրորդ, երրորդ կռիւ մ'ալ սկսաւ, եւ ամենէն ալ Լուդովիկոս յաղթող ելաւ : Հերմանին ու Վալդէրին ուրախութիւնն ալ այնչափ մեծ էր, որ ստիպուեցան քիչ մը հեռանալ եւ իրենց ուրախութենէն լցուած սիրտը պարպել թեթեւ ցընել :

Երբ որ նորէն տեսարանն եկան, տեսան որ հռչակուած դիւցազնը թագաւորին աղջկանը մօտիկցած, ու մէկ ծնկան վրայ անոր դողդոջուն ձեռքէն դափնին կ'ընդունի : Յաղթող պատանեկին երեսը նռան պէս կարմիր կը փայլէր ու մարգարտի հատերու պէս արցունքն աչուրներուն մէջ կը շողար : Թագաւորին աղջիկը շուտ մը երեսը մէկդի դարձուց, վասն զի իր աչուրներն ալ լեցուած էին :

Լուդովիկոսին ու Եղիսաբեթին աչուրներուն մէջ շողացող մարգարտի հատերը ոչ ոք կրնար այնպէս աղէկ նշմարել, ինչպէս Վալդէրն ու Թագուհին :

Լուդովիկոս մեծ պարկեշտութեամբ ու խոհեմութեամբ դարձեալ ասպարէզ միւս մարդիկներուն քով մտաւ, իբրեւ թէ յաղթողը ոչ թէ ինք, այլ ուրիշ մ'եղած ըլլայ : Աս ընտրողութիւնը որն որ ազնուական սրտի մը նկարագիրն է, ամենուն, նաեւ իր նախանձորդներուն սէրն ու մեծարանքը իրեն ձգեց :

“Լուգովիկոս իշխան, գոչեց Վալդեր անոր, քու դաստիարակիդ արժանաւորութենէն աւելի պատիւ ըրիր: Երկինք զքեզ վարձատրէ,»: Եւ Հերմանին դառնալով, “Ի՞նչ սիրելի բարեկամ, դեռ զիս խաբուած կը կարծես,», ըսաւ: “Քանի մ’օրէն իմ բովանդակ յոյսս պիտ’որ պսակուի,»: Լուգովիկոս Վալդերին խօսքերը կրնար իմանալ, թէ որ այնպէս չկարծէր թէ իր սրտին մէջէն անցածները ուրիշներուն ծածուկ մնացած են: Ասոր նման գաղտնիք մը նաեւ Եղիսաբեթին սրտին մէջ ծածկուած էր: Քայց նոյն իսկ ան երեւելի օրը արեւը չմտած, թագուհին Եղիսաբեթին՝ ու Վալդերն ալ Լուգովիկոսին գաղտնիքն իմացած էին: Երկուքին հայրն ալ անմիջապէս աս բանիս վրայ տեղեկութիւն ունեցան:

Իշխարհակոմսը դողդոջուն ձայնիւ մը թագաւորին հետ խօսեցաւ ու հաւանութիւնը խնդրեց որ աղջիկը ձեռքն իր որդւոյն տայ. թագաւորն ուրախութեամբ խնդիրքը կատարեց: Ան ատեն Լուգովիկոս եւ Եղիսաբեթ իրենց հօրն առջին ծնկան վրայ եկան եւ անոնց օրհնութիւնն առին: Ո՛չ աս ազնուական հարսին ու փեսին երջանկութիւնն՝ որով Աստուծոյ մասնաւոր տեսչութեամբն իրարու հետ կապուեցան, ո՛չ երկու ծնողաց ուրախութիւնն եւ ո՛չ ալ ազնուական Վալդերին ցնծութիւնը կրնայ իմ գրիչս ստորագրել:

Երկրորդ օրը թագաւորն անձամբ ամէն երեւելի հիւրերուն իր աղջկան՝ Թուրինգիայի Լուգովիկոս իշխանին հետ եղած հարսնախօսութիւնն իմացուց, եւ քանի մ’օր ետքն ըլլալու հարսնիքին նորէն զիրենք հրաւիրեց: Քայց ինչպիսի այլ եւ այլ խորհուրդներ չծնաւ աս զարմանալի դէպքը: Ոմանք տրտմեցան, որովհետեւ իրենց յոյսը պարապի ելած տեսան. ուրիշներն ալ կը զարմանային, որ թագաւորն իր դուստրը, այսպիսի աննշանաւոր իշխանի մը կին կու տայ. եւ ամէնն ալ

Լուդովիկոսին բախտին վրայ կը նախանձէին. բայց ամէն մարդ պէտք էր համարձակ խոստովանիլ որ քաջ ու համեստ իշխանն իշխանուհւոյն անարժան չէր:

Թագաւորական քաղքին բնակիչը՝ որոնք նիզակախաղութեան ժամանակ ներկայ եղող իշխանաց եւ ասպետներու մէջ ընդունուած էին, իրենք ալ այսպէս կ'ըսէին. «Փառք Աստուծոյ, երկինք մեր սրտին բաղձանքը լեցուց, ու մեր ազնիւ իշխանուհին մէկ արժանի փեսայի մը պարգեւեց: Արդէն մարդս կրնայ անոր արտաքինէն ու ցուցուցած համեստութենէն ու քաջութենէն հետեւցընել, որ անիկակ ազնուական իշխան մըն է: Աստուած տայ որ երկուքն ալ երջանիկ ըլան»:

Արդ թագաւորական արքունեաց մէջ հանդէսները, յառաջուրնէ շատ աւելի փառաւորութեամբ նորէն սկսան: Մեծ խնդութեամբ ու հասարակաց ուրախութեամբ կը կատարուէր հարսնիքը: Եւ աշխարհակոմսը, որն որ Վալդերին հետ բոլորովին ուրախութեան ծովուն մէջ կը լողար, անմիջապէս աս ուրախացուցիչ լրով սուրհանդակ մը խրկեց Թուրինգիա:

ԳԼՈՒԽ Է.

Հրաժեշտ եւ ընդունելոյթիւն:

Տօնախմբութիւնը կամ հանդէսը լմրննալէն ետքը, ամէն մէկ կալուածատէր իրարու ետեւ թագաւորական արքունիքէն հրաժեշտ առին, եւ ամէնն ալ զանազան ուղղութեամբ իրենց հայրենիքը դարձան: Աս հրաժեշտներէն ետեւ, ուրիշ մ'ալ եկաւ, որն որ շատ վշտալից էր եւ երկու կողման ալ շատ արցունք արժեց: Եւ ասի Եղիսաբեթին հրաժեշտն էր, որն որ իրեններէն եւ մաւնաւանդ իր սիրելի հայրենիքէն պիտ'որ բաժնուէր:

Արեւելի ու հոյակապ հիւրերուն հեռանալէն
 ետեւ, թագաւորական արքունեաց մէջ աղմկալից
 հանդեսին վրայ, յանկարծ խաղաղ եւ ազգոյ
 լուծիւն մը տիրեց. պայծառ ուրախութիւնը
 խորին տրամուլթեան ու սգոյ փոխուեցաւ. ինչու
 որ ամէն մարդ տրամուլթեամբ քիչ մ'ետքը բա-
 րի եւ ամենէն սիրուած Եղիսաբեթին երթալուն
 վրայ կը մտածէր: Բարի ծնողաց հետ չէ թէ մի-
 նակ բովանդակ արքունիքը, հապա նաեւ գրեթէ
 բոլոր թագաւորանիստ քաղաքը, եւ մանաւանդ
 աղքատները կը վշտանային: Եղիսաբեթին տրտ-
 մութիւնն ալ քիչ չէր: Արտասուալից աչքերով
 ու վշտացեալ սրտիւ ան օրուան մօտիկնալը կը
 տեսնէր, որուն մէջ, գուցէ յաւիտեանս այնչափ
 իրեն սիրելի եղած բաներէն պիտ'որ բաժնուէր:
 Եւ ստոյգ է որ ինք իրեն բռնութիւն կ'ընէր, իր
 արցունքն ու տրամուլթիւնը ծածկելու փեսին առ-
 ջեւ, զորն որ ներքուստ կը սիրէր, անով զինքն
 ալ չի տրամեցընելու համար: Եւ աս պատճառաւ
 ալ ծածուկ կու լար ու կը հառաչէր: Բայց
 զգայուն Լուդովիկոսին՝ իր ամուսնոյն տխրութիւնը
 չէր կրնար ծածկուած մնալ: Իր բարի սիրտն՝ աս
 տրամուլթիւնն անոր բնական համարեցաւ, պզտի-
 կուց ի վեր ան իրերուն սիրով կապուած ըլլա-
 լուն համար: Աս իր սրտին փափուկ զգածմունքը,
 որոնք մինակ ազնուական սրտերու յատուկ են,
 իր անոր վրայ ունեցած սէրն ու յարգութիւնը
 կ'աւելցընէին: Ներքին ուրախութեամբ կը տես-
 նէր որ իր հարսը չէ թէ մինակ իր ծնողաց, այլ
 նաեւ բոլոր զինքը ճանչցողներուն սիրելի է: Եւ
 Աստուծոյ իրեն այսպիսի ամուսին մը պարգեւե-
 լուն վրայ թափած արցունքը իրեն շնորհակալու-
 թեան խօսուն վկաներն էին: Եւ ինչ որ նախան-
 ձը՝ գուցէ նուազ առաքինի երկան մը սրտին մէջ
 կրնայ յարուցանել՝ ու սիրոյ կապը կրնայ խզել,
 այսպէս ալ Լուդովիկոսին՝ Եղիսաբեթին ճշմարիտ

սիրոյն վրայ ունեցած հաւատքը, նոյն սէրը աւելի եւս զօրաւոր կ'ընէր եւ ան սիրոյ կապը աւելի եւս հաստատուն կը պնդէր: Ինչու որ Նուդովիկոս Եղիսաբեթին առաքինութեանցը վրայ վստահ էր, եւ հաստատութեամբ ալ համոզուած էր, որ մինակ առաքինի այր եւ կնոջ մէջ կրնայ ճշմարիտ ու հաւատարիմ սէր գտնուիլ: Եւ ասոր համար ալ կրկին կրկին անգամ առաջադրութիւն դրաւ, ամենայն զօրութեամբ օգնելու, որ բժշկէ ան վէրքը, զորն որ իր ծնողացմէ ու սիրելի հայրենիքէն բաժանումը իր հարսին զգայուն սրտին կը պատճառէր: Եւ իր գթած սիրտն ալ անոր ցաւոցը մասնակից կ'ըլլար, եւ լուութեամբ անկից աւելի կը զգար:

Տաժնուելէն օր մը յառաջ, Եղիսաբեթ տրտում մօրը հետ քաղքին ամէն արկուականներուն վերջին հրաժարական այցելութիւնն ըրաւ, եւ անոնց հրաժարման արցունքն ու բարեմաղթութեան անկեղծութիւնը, երկուքին ալ արցունքը կը բերէին, բայց միանգամայն իրենց սրտին սփոփութիւն մ'ալ կու տային: Երբ որ աս օրը լմըննալու վրայ էր, Եղիսաբեթ ներքին մղում մը զգաց, ժամ մը առանձին կենալու, որպէս զի կարենայ առանց մէկը տեսնելու իր սրտին զգածմունքն ու իր արցունքն ազատ թող տալու: Անզգալաբար պալատը թող տուաւ, փառաւոր պարտեզին մէջ իրեն սիրելի եղած տեղերուն անգամ մ'ալ այց ելլելու համար, ուր պզտիկութենէ ի վեր իր սիրելի մօրը քով շատ գեղեցիկ ժամեր անցուցած էր: Միշտ իր բաժանումը ցաւալի կու գար, քանի անգամ որ ան ժամերը կը յիշէր: Ստէպ առատ անցունք կու գար աչուրներէն, քանի որ միտքը կու գար թէ ան իրեն սիրելի եղած տեղերը պիտ'որ թողու, եւ գուցէ իր կենաց մէջ ալ մէյ մ'ալ պիտ'որ չտեսնէ:

Ալլով խոտէ նստարանի մը վրայ նստաւ. ուր

չատ անգամ իր մօրը քով նստած արեւուն մա-
ռը մտնելը զննած էր: Եւ աս ատենս ալ նորէն
արեւը մառը կը դառնար: Խոր լուծեան ու
ցաւոց մէջ եւ արտասուալից աչուրներով դար-
ձեալ անոր հեռուն արեւմտեան լեռներուն ե-
տեւը խոնարհիլը տեսաւ:

«Ո՛հ, սիրելի արեգակը իր մառը մտաւ,, գոչեց
Եղիսաբեթ ցաւով ու լացքով: «Գուցէ վերջին
անգամն է որ կը տեսնեմ աս տեղս անոր մառը
դառնալը: Այսպէս նաեւ իմ մանկութեան ու-
րախուծիւններս իրենց մառը մտան: Ստոյգ է որ
արեգակը վաղը նորէն կը դառնայ կու գայ, բայց
անոր հետ իմ տղայութեանս ուրախութիւններն
ալ մէկտեղ չեն դառնար: Քիչ մը վերջը հե-
ռուանց, արտասուօք իմ սիրելի հայրենեացս եւ
իմ երջանիկ տղայութեանս օրերուն վրայ դառ-
նամ պիտ'որ նայիմ: Եւ սիրելի մայրս ասկից ե-
տեւ ամէն անգամ աս տեղերուս այցելութիւն
ըրած ատեն, իմ վրաս արցունք պիտ'որ թափէ:
Որովհետեւ ես ալ գեղեցիկ իրիկունները աս
դաշտերուն վրայ իրեն հետ ժուռ պիտ'որ չգամ,
եւ ոչ ալ իրեն հետ աս խոտի նստարանին վրայ
նստած՝ արեւուն մառը մտնելը պիտ'որ տեսնեմ,,:

Հոս բարեպաշտ Եղիսաբեթը ձեռուրները ի-
րարու միացուց, երկու ծնկան վրայ եկաւ եւ այս-
պէս աղօթք ըրաւ: «Ով երկնաւոր Հայր, զօրա-
ցուր իմ թոյլ ու տկար սիրտս, որպէս զի բա-
ժանման ցաւոցը տակ չընկճի: Զօրացուր ու մխի-
թարէ նաեւ իմ ծնողքս, մանաւանդ իմ բարի
մայրս, երբ որ առանձին ժամանակ իմ վրաս կու
լայ: Դուն աղէկ գիտես, ո՞վ Աստուած, թէ ինչ-
պէս զիս սրտանց կը սիրէ: Ըրէ որ իմ պզտիկ
եղբայրս իր սրտին ուրախութիւն ու մխիթարու-
թիւն ըլլայ: Եւ ըրէ որ ես ալ թուրինգիայի մէջ
իմ էրկանս քով բարի մարդիկ գտնեմ,,:

Եւ կարճ աղօթքէն ետեւ Եղիսաբեթ ոտք ե-

լաւ, ու խոտէ նստարանին վրայ նստաւ, եւ ինքն իրեն կ'ըսէր: «Ստուգիւ ես Թուրինգիայի մէջ ալ երջանիկ պիտ'որ ըլլամ, ինչու որ իմ Լուգովիկոսս բարեսիրտ եւ ազնուական մարդ մըն է: Իր ճշմարիտ ու հաւատարիմ սէրն իմ բաժնուելէն ունեցած ցաւս պիտ'որ մեղմացընէ ու կամաց կամաց անցընէ: Սիրելի ծնողացս վէրքն ալ Աստուած Պելային ձեռքով պիտ'որ բժշկէ: Եւ ես ալ թող տուած մօրս տեղ հոն Լուգովիկոսին մայրը պիտ'որ գտնեմ, որն որ իմ սիրելի մօրս տեղը պիտ'որ բռնէ: Ստուգիւ ան ալ բարի մայր մը պիտ'որ ըլլայ, վասն զի իր ամուսիննն ու որդին բարի եւ ազնուական են: Ո՛հ, կ'ուզեմ զինքը սիրել, եւ իրեն բարի դուստր մ'ըլլալ,»:

Այսպէս խօսեցաւ Եղիսաբեթ: Արցունքը հեղիկ մը աչուըններէն կը հոսէր որն որ սիրտը քիչ մը թեթեւցուց: Անմիջապէս երեսը զուարթացաւ, եւ ինք զինքը զօրացած կը զգար ան ցաւալի բաժանման ժամուն համար: Ասկից ետքը նրստած տեղէն ելաւ, իր սիրելի տեղերէն վերջին հրաժարականը ընդունելու համար: «Կեցէք բարով դուք տերեւազարդ տաճարներ, Կեցէք բարով դուք իմ ամէն սիրելի տեղերս: Զձեզ երբեք պիտ'որ չմոռնամ,»: Այսպէս խօսելէն ետեւ լալով ու սիրտը կոտրած պալատ իր խուցը դարձաւ: Դարձած ատեն քիչ մ'աւելի խաղաղցած ու զուարթ կ'երեւար, որովհետեւ լացքը իր սիրտը քիչ մը թեթեւցուցած էր: Սենեակը մտած ատեն, իր փեսան զինքն ուրախութեամբ դիմաւորեց, ինչու որ, պալատին մէջ զինքը չտեսնելով անձկութեամբ զինքը փնտուելու ելած էր: Եւ զինքը խաղաղցած ու զուարթացած տեսնելուն վրայ արտաքոյ կարգի ուրախացաւ: Եղիսաբեթ ալ զինքը շատ սիրով բարեւեց, եւ ներքուստ ձայն մը կը լսէր որ կ'ըսէր իրեն թէ երջանկութեան պիտ'որ հասնիս, քու ազնուասիրտ էրկանդ

քով շատ մեծ ուրախութիւն պիտ'որ վայելես : Բայց միւս կողմանէ ալ անձանօթ խորհուրդ մը — որ իբր թէ պիտ'որ չկարենայ երկայն ատեն իր փեսին հետ երջանկութիւն վայելել, եւ կամ թէ մերձակայ վիշտ ու տրտմութիւն մը պիտ'որ գայ վրան, — կ'ուզէր անոր գեղեցիկ յոյսը պարապի հանել, եւ իրեն դեռ նոր մատուցուած ուրախութեան բաժակին մէջ դառն թոյն հեղուլ : Բայց ինք աս շարագուշակ խորհուրդը մոռնալ կ'ուզէր, եւ ան գեղեցիկ ու զուարթ յոյսը հաստատուն բռնել : Եւ այսպէս դարձեալ նոյն խաղաղութիւնը գտաւ, որուն ուրիշ ատեններէ աւելի հիմա հարկաւորութիւն ունէր :

Էտեւեալ օրը ճամբորդութեան համար որոշուած էր : Թագաւորը միտքը դրած էր, որ իր աղջկան հետ մինչեւ Թուրինգիա մէկտեղ երթայ, բայց վերջէն աս խորհուրդը թող տուած էր, այսու դիմամբ որ երկու անգամ իր աղջկէն բաժնուելով անոր սիրտը կրկին չտրտմեցրնէ : Երկրորդ առտու արեւը ծագելուն պէս ճամբայ ելլելու համար՝ թագաւորին խուցը ժողվուելու խորհրդով, ամէն մարդ տրտմութեամբ հանգչելու գնաց : Բայց Եղիսաբեթին անկարելի եղաւ պառկիլ քնանալն աս գիշեր, որն որ իր կարծածին համաձայն վերջինն էր : Ստոյգ է անկողին մտած էր, բայց ամենեւին թեթեւ քուն մ'ալ չէր ուզեր անոր աշուրները գոցել, միշտ արցունքով լեցուած ըլլալուն : Միօրինակ աջ ու ձախ կողմը կը գառնար, իսկ քնանալ ամենեւին չէր կրնար, եւ արդէն գլխի բարձն արցունքով բուրովին թրջած էր : Անոր համար ալ չէր ուզեր ու չէր կրնար անկողնոյ մէջ կենալ : Ուստի ճրագ վառեց եւ ելաւ իր ճամբորդութեան զգեստին փաթթուեցաւ : Քովի սեղանին վրայ նոր կտակարան մը կար լատիններէն լեզուաւ, զորն որ շատ աղէկ կը հասկընար, ինչպէս որ նոյն ատենուան

կրթեալ Հունգարացիք կը հասկընային: Բացաւ գիրքն իր տկար սիրտը՝ այսպիսի ներկայ ցաւալի բաժանման ատեն զօրացընելու ու նախապատրաստելու համար:

Մտանց մասնաւոր աստուածային Նախախնամութեան չէր որ Եղիսաբեթ Մատթէոս աւետարանչին տասնուհիններորդ գլուխը բացած էր: Կարդաց ու հետեւեալ խօսքերուն կանկ առաւ կեցաւ, եւ տասն անգամի չափ կրկնեց, ինչու որ իր տրտում սրտին համար այսպիսի ատեն մը, մի միակ մխիթարական բան էր: Բարձր ձայնիւ սկըսաւ կարդալ. «Չիցե՞ ընկերցեալ յեր իե որ հասարակեացն իսկզբանէ՝ որո՞ւ եւ եգ որար զնոսս՝ եւ սու. վան այսորեկ լնողցե այր՝ զնայր եւ զմայր, եւ երկեցե զնեո կնոջ իւրոյ, եւ եղիցեն երկուեան ի մարտին օր,»:

Կարդալը դադրեցուց, գոցեց աստուածային գիրքը, ու մէկ կողմը գրաւ. ինչու որ ալ աւելի չէր ուզեր կարդալ, եւ աւելի ալ հարկաւորութիւն չունէր, վասն զի աս քիչ խօսքերուն մէջ բաւական մտածելու նիւթ գտած էր:

«Աւրեմն Աստուծոյ սուրբ կամքն աս է, ըսաւ Եղիսաբեթ ինք իրեն, որ այրը կնոջ համար հայրն ու մայրը թողու. եւ աս Աստուծոյ կամքը կանանց համար ալ չէ՞ մի: Ա՛հ, աղէկ չեմ ըներ, թէ որ իմ սրտիս չեմ յաղթեր, եւ ուրախութեամբ ու յօժարակամ էրկանս ետեւէն չեմ երթար, որուն հետ որ, բոլոր կենացս մէջ, ամուսնութեան սուրբ կապովը կապուած եմ: Ստուգիւ իմ թոյլ ու տկար սրտիս պիտ'որ տիրեմ, եւ իմ սիրելի էրկանս ետեւէն ուրախութեամբ ու յօժարակամ պիտ'որ երթամ, թէպէտ անի ի մահ ալ երթայ: Ստոյգ է որ սրտիս մեծ ցաւ կը պատճառէ իմ սիրելի ծնողքս, իմ նոր ծնած եղբայրս գուցէ ընդ միշտ թող տալս: Բայց Աստուծոյ արդար կամքն աս է, որ ես զանոնք թողում: Եւ պէտք եմ Աստուծոյ կամքն ամէն բանէն վեր դասել,»:

Վիչ մը ետքը պալատին մէջ ամէնն ալ արթընցած էին, եւ արդէն ամէն մարդ թագաւորին սենեակը ժողվուած էր ճամբորդները ճամբայ դնելու համար: Իրարմէ բաժնուելու ժամանակն եկած էր, եւ ճամբորդները հեծկլտալով թեւ թեւի մտան: Ամենէն աւելի Եղիսաբեթ ինք զինքը պատրաստական կը ցուցընէր: Դեռ քաղցր քնոյ մէջ եղող Պելան անկողնէն դուրս առաւ, տասն անգամէն աւելի պագաւ, ու մէկտեղ հօրն ու մօրը առջեւը գնաց. «Սիրելի ծնողք ըսաւ, այնչափ շատ մի լաք: Զիս կորսնցընելով ամէն բան կորսնցուցած չէք. սիրուն Պելան դեռ ձերն է: Անիկակ իզմէ շատ աւելի ձեր ուրախութիւնն ու սփոփութիւնը պիտ'որ ըլլայ: Երբ որ աս իմ պոքիկ եղբայրս կը մեծնայ, անոր հետ թուրինգիա մեզի այցելութեան կու գաք, եւ ան ատեն ինչ մեծ պիտ'որ ըլլայ իրար տեսնելնուս ուրախութիւնը: Աղէ սիրուն եղբայրս, դուն դեռ հիմա քու քոյրդ չես ճանչնար, բայց ան ատեն պիտ'որ ճանչնաս եւ մեր ուրախութիւնը մեծ պիտ'որ ըլլայ», : Եւ նորէն քանի մ'անգամ ալ գորովով տղան պագնելէն ետեւ դարձեալ անկողին դրաւ: Զուարթ տղան քունէն արթնցաւ, ու փոխանակ լալու, հրեշտակի մը պէս սկսաւ ծիծաղել: Տղուն ծիծաղը կարծես թէ ամէն տխուր դէմքերը կ'ուզէր զուարթացընել:

Նորէն անգամ մ'ալ բարի աղջիկը շնորհակալ եղաւ ծնողացը ամէն ընդունած բարիքներուն համար, անգամ մ'ալ իրենց փաթթուեցաւ, ու վերջէն բռնի իրենցմէ բաժնուեցաւ, խուցէն դուրս ելաւ, աստիճաններէն վար վազեց ու բաց կառքին մէջ մտաւ:

«Արթնաց բարով, սիրելի աղջիկս, երթաս բարով. Աստուած հետդ ըլլայ, Աստուած . . .», խօսքը չլմընցուցած, թագուհին կէս մարած բազմոցին վրան ինկաւ, իսկ թագաւորն աղջկան ետեւէն

գնաց մինչեւ կառք: Հոն նորէն անգամ մ'ալ ար-
տասուօք գրկեց պագաւ իր աղջիկը, փեսան, աշ-
խարհակոմսը, ու բարի Վալդէրը, որոնց աչուը-
ները նոյնպէս արտասուեաց մէջ կը լողային: Բո-
լոր ժողովուրդը պալատին առջին խոնած էին
վերջին անգամ թագաւորին աղջիկը տեսնելու
համար: Կառքը բազմութեան: մէջէն կամաց կա-
մաց յառաջ գնաց, եւ չորս կողմը լալու եւ հե-
ծեծանաց ձայնէն զատ բան մը չէր լսուեր:

«Ո՛հ, ինչպէս կը սիրեն եղեր զքեզ քու եր-
կրիդ մարդիկը, գոչեց Լուդովիկոս ուրախութեան
արտասուօք, բայց նոյն սէրը նաեւ Թուրինգացիք
ալ պիտ'որ ցուցնեն քեզի», : Բարի Եղիսաբեթն,
որ շարունակ կու լար, եւ հեծկլտալէն ամենեւին
չէր կրնար խօսիլ, ձեռուրներով ու գլուխը շար-
շելով շնորհակալ կ'ըլլար:

Երբ որ կառքը դղեկին մեծ դռնէն ելլելով
քաղքին մեծ փողոցը պիտ'որ դառնար, որն որ
նոյնպէս ամէն կողմանէ բազմութեամբ լեցուած
էր, կառքին ետեւէն շնչասպառ կնոջ ձայն մը «Կե-
ցէք, կեցէք», կը պոռար. Եղիսաբեթ անմիջապէս
իր սիրելի աղախնոյն ձայնն ըլլալը ճանչցաւ:
Կառքը կեցաւ:

«Վ երջապէս լացքով ու աղաչանքով յաջող-
ցուցի, ըսաւ շնչասպառ աղախինը, թագուհին ի
գութ շարժելու, որ հրաման տայ ինծի իմ սի-
րելի բարերարիս ետեւէն գալու: Ուստի զիս մի
մերժէք, եւ առէք զիս մէկտեղ տարէք ուր որ
կ'երթաք: Արդէն ձեզի ութը տարի ծառայեցի,
եւ զձեզ այնչափ կը սիրեմ, որ չեմ կրնար ա-
ռանց ձեզի ապրիլ», :

Եղիսաբեթ կառքէն դուրս ցածքեց, եւ իր
սիրելի ու հաւատարիմ աղախինը ողջագուրեց:
«Ո՛հ, սիրելի, բարի ու հաւատարիմ Աննաս, ըսաւ
լալով, շնորհակալ եմ, ըրածդ շատ է, արժանի
չեմ: Ի՞նչ իմ սիրոյս համար, քու ազգական-

ներդ ու հայրենիքդ պիտ'որ թողուս: Չէ, սիրելի Աննա, ասի պէտք չես ընել, ասոր չեմ կրնար հաւանիլ, թէպէտ անկից ինձի մեծ ուրախութիւն ալ գայ,»: Ոսկեթել բանուած լեցուն քսակ մը հանեց, եւ անոր երկնցուց ըսելով «Առ սիրելի Աննա, աս քիչ ստակը ի շնորհակալութիւն քու սիրոյդ ու հաւատարմութեանդ, դարձիր իմ մօրս գնա: Եւ կամ՝ թէ որ արքունիք չես ուզեր երթալ, քու ազգականներուդ գնա, եւ աս սուած ստակս կրնայ քեզի օժտի տեղ ծառայել,»:

«Ո՛հ իմ բարերարս. գոչեց Աննան ծնկան վրայ եկած, ու ստակը արհամարհելով, այնչափ խիստ ու անգուժ մ'ըլլար, եւ զիս մի մերժեր: Բայց թէ որ դուք զիս կառքին մէջ առնել չէք ուզեր, ես կառքին ետեւէն մինչեւ Թուրինգիա ոտօք կու գամ. եւ հոն ձեզի այնչափ կ'աղաչեմ, մինչեւ որ զիս ընդունիք, եւ ես դարձեալ ձեզի ծառայեմ: Ո՛հ, ձեզի ան ատեն շատ ու ստէպ բաներ կը պատմեմ, քու հայրենեացդ, ծնողացդ, պզտիկ իշխանին, եւ ուրիշ թող սուած սիրելի բաներուդ վրայ, եւ դուք ան ատեն ինք զինքնիդ սիրելի հայրենիքնիդ եղած կը կարծէք,»:

Եղիսաբեթ աս խօսքերէն յաղթուեցաւ, եւ չէր կրնար ալ դէմ դնել իր ազնուասիրտ աղախնոյն, ուստի զանիկա վեր վերցուց եւ զինքը բազկացը մէջ առած, «Չէ, այսպիսի ազնուական ու հաւատարիմ հոգի մը չեմ կրնար մերժել: Ետեւէս եկու սիրելի Աննա, եւ աս օրէս իմ բարեկամս եղիր,»:

Աննան, որուն ուրախութիւնը չեմ կրնար ստորագրել, իր տիրուհւոյն հետ կառք մտաւ, ուր՝ ամենէն ալ շատ սիրով ընդունուեցաւ: Ամէնն ալ կը զարմանային ու միաբերան կը գովէին անոր սէրն ու հաւատարմութիւնը: Այսպէս դարձեալ կառքը ճամբան սկսաւ յառաջ աննիլ, Ժողովրդեան բաղմութենէն բիւրաւոր բարեմաղթու-

Թիւններ ընդունելով, մինչեւ որ գաշտ մ'եկան :
 Հոս բաց տեղւոյ մէջ, ճամբորդներուն սիրտը քիչ
 մը բացուեցաւ : Եղիսաբեթ իր արցունքը կը չոր-
 ցընէր, ու կամաց կամաց զուարթանալու սկսաւ :

Արդէն Եղիսաբեթին հայրենիքը շատ ետեւ
 մնացած էր, եւ գրեթէ Թուրինգիայի շատ մօ-
 տիկցած էին, եւ քիչ մ'ետքը առջի սահմանէն
 ներս մտան : Բայց ինչ զարմանալի ու շքեղ ըն-
 դունելու թիւն : Իշխանին կառքը՝ բոլոր խուռն
 բազմութեամբ փառաւոր զարդարուած յաղթու-
 թեան կամարի մը տակէն անցաւ, որուն վրայ ոս-
 կեզօժ գրերով հետեւեալ խօսքերը կը կարդա-
 ցուէին : «Մեծա- ուրախութեամբ բարով եկան իշխանն
 ու իշխանուհին. Երջանկութիւնն Լուսավիտին, յաջ-
 դութիւնն Եղիսաբեթին», : Եւ նոյն խօսքերով կը բա-
 րեւէին զիրենք տօնական զգեստներ հագած ժող-
 վուած բազմութիւնը : Եղիսաբեթ շատ այլայլած
 էր, ու բաց կառքին մէջէն ուրախութեան ար-
 ցունքով անոնց բարեւ կու տար :

Խորհրդանոցին առջին կեցած էին մերձակայ
 քաղաքներուն, աւաններուն ու գեղերուն ամէն
 խորհրդականները, պաշտօնեաներն ու հասարա-
 կութեանց գլխաւորները, ու հպատակութեամբ
 իշխանին եւ իշխանուհւոյն պատիւ կը մատուցա-
 նէին : Անոնց մէջէն ամենէն պատուաւորը, լատի-
 ներէն լեզուաւ գեղեցիկ ճառ մը խօսեցաւ : Եւ
 մասնաւոր գիտմամբ նոր իշխանուհւոյն աս լեզուաւ
 խօսուեցաւ ճառը, ինչու որ Հունգարիայի մէջ
 այսպիսի հանդիսութեանց ատեն սովորութիւնն
 ասանկ էր :

Աս մտադրութիւնը՝ Եղիսաբեթին սիրտը ճա-
 ուին մէջի շողորդական խօսքերէն շատ աւելի
 շարժեց : Իսկ Հերմանն ու Լուսավիտոսն ալ մտե-
 ըիմ խօսակցութիւններով իրենց գոհութիւնը
 արտաբուստ կը յայտնէին : Առ հասարակ կ'ուրա-
 խանային որ Եղիսաբեթին համար, իշխանին պաշ-

տօնեաները, այսպիսի ընդունելութեան մը պատրաստութիւն տեսեր են, եւ քան զամէնը աւելի ժողովրդեան խնդութիւնը զերենք կ'ուրախացընէր: Մինակ սէգ ու ամբարտաւան Գոնգորտիային ընելու ընդունելութենէն կրնային քիչ մը վախ ունենալ: Բայց, որչափ ալ հպարտ եւ ունայնասէր ըլլար, կը յուսային որ անիկա Հունգարիայի հզօր թագաւորին աղջիկը, թէ որ մայրենի սիրով չէ նէ, գոնէ յարգութեան ու քաղաքավարութեան համար սիրով կ'ընդունի եւ անոր հետ աղէկ կը վարուի: Ար յուսային որ Եղիսաբեթ իր ազնուասրտութեամբն ու հեզաբարոյութեամբն սկեսրին հպարտ ու դաժան սիրտը կ'ազնուացընէ, եւ այսպէս բոլոր ընտանեաց մէջ կատարեալ հաշտութիւն յառաջ կը բերէ: Աս կարծեաց վրայ էր նաեւ իմաստուն Ալլդէրը, որուն խորհուրդ կը հարցուէր:

Ամէն անցած գաւառներէն ու գեղերէն, շատ ուրախութեամբ կ'ողջունուէին: Եւ ամէն կողմանէ կոմսեր եւ ասպետներ, իբրեւ աշխարհակոմսին հպատակները, կը ժողվուէին, ի պատիւ մինչեւ թագաւորանիստ քաղաքը մէկտեղ երթալու: Աս ասպետաց բազմութեան ցուցուցած ճշմարիտ սէրը, իշխանն եւ իշխանուհին ի հարկէ կ'ուրախացընէր:

Ա երջապէս բիւրաւոր ուրախութեան աղաղակներով աթոռանիստ քաղաքը մօտեցան: Ժամէ ժամ բազմութիւնը կ'աճէր, եւ իշխանին կառքին քովէն երկրին ազնուական ու երեւելի կոմսերը շքեղ հագուստներով ձիու վրայ կ'երթային: Եւ ժողովրդեան բազմութիւնն երթալով այնչափ կը շատնար, որ կառքը հազիւ քսյլ քսյլ կրնար յառաջ երթալ:

Շքեղ զարդարուած աթոռանիստ քաղքին դրան առջեւ իշխանն եւ իշխանուհին կառքէն վար ինջան ու մնացած ճամբան ձիով յառաջ

տարին: Գղեկին դրան քով, մեծ փառաւորութեամբ եւ երաժշտութեամբ բոլոր պալատականք, որոնց գլուխն էր սէգ կոմսուհին, սպասաւորներու բազմութեամբ շրջապատած, զիրենք ընդունեցան: Այսպիսի փառաւորութեան մէջ, Եղիսաբեթ դեռ իշխանուհի մը տեսած չէր: Եւ ոչ ալ իր մայրը՝ թագուհի ըլլալով երբեք այսպէս հագուած ունէր: Ինք սրտին մէջ կ'ուրախանար որ կոմսուհւոյն գիրկը պիտ'որ վազէ, եւ զինքը իբրեւ մայր պիտ'որ ողջունէ: Բայց մեծ տարակուսանօք ու սրտի անձկութեամբ անոր կը մերձենար: Ընդունելութիւնը շատ շքեղ, ընտանեկան ու քաղաքավարական էր, բայց ի սրտէ չէր, ինչպէս որ Եղիսաբեթ մօրմէ մը կը սպասէր: Աւելի եւս մեծ անձկութեան ու վարանմանց մէջ էին իր փեսան ու Աալդէր՝ երբ որ կոմսուհին զինքը պաղութեամբ մ'ողջագուրեց. Եղիսաբեթ աւելի ցաւէն քան թէ ուրախութենէն կու լար: Մէկ տճութեան զգածմունք մ'անոր ներսի դին տակն ու վրայ ըրաւ, խռովեց: «Ո՛հ, Աստուած, կ'ըսէր ինք իրեն, ա՛յ քու բարի մայրդ հոս պիտ'որ չտեսնես»,: Առանց սոսկալու չէր կրնար հպարտ ու փառասէր իշխանուհւոյն երեսը նայիլ: Մէկ անխմանայի մտածմունք մ'իր սրտին դժբախտ ապագայ մը գուշակել կու տար: Բայց ինք տիրեց իր սրտին, որն որ զուրիշները արդարացընելու ու բարւոյն յուսալու մէջ պատրաստ էր: Ինք զինքը բռնեց, եւ ջանաց միշտ ուրախ ու զուարթ կենալու, ուրիշներուն ուրախութիւնը չի խռովելու համար:

Եղիսաբեթ կոմսուհւոյն թեւը մտած իշխանին գղեկին եւ ասպետաց սրահին մէջ կը պտտէր: Երկայն ժամանակ դուրսը ժողովրդեան ցնծութեան աղաղակն օդը կը թնդացընէր, որն որ նորէն սկսաւ, երբոր Եղիսաբեթ, շնորհակալ ըլլալու համար պատշգամին վրայ իրենց երեւցաւ:

Իրիկուն եղաւ նէ, իշխանին գղեակն ու գրեթէ բոլոր քաղաքը լուսաւորուած էր: Եւ գղեկին ընդարձակ հրապարակին մէջ փառաւոր հրախաղութիւն մը կատարուեցաւ: Այնչափ գեղեցիկ տեսարաններու մէջ բան մը միայն Եղիսաբեթին՝ ծնողացմէ հետո ըլլալով ցաւագին սրտին վրայ բարերար ազդեցութիւն ըրաւ: Տեսաւ որ իբրեւ հրոյ ծովու մէջ Հունգարիայի թագաւորական ղինանշանը երկու կարգ արձանագրով կը շողշողար: Աերի կարգին մէջ գրուած էր, «Երջանկոսն աշնուական իշխանաց Անդրեասայ ու Գեորգոսայ», իսկ վարինին վրայ, Յաջողութեան նոր իշխանաց Լուդովիկոսին եւ Եղիսաբեթին»: Եղիսաբեթ ուրախութեան արցունք կը հեղուր: Ասոր վրայ Լուդովիկոս ամենէն աւելի ուրախացած կ'երեւար: Նաեւ ազնուական Ալլդէր, որ ասոր հեղինակն էր, լուռ կեցած ներքուստ կը ցնծար: Բայց աս բանս ազնուական սրտերու ուրախութիւն պատճառած ատեն նախանձոտ Գոնգորտիային սիրան ալ կարեւէր խոցելու առիթ կ'ըլար:

Աս գործքիս իբրեւ վարձք, Ալլդէրին ուրիշ մեծ ուրախութիւն մ'ալ կը սպասէր: Նոյն ատենուան սովորութեան համաձայն ի պատիւ նոր իշխանաց, վրայէ վրայ կոչունքներ տրուեցան, որուն բոլոր երկրին ասպետները հրաւիրուեցան: Ամէն հանդիսութեանց պսակ պիտ'որ ըլլար հետեւեալը:

Բոլոր պալատականաց, ասպետաց ու ժողովրդեան բազմութեան առջին, Հերման իր բարեկամին, Ալլդէրին՝ ասպետութեան կարգը տուած էր, ազնուականութեան վկայականը «Արայթէնդայնի կոմս», տիտղոսով իրեն ընծայեց:

Ալլդէրին ուրախութիւնն անպատմելի էր: Ամէն մարդ, եւ գլխաւորաբար Եղիսաբեթ, որ զԱլլդէրը մեծապէս կը յարգէր, անոր ուրախու-

Թեան ներքուստ մասնակից կ'ըլլար: Մինակ Գոն-
գորտիա իշխանուհին, որ Վալդերին դէմ ատե-
լու թիւն մ'ունէր անոր վրայ տրտմած կ'երեւար.
այսու ամենայնիւ աս օրուրնէս ի վեր, անոր հետ
խիստ բարեկամ եղաւ. կարելի է անոր համար
որ անիկա կոմս եղաւ ու ազնուականաց կարգն
անցաւ:

Գ Լ Ո Ւ Խ Ը .

Տեսիսն երջանկոթիւն:

Եղիսաբեթ ծնողացմէ բաժնուած ըլլալուն
ցաւը երկայն ատեն կրեց, որուն համար պէտք չէ
զանիկա վար զարնել, ինչու որ փափուկ ու զգայուն
սիրտ մ'ունէր: Իրեններէն այսպէս յանկարծ ու
հեռու տեղ բաժնուիլն իրեն շատ ծանր նստած
էր: Բայց ինք իր սրտին տէր ըլլալը շատ կանուխ
սորված ըլլալով, ինք զինքը կը բռնէր: Բայց
վերջապէս աս ցաւը փարատեցաւ եւ անոր տեղ
եկաւ տնական քաղցր երջանկութիւն մը:

Մէկը ծուռ դատաստան ըրած կ'ըլլայ, թէ որ
կարծելու ըլլայ որ հպատակաց խիղերուն մէջ
գտնուած ան խաղաղ տնական երջանկութիւնը,
իշխաններու կամ մեծամեծներու արքունեաց մէջ
չհկրնար ըլլալ: Ասոր հակառակը կը ցուցնէ
Թուրինգիայի արքունեաց նոր իշխանին եւ իշխա-
նուհւոյն ունեցած ամուսնական խաղաղ երջան-
կութիւնը: Ամուսնական երջանկութիւնը ամէն
տեղ կը գտնուի, ուր որ առաքինութիւնը կը
բնակի, եւ ուր որ հաւատարիմ եւ անկեղծ սէրը
հարսին ու փեսին ամուսնական կապը միշտ սերտ
ու հաստատուն կը կապէ: Ի՛նչ երկնային ու գե-
ղեցիկ միաբանութիւն: Եւ աս միաբանութիւնը
բարձրագոյն եղանակաւ էր Լուդովիկոսին ու Ե-
ղիսաբեթին մէջ:

Չեմ գիտեր թէ ասոր պատիւը որո՞ւն առաքինութեանը պէտք է տալ. Լուդովիկոսին չէ նէ Եղիսաբեթին: Երկուքն ալ հաւասարապէս ազնիւ ու բարի էին, երկուքն ալ սիրոյ ու մտերմութեան մէջ իրար կը յառաջէին. երկուքն ալ բարւոյն մէջ իրարու հետ կը մրցէին եւ իսկապէս երկուքն ալ իրարու շատ յարմար էին: Արնաբարդեօք այսպիսի ազնուական իշխանազուն ամուսիններէն երկնից օրհնութիւնն ու տնական երջանկութիւնը հեռու մնալ:

Եղիսաբեթ ծնողացը գրած նամակներուն մէջ աս ամէն բան կը ստորագրէր, ի բաց առեալ կոմսուհւոյն յարաբերութիւնները, որոնց վրայ լուութեամբ կ'անցնէր. որպէս զի չըլլայ թէ ասով ծնողացն ուրախութիւնը խռովէ: Նաեւ երբեմն երբեմն իր սիրելի ծնողքէն ընդունած ուրախական նամակներն ալ իր տնական երջանկութեան աւելնալուն պատճառ կ'ըլլային: Ո՛հ, ինչպէս, ստէպ աղօթքներուն մէջ ասոր համար Աստուծոյ շնորհակալ կ'ըլլար: Եւ շատ անգամ իր հաւատարիմ փեսին իր գոհութիւնը կը խոստովանէր:

Հերման ու Ալլդէր աս երկուքին երջանկութիւնը զիտած ատեն իրենք ալ երանելի էին: Հերման ալ իր մօրը շիրմին վրայ տխուր երգերը չէր երգեր: Ստոյգ է որ ստէպ կ'երթար հոն ու կ'աղօթէր, բայց իր սրտէն մինակ շնորհակալութեան եւ ուրախութեան աղօթք յառաջ կու գար: Իր երջանկութիւնը՝ որդւոցը երջանկութեան մէջ կը գտնէր: Բայց չէր կրնար արգելուլ որ աս երջանկութիւնը երբեմն ներքին դժբախտութեամբ չի պղտորի: «Ա՛խ, ես ալ իմ տղոցս պէս երջանիկ կ'ըլլայի թէ որ Գոնգորտիան Եղիսաբեթին պէս առաքինի ըլլար, կ'ըսէր: Բայց այսպիսի վիճակ մը նաեւ իմ հանգուցեալ մայրս ալ ունեցաւ: Երկրաւոր երջանկութիւնը ամէն մարդու համար չէ: Այլեւայլ ճամբաներ կան յաւի-

տենական երջանկութեան հասնելու համար, որն որ միայն ճշմարիտ ու տեւական է, : Այսպէս կը խօսէր երբոր առանձին կը մնար եւ չորս կողմը տրամուծիւնը զինքը կը պատէր : Բայց ինք անմիջապէս առանձնութիւնը կը թողուր եւ իր որդիքները կը փնտռէր, որպէս զի անոնք տեսնելով իր երջանկութիւնը վայելէ : Անոր համար ալ իրենց քովն եղած ատեն ինք զինքը երանիկ ու երջանիկ կը համարէր : Նոյնպէս անոնք ալ ամենայն զօրութեամբ կը ջանային որ զանիկա զուարթացրնեն, եւ ամէն կարելի եղանակաւ ուրախացրնեն : Բայց Վալդէր աւելի եւս ըստ կարողութեան ասոր կ'օգնէր :

Իսկ Գոնգորտիան երբոր աս երկու երջանիկները կը տեսնէր, իր չար սիրտը ատելութեամբ ու նախանձով կը լեցուէր : Ինչու որ ինքը երջանիկ չըլլալով ուրիշներուն երջանկութեան չէր կրնար տանիլ, անոր համար ալ ուրիշներուն երջանկութեանը ներքին սրտամուծեամբ կը նայէր : Իր թշուառութեան ու դժբախտութեան պատճառը՝ իր նմաններուն պէս՝ ինքն իր վրայ չէր փնտռեր, հապա իրմէ դուրս, եւ ան ալ անմեղներուն վրայ : Բայց որչափ որ Գոնգորտիային նախանձը մեծ էր նէ, նոյնչափ ալ մեծագոյն եղաւ իշխանազուն ամուսնաց երջանկութիւնը : Արովհետեւ Եղիսաբեթ իր երջանիկ էրկանը իշխան մը ծնաւ, եւ ասի մինչեւ հիմակ ունեցած երջանկութեան պսակ եղաւ : Տղան մկրտութեան ատեն Հերման անունն առաւ, պապուն պատուոյն համար :

Բովանդակ արքունիքը, բոլոր մայրաքաղաքը, եւ բովանդակ գաւառը, բարենշան իշխանին ծնընդեան վրայ կ'ուրախանար Գոնգորտիայէն զատ : Ինչու որ իր ընդունայնասիրութիւնը, որով ինք զինքը միշտ երիտասարդ կը համարէր, եւ այնպէս ալ կ'ուզէր երեւալ, մեծ մայր ըլլալով մեծապէս թշնամանուած էր :

Ըս բանս որչափ որ ալ ամենուն ծիծաղական երեւար, այսու ամենայնիւ անոր աչացն անհաճոյ չըլլալու համար, ոչ որ կը համարձակէր զինքը իշխանին մեծ մայրը կանչել: Անմեղ տղան արդէն վեց ամսուան եղած էր, բայց Գոնգորտիան զանիկակ երբեք տեսած չէր: Ան աստիճանի կատէր, աս չարաբարոյ կինը, ան առարկան, որն որ անմեղութեամբն ալ իր սնտիառութեանն ու հպարտութեանը դէմ էր: Կոմսուհւոյն աս բիրտ վարմունքը տղուն ծնողացը, աշխարհակոմսին ու Ալալգէրին սաստիկ ցաւ կը պատճառէր, եւ ասով նոյն իսկ հասարակաց ատելութիւնը իրեն ձգեց:

Ի այց ի վերայ այսր ամենայնի, Լուգովիկոս եւ Եղիսաբեթ իրենց երջանկութեան ու ծնողական քաղցր ուրախութեան մէջ ամենեւին չխռովեցան: Երբոր զուարթ մանկան հետ առանձին մէկտեղ կը նստէին, եւ լռիկ խաղաղ ուրախութեան ինք զինքնին կու տային, սրտերնուն մէջ՝ տղուն ապագայ երջանկութեան համար, գեղեցիկ առաջագրութիւններ կը գնէին:

«Ինչպէս որ զիս իմ սիրելի հանգուցեալ մայրս կրթեց, այսպէս կ'ուզեմ ես ալ իմ սիրելի Հերմանս կրթել», կը մտածէր Լուգովիկոս:

«Ըսնպէս կ'ուզեմ իմ Հերմանս կրթել», կը մտածէր Եղիսաբեթ. «ինչպէս իմ առաքինի Գերգրուտա մայրս զիս կրթեց»,:

Ըսսպէս մէկ սիրտ ու մէկ հոգի էին ամէն բանի մէջ աս իշխանազուն ամուսինք: Բեշթի արքունեաց մէջ ալ Հերմանին ծննդեան համար եղած ուրախութիւնը թուրինգիայի մէջ եղածէն նուազ չէր: Եղիսաբեթին ծնողքը պապ ըլլալն ամօթ չէին սեպեր, այլ մանաւանդ թէ աս անունն իրենց գեղեցիկ ու քաղցր կը հնչէր: Մինակ կը բաղձային սիրելի թոռերնին տեսնել, զանիկա գգուել եւ անոր երջանիկ ծնողացն ուրախութեան վկայ ըլլալ: Հաւը իր սիրելի թոռան

կու տար, կարօտելոց օգնութեան կը ծախէր: «Սիրելի Աննա կ'ըսէր, այսպիսի առիթներու մէջ, իր հաւատարիմ բարեկամին, աս զարգը եկու չի գնենք: Ստուգիւ անոր հարկաւորութիւն չունիմ, ան զարգերը չեն որ զիս իմ էրկանս հաճոյ կ'երեւցընեն: Ինքը զիս առանց ան արտաքին զարգերու ալ կը սիրէ: Ի՞նչպէս կրնամ Աստուծոյ հաճոյ ըլլալ, երբ որ ան ստակով իմ ընդունայնասիրութիւնս կը պարարեմ որով որչափ աղքատաց կարօտութիւնները կրնայի լեցընել: Այսպէս ընելով մեծապէս հաճոյ կ'ըլլամ թէ Աստուծոյ ու թէ էրկանս: Տես սիրելի Աննա, աս ստակի գումարով մէկ որբի մը օժիտ կրնամ տալ, եւ կամ այրի մը բոլոր կենացը համար երջանիկ ընել: Գուն ալ իմ կարծիքէս ես չէ՞ մի,»:

Աննան, ազնուական աղախինը, որն որ Եղիսաբեթին հետ յաճախ խօսակցելով առաքինի եղած էր, իր սիրելի բարեկամին ու տիրուհւոյն կարծեացը միշտ համաձայն էր: Ո՛հ, ինչպէս այսպիսի գեղեցիկ գործքերու մէջ անոր հետ կը համաձայնէր. եւ գրեթէ ինքն ալ կ'օգնէր աղքատաց, այրիներուն եւ որբերուն արցունքները չորցընելու: Աննա միշտ Եղիսաբեթին հետ մէկտեղ էր, երբոր անիկա աղքատաց ու հիւանդաց խորճիթները կ'երթար լի ձեռուրներով: Ներքին զարմացմամբ ու զմայլելով կը լսէր ու կը տեսնէր տառապեալներուն եւ աղքատաց, ուրախութեան ու շնորհակալութեան արցունքով իրեն տիրուհին օրհնելնին, ու զանիկա կարօտելոց հրեշտակ ու մայր աղքատաց կօչելնին: Ինքն ալ միշտ կ'օգնէր, երբոր Եղիսաբեթ առանձին խուցը նստած աղքատաց համար զգեստներ կը պատրաստէր:

Ի՛այց արժանի էր որ նաեւ մասնակից ըլլար անոր գովութեան, զորն որ Ղուգովիկոս իրեն կու տար, երբ որ շատ անգամ անոր այսպիսի ազնուական գործոցը վրան կը հասնէր: Եւ Հերմանն

ալ զինքը կը վարձատրէր իր հրեշտակային ծի-
ծաղովը:

Անոր ըրած աղնուական զոհերը Աննայէն զատ,
ոչ աղքատներն եւ ոչ ալ Եղիսաբեթին ամու-
սինը կը ճանչնային: Բայց չէ, մինակ Աննան չէ,
հապա նաեւ Ամենագէտը, որն որ ծածկեալ բա-
ները կը տեսնէ, անոր գործածներուն վկայ էր:
Աստուած զինքն անոնց համար կը վարձատրէր
բիւրաւոր քաղցր ուրախութիւններով, զորոնք իր
սիրելի ընտանեաց սահմանին մէջ խաղաղ կը
վայելէր:

Բայց ինչպէս որ վարդենին իր փուշերը սերման
մէջ ունի, որոնք վերջէն իրմէ վարդը փրցընել ու-
զողներուն ձեռքը կը վիրաւորեն, այսպէս ալ, եր-
կրաւոր ուրախութիւններն իրենց գոյութեան մէջ
վշտաց հետ այնպէս սերտիւ կապուած են, որ
ներքուստ միացեալ, մահականացուաց հետ կ'ընկե-
րանան որրոցէն մինչեւ գերեզման: Այնպէս որ
աս աշխարհքիս վրայ տեւական երջանկութիւն եւ
անտրտում ուրախութիւն մը շատ քիչ կը գըտ-
նուի. աս ճշմարտութեան փորձը քիչ մը ետքը
Լուդովիկոս ու Եղիսաբեթն ալ պիտ'որ առնուին:

Յաւալի փորձերով գիտենք, որ աս աշխարհ-
քիս մէջ բարի եւ առաքինի մարդիկ անհաշտ
թշնամիներ կ'ունենան, եւ այնչափ աւելի որչափ
որ աւելի երջանիկ կ'ըլլան: Նոյնը պատահեցաւ
նաեւ Լուդովիկոսին եւ Եղիսաբեթին: Աս ան-
հաշտ ու մահացու թշնամին Գոնգորտիան, իրենց
մայրն էր: Ասիկա իր որդիքն ամենեւին չսիրելէն
զատ կ'ատէր ալ: Բայց աշխարհքիս մէջ իր ամե-
նէն աւելի ատելի անձն առաքինի Եղիսաբեթն
էր: Եւ ասով նաեւ զինքը սիրողներն ալ մեծա-
պէս կ'ատէր: Աս բիրտ ու չարաբարոյ մօր ատե-
լութիւնը իր որդւոցն երջանկութեան աւելցածին
չափ կ'աւելնար:

Աիմա, տեսնելով որ ամէն մարդ իրմէ կը հե-

ուանայ եւ Եղիսաբեթին կը յարի, եւ Եղիսաբեթ ամենուն սիրոյն ու մեծարանաց առարկան եղած է, եւ միանգամայն ինք զինքը բուրրովին երեսէ ձգուած տեսնելով, իր ատելութիւնը բարձրագոյն աստիճանի մը հասաւ: Ասկից ետեւ ալ ամենեւին անմեղ ու սիրելի Եղիսաբեթը չէր ուզեր տեսնել: Անոր ներկայ եղած ատեն ինք կը փախչէր, ուր որ կրնար, եւ անոր ամենուն սիրելի եղած պատկերը, իր արթնութեանն ու քնոյն մէջ ձիւաղի մը պէս առջին կ'ելէր: Իր մոլութեամբ լցուած սիրտը չափէ դուրս նեղութիւն կը կրէր: Եւ աս ամէն վտաց պատճառն անմեղ Եղիսաբեթը կը համարէր: Իր կուրցած եւ ապականած սիրտը, վրէժխնդրութեամբ մինակ կրնար սիրտիութիւն գտնել:

Այս վրէժխնդրութիւն, սոսկալի վրէժխնդրութիւն դրաւ միտքը ու երգուաւ այնպիսի մէկուն համար, որն որ իրեն ամենեւին չարիք մը բրած չէր: Ասկից վերջը խելքն ու միտքն ան էր որ միջոց մը գտնէ, որով կարենայ ապահովապէս իր վախճանին հասնիլ: Եւ շատ աղէկ գիտէր, որ այսպիսի գործքի մը ձեռք զարնելու համար խոհեմութիւն ու հեռատեսութիւն հարկաւոր է: Ամէն բանէն յառաջ ջանաց առատ պարգեւներով քանի մը խիղճ շունեցող ծառաներ իրեն շահիլ: Եւ դժբախտութեամբ ալ ըստ բաղձանաց յաջողեցաւ: Իր ամպարիշտ վրէժն աս էր. երկու երջանիկներուն սրտերն ի մշտնջենաւորս իրարմէ բաժնել եւ այսպէս երկուքն ալ դժբախտ ընել: Աս յատակագիծը՝ որոշուած քանի մը հաւատարիմ անձինքներու ձեռքով կամաց կամաց եւ զգուշութեամբ ի գործ պիտ'որ դրուէր:

Ամէն բանէն յառաջ նենգութեամբ կը ջանար Եղիսաբեթին ընթացքն եւ բրած բարերարութիւնները կասկածելի ընել տալ: Պաշտօնեաներուն առջին դրաւ, թէ ինչպէս վտանգաւոր բան

է տիրող իշխանաց, արքունեաց ու բոլոր երկրին, Եղիսաբեթին այսպէս շափաղանց ծախքերով ուսմիկն իր կողմը շահելը: Նախ առաջին տէրութեան գանձը մեծ ծախքերով շատ կը նուազնայ, կ'ըսէր, եւ երկրորդ ալ, որն որ չարագոյնն է ապրտամբութեան մեծ վախ կայ: Ամէն օր աս կարծիքը մտքին մէջ կը հաստատուէր որ Եղիսաբեթ կեղծաւոր մըն է, եւ խոնարհութեան քողին տակ հպարտութիւնն ու տիրելու ցանկութիւնը ծածկած է, եւ Հերմանին մեռնելուն կը սպասէ որ Լուդովիկոս անոր տեղն անցնի եւ ինքն ալ տիրուհի ըլլայ:

Արչափ որ ալ աս բանս պաշտօնեաներուն անստոյգ երեւցաւ, այսու ամենայնիւ Հերմանին ասոր վրայ տեղեկութիւն մը տուին: Բայց ինչպէս ազնուական Հերմանն այսպիսի ձախող զրպարտութեան մը վրայ բարկացաւ: Սաստիկ կը վշտանար, որ իր սիրելի Եղիսաբեթը այսպէս իր արքունեաց մէջ, եւ ան ալ իր խորթ մօրը ձեռքով կը վըշտանայ ու կը թշնամանի: Ինք պաշտօնեաները համոզուեց, որ բոլորն ալ զրպարտութիւն է, եւ թէ Եղիսաբեթ տէրութեան ամենէն օգտակար անձն է: Եւ ցուցնելու համար, որ ինչչափ կը հաճի Եղիսաբեթին ըրած ողորմութեանց վրայ, անոնց առջին աս բարի վախճանի համար իրեն երեւելի գումար մը խաւրեց: «Երբոր իշխանները հայր՝ եւ իշխանուհիները մայր կ'ըլլան իրենց հպատակացը, ան ատեն իրարու մէջ շատ աղէկ կ'ըլլայ», Աս խօսքերն ըսելէն ետքը աշխարհակոմսը պաշտօնեաները թողուց գնաց, եւ ասոնք ալ բոլորովին հանդարտած էին: Եւ ասով նաեւ Գոնգորտիային առջի յատակագիծը պարապի ելաւ:

Երկրորդ յատակագիծ մ'ալ մտածած էր, որն որ ստուգիւ սատանայական էր: Զարմանալի դէպք մ'անոր կատարմանը յաջողութիւն կը խոստանար: Աշխարհակոմսը տէրութեան հարկաւոր գործքե-

բու. համար քանի մը շաբաթ ճամբորդութիւն պիտ'որ ընէր: Ինք ճամբայ ելաւ, եւ Լուդովիկոսն ալ իբրեւ իշխանակից իրեն հետ գնաց: Իր բարեկամ Վալդէրը ամուսնոյն եւ որդւոյն պաշտպանութեանը համար տունը թող տուաւ:

Սալդէր ամէն իրիկուն գործքերը լմնցընելէն ետեւ իր բարեկամին կնոջն այցելութեան կ'երթար: Առանձին յատկութիւն մ'ունէր ուրիշները քաղցր եղանակաւ զուարճացընելու: Եղիսաբեթ՝ որն որ շատ անգամ իր սիրելի ամուսնոյն հեռաւորութեանը վրայ կը տրտմէր ու կը վշտանար, ու մեծ փափաքով անոր դարձին կը սպասէր, իմաստուն եւ ազնուական Վալդէրին ընկերութեամբ քիչ մը սփոփութիւն կը գտնէր: Ասի գիտնալով Գոնգորտիան իր ամբարիշտ յատակագիծն անոր վրայ շինեց: Եւ աս յատակագիծն ի գործ պիտ'որ դնէին, երկու չարագործք, զորոնք չար կինը պարգեւներով իր հաւատարիմ խորհրդակիցներն ըրած էր: Եւ իրենց խոստացաւ որ եթէ ամէն բան աղէկ յաջողցընեն, զիրենք իշխան կ'ընէ:

Իրիկուն մը, երբ որ Վալդէր, ըստ սովորութեան երիտասարդ իշխանուհւոյն քովն էր նէ, Աննան, որն որ ամէն անգամ ներկայ կը գտնուէր, անհարկաւոր գործքի մը համար դուրս կանչուեցաւ: Աս միջոցիս Գոնգորտիային երկու ծառաները խուցը մտան, որոնք այնպէս ձեւացուցին թէ, կոմսուհւոյն կողմանէ եկած են զերիտասարդ իշխանուհին երկրորդ օրուան ճաշին հրաւիրելու, համարելով որ զինքը մինակ պիտ'որ գտնեն:

Անոնց հեռանալէն քիչ մ'ետքը բոլոր զգեկին մէջ շշուկ մ'ելաւ. Վալդէր Եղիսաբեթին սենեկին մէջ իբրեւ յանցանք գործած վճռուեցաւ. եւ Եղիսաբեթին վրայ ալ իր ամուսնոյն դէմ անհաւատարմութեան յանցանք գրուեցաւ: Անմեղ Եղիսաբեթ ինկաւ մարեցաւ, ու Վալդէր բանտ գրուեցաւ:

Եղիսաբեթին՝ արթննալէն ետեւ զգացած ցաւը նկարելն անկարելի է: Չէր կրնար կրել, իր սիրով ու հաւատարութեամբ լցուած սրտին մէջ, անհաւատարմութեան մտածմունքը, որուն յանցաւոր կը համարէին զինքը: Կու լար, կը հեծէր, կ'աղօթէր ու դարձեալ կու լար: Աննան ալ, որ զինքը կ'ուղէր մխիթարել, մեկտեղ կու լար:

«Ո՛հ, Աստուած,, կը գոչէր Եղիսաբեթ, «անաստիճանի պիտ'որ հասնի եղեր, որ իմ սիրելի Լուգովիկոսս զիս իբրեւ անհաւատարիմ, յանցաւոր անարգէ, դատապարտէ ու մերժէ եւ խայտառակէ: Չեմ կրնար ալ երկայն ապրիլ աս տառապանքէն, որն որ իմ սիրելի ծնողացս ալ մահացու հարուած մը կու տայ: Բայց չէ, չէ, սիրելի Աստուածս, թող պիտ'որ չտաս որ ան աստիճանի հասնի բանը: Գուն կը ճանչնաս իմ եւ ազնուական Վալդէրին անմեղութիւնը: Գուն կրունաս, եւ պիտ'որ աղատես ալ: Ո՛հ, խեղճ Լուգովիկոս, ինչպիսի խորունկ ու մահացու պիտ'որ վերաւորէ քու զգայուն սիրտդ աս սուտ ու սուկալի լուրը: Արդեօք պիտ'որ հաւատայ: Չէ, չէ, իմ Լուգովիկոսս, հաւատք չ'ընծայեր, ստութեան ու զրպարտութեան տեղ կը դնէ: Ինքը աղէկ կը ճանչնայ իմ իրեն ունեցած սէրս. եւ մինչեւ այսօր անոր վրայ ամենեւին տարակոյս չէ ունեցած, հիմնոյ պիտ'որ երկբայի: Չէ, անիկակ հաստատուն կը հաւատայ, ինչպէս նաեւ Վալդէրին հաւատարմութեան ու բարեկամութեան ալ: Ո՛հ, ո՛ր է, հոս ըլլար, եւ ես իրեն վազէի, եւ անոր արտասուօք ցուցընէի, թէ ինչպէս Եղիսաբեթ զինքը սրտանց կը սիրէ: Ան ատեն ստուգիւ ինծի կը հաւատար, զիս միշտ կը սիրէր եւ ամենեւին չէր մերժեր: Ամենակարող Աստուած, մխիթարէ զինքն եւ ուղղէ անոր սիրտը,»:

Այսպէս կ'աղօթէր, այսպէս կը ջանար բարի իշխանուհին, յուսոյ եւ երկիւղի մէջ, ինք զինքը

միսթարել ու հանդարտեցրնել: Աննան ալ իր քաջալերութիւններն անոր կը մատուցանէր: Ասիկա բովանդակ չարութիւնն ի հիմանց տեսած էր ու գիտէր, եւ առանց անսալու Եղիսաբեթին, որն որ միշտ յօժարակամ կ'արդարացրնէր, եւ նոյն իսկ իրեն թշնամեացը վրայ միշտ բարի կը մտածէր, սկսաւ խօսիլ ու ըսել որ աս վնասակար զրպարտութեան հեղինակն աշխարհակոմսութիւն է: “Ի՞նչու համար,, ըսաւ, “ես ճիշտ անժամանակը պիտ'որ կանչուէի, երբոր Վալդէր կոմսը ձեր քովն էր: Ինչո՞ւ համար աշխարհակոմսութիւն զձեզ ձեր ամուսնոյն հօս չեղած ատենը եւ ան ժամուն սեղանի հրաւիրել տուաւ, զորն որ այնչափ տարիներէ ի վեր չէր ըրած: Ինչո՞ւ համար հրաւերը ծառաներով եւ ան ալ երկու ծառայով պիտ'որ ըլլայ: Կրնար աղախիններէն մէկը խաւրել: Ամենէն աղէկ ան կ'ըլլար, թէ որ ինք անձամբ հրաւիրէր: Բայց ուրիշ բան չէ դիտումը բայց եթէ զձեզ եւ ձեզի հետ ձեր ամուսինն ու բարեկամը ջնջել: Ո՛հ, հաւատացէք ինձի. այսպէս է, եւ ուրիշ բան չէ: Ես չարութիւնը կը տեսնեմ: Գիտեմ, ինչպէս կոմսութիւն զձեզ ներքուստ կ'ատէ, եւ ես շատ անգամ ձեր կենացը վրայ կը դողայի: Բայց, որչափ որ ապրիմ, երբեք ամպարիշտներուն խորհուրդը պիտ'որ չյաջողի, այսպիսի ազնուական մարդիկ ջնջելու: Բայց հիմակ աս ժամուս ճամբայ ելլեմ, որպէս զի զրպարտութիւնն անոր ականջը չհասած, կոմսին՝ ձեր ամուսնոյն քով գտնուիմ: Ո՛ ազնիւ տիկին, ոչինչ բան մը զիս կրնայ արգելել: Առջի անգամ է որ ձեզի անհնազանդ պիտ'որ գտնուիմ,,:

Աւ իսկապէս մեծասիրտ աղախինը, իշխանուհոյն աս ճամբորդութեան հարկաւորութիւնն իմացունելէն ետեւ ճամբայ ելաւ լռութեամբ եւ մէկ հաւատարիմ ծառայ մը հետն առած:

Ան գիշերը՝ Եղիսաբեթին ու Վալդէրին հա

մար տխուր գիշեր մ'եղաւ: Երկուքն ալ անքուն անցուցին: Առջինը արտասուաց, իսկ երկրորդը ծանր ու ցաւալի մտածմանց մէջ: Ալալդէր ալ Աննային կարծիքէն էր, եւ ըսածներն ստոյգ կը համարէր: Իր յոյսն Աստուծոյ տեսչութեան եւ իր բարեկամին սիրոյն վրայ դրած էր: Թէպէտ բանտը իրեն ծանր կու գար, եւ եղած զըպարտութիւնը սրտին վրայ կը ծանրանար, բայց միշտ երիտասարդ իշխանուհւոյն եւ իր սիրելի բարեկամին վրայ կը ցաւէր:

Նոյն իսկ Գոնգորտիա կոմսուհին, աս գիշեր քիչ կըրցաւ քնանալ: Իր չար սիրտը յաղթանակ ըրած կը սեպէր, իր ամպարիշտ յատակագծին կէս մը կատարուելուն համար: Բայց թէպէտ եւ կէս մը յաջողած էր, այսու ամենայնիւ դեռ չէր կրնար ստոյգ յաղթութիւն կանգնել: Ամենէն աւելի շերմանին ու Լուդովիկոսին առ Եղիսաբեթ ու առ Ալալդէր ունեցած անպայման սէրէն կը վախնար: Աս երկիւղի ու յուսոյ մէջ տառապեցուցիչ տատամսութիւնն իր սիրտը կը տանջէր ու կը չարչարէր: Խիղճը զինքը կը ջանար անզգայ ընել, եւ Աստուծոյ վրայ ամենեւին չէր մտածեր: Քունը միշտ աչուրներէն կը փախչէր, եւ իր սրտին մէջ տանջանքով լցուած անդունդ մը՝ մրրիկ կը յարուցանէր: Եւ ինք աս վիճակիս մէջ շատ աւելի դժբախտ էր, քան թէ մէկալ դժբախտ ընել ուզողները:

Դատաստանական քննութիւնն երկրորդ օրը կէսօրէն յառաջ ժամը տասնին որոշուած էր: Եղիսաբեթ ու Ալալդէր դատաստանին առջին պիտ'որ ելլէին, թէ ան երկու մարդիկներուն երգամամբ ու վկայութեամբ հաստատելու ամբաստանութիւնը՝ ու թէ վճիռնին իրենց ականջովը լսելու համար մինչեւ որ կոմսն ու ժառանգ իշխանը դառնան: Աս զարհուրելի դիպուածը նախ ուզեցին քննութենէ ետեւ դատաստանական արձանա-

գրին հետ սուրհանդակով Լուդովիկոս ժառանգ իշխանին գրել: Այսպէս մտածած եւ որոշած էր ամպարիշտ կոմսուհին: Որովհետեւ կը կարծէր թէ ասանկով աւելի եւս աղէկ Լուդովիկոսին սիրտը կը խռովէ, եւ դիւրին կ'ըլլայ Եղիսաբեթն ու Վալդէրը ապահով կերպով ջնջել:

Գժբախտ ժամը եկած հասած էր: Ամէնն ալ, եւ նոյն իսկ Գոնգորտիա կոմսուհին դատաստանարանին սրահը ժողվուած էին: Հանդարտ ու Աստուծոյ նախախնամութեան վրայ վստահացած, անմեղ անբաստանեալները անամօթ եւ ամպարիշտ ամբաստանողներուն դիմացը կեցան: Գէմքերնուն զուարթութիւնը իրենց անմեղութիւնը կը հաստատէր եւ պատրաստուած էին, սուտ ամբաստանութիւնը լսելու: Լիրբ եւ անամօթ եղանակաւ, բայց առանց անմեղներուն երեսը նայելու, աս երկու վկաները յայտնեցին, թէ իրենք երեկ իրիկուն դժբախտութեամբ երիտասարդ իշխանուհին Վալդէր կոմսին հետ Արայֆէնշդայն առանձին տեսած են, եւ վնասակար գործքի մը վկայ են, զորն որ երգամամբ ալ կըրնան հաստատել: Բայց այս վերջի խօսքերը զուրցած ատեննին, լեզունին թոթովելու սկսաւ:

Ի ոլոր դատաստանարանին սրահին մէջ անմիջապէս խոր լռութիւն մը տիրեց. իսկ ամպարիշտ կոմսուհին եւ երկու չարագործներն այնպէս խռոված էին որ արտաքուստ ալ կ'երեւար: Անմեղներուն սիրան ելաւ եւ արցունքն աչուրներնուն վրայ սկսաւ շողալ:

Ըսկից ետքը դատաւորն ելաւ, եւ հրապարակաւ երկու վկաներէն խնդրեց որ երգում ընեն: Արդէն ասոնք դողդոջուն ձեռուրներով իրենց երկու մատուրները վեր վերցուցած էին, եւ դատաւորին առջին զարհուրելի երգման խօսքերն արտաբերելու վրայ էին, յանկարծ դատաստանարանին սրահին դուռն է բացուեցաւ, եւ Լու-

դովիկոս ժառանգ իշխանը որոտման ձայնով մը ներս մտաւ, «Գատաւոր, կեցիր, Աստուած անոր դատաստանը կտրեց», ըսաւ:

Երկնքէն կայծակի հարուած մ'ընդունածի պէս, երկու չարագործները գետինն ինկան, եւ ծնկան վրայ եկած թողութիւն կը խնդրէին:

Իսկ Գոնգորտիա կոմսուհին, իշխանին յանկարծ ներս մտնելէն սոսկացած, ահարկու ձայնով մը եւ կէս մը մարած քովը կեցող աղախնոյն գիրկն ինկաւ:

Բայց Եղիսաբեթ՝ երկնքէն աղատիչ հրեշտակի մը ձեռքը ապաւինելու պէս իր ամուսնոյն բաց բազուկներուն մէջ թռաւ:

«Ահաւասիկ Աստուած Աննային ձեռքով զիս աղատեց», ասոնք էին աս երջանիկ բոպէին մէջ իր խօսքերը, եւ աչուրներէն սկսաւ ուրախութեան արցունք գալ:

«Սիրելի Եղիսաբեթ, կրկնեց Լուդովիկոս, քու ու Վալդերին հաւատարմութեան վրայ ամենեւին երկբայութիւն չունեցայ, եւ չէի կրնար ալ երկբայիլ թէ որ աս զրպարտութեան լուրը հաւատարիմ Աննայէն յառաջ ինծի հասնէր: Արովհետեւ քու առաքինութեանցդ վրայ ունեցած վստահութիւնս սրտիս մէջ այնպէս հաստատուած է, որ ամենեւին զրպարտութիւն մը, որչափ որ ալ ծանր ըլլայ, չի կրնար զանիկակ անկից բառնալ»,:

Լուդովիկոս՝ Եղիսաբեթը թող տալով իր բարեկամին վազեց, եւ զինքը գրկեց, իսկ Եղիսաբեթ ալ իր հաւատարիմ Աննային: Աս անսարանը այնպէս սրտաշարժ էր որ, թէ դատաւորներուն, եւ թէ հօն կեցողներուն աչուրներէն արցունք գալու սկսաւ: Աս արտաքոյ կարգի գէպքը ամէնն ալ սաստիկ զարհուրեցուցած էր. մանաւանդ երկու չարագործները, որոնք գեոծնկան վրայ կեցած, չէին համարձակեր աչուրնին վեր վերցընել: Իսկ կոմսուհին արդէն հեռա-

ցուցած էին: Եւ ասի իրեն Տամար շատ աղէկ էր, ապա թէ ոչ վարձու բռնած չարագործներուն բերնէն այնպիսի բաներ պիտ'որ լսէր, որ դարձեալ պիտ'որ իյնար մարէր:

Աս երկուքը յայտնապէս ամէն բան խոստովանեցան, եւ իրենց խոստովանութիւնը Աննային ու Ալադէրին կարծածին Տետ ճիշտ Տամաձայն ելաւ: Գատաւորներն ու բոլոր ներկայ եղողներն ասոր վրայ կը զարմանային, որովՏետեւ պսպիսի անամօթութիւն մը կոմսուՏիէն չէին յուսար: Աս բանս ամէնէն աւելի Լուդովիկոսին ու Եղիսարիթին ցաւ կը պատճառէր: Ստոյգ է որ արդէն սրտանց իրեն թողութիւն տուած էին, բայց բարի Տօր՝ Հերմանին վրայ կը մտածէին, որուն աս զարհուրելի դէպքը, թէ որ ծանուցուէր, սիրտը խորունկ պիտ'որ վերաւորէր:

Գատաւորներն իշխանազուն ամուսնաց վրայ իրենց սէրն ու մեծարանքն աւելցուցած, իսկ չար ու ժանտ կոմսուՏեոյն դէմ դառնութեամբ լցուած մէկայնոնց Տետ մէկտեղ դատաստանարանին սրաՏը թողուցին գացին: Եւ կոմսուՏին ալ նոյն ժամանակ քաղաքը թողուց, եւ ծնողքն արդէն մեռած ըլլալով, Մայսէն իր Գոնրատ եղբօրը գնաց, ուր երկու տարի բնակեցաւ: Իր արքունիքէն Տեռանալը շատերուն մեծ երջանկութիւն եղաւ. եւ արքունեաց, ինչպէս նաեւ բոլոր քաղքին մէջ Տասարակաց ուրախութիւն պատճառեց: Իսկ երկու չարագործները տարիներով բանտարկութեան դատապարտուեցան:

Գ Լ Ո Ւ Ն Ժ .

Մեծ պատմութիւն:

Քանի որ Գոնգորտիա կոմսուՏին արքունիքէն Տեռու կ'ապրէր, երիտասարդ իշխանազուն ամուսինք կրնային իրենց տնական երջանկութեան

անխուով վայելմունքն ունենալ, թէ որ ուրիշ դէպք մ'ան երջանկութիւնը նորէն չի խուովեր:

Վժբախտ Հերման աշխարհակոմսը, քսան տարիէ ի վեր լուութեամբ այնչափ բան կրած էր որ ծածկուած վիշտը, ապականիչ որդի մը պէս իր կենացն արմատը կը կրծէր, եւ այսպէս իր կեանքը կամաց կամաց թառամելու վրայ եղող ծառի մը կը նմանէր: Իր քիչ մը ժամանակ ընտանեացը մէջ վայելած հանգիստ ուրախութիւնը, անոր թարշամած առողջութեան նոր կենդանութիւն մը տուած էր, ան աստիճանի որ ինքն ալ դեռ երկայն ապրելու յոյս մը կ'ունենար: Եւ ամէն զինքը սիրողները, ներքուստ կ'ուրախանային անոր նորէն առողջանալուն վրայ: Բայց աս վերջին դէպքն անոր կէս առողջութիւնը եւ անոր կէս մը բճացած արմատը՝ նորէն խախտեց, այնպէս որ ալ առանց մէկ յուսոյ անոր վախճանին հասնելը կը տեսնուէր: Իր բարի սրտին ընդունած աս վերջին հարուածը մահաբեր էր: Իր որդւոցը տուած ուրախութիւնն ու մխիթարութիւնն ալ անօգուտ էին. եւ քաջ ու ճարտար բժշկաց բոլոր աշխատութիւնը պարապ: Իր կեանքը նուրբ ու բարակ թելէ մը կախուած էր: Ինք գիտէր այսպէս ըլլալը, բայց չէր վախնար: Յառաջունէ աւելի զուարթութեամբ ու հանգստութեամբ իր կենաց վերջին ժամն առջեւը կը տեսնէր:

“Շատ հեռու չէ ան ժամն ըսաւ անգամ մը Հերման, որն որ զիս աս եղկելի կեանքէն հանելով, խաղաղութեան երկիրը իմ Աստուծոյս, ու Փրկչիս եւ իմ երանեալ մօրս պիտ'որ տանի: Հոն իմ որդւոյս ու թոռանս, իմ հաւատարիմ հպատակներուս, իմ բարեկամացս ու թշնամեացս համար կ'աղօթեմ. եւ պիտ'որ աղօթեմ նաեւ իմ թշուառ ամուսնոյս համար, որ ողորմած Աստուած զինքը չթողու այնպիսի խեղճ կուրութեան մէջ

մեռնելու, որպէս զի թէ մարմնով ու թէ հոգ-
 ւով յաւիտեանս չի կորսուի: Ո՛հ, անպատմելի
 պիտ'որ ըլլայ ան ատեն իմ երանութիւնս, երբոր
 իմ մարմինս հանդարտ գերեզմանի մէջ կը ննջէ,
 եւ իմ հոգիս երկնաւոր ուրախութեանց հետ, ան
 ուրախութիւնն ալ կը վայելէ, որ գիտէ թէ իր
 սիրելիներն երկրիս վրայ երջանիկ են,,:

Առգովիկոս իր ամուսինն ու Ալադէր ծածուկ
 արցունք կը թափէին, բայց ամենեւին յոյսերնին
 չէին կտրած: Եւ որչափ որ կը տեսնէին թէ Հեր-
 ման դեռ ժուռ գալու կարողութիւն ունի, միշտ
 անոր երկայն ապրելուն յոյս կ'ունենային: Նաեւ
 ամէն օր Աստուծոյ կ'աղօթէին, որ իրենց հօրն ու
 բարեկամին, եւ երկրին բարի իշխանին դեռ եր-
 կայն կեանք շնորհէ: Հերմանն ալ երբեմն ինք
 զինքն այնպէս աղէկ առողջ կը զգար, որ երկայն
 կենաց յոյս մը կ'ունենար:

Իրիկուն մ'երբոր նորէն Հերման ինք զինքն ա-
 ղէկ ու զօրաւոր կը զգար, իր քնարն առաւ, ա-
 ռանց իմանալու խուցը թողուց, եւ իր հանգու-
 ցեալ մօրը շիրիմը գնաց: Իրիկունը շատ պարզ,
 տաք ու գեղեցիկ էր: Երկինքն անհամար աստղը-
 ներ կը շողալին, եւ բարակ սղոխ մը Քրիստինէին
 շիրմին քով անկուած վարսաւոր ուռիին ճիւղերը
 կը ճօճացրնէր: Իսկ աս գիշերաշրջիկը իր սրտին
 մէջ արտաքոյ կարգի զովութիւն մը կը զգար:
 Այնպէս կ'երեւակայէր, որ իբր թէ իր մօրը լու-
 սաւորեալ ոգին աս հանգստեան ու խաղաղութեան
 նուիրեալ տեղոյն մէջ իր չորս կողմը կը դառնայ:
 Ան ատեն շիրմին քով ծնկան վրայ եկաւ եւ աշուր-
 ներն աստղազարդ ու լուսաւոր երկինք վերցուց,
 եւ ջերմաջերմ ցանկութեամբ իր սիրտն ելաւ եւ
 արտասուօք աշուրները լեցուեցան եւ բարձր ձայ-
 նիւ մը սկսաւ գոչել. «Ղու գամ, կու գամ, հիմա
 կու գամ,,:

Նոյն ատեն իր տկար ձեռքը քնարին աղեացը

վրայ դրաւ, եւ դողդոջուն ձայնով մը հետեւեալ տունը երգեց:

Քունդ անոյշ, մայր, հանգչէ ընդ միշտ:

Ալ մ'արթըննար տեսներ նոր վիշտ:

Ճամբան կարճ է,

Չուն երկար չէ:

Ըսպասէ, ես ալ քիչ մը ետ

Կու գամ կը հանգչիմ քեզի հետ:

Թէ երգն եւ թէ մանաւանդ սրտին սաստիկ այլայլութիւնն իր տկար մարմինն այնպէս մը տկարացուցած էին, որ չիկրնալով ոտք ելլել, յոգնած շիրմին վրայ ինկաւ: Աս վիճակի մէջ գտաւ զինքը Վալդէր, որ խուցը չիգտնելով եւ ամէն կողմ փնտռելէն ետեւ հոս եկած էր, եւ իր զօրաւոր բաղկացը մէջ առած դարձեալ լուծեամբ խուցը բերաւ: Աս ատենէս ի վեր Հերման ալ երթալով տկարացաւ, իր վիճակն այնպէս գէշցաւ որ անոր արագ քայլերով գերեզման մերձենալը կը տեսնուէր: Բայց դեռ օրուան քանի մը ժամերը անկողնէն դուրս կրնար անցընել: Իր ուրախութիւնը՝ աղօթքն ու խոստովանահօր սուած քաղցր մխիթարութիւններն էին:

“Մհ, բարի որդիքս, ըսաւ անգամ մը Լուդովիկոսին ու Եղիսաբեթին, ինչպէս շնորհակալ պէտք եմ ըլլալ ձեր սիրոյն ու հոգաբարձութեան, որով գիշեր ու ցորեկ զիս կը խնամէք, իբր թէ կ'ուզէք բռնի մահուան ձեռքէն իր աւարը յափշտակել, եւ զիս ձեր մէջը պահել: Ստուգիւ կը զգամ, որ ես գերեզման մտնելէս ետքը ալ ձեր անպայման սէրը պիտ'որ չկարենայ իմ կենացս կանթեղին մէջ նոր եղ լեցընել, որպէս զի շուտ չմարի: Ես ասոր համար վարձք մը չեմ կրնար տալ ձեզի, ամենակարողն Աստուած զձեզ վարձատրէ: Բայց հիմակու հիմակ իմ ներքին շնորհակալութիւնս ընդունեցէք, մինչեւ որ երկինքը ձեզի համար աղօթեմ,, :

Շատ դժուարաւ կը ջանային երկուքն ալ իրենց արցունքը բռնել, որովհետեւ աւելի բռնութեամբ մ'իրենց աչուրներնէն դուրս բխեցին, եւ հարկագրեցան հեռանալ, որպէս զի չըլլայ թէ անով վնասակար ազդեցութիւն մ'ընեն իրենց տկար հօրը վրայ: Հերման ալ ան աստիճանի հասած էր որ չէր կրնար անկողինը թողուլ: Եղիսաբեթ, որ իր բուն հայրը այսպէս խնամքով չէր հոգացած, բոլոր օրն ու գիշերուան կէսը զանիկա խնամելու կ'անցընէր: Հիւանդը շատ անգամ անոր կը յիշեցընէր որ երթայ քիչ մը կերակուր ու հանգիստ առնու: Ստուգիւ ինքն ալ Եղիսաբեթէն զատ մէկը չէր ուզեր իր անկողնոյն քով, եւ իրօք ալ ոչ ոք կրնար զինքն անոր պէս աղէկ հոգալ:

Իր մնացած կենաց զօրութիւնը օր քան զօր երթալով կը սպառէր, եւ միշտ աւելի շուտ վերջին ժամը կը մերձենար: Անգամ մ'ալ մեծ ջերմեռանդութեամբ ու հաւատով եւ մեծ փափաքով քահանային ձեռքէն հրեշտակաց կերակուրն ու յաւիտենական կենաց հացը ընդունեցաւ: Հոն ներկայ եղողները ծնկան վրայ եկած կը կենային եւ լուութեամբ արտասուախառն կ'աղօթէին:

Աս սուրբ գործողութենէ ետեւ Հերման ինք զինքն աղէկ ու զօրացած կը զգար, եւ ներքին հաճութիւն մ'իր երեսը լուսաւորեց:

«Ո՛հ, ինչպէս սրտի հանգստութիւն կը զգամ, բաւ, Հերման, չմեռած ինք զինքս երջանիկ կը զգամ: Աս զգացածս Աստուծոյ մխիթարութիւններն են, աս երկնաւոր երջանկութեան առհաւատ չեան Տէրն մեր իմ Փրկիչս սրտիս մէջ յարոյց: Ինք կ'ուզէ զիս մխիթարել ու զօրացընել աս մահուան տագնապին ատեն: Ստուգիւ Տէրն մեր անոր յաղթելու ինծի պիտ'որ օգնէ: Եւ շուտ մը պատերազմը պիտ'որ ընեմ լմրնցընեմ: Եկէք, իմ սիրելիներս, որ զձեզ անգամ մ'ալ օրհնեմ»,:

Ամէն ներկայ եղողները, նոյն իսկ քահանան ու

բժիշկը հիւանդին անկողնոյն քով պլայլած ծընկան վրայ եկան ու հիւանդը վերջին ճգամք մ'ելաւ նստեցաւ:

Չեր մէջը մէկը պակաս կը տեսնեմ, զորն որ կը բաղձամ նաեւ օրհնել, ըսաւ Հերման տկար ու պլայլած ձայնով մը: Չեմ ուզեր առանց անոր հետ հաշտուելու մեռնիլ:

Ամէնն ալ խռոված իրարու կը նայէին եւ չէին գիտեր թէ ինչ պատասխան տան, վասն զի աղէկ գիտէին անոր խնդրածը: Իրենք արդէն կոմսուհւոյն՝ անոր էրկանը մերձակայ մահուան լուրը հասուցած էին, եւ խնդրած էին որ շուտով արքունիք գայ: Բայց անգուժ կ'ինը ծանուցած էր, որ պիտ'որ չգայ, վասն զի կոմսը կրնայ առանց իրենն ալ մեռնիլ: Ասի մեռնողին չէին կրնար ըսել, վասն զի աս վերջին ժամուս մէջ շատ պիտ'որ տրտմէր: Լուգովիկոս զինքը խաղաղօրոց ըսելով որ մայրը դեռ եկած չէ, բայց կը յուսայ որ շատ չ'ուշանար կու գայ:

Աւստի եւ կոմսը իր դողդոջուն ձեռքն երկընցուց օրհնելու համար, եւ ծնկան վրայ եղողներն անոր օրհնութիւնն ընդունեցան պլայլած սրտով եւ արտասուօք եւ դարձեալ ոտք ելան: Հիւանդն ալ իր յոգնած գլուխը բարձին վրայ դրաւ: Քիչ մը հանգչելէն ետեւ պզտիկ Հերմանն ուզեց մէյ մ'ալ տեսնել, զանիկակ ալ օրհնելու համար: Երբոր տղան բերին, ինք այնպէս տկար էր, որ հաղիւ կրնար օրհնել: Իր նուազած աչուքները փնտռելով մը ներկայ գտնուողներուն վրայ դարձուց: Քոնգորտիա անունն իր գունատ շրթանցը վրայ մնաց, եւ մեռաւ:

Լուգովիկոս ու Վալդեր լալով ու հառաչելով մեռելին վրան ինկան, եւ Եղիսաբէթ հեծկլտալով մեռելին անկողնոյն քով ինկաւ մնաց: Իսկ իշխանին կորստեան վրայ եղած ողբը բոլոր դղեկն ու քաղաքը լեցուց:

Անբնական մահուան գոյժը անմիջապէս բոլոր երկրին մէջ տարածուեցաւ, եւ ամէն մէկ հպատակ անոր վրայ լացաւ ու տրտմեցաւ: Հիմակ յայտնի տեսնուեցաւ թէ ինչպէս ամենուն սիրելի էր: Անոր ետեւէն բիւրաւոր արցունքներ ու իղձեր կ'ելլէին: Իր աճիւնը մօրը քով հանգեաւ, որուն շիրմին քով աս հանգստեան շատ անգամ կը բաղձար: Յուղարկաւորութիւնը թէ տխուր ու թէ փառաւոր էր, եւ չկար սիրտ մը որ չի ցաւէր, եւ ամենուն աչքը արտասուօք լցուած էր: Լուգովիկոսին, Եղիսաբեթին ու Ալալեբրին ցաւն իմ գրիչս չի կրնար ստորագրել. ինչու որ իրենց սիրոյն պէս մեծ ու անսահման էր:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Խաչակիրք:

Նոյն ատենուան քրիստոնեայ ազգերուն մէջ թէ արեւմուտք ու թէ արեւելք Պաղեստինի, սուրբ երկրին վրայ, մեծ համարում կար: Որովհետեւ ան երկիրն էր, որուն մէջ աստուածեղէն փրկիչը ծնաւ ու մեծցաւ, որուն մէջ սուրբ կեանք մ'անցուց, սորվեցուց, հրաշքներ գործեց, չարչարանք քաշեց ու մեռաւ, եւ որ երկրին մէջ սուրբ գերեզմանը կը գտնուի, ուր մեր Տէրը թաղուեցաւ, եւ երեք օրէն ետքը յաղթութեամբ յարեաւ: Աս սուրբ տեղերուն, եւ փրկչին գերեզմանին, նոյն ատենը հեռու ու մօտ տեղերէն, բարեպաշտ քրիստոնէից անհամար բազմութիւն ուխտի կ'երթային, սուրբ երկիրը պտրտելու ու փրկչին ուսուցած ու սքանչելիքներ գործած տեղերը աչքով տեսնելու, ու հոն աղօթելու ու շղջմամբ եւ ապաշխարութեամբ իրենց մեղացը վրայ արտասուելու համար: Աս սուրբ գերեզմանին ուխտի երթալը, ամէն աստիճանի ու վիճակի քրիստոնեայ ազգաց զղջացեալ եւ ապաշխարող

մեղաւորաց բարեպաշտ ուխտերովը մինակ երեւելի
 ու զարմանալի չէր: Նոյն իսկ կայսրներ, թագա-
 ւորներ եւ իշխաններ, ծիրանին հանած աղքա-
 տին պանտխտի զգեստ հագած, եւ արքունի գա-
 ւազանի տեղ ուխտաւորի գաւազան մ'առած բա-
 րեպաշտ մտածութիւններով, բիւրաւոր վտանգներ
 եւ աշխատութիւններ յանձն առնելով ոտօք ի-
 րենց երկրէն հեռու եղած սուրբ գերեզմանը
 կ'երթային: Եւ հազարաւոր բարեպաշտ քահա-
 նայք իրենց վանքերուն խաղաղական պատերուն
 մէջի հանգստութիւնը սուրբ գերեզմանին պան-
 դրխտութեան աշխատութեանց հետ կը փոխէին:

Բայց քիչ մ'ետքը բարեպաշտ պանդուխտնե-
 րուն մէջ դառն տրտունջներ ելան իրենց դէմ
 եղած գէշ վարմանց համար, զորոնք չէ թէ մի-
 նակ սուրբ երկիր անցած ատեննին՝ այլ նաեւ
 սուրբ գերեզմանին քովն ալ կը կրէին: Որովհե-
 տեւ նոյն ատեն սուրբ երկիրը, սուրբ գերեզմա-
 նով մէկտեղ անհաւատ ազգերու ձեռքն էր: Ա-
 սոնք շատ անգամ անգթութեամբ կ'արգելուին
 ու չարաչար կը վարուէին չէ թէ մինակ բարե-
 պաշտ սուրբ գերեզմանին պանդուխտներուն, հա-
 պա նաեւ հոն բնակած քրիստոնէից հետ: Իրենց
 տրտունջն եւ ողբոց ձայնը մինչեւ արեւմտեան
 քրիստոնեայ ազգերուն հնչեց: Իրենց սաստիկ
 ցաւ էր, որ այսպէս կը թողուն որ անհաւատնե-
 րուն ձեռքն ըլլայ սուրբ երկիրը, ուր իրենց հա-
 ւատքին հիմնադիրը ապրեցաւ եւ աշխարհքիս
 փրկութեան համար չարչարուեցաւ, ուր փրկչին
 գերեզմանը դեռ կը գտնուէր: Բիւրաւոր արդար
 մարդկան սրտին մէջ աս քաջասիրտ որոշումը կը
 ծնանէր, թէ արեւելքի մէջ ընկճեալ եղբարցը
 զէնքով օգնութեան հասնին, սուրբ երկիրը ան-
 հաւատներուն ձեռքէն առնեն, եւ ան երկիրն
 իրենց քրիստոնեայ եղբարցը հանդարտ հայրենիք
 մ'ընեն:

1) Երջապէս բանն ան աստիճանի հասաւ որ, քահանայապետին յորդորմամբը, որոշուեցաւ թէ շատ բարեպաշտ եպիսկոպոսներ ու քահանաներ, գրեթէ բոլոր արեւմտեան ասպետաց կարգը իշխանաց ու թագաւորներու առաջնորդութեան տակ, դէպ ի սուրբ երկիր արշաւելու պատրաստութիւն տեսնեն: Սահմանուեցաւ որ ամէն մէկ զինուոր իբրեւ պատերազմող սուրբ երկիր երթալու համար, խաչին նշանը իրենց վրայ կրեն: Եւ ասկից առնուած է խաչակիր անունը: Առջի խաչակիրքն եղաւ 1096ին Ուրբանոս Բ. քահանայապետին ժամանակը, որուն առաջնորդ էր Կողմբիտ Պուլլոնի, ստորին Լողրինգիայի դուքսը:

Ստոյգ է որ իրօք սուրբ երկիրը քրիստոնէից ձեռքն անցաւ, եւ ամէն արեւելեան եւ արեւմտեան քրիստոնեայ ազգերը ասով յաղթութիւն կանգնեցին ու զԱստուած կը փառաբանէին, բայց իրենց յաղթութիւնը քիչ ժամանակ տեւեց: Քիչ մ'ետքը սուրբ երկիրը դարձեալ անհաւատներուն ձեռքն անցաւ, եւ մինչեւ աս օրս ալ անոնց ձեռքն է, այնչափ արիւնհակեղ պատերազմներէ ետքն ալ:

Եղիսաբեթին կենդանութեան ատեն չորս անգամ խաչակրաց պատերազմ եղած էր առանց պտուղ մը յառաջ բերելու, որ պատերազմին մէջ հարիւրաւոր ու հազարաւոր մարդիկ իրենց գերեզմանը գտած էին: Եւ հիմա, Հերման աշխարհակոմսին մահուրնէ քիչ մը ետքը, հինգերորդ խաչակրաց արշաւանքի պատրաստութիւն կը տեսնուէր Քրիզոր Թ. քահանայապետէն, Գերմանացւոց Փրեզերիկոս Բ.ին ժամանակը:

Բայց նոյն ժամանակը գերմանացի ասպետներուն այսպիսի նոր խաչակրաց արշաւանքի մ'եռանդը խիստ տկար էր: Ասպետներէն մեծ մասը յանձն չէին առնուր խաչին դրօշին տակ մտնել: Որովհետեւ իրենցմէ շատերը դեռ տասը տարի յառաջ, Եղիսաբեթին հօրը, Անդրէաս հօր թա-

գաւորին առաջնորդութեամբը, դէպ ի Պաղեստին արիւնահեղ խաչակրաց արշաւանք մ'ըրած էին, որն որ իրենց յիշատակաց մէջ դեռ կենդանի կը կենար: Հարիւր հազար հոգւոյ մէջէն, մինակ մէկ քանի հազարը հայրենիք դարձած էին: Հարիւրաւոր ազնուական տիկնայք այրի մնացած էին, նոյնպէս շատ հայրեր անորդի, եւ հազարաւոր որդիք ալ որբ: Ասպետաց տիկիններուն, իրենց որդւոցն ու աղջկանց, աս խաչակիրքը խիստ տհաճութիւն կը պատճառէր: Նոյն իսկ Փրեզերիկոս կայսրը, որն որ խաչակրաց առաջնորդ անուանուած էր, ասոր դէմ էր, եւ չէր ուզեր խաչակիր ըլլալ, եւ հաստատութեամբ ալ կը մերժէր յանձն չէր առնուր, թէ որ ուխտիւ ստիպուած չըլլար, զորն որ իր թագադրութեան ատեն Ասիէնի մէջ ըրած էր:

Փրեզերիկոս, որն որ իր ուխտին դէմ ընել չէր ուզեր, իրեն հաւատարիմ մնացողները որչափ որ կարելի էր իր քովը ժողովեց: Քանի մը մեծ ու քաջ գերմանացի ասպետներուն մէջ, որոնք կայսեր հետ արշաւելու խոստացան, Լուդովիկոս, Թուրինգիայի իշխանն ամենէն գլուխն էր: Երկայն ժամանակ ինք աս առաջադրութիւնն իր սիրելի ամուսնոյն ծածկած էր. ինչու որ աս բաժանման անոր փափուկ սրտին ինչ խորունկ վէրք ընելէքը շատ աղէկ գիտէր: Նոյն իսկ ինքն ալ արիւնահեղ ու վտանգալից արշաւանքէն աւելի աս ցաւալի բաժանումէն վախ կը կրէր: Աս սոսկալի մտածութիւնը կրնար զինքը սոսկացընել թէ շատերը Պաղեստին գացին եւ հոն իրենց գերեզմանը գտան, եւ թէ իրեն ալ նոյնը կրնայ պատահիլ, եւ կրնայ ալ ամենեւին աս աշխարհքիս մէջ իր սիրելիները չտեսնել: Բայց իր ասպետական քաջասրտութիւնը, Աստուծոյ վերաբերեալ գործքին ունեցած իր բարեպաշտ եռանդը, Աստուծոյ տեսչութեան վրայ ունեցած վստահութիւնը, եւ

ան ստուգութիւնը, թէ իր բարեպաշտ ու եւ
 ռանդնոտ ամուսինն իր որոշումը, որչափ որ ալ
 սիրտը կարեւոր խոցէ, պիտ'որ չի մերժէ, իրեն
 սիրտ տուին, որ վերջապէս անոր վրայ զեղիսա-
 բեթը տեղեակ ընէ: Բայց աս բանս ինք չէր կր-
 նար ընել, ուստի աս դժուար գործքը Վալդեր
 վրան առաւ: Բայց Վալդերին իր աս դժուարին
 խնդիրը յառաջ քան անոր յայտնելը, յաջող
 պարագայով մը դիւրընցաւ: Աս ժամանակներս
 Եղիսաբէթ հօրմէն գիր մ'ընդունեցաւ, որուն
 բովանդակութիւնը հետեւեալն էր:

«Մերեղի աղջիկս, դեռ քիչ մը յառաջ քու
 հաւուդ մահուանը լրով զքեզ տրամեցուցի, եւ
 հիմա կարծեմ հին վերքին վրայ աւելի մեծ վէրք
 մը պիտ'որ դնեմ: Ուստի եւ կը ծանուցանեմ
 քեզի, որ սուրբ Հայրը Հռոմէն, զիս սուրբ երկիր
 խաչակրաց արշաւանքի մը հրաւիրեց, եւ ես ալ
 աս հրաւերն ընդունեցայ: Մօտերս մէկ չափաւոր
 գնդով մը ծովով ճամբայ պիտ'որ ելլեմ: Պէտք
 չես աս լրով շփոթիլ, հապա քու բարեպաշտ
 մօրդ պէս պրասիրտ պէտք ես ըլլալ: Տես, քու
 մայրդ զիս խաչակիր գրուելու յորդորեց, երբ որ
 ինծի ըսաւ, թէ ինքն ալ, ուրիշ քաջ ասպետ-
 ներու պէս, աստուածեղէն փրկչին պատուոյն
 համար, դժուարին զոհեր ընելու պատրաստ է:
 Ստոյգ է որ ասի երկրորդ անգամ է որ իմ մա-
 հուան դիմացն երթալս կը տեսնէ. եւ կը յիշես
 արդէն տղայութենէ, թէ ինչպէս իմ հեռաւո-
 րութեանս ատեն իմ վրաս կու լար եւ ինծի հա-
 մար կ'աղօթէր: Յիշէ նաեւ մեր դարձեալ իրար
 տեսնելնուս անպայման ուրախութիւնը, երբ որ
 ես Աստուծոյ օգնութեամբը, որն որ արիւնահեղ
 պատերազմներու մէջ իմ պաշտպանս եւ իմ ա-
 զատիչս եղաւ, Պաղեստինէն ողջ առողջ ետ դար-
 ձայ, եւ իրար գրկելով ուրախութեան արցունք
 թափեցինք, եւ Աստուծոյ աս երջանիկ վերստին

տեսութեան համար ներքուստ շնորհակալութիւն մատուցինք: Քու մայրդ անոր վրայ դեռ շնորհակալ սրտով կը մտածէ: Լի վստահութեամբ նոյն հզօր ու բարերար Աստուծոյ վրայ, որն որ տասը տարիէ ի վեր իմ ապաւէնս ու պաշտպանս եղած է, եւ հիմակ ալ կրնայ ըլլալ, եւ պիտ'որ ըլլայ ալ, ինք իր սիրտը կը մխիթարէ քիչ մ'ետքը ըլլուելու բաժանման վրայ: Նայէ որ սիրելի Եղիսաբեթս, դուն ալ քու բարեպաշտ եւ երկիւղած մօրդ պէս ընես: Ինքն ալ կ'աղաչէ քեզի որ աւելի ինձի համար աղօթք ընես քան թէ իմ վրաս լաս, աւելի յԱստուած վստահելով իմ երջանիկ դարձիս վրայ մտածես, քան թէ ամէն կողմանէ սպառնացուած սարակինոսաց դէմ ըլլուելու արիւնահեղ պատերազմներուն վրայ: Նոյնպէս նայէ որ ընես, քու ամուսնոյդ նկատմամբ, երբ որ սուրբ Հայրը, կամ Գերմանիայի կայսրը զինքն ալ խաչի նշանը ընդունելու յորդորէ, հրաւիրէ, եւ մի ջանար զինքն պսպիսի սուրբ գործքէ մը ետ կեցընել: Խաչակիր ասպետի մը ամուսինը՝ ի բարեպաշտութենէ իր տկար սիրտը պէտք է նուաճել, ու պատրաստ պիտ'որ ըլլայ, աստուածեղէն փրկչին սիրոյն համար, իր սրտին արեան վերջին կաթիլը զոհ մատուցանելու. տեսնելով իր ազնուական այրը որ իր արեամբը սուրբ երկիրը, որուն մէջ աստուածեղէն փրկիչը մեր ամենուս համար արիւն թափեց, անհաւատներուն ձեռքէն ազատելու կ'օգնէ:

Նայէ սիրելի Եղիսաբեթ, պսպէս կը խորհի ու կը խօսի քու մեծասիրտ մայրդ, եւ ամենեւին տարակոյս չունի որ իր սիրելի ու բարի աղջիկն ալ նոյնպէս կը խորհի ու նոյն սիրտն ունի: Եւ կը յանձնէ որ իր կողմանէ քու ամուսնոյդ ու որդւոյդ բարեւ ընես խոստանալով միանգամայն, իմ հեռաւորութեանս ատեն անգամ մը ձեզի այցելութեան գալու, Պելլային հետ, որն որ զուարթ

ու քաջ տղայ մ'եղած է: Ուստի մնաս բարով,
սիրելի աղջիկս, ու հեռուանց ընդունէ իմ հայ-
րական օրհնութիւնս, եւ թէ Աստուծոյ տեսչու-
թիւնը իմ մահս որոշած է նէ, ան ատեն իմ
հոգւոյս համար աղօթք ըրէ, մայրդ եւ եղբայրդ
մխիթարէ, եւ ինձի համար շատ մի լար: Եւ թէ
որ մեռնիմ, գոնէ փառօք կը մեռնիմ, եւ գուցէ
նաեւ ան երկրին մէջ, ուր իմ փրկիչս ինձի համար
մեռաւ: Եւ սիրելի փրկիչը, որուն խաչը կը կրեմ
եւ որուն փառացը համար մահուան դիմացը
կ'երթամ, իմ հոգիս գթութեամբ կ'ընդունի:
Փահուրնէ ամենեւին չեմ վախնար, հապա Աս-
տուծով եւ իմ սիրելի ու հաւատարիմ Հունգա-
րացիներովս անոր դիմացը կ'երթամ: Ուրեմն ան-
գամ մ'ալ մնաս բարով, գուցէ վերջինն է: Շատ
շատ բարեւ ըրէ, սիրելի Լուդովիկոսիդ ու Հեր-
մանին եւ ամէն ձեր ու մեր սիրելեաց: Գուցէ
Լուդովիկոսիդ հետ ծովու վրայ անհաւատներուն
հետ սաստիկ պատերազմած ատեն կը տեսնուինք,,:

Լալով ու բովանդակ անդամները գողալով
Եղիսաբէթ վար ձգեց նամակը, զորն որ արդէն
կարդացած ատեն իր թափած արցունքներով
թրջած էր: Ստիպուեցաւ ակոռի մը վրայ նստիլ,
որովհետեւ նամակին մէջի գրուածը զինքը սաս-
տիկ խռոված ու այլայլած էր:

Ուրեմն նորէն իմ հայրս իբրեւ խաչակիր
ասպետ մը վտանգալից Պաղեստին կ'երթայ. ըսաւ
Եղիսաբէթ ինքն իրեն լալով: Ո՛հ Աստուած, ալ
մէյ մ'ալ զինքը պիտ'որ չտեսնեմ աս աշխարհ-
քիս մէջ: Աս անգամ, իմ սիրտս այսպէս կը
գուշակէ, ինձի համար աս հեղ խաչակրաց ար-
շաւանքը ցաւալի եւ արիւնալից պիտ'որ ըլլայ:
Ա՛խ, իզմէ իմ ամենաբարի հայրս, եւ, ո՛հ սոս-
կալի մտածութիւն, գուցէ նաեւ իմ ամենասիրե-
լի ամուսինս պիտ'որ յափշտակէ: Սոսկալի, վախ-
նալով բան, իմ տկար սիրտս ինչպէս պիտ'որ ա-

սի տանի: Բայց Ղուգովիկոս դեռ խաչ առած չէ, կ'երեւայ թէ զինքը դեռ հրաւիրած չեն: Կամ թէ առած է նէ կարելի է խնայելու համար ինձմէ կը ծածկէ: Ասի կրնայ ըլլալ, բայց ինձի համար ցաւալի բան է: Արդարեւ, ես կը ճանչնամ իմ Ղուգովիկոսս ինք թէ արուժիւն եւ ասպետական պատիւ, ու թէ ամուսնոյ ու հայրական սէր ունի: Թէ որ սուրբ Հայրը, եւ կամ Կայսրը խաչն ընդունելու համար յորդորած են նէ, ես անոր ասպետական քաջութեանն ու սուրբ եկեղեցւոյն ունեցած հնազանդութեան երաշխաւոր եմ, որ ընդունած պիտ'որ ըլլայ: Ստուգիւ առած պիտ'որ ըլլայ: Հիմա կ'իմանամ, երկայն ատենէ վեր անոր զուարթ ճակտին վրայ եղած տրտմութեան պատճառը: Ես շատ անգամ անձկութեամբ եւ իրեն մասնակից ըլլալով իրեն հարցուցի. ինչու լուեց ինձի բուն պատճառը ըսելու: Մէյ մ'ալ կ'ուզեմ աղէկ մը տեղեկանալ. բայց ինձի շատ ծանր պիտի գայ: Ասոր համար իմ Ղուգովիկոսիս գէշ պիտ'որ երեւամ, բայց ինչ ընեմ, այլազգ չեմ կրնար: Չէ, չէ, ասի չեմ կրնար եւ չեմ ալ ուզեր: Ո՛հ գիտեմ, ինք ինձի կը խնայէ ու զիս կը սիրէ, եւ ինչչափ ծանր պիտ'որ գայ իրեն, իր որոշումն ինձի յայտնելու: Իր ամուսինէն եւ որդիէն բաժնուիլը իմենէս քիչ ծանր պիտ'որ չի գայ իրեն: Բայց արդեօք ինք իզմէ յաւիտեանս բաժնուած պիտ'որ ըլլայ. եւ ես զինքը ալ աս աշխարհքիս մէջ պիտ'որ չտեսնեմ: Սոսկալի մտածութիւն: Ո՛հ Աստուած, զօրացուր իմ սիրտս, որպէս զի, քու սիրոյդ համար, կարենայ զանիկա կրել: Ասկից ետքը Եղիսաբեթ խել մը չարագուշակ մտածմունքներ ու յուսահատական փորձութիւններ ունենալէն՝ ու ինք զինքն Աստուծոյ նախախնամութեան յանձնելէն ետեւ, մխիթարուած ու քաջալերուած, առանց յապաղելու իր ամուսինը փնտռելու ելաւ անկից ստուգելու հա-

մար թէ իսկապէս խաչը առա՞ծ է, եւ կամ թէ պիտ'որ առնո՞ւ: Հօրը գրած նամակն ալ մէկտեղ առաւ, մէջի գրուածը անոր հաղորդելու համար: «Գուցէ, կ'ըսէր, ան ալ կրնայ անկից իր սրտին համար մխիթարութիւն մը հանել»:

Մէյ մ'ալ Աննան իր սենեակը մտաւ եւ ծանոյց որ Վալդէր կոմսը այցելութեան եկած է: Ան ստոյգ է որ ձեզի ուրախալի լուր բերած պիտ'որ չըլլայ, ըսաւ Աննա, որովհետեւ դրսանց շատ տխուր կ'երեւայ:

Վալդէր ներս հրամայուեցաւ: Շատ ջանաց որ իր ճակտին վրայի թանձր ամպերը փարատէ եւ զուարթ երեւայ, բայց չի կրցաւ: Ինչ մեծ անձկութեան մէջ մտաւ երբ որ Եղիսաբեթ աս խօսքերով դիմացն ելաւ. Տէր կոմս, աս անգամ աղէկ լուր մը բերած պիտ'որ չըլլաս, ասի քու դէմքէդ կ'իմանամ, եւ կը գուշակեմ: Բայց ձեզի անձկութիւն չի պատճառելու համար ամէն բանէն յառաջ աս նամակը կարդացէք, որով կը տեսնէք, թէ ես ամէն բանի պատրաստ եմ, որուն համար, ինչպէս որ ձեր կերպարանքէն կը ճանչնամ, կ'ուզէք զիս պատրաստել: Վալդէր առաւ կարգաց ու աչուրները լեցուեցան:

Սաստիկ այլայլած նամակը դարձեալ իշխանուհւոյն տուաւ, որն որ զինքը ծանր պարտաւորութենէ մ'ազատեց, եւ անոր սրտին վրայէն ծանր բեռ մը մէկզի առաւ:

«Ստուգիւ ազնիւ իշխանուհի, կանչեց Վալդէր այլայլած, ստուգիւ իմ այցելութեանս պատճառն աղէկ գուշակեր ես, բայց նախախնամութիւնը զիս կանխեց: Ինչ որ ինձի դժուար պիտ'որ ըլլար յաջողցընել, ձեր ազնիւ հօրը գրուածքը կատարեց լմնցուց: Այո, տիկին, ձեր ամուսինը խաչակիր ասպետ մըն է, եւ ինչպէս մեծ պիտ'որ ըլլայ իր ուրախութիւնը՝ երբ որ զձեզ այսպէս պատրաստական ու հաստատուն գտնէ:

Հրաման կու տա՞ք, որ անմիջապէս երթամ զինքն
 աս բանիս վրայ տեղեակ ընեմ, : Չեմ հրամայեր
 սիրելի բարեկամ, հապա կ'աղաչեմ որ երթաք
 զինքը գտնէք եւ ըսէք որ հոս ինձի գայ, թէ որ
 իր գործքերը կը ներեն, կրկնեց Եղիսաբեթ :
 Վալդէր գնաց ու քանի մը ըրապէ ետքը Լուգո-
 վիկոս եւ Եղիսաբեթ այլայլած թեւ թեւի մտան

«Աս խաչակիր ասպետ մ'եղայ, գոչեց Լու-
 գովիկոս անոր թեւը մտած ատեն, եւ իմ սիրելի
 Եղիսաբեթս ամենեւին տրտունջ մը չ'ըներ, եւ
 զիս ամենեւին չ'յանդիմաներ : Ո՛հ իմ սիրելիս,
 կը զարմանամ քու քաջասրտութեանդ ու մեծ-
 անձնութեանդ վրայ : Ստուգիւ ինձմէ աւելի քա-
 ջասիրտ ես, վասն զի բարի ու բարեպաշտ ալ ես :
 Ներէ ինձի, որ քիչ մ'ատեն աս բանիս մէջ քու
 քաջասրտութեանդ վրայ տարակոյս ունեցայ եւ
 աս պատճառաւ իմ որոշումն մինչեւ հիմա ծած-
 կեցի : Իմ տկարութիւնս է անոր պատճառ :

Եղիսաբեթ աս ներքուստ այլայլութեան
 վիճակին մէջ չէր կրնար բառ մ'արտաբերել,
 հապա լուութեամբ իր ամուսնոյն հօրը գրուածը
 տուաւ :

Ո՛հ, ազնիւ ծնողք, պատուական մարդիկ-
 ներ. գոչեց Լուգովիկոս այլայլած, նամակը կար-
 գալէն ետեւ, ուրեմն ձեզի պէտք եմ շնորհակալ
 ըլլալ որ իմ Եղիսաբեթս գուք պատրաստեր էք
 եւ զինքն այսպէս որոշել տուեր էք : Այո՛ գուք
 զիս ալ քաջալերեցիք եւ իմ տկար սիրտս հաս-
 տատեցիք : Շնորհակալ եմ ձեզի ազնիւ հողիք :
 Ուրեմն իմ Պաղեստին ըրած ճամբորդութեանս
 մէջ իմ ազնիւ ու թագաւոր հօրս պիտ'որ հան-
 դիպիմ. անոր քովը պատերազմելու ուրախու-
 թիւնը պիտ'որ ունենամ, եւ անոր պատուական
 կեանքը անհաւատներուն մահաբեր կռուէն պիտ'
 որ պաշտպանեմ : Այո՛, Եղիսաբեթ, քու հայրդ
 պիտ'որ ուրախանայ իր որդւոյն վրայ, անոր պատ-

Ճառաւ ամօթ պիտ'որ չի կրէ: Հոն իրեն պիտ'որ
ցուցընեմ, որ իր դուստրը անարժան մէկու մը
տուած չէ եղեր, իմ Փրկչիս պատուոյն եւ իմ
հաւատացեալ եղբարցս խաղաղութեան համար
քաջութեամբ պիտ'որ պատերազմիմ:

Այսպէս խօսեցաւ Աուգոստինոս եւ դիւցազ-
նական արիւնը իր երակներուն մէջ սկսաւ քա-
լել: Ասպետական քաջասրտութիւնն իր ճակատը
զուարթացուց, ինք զինքն արդէն սուրը ձեռքը
փառաւոր պատերազմի դաշտին վրայ կ'երեւա-
կայէր, եւ աս ատենս իր ամուսնէն եւ որդիէն
բաժնուելուն բոլոր ցաւը մոռցած էր: Նոյն իսկ
Եղիսաբեթ, Աուգոստինոսն այնպէս սրտոտութեամբ
եւ պատերազմի եռանդով իր առջին տեսնելով
ցաւալի բաժանման վրայ ամենեւին չէր մտածեր,
հապա մինակ իր հօրն ուրախութեան եւ ամուս-
նոյն քաջութեանցն ու պատուոյն վրայ կը խորհէր:

Ի այց ի վերայ այսր ամենայնի բաժանման
օրը ուրիշ կերպ կը զգար: Ստոյգ է որ աս ազ-
նուական անձինք իրենց սրտին վրայ տիրած էին,
եւ բաժանման ցաւալի ժամուն համար իրենք զի-
րենք որոշած էին, բայց բնութիւնը դեռ բոլորո-
վին չէր յաղթուած: Գառն ու ցաւալի էր աս
բաժանումը աղնիւ ամուսնոյն, եւ հեղեղի պէս
արցունքը կը հոսէր: Մինակ բնութեամբ եւ
ինքն իրեն յաղթելով՝ Աուգոստինոս իր ամուսինէն
եւ որդիէն ինք զինքը բաժնեց, եւ արիւնալից
սրտով քաղաքը թող տուաւ ջերմ արտասուք
թափելով եւ իր սիրելիներէն բարեմաղթութիւն-
ներ ընդունելով: Աս աղնիւ փետին իր սիրելի
հարսին բաժանման ցաւէն մեծ բան չկար: Անոր
մեծութիւնը անի մինակ կրնայ զգալ իմանալ,
որն որ ասոր նման զոհ մ'ըրած է:

Գ Լ ՈՒ Խ Ժ Բ.

Տրտման թեան ու վշտաց մեջ մտի թարոս թիւն:

Լուգովիկոսին ու Վալդերին իշխանական գղեակը թող տալէն ի վեր, ամէն ուրախութիւն իբր թէ աներեւոյթ եղաւ, եւ անոր՝ ամենախոր տխրութիւն մը փոխանակեց: Եղիսաբեթ անկից ետեւ ալ Աննային եւ իր որդւոյն հետ առանձին մնացած էր: Շատ անգամ ջերմ արտասուօք կու լար իր հաւատարիմ բարեկամուհւոյն առջեւ, եւ հոգևով իր ամուսնոյն արշաւանացը ետեւէն կ'երթար: Եւ շատ սիրով ծովու վրայ ու պատերազմներու մէջ անոր կ'ընկերանար, թէ որ պզտիկ տղան իրեն խնամոցը հարկաւորութիւն չունենար, եւ իր հպատակաց բարիքը զինքը չարգիլէին: Իսկզբան այսպէս միտքը դրած էր որ երկանը հետ երթայ, եւ Աննան ալ ուզած էր տղուն հետ իրեն ընկերանալու, բայց երկանն ու Վալդերին աղաչանքն ու յորդորները զանիկակ ան խորհրդէն ետ կեցուցած էին: Շատ անգամ այնպէս կը կարծէր որ, թէ իրեն մտի թարական ու թէ հպատակաց համար աղէկ կ'ըլլար, թէ որ գոնէ Վալդեր իր քովը մնար: Բայց երբ որ ան հեռու ճամբորդութեան, եւ անոր վտանգներուն վրայ կը մտածէր, դարձեալ կը զուարթանար եւ Աստուծոյ շնորհակալ կ'ըլլար, որ այսպիսի հաւատարիմ բարեկամ մը իր սիրելի երկանը վտանգներուն մասնակից կ'ըլլայ, եւ զանիկա կը մտի թարէ ու վտանգներու ատեն կը պաշտպանէ: Աս երկուքը՝ ինչպէս նաեւ սիրելի հայրը, զորն որ ծովու ալեաց վրայ եղած կը կարծէր, միանգամայն Հունգարիայի մէջ իր տրտում մայրը սիրելի Պելայով, Եղիսաբեթին եւ իր հաւատարիմ բարեկամ Աննային խօսակցութեանց ու զբաղմանց նիւթերն էին:

Մտդէն իր ամուսնոյն ճամբորդութենէն յա-

առջ սիրելի մօրը նամակ մը խաւրած էր, որուն մէջ բարի ու երախտագէտ աղջկան մը ամենափափուկ զգածմունքներ, իր սիրելի հօրը վրայ մեծ հոգ, եւ իր մօրն ու եղբօրը տրամուլթեան ներքին վշտակցութիւն կը պարունակուէր, որուն մէջ միանգամայն կ'աղաչէր մօրը որ այսպիսի Լքման ժամանակ մէյ մը իրեն այցելութեան գայ, յառաջագոյն իրեն ծանուցանելով: Որուն մէջ չէր ծածկած նաեւ, թէ ինչպէս չարագուշակ խորհուրդ մը իր սիրտն անդադար կը նեղէ, եւ թէ մինակ հօրը նամակը եւ մօրն այցելութեան գալու խոստումը զինքը դարձեալ կը մխիթարեն ու կը քաջալերեն: Եւ դարձեալ՝ ժամերն ու օրերը կը համրէ, որ երբ սիրելի մայրն եւ սիրուն եղբայրը վերստին պիտ'որ տեսնէ, եւ ուրախութեան արտասուօք իր սրտին վրայ պիտ'որ ճնշէ, եւ անոնց քովը նստած իր տխուր ժամանակը քիչ մը պիտ'որ զուարթութեամբ անցընէ:

Արդէն ցաւալի բաժանման օրէն ի վեր քանի մը տրտում տխուր շաբաթ անցած էր, եւ Հունգարիա խրկած նամակին վրայ երկու ամիս եղած էր. բայց Եղիսաբէթ ոչ իր ամուսինէն եւ ոչ ալ մօրմէն նամակ մ'ընդունած էր: Եւ աս բանս զինքը խիստ անհանգիստ կ'ընէր, եւ անոր տրամուլթիւնն ու անձկութիւնը օրէ օր կ'աւելցընէր: Ստոյգ է որ սրտին հանդարտութիւնն աղօթքի մէջ կը փնտռէր ու կը գտնէր, միայն թէ շատ քիչ ժամանակ կը տեսէր:

Ո՛հ Աստուած, չեմ գիտեր, թէ ինչ պէտք եմ մտածել ասոր վրայ, ըսաւ Եղիսաբէթ Աննային սրտի անձկութեամբ, մինչեւ հիմա Լուգովիկոսէս պէտք էի լուր մ'առած ըլլալ, զորն որ տալու խոստացաւ, անմիջապէս որ իր գնդովն Իգալիա հասնի: Թէ որ իրեն ճամբան դժբախտութիւն մը հանդիպած չէ, զորն որ Աստուած չընէ, արդէն մինչեւ հիմակ երկայն ա

տենէ ի վեր հոն հասած պիտ'որ ըլլայ: Բայց մօրմէս ալ պատասխան չեմ ընդունած: Արդեօք հիւանդացած է: Ա՛հ, սիրելի Աննա, արգահատէ ինծի եւ ըլլայ թէ, իմ հառաչանացս եւ հեծութեանցս վրայ նեղասրտիս: Իրաւամբ կրնաս զիս անհամբեր կանչել. բայց նայէ սիրելի Աննա, կ'աղօթեմ եւ դարձեալ կ'աղօթեմ, այսու ամենայնիւ սիրտս բոլորովին հանդիստ չէ: Շատ անգամ ինք զինքս կը յանդիմանեմ Աստուծոյ վրայ վրտահոսութիւն չունենալու համար: Եւ ամէն օր ալ Աստուծմէ կը խնդրեմ որ իմ տկար ու թոյլ սիրտս վստահութեան մէջ զօրացընէ, եւ տայ ինծի որ յԱստուած վստահելով սրտի հանդարտութիւն գտնեմ: Բայց հազիւ թէ աղաչանքս Աստուծմէ լսուած եւ սիրտս հանդարտած կ'երեւայ, դարձեալ չարագուշակ խորհուրդները յիս կը ծնանին, եւ ընդունած փոքր հանդարտութիւնս իզմէ կը յափշտակեն ու գիշեր ցորեկ զիս կը չարչարեն: Ա՛խ, Աննա, դուն ալ աղօթք ըրէ, որ Աստուած զիս աս անձկալի ու նեղացուցիչ վիճակէն ազատէ:

Աննա, որ Եղիսաբեթին հաւատարիմ ընկերն եւ անոր վշտացն եւ ուրախութեանց մասնակիցն էր, ամէն տեսակ զօրաւոր պատճառներն օգնութեան առաւ զանիկա մխիթարելու եւ հանդարտեցընելու: Բայց աս երկիւղի եւ յուսոյ, աղօթքի եւ արտասուաց մէջ քանի մը շաբաթ ալ անցաւ, ի վերայ այսր ամենայնի ո՛չ Իդալիայէն եւ ո՛չ ալ Հունգարիայէն նամակ մ'եկաւ: Եւ հիմակ Եղիսաբեթին անձկութիւնը վերջին բարձրութիւնը հասած էր: Մինակ իր տխուր սրտին աս ակնկալութեան ճառագայթը կը ծագէր, որ իր ամուսինն անոր համար չի գրեր, որպէս զի յաջողութեամբ ծովուն անդիի եզերքը հասնի, եւ իր հօրը բանակը հասնելով անկից ալ լուր ունենալով այնպէս սուրհանդակով մը խաւրէ: Աննա,

Չանաց, որ աս սփոփիչ մտածութիւնն անոր հաստատուն երեւցընէ, եւ ամէն օր ալ նոյնը աւելցընելու կ'աշխատէր: Բայց շատ դժուար էր իր մօրն այսչափ երկայն ատեն լռութեան վրայ անհոգ կենալ: Արդէն որոշած էր երկրորդ անգամ նամակ մը գրելու հաստատուն լուր մ'առնելու համար:

Օլուարթ գեղեցիկ իրիկուն մը, Եղիսաբեթ Աննային հետ պատշգամին վրայ նստած ու պզտիկ շերմանը գիրկն առած կը շարժէր: Տղուն անմեղ ծիծաղը, սիրուն երեկոյեան կարմրութեան պէս, որն որ դղեկին արեւմտեան կողմը կ'ոսկեզօծէր, անոր մանկական խօսակցութիւններն ու քաղցր հեղիկ երեկոյեան հոփը, որն որ զինքը կը սփոփէին, շատ զուարթացուցած էին զանիկա: Իրենց խօսակցութեան նիւթը, մօրը վրայ էր, որուն Եղիսաբեթ կը մտածէր որ նամակ մը գրէ ան իրիկուն: Երբ որ ալ պատշգամը թող պիտ'որ տային եւ երթային, վասն զի իրիկուան հոփը սկսած էր խիստ ու կծու փչել, մէյ մ'ալ ծառայ մը մեծ նամակով մը ներս մտաւ: Եղիսաբեթ ծառային ձեռքը նամակը տեսաւ չի տեսաւ, սաստիկ ուրախութեամբ մը դիմացը վաղեց, եւ ձեռքէն առաւ նամակը, որն որ, ինչպէս ծառան կը յայտնէր, իսկապէս Պաղիստինէն եկած պիտ'որ ըլլար:

Բայց ինչպիսի յանկարծական փոփոխութիւն Եղիսաբեթին վրայ: Երեսին գոյնը նետեց, շրթունքները ջղաձգութեամբ մը գողգոջալու սկըսաւ, ծնկուրները իրարու կը զարնէին ու ձեռուրները կը դողային:

Եւ իս, Աննա, ահա գուշակութիւնս, գոչեց Եղիսաբեթ, եւ կէս մարած անոր գիրկն ինկաւ, եւ նամակը գողգոջուն ձեռքէն վար ձգեց: Աննան զարհուրեցաւ, եւ իր տիրուհին առաւ բազմոցին վրայ տարաւ, ուր նորէն խելքը գլուխն եկաւ: Ծառան գացած էր, եւ նամակն ալ դեռ փակուած գետինը կը կենար:

Բայց, սիրելի բարեկամս, սկսաւ Աննան, ձեր այսպէս յանկարծական երկիւղին ու զարհուրանաց պատճառն ի՞նչ է:

Վամակն եւ իմ գուշակութիւնս, կրկնեց Եղիսաբեթ: Հասցէին օտար ձեռքէ ըլլալն եւ սեւ կնիքը մահ կը նշանակէ. մահը իմ սիրելի . . . : Մօրս կ'ուզէր ըսել, բայց խօսքը բերանը մնաց: Աննային գիրկն ինկաւ, կ'ուզէր լալ, բայց չէր կրնար: Մէկ չարագուշակ խորհուրդ մը սրտին վրայ քարի մը պէս կը ծանրանար: Գժուար շունչ կու տար կ'առնէր, եւ խորունկ կը հառաչէր: Բայց ի վերայ այսր ամենայնի իր սիրտը նուաճեց, եւ կը ջանար անտարբեր կենալու:

Երբ որ Աննային բազկէն մէկդի ելաւ, տեսաւ իր քովը սիրուն պզտիկ Հերմանը, կնքուած նամակը ձեռքը: Անմեղ ու զուարթ տղուն աչուրներուն մէջ արցունքը մարգրտի հատի պէս կը շողար:

Վայէ սիրելի մայր, ըսաւ տղան անմեղութեամբ, նայէ ինչ գտայ: Բայց ի՞նչու կու լաս, հարցուց. պէտք չես այնպէս տրտում կենալ, ապա թէ ոչ ես ալ տրտում կ'ըլլամ: Զիս չե՞ս սիրեր:

Ներքուստ այլայլած, մայրը տղան բազկացը մէջ առաւ ճնշեց, եւ անոր կապուտակ թաց աչուրները պագաւ:

Ա՛յո՛, սիրելի տղաս գոչեց Եղիսաբեթ ցաւով, գուցէ իմ երկրիս վրայ ունենալու մի միակ գոհարս դուն ես: Ա՛խ, սիրուն տղաս, կեցիր քիչ մը ետքը քեզի կ'ըսեմ, իմ տրտում ըլլալուս պատճառը, բայց հիմակ աղէկ չես կրնար հասկրնալ:

Ա՛ռ, սիրելի Աննա, ըսաւ Եղիսաբեթ, նամակն անոր տալով. բաց ու կարդա, ես չեմ կրնար: Ո՛վ Աստուած, զօրացուր զիս, որպէս զի ամէն բանի պատրաստ եւ անտարբեր գտնուիմ:

Աննան գողգոջուն ձեռուրներով բացաւ նամակը, կարդաց ու գունատեցաւ:

Այս Աննա, ինչ բան է, դեղնցար, կու լաս. գոչեց Եղիսաբեթ զարհուրած, ա՛ն է, ա՛ն է, մեռա՛ծ է բարի, ու սիրելի մայրը: Ո՛հ Աստուած. նայուածքդ այո՛ կ'ըսէ:

Այո՛ սիրելի բարեկամս, հաստատ բռնէ ինք զինքդ, ըսաւ թոթովելով, Աննան: Մայրդ ալ չկայ:

Ալ չկայ՝ գոչեց Եղիսաբեթ սաստիկ ցաւով, եւ տղան ջղաձգութեամբ գիրկը ճնշելով բազմոցին վրան ինկաւ: Եւ ա՛լ բերանը չբացաւ, եւ աչուրներէն ալ արցունքը դադրեցաւ: Ստոյգ է որ խելքը չէր կորսնցուցած, բայց քանի մը ըրուակէ հոգին իրմէ հեռացած կ'երեւար:

Տղուն լացքն ու գգուանքը զինքը նորէն վրայ բերին: Ուժգնութեամբ մը տղան միշտ գիրկը բռնած բազմոցէն ելաւ, Քրիստոսին պատկերին առջին ծնկան վրայ եկաւ, ու պատառուն ձայնիւ մը գոչեց: Ա՛յ, աստուածեղէն Փրկիչ, արտասուք շնորհէ ինձի, ապա թէ ոչ սիրտս կտոր կտոր կ'ըլլայ: Զօրացուր զիս, տուր ինձի մխիթարութիւն, եւ տղուն համար մայրը ողջ պահէ: Թէ որ զիս չես մխիթարեր, ցաւոց մէջ կը կորսուիմ: Ո՛հ Տէր, մի՛ թողուր զիս:

Աս կարճ աղօթքէն ետեւ դարձեալ ոտք ելաւ, ու տղան գորովով մը կրծոցը վրայ ճնշեց: Բայց գեռ աչուրներէն արցունք չէր վազեր: Սիրտը այնպէս կը ցաւէր, որ իբր թէ կ'ուղէր պատռիլ:

Հիւանդ ես սիրելի մայր, հարցուց բարի տղան, եւ կը շոյէր զինքը:

Ո՛հ, սիրուն տղաս, կրկնեց մայրը կոտրած սրտով, ես ա՛լ մայր չունիմ, եւ դուն ալ մեծ մայր: Անիկա մեռեր է:

Ա՛ն ալ, քեզի պէս բարի մայր մըն էր, հարցուց անմեղութեամբ տղան:

Հիմա, տառապեալ մօր սիրտն ելաւ, տղան գետինը դրաւ, եւ արտասուաց հեղեղ մը աչուրներէն սկսաւ հոսել:

Աննան, որն որ աս արտասուուաց բարութիւնը կը ճանչնար, պղտիկ Հերմանին հետ հեռացաւ, եւ իր բարեկամը քիչ մը ժամանակ առանձին թողուց: Երբոր մայրը խուցին մէջ կու լար, Աննան, գղեկի մատրան մէջ խորանին ոտքը տղուն քով ծնկան վրայ եկաւ եւ Եղիսաբեթին համար սկսան աղօթք ընել:

Երբ որ Աննան տղուն հետ նորէն խուցը դարձաւ, իր բարեկամը քիչ մը աղէկ ու հանդարտ գտաւ:

Աստուած ինձի ողորմեցաւ ու զիս մխիթարեց, գոչեց Եղիսաբեթ արտասուօք, եւ տղան ու Աննան բազկացը մէջ առաւ: Ա՛խ սիրելի Աննա, ինչչափ բան կորսնցուցի, եւ ինչչափ ալ կրնամ դեռ կորսնցընել: Բայց չեմ ուզեր Աստուծոյ տեսչութեան դէմ տրտնջալ, եւ դեռ Աստուծոյ վրայ պիտ'որ վստահիմ, եւ եռանդեամբ աղօթեմ, ու սիրելի հպատակաց բարւոյն համար պիտ'որ աշխատիմ, առատ ողորմութիւն տամ, եւ աւելորդ ժամանակներս իմ սիրելեացս մտածութեան եւ իմ սիրելի տղուս կրթութեան ու քու բարեկամութեանդ պիտ'որ զոհեմ: Եւ այսպէս՝ սիրելի Աննա, այսպէս կը յուսամ որ, թէպէտ եւ աշխարհքիս մէջ ամէն բան ալ կորսնցընելու ըլլամ, դեռ կը գտնեմ ան մխիթարութիւնը, զորն որ Աստուած կը շնորհէ, որպէս զի տրտմութեան ու ցաւոց մէջ բոլորովին չի լքանիմ: Բայց թէ որ երբեմն զիս տխրութեան մէջ տրտունջ ընելս եւ կամ ողբալս կը տեսնես, անմիջապէս ինձի իմ պարտքերս կը յիշեցընես, եւ զիս կը սփոփես ու կը քաջալերես, չէ՞ մի սիրելի Աննա:

Այո՛, ես քեզի հաւատարիմ կը մնամ, մինչեւ ցմահ, գոչեց Աննա, եւ լալով Եղիսաբեթին վրայ ինկաւ: Բայց սիրելի տիկինս, դեռ դուն բոլորովին ձգուած չես: Ստոյգ է որ ամենասիրելի մայրդ կորսնցուցիր, բայց սիրելի ամուսինդ ու հայրդ

դեռ ողջ են: Երբ որ անոնք ատենօք Պաղեստինէն կը դառնան, եւ դուն պզտիկ իշխանին հետ անոնց դիմացը կ'ելլես, ո՛հ ինչպէս քաղցր պիտ'որ դայ նոյն ատեն աս վերստին տեսութիւնը ձեր վշտացեալ սրտին: Ան ատեն ուրախութեան արտասուք պիտ'որ հեղուս, նոր կենաց արեւ մը պիտի ծագի, եւ դարձեալ երջանիկ պիտ'որ ըլլաս: Յուսացէք եւ վստահ եղէք, սիրելի բարեկամ, եւ ամէն բան աղէկի կը դառնայ:

Ազիսաբեթ սրտանց շնորհակալ եղաւ բարի Աննային իր սիրոյն ու հաւատարմութեան համար, եւ անոր տուած մխիթարական խօսքերուն իրաւունք կու տար, միայն թէ, իր սրտին մէջ ծածուկ խորհուրդ մը կամ գուշակութիւն մը չէ կ'ըսէր: Եւ ինք զինքը զօրաւոր զգալով, ուզեց գուժաբեր նամակը կարդալ: Աննան, շատ դժուարութեամբ, անոր բաղձանքը լեցուց, եւ հետեւեալ պարունակուածը կարդաց:

«Թագաւորին ցաւալի բաժանումէն գրեթէ երկու ամիս վերջը, Թագուհին դէպ ի Թուրինգիա ճամբորդութեան պատրաստութիւն կը տեսնէր: Արդէն ամէն բան ի կարգի էր բայց Աստուած՝ որն որ ուրիշ կերպ որոշած էր, իրը յանկարծ փոխեց: Բարի Թագուհին իրիկուն մը պարտեզին մէջ ժուռ եկած ատեն, տենդէ մը բռնուեցաւ, որն որ շուտ մը երթալով սաստկացաւ, այնպէս որ երկրորդ օրը խելքը կորսնցուց ու վեցերորդ օրը վախճանեցաւ: Թագաւորական պալատին մէջ ամէնն ալ որբ մնացած Պելային ողբին հետ ընկերացած էին, չէ թէ մինակ թագաւորանիստ քաղաքը այլ նաեւ բոլոր երկիրը՝ իբրեւ ամենաբարի թագուհի մը անոր վրայ կու լային. որովհետեւ ամէն տեղ զինքը իբրեւ մայր կը սիրէին, եւ իբրեւ սուրբ կը յարգէին: Անոր յուղարկաւորութեան ատեն, որն որ աւելի տխուր քան թէ հանդիսաւոր եղաւ, սիրոյ ու շնորհա-

կալութեան բիւրաւոր արցունքներ թափուեցան: Արքունեաց մէջ ամէնն ալ որբ իշխանին ցաւոցը ներքուստ մասնակից կ'ըլլային. ու ազնուական նախանձախնդրութեամբ մը կը ջանային անոր հաճոյ ըլլալ, եւ զինքը մխիթարել: Անմիջապէս թագաւորին սուրհանգակ մը խաւրուեցաւ, որ դառնայ գայ: Եւ մինչեւ անոր դարձը, Բեշթի եպիսկոպոսը զիշխանը իր հոգացողութեան տակ առաւ: Իսկ կառավարութեան գործքերը օրինաւոր եւ իմաստուն պաշտօնէից առաջնորդութեան ձեռքը մնաց, : Եպիսկոպոսէն շինուած սրտաշարժ նամակը կը պարունակէր իր մէջը քիչ բայց զօրաւոր մխիթարական խօսքեր, որոնք Եղիսաբեթին վրայ բարի ազդեցութիւն ըրին: Արչափ որ գրուածքը ցաւալի էր, այնչափ ալ խորունկ խօցուած վէրքին վրայ բժշկարար բաղսամոնի կը հեղուր: Պղտիկ Պելային վրայ ունեցած հոգը, եւ հօրը վտանգալից արշաւանքէն շուտով դառնալու ակնկալութիւնը, Եղիսաբեթին համար հանդարտեցուցիչ բաներ էին: Իր սիրտն աս մխիթարութեամբ կը քաջալերուէր, որ իր սիրելի հայրը հեղ մ'ալ աս աշխարհքիս մէջ պիտ'որ կարենայ տեսնել, անոր քովը մօրը վրայ լալ, եւ անոր բերնէն մխիթարական խօսքեր լսել: Վասն զի այնպէս միտքը դրած էր, որ հայրը դառնալուն պէս, զինքը ստիպէ որ Պելային հետ Թուրինգիա այցելութեան գայ:

Թուրինգիայի արքունեաց մէջ եւ ուրիշ ամէն կողմ մօրը մահուան գոյժը անմիջապէս տարածուեցաւ, եւ ամէնն ալ անոր տրտմութեանը ներքուստ մասնակից կ'ըլլային: Մի միայն մէկը, որն որ Եղիսաբեթին կենացը վրայ ծուռ աչքով կը նայէր, չարութեամբ անոր վրայ կ'ուրախանար: Եւ ասի էր Գոնգորտիան, ամբարիշտ կեսուրը:

Եղիսաբեթ ամենէն աղէկ մխիթարութիւնն իր տխուր սրտին համար ստէպ ու վստահութեամբ

լեցուն Աստուծոյ ըրած աղօթիցը մէջ, իր որդւոյն ու հաւատարիմ հպատակաց սիրոյն, իր Աննային հաւատարիմ բարեկամութեան, եւ շարունակ աղքատաց ու տառապեալներուն բարերարութիւններ ընելու մէջ կը գտնէր:

Ինք տիրող կոմսուհւոյ մը պաշտօնը այնպիսի քաղցրութեամբ եւ անխոնջ գործունէութեամբ կը կատարէր, որ պատմութեանց մէջ իր քաղցրութեան, իմաստութեան ու բարեպաշտութեան վրայ մեծ պատուով կը խօսուի: Իր ժամանակուան մեծ մասը տէրութեան գործքերուն կը ծախէր, եւ մնացած ժամանակներն իր որդւոյն կըթուութեան, որոշեալ աղօթքները կատարելու, եւ ուրիշ ակնուական գործքերու կու տար: Այսպէս, իրեն շատ քիչ ժամանակ կը մնար, եւ կամ ամենեւին աւելորդ ատեն չէր մնար, որ ինք զինքը տրամութեան տայ:

Մհ, ինչպէս սիրան ուրախութեամբ կը լեցուէր, երբ որ կը յաջողէր իրեն հպատակաց երջանկութիւնն աւելցընել, երբեմն բարի հիմնարկութիւններ ընելով, երբեմն անհարկաւոր բեռերը վերցընելով, երբեմն հարկերն ու տուրքերը նուազցընելով, որով նաեւ արքունեաց ծախքն ալ կը նուազէր:

Ինչ մխիթարութիւն կը գտնէր անոր մէջ իր սիրտը երբոր առատ պարգեւներով աղքատաց ու կարօտելոց թիւը կը նուազցընէր, եւ երջանիկներունը կ'աւելցընէր, երբ որ շատ այրիներուն ու որբերուն արցունքը կը չորցընէր, վշտացեալները կը մխիթարէր, եւ ապերջանիկները կը կանգնէր. երբ որ իր միջնորդութեամբ բաժնուած սրտերը իրարու հետ կը հաշտեցընէր, կագերն ու կոխները կը դադրեցընէր, եւ քանի մ'ընտանեաց մէջ վեղոված խաղաղութիւնը նորէն կը հաստատէր: Եւ երբ որ ինք ուրիշները կը մխիթարէր, կը խաղաղցընէր ու կ'երջանկացընէր,

Թող կու տար Աստուած, որ ան բարեգործութեանց մէջ իբրեւ վարձ, ինքն ալ սփոփութիւն, հանգիստ ու երջանկութիւն գտնէ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Օղորակոյցի նախահանգիստը մտնելը:

Ամէն տեսակ տխուր մտածութիւններով եւ գրեթէ իր ամուսնոյն ու որդւոյն հանապազորդ յիշատակաւ, Լուդովիկոս իր տրտում Վալդերին ու միանգամայն իր զուարթ ճանապարհորդակիցներուն հետ Աւկսպուրկ երջանկութեամբ հասած ու եպիսկոպոսին պալատն ինջած էր: Հոս իր քանի մը խաչակիր գունդերը կը սպասէին, որ եպիսկոպոսէն աւելի ընդարձակ տեղեկութիւն առնուն եւ այսպէս Լուդովիկոսին առաջնորդութեամբը դէպ խալիա իրենց արշաւանքը սկսին: Հոն, զուարթ ու սրտոտ պատերազմողներուն գլուխն անցած նաեւ Լուդովիկոսին քաջասրտութիւնն ալ բորբոքեցաւ: Հիմակ ինքն ալ նորէն պատերազմական ու դիւցազնական հոգի մը ստացած էր: Մինակ երբոր Վալդերին հետ առանձին կ'ըլլար, իր հայրենեաց իր սիրելեաց վրայ կը մտածէր: Ասպետներն իրենց գնդերուն գլուխը ժողովուեցան, եւ յառաջագոյն մղուած պատերազմները, եւ երբեմն յառաջուան խաչակրաց դիւցազնութիւնները կը պատմէին: Մէկը զմիւսը կը քաջալերէր, եւ ամէնն ալ յայնմ միաբանեցան, որ իրենց նախորդներուն պէս իրենք ալ քաջ ըլլան, եւ սարակինոսաց դէմ դիւցազն գտնուին, եւ կամ յաղթին եւ կամ փառօք մեռնին: Իսկ ճամբորդները, որոնք ապագային կամ անցելոյն վրայ քիչ հոգ կ'ընէին եւ մինակ ներկային համար կ'ապրէին, զուարթ պատերազմական երգեր կ'երգէին, եւ ժամէ ի ժամ աղէկ կերակուր մ'ուտելու եւ աղէկ մը խմելու կը սպասէին: Խա-

չակիրք քիչ օրուան մէջ, առանց մէկ արգելքի
 Իդալիայի դիմացն ելան: Վերջապէս հելվետական
 բարձր լեռներն իրենց ետեւը ձգեցին եւ Իդա-
 լիան աչքերնուն առջին ունէին: Բայց աս ժա-
 մանակս, կարծածնուն չափ Իդալիան այնչափ
 զուարճալի չի գտան: Ինչու որ ամառուան մէջն
 ըլլալով, ասպետներէն ու ճամբորդներէն շատե-
 րը Իդալիայի երկնից կիզիչ ջերմութեան տակ
 վարժած չըլլալուն համար, հիւրնդցան եւ հարկ
 եղաւ զիրենք հոն թողուլ: Եւ այսպէս Լուդովի-
 կոս Վալդերին հետ, հազարումէկ դժուարու-
 թեանց յաղթելէն ետեւ, վերջապէս մնացածնե-
 րուն հետ Պրինտիզի եկաւ, որն որ Նաբոլիի մէջ
 ծովեզերեայ քաղաք մըն է: Նոյն քաղաքը միան-
 գամայն զօրաց կենդրոնանալուն տեղն էր. եւ աս
 քաղքին նաւահանգիստը՝ ադրիական ծովուն մէջ,
 ցամաք ելլելու համար շատ յարմար է: Լուդո-
 վիկոս հոս բազմաթիւ գունդ մը գտաւ, որոնց
 գլուխն անցած էր Փրեդերիկոս կայսրը, որն որ
 զինքը իբրեւ իր որդին սիրով ընդունեցաւ:

Լուդովիկոս եւ Վալդէր հրաման ընդունեցան
 որ իրենց վրանը կայսեր վրանին քով կանգնեն.
 եւ կայսրը՝ երիտասարդ կոմսն ան աստիճանի կը
 սիրէր որ զանիկակ իր որդին կը կանչէր: Բոլոր
 զօրքն անմիջապէս իմացաւ Լուդովիկոսին կայսեր
 սիրելին ըլլալը եւ անոր վրայ մեծ համարում ու-
 նէր: Լուդովիկոս ասոր վրայ այնչափ չէր ուրա-
 խանար որչափ որ Վալդեր իր բարեկամը, որն որ
 զԼուդովիկոս իր անձէն աւելի կը սիրէր:

Լուդովիկոս երբոր կ'ուզէր նստիլ եւ իր սի-
 բելի ամուսնոյն նամակ մը գրել, մէյ մ'ալ կայ-
 սեր կանչուեցաւ, որն որ յանկարծ հիւանդացած
 էր: Աս անգամ գրելը մնաց, եւ որչափ որ կայ-
 սեր վիճակը կը գէշնար, այնչափ ալ օր օրուան
 վրայ կը ձգուէր: Որովհետեւ կայսեր մահուամբը
 կրնար ամէն բան ուրիշ կերպ դառնալ եւ հա-

ւանականաբար նաեւ արշաւանքն ալ պարապի
ելլել: Անոր համար Լուդովիկոս կ'ուզէր հիւան-
դութեան վախճանին սպասել, որուն վրայ բոլոր
զօրքը մտադիր էր:

Լուդովիկոս՝ կայսեր ուրիշ սիրելեացը մէջ,
ինք զինքն ամենէն արժանաւոր ցուցուց: Ինչու որ,
երբոր կայսրը մահաբեր տկարութեան մը մէջ
ինկած էր, եւ ամէն մարդ, նոյն իսկ բժիշկը,
զինքը մեռած կը կարծէին, ան ատեն ամէն իր
սիրելիները ցրտութեամբ եւ առանց արցունք մը
թափելու հեռացան գացին, մինակ Լուդովիկոս
ու Վալդէր տրտում տխուր անոր մահուան ան-
կողնոյն քով ծնկան վրայ, Աստուծմէ կայսեր
կեանքը կը խնդրէին, ուր որ բանակին մէջ բիւ-
րաւոր ապերախտներ եւ երախտակորոցսներ եւ
անհաւատարիմներ կը ցնծային ու հայրենիք դառ-
նալու կը պատրաստուէին:

Բայց կայսրը մեռած չէր, նորէն արթնցաւ, յու-
րախուժիւն Լուդովիկոսին ու Վալդերին: Բժիշկը
ծանոյց որ ազատած է:

Եւ բանս բանակին մէջ աւելի սոսկում պատ-
ճառեց քան թէ ուրախութիւն. եւ ասի չէ թէ
կայսեր դէմ ատելութիւն մ'ունենանալնուն համար,
հապա խել մը անհաւատարիմ ասպետներուն ու
հպատակներուն մեղկութեանը պատճառաւ: Արով-
հետեւ ոմանք իրենց անձնական շահուն համար,
շատերն ալ բռնի եւ ոչ թէ յօժարակամ՝ կայ-
սեր ընկերացած էին. իսկ ազնուական վախճանաւ
ու ինքնակամ որոշմամբ եկողները շատ քիչ էին,
որոնց մէջ եւ ամենէն վեր կը գտնուէին Լուդո-
վիկոս ու Վալդեր:

Քանի մը շաբաթ ետքը կայսրն այնպէս ա-
ռողջացած էր, որ կրնար իր ծանր զրահները հա-
գած բանակին մէջ զօրաց երեւնալ: Բայց ինչ-
պէս տրտմութիւն պատճառեց իրեն, երբ որ տե-
սաւ թէ զօրաց գրեթէ կէսը քիչցած էր: Մէկ

մեծ մասը չափէ դուրս տարութեան պատճառաւ զանազան հիւանդութեամբ մեռած էր. եւ մեծ մաս մ'ալ մեղկութեամբ դրօշը թողուցած էին:

Պրինտիզիէն չուելէն քանի մ'օր յառաջ կայսրը բոլոր գլխաւորներն եւ ասպետները քովը ժողովեց, եւ իրենց ազատութեան թողուց, կամ դրօշը թող տալու, եւ կամ իրենց մարդիկներով դէպ ի Օգրանդո նաւելու: Ամենեւին չէր յուսար որ մէկն աս ազատութիւնն ուզէ գործածել: Բայց ինչչափ սրտէն արիւն քալեց երբ որ մէկ երեւելի բաղմոսութեան մը խաչին դրօշը թող տալը տեսաւ: Արցունքն աչուրները Լուդովիկոսին դարձաւ ու վիրաւորուած սրտով մը այսպէս խօսեցաւ իրեն. Իմ որդիս դո՞ւն ալ կ'ուզես զիս թողուլ:

Չէ, ազնիւ կայսր, երբեք չէ. թէ եւ ուրիշները զՁեզ թողուն, ես իմիններովս Ձեզի հաւատարիմ կը մնամ: Այսպէս գոչեց Լուդովիկոս այլայլած բայց այրական ձայնով մը: Կայսրը այլայլած գրկեց զինքն ու կրծոցը վրայ սիրով ճնշեց:

Եւ սրտաշարժ տեսարանը բոլոր ներկայ եղողներուն վրայ զօրաւոր ազդեցութիւն ըրած էր, եւ նոյն իսկ անհաստատները նորէն քաջալերած էր: Եւ յանկարծ հնչեց ամէն կողմանէ իբրեւ մէկ բերնէ. Կայսեր կը հետեւինք եւ խաչին դրօշին հաւատարիմ կը մնանք:

Արդէն խաչակիրք կ'ուզէին քանի մ'օրէն ետեւ նաւարկել, բայց բոլորովին հովի պակսութենէն նաւելն անկարելի էր: Ուստի աւելի յաջող եղանակի մը պէտք եղաւ սպասել: Աս առթով Լուդովիկոս երկու մեծ նամակ գրեց, մէկը ամուսնոյն, մէկն ալ իր ատենագրարին, որն որ Թուրինգիայի արքունեաց խորհրդականներուն մէջ առջինն եւ միանգամայն ամենէն իմաստունն ու ծանրագլուխն էր: Ամուսնոյն գրած նամակը՝ անոր սրտին ամենափափուկ զգածմունքները կը պա-

րունակէր, եւ որմէ որ կրնայ կարծուիլ թէ իր ամուսնոյն շատ մխիթարական ու հանդարտեցուցիչ եղած պիտ'որ ըլլայ: Երբ որ նամակները գացին իր ամենահաւատարիմ ծառային ձեռքով, որուն՝ կարելի եղածին չափ շուտ հասցընելը ապրսպրած էր, սրտին մէջ առանձին ուրախութիւն մը զգաց: Որովհետեւ ան նամակներուն արբունեաց մէջ պատճառելու ուրախութեան վրայ կը մտածէր: Թէ որ աղէկ քալելու ըլլայ, կ'ըսէր ինք իրեն, մեր նաւատորմիղը Օդրանդոյի առջեւ խարիսխ նետելէն յառաջ, աղէկ ձեռքերնին կը հասնի:

Ս երջապէս քանի մը շաբաթէն, Սեպտեմբերի 8ին 1228, առագաստները բացած նաւատորմիղը ճամբայ ելաւ: Պրինտիղի բնակիչքը ծովեզերքը ժողվուած, խաչակրաց բիւրաւոր բարեմաղթութիւններ կ'ընէին: Հովը շատ յաջող էր, եւ նաւագնացութիւնը շատ աղէկ գնաց: Արդէն Պրինտիղին բարձր ու մութ դղեակները իբրեւ մշուշի քողի մ'ետեւ կորսուած էին, եւ գեղեցիկ ծովեզերքը աչքերնէն աներեւոյթ եղած էր, երբ որ Ղուգովիկոս գեռ միշտ արտասուելից աչուրները ան կողմը սեւեռած էր, ուր իր սիրոյն առարկաներն իրեն կը բաղձային եւ գուցէ ալ նոյն ատենը իրեն համար կը հառաչէին ու կու լային: Մնաք բարով սիրելիք, գոչեց Ղուգովիկոս բարձրաձայն ու սրտացաւով մը, մնաք բարով, չէ թէ մինակ բիւրաւոր լեռներ ու ձորեր, հապա նաեւ անբաւ ծով մը զմեզ իրարմէ կը բաժնէ: Աս ըսելով երեսը գոցեց, արցունքը ծածկելու համար, եւ տրամութեամբ նաւուն յարկը թողուց գնաց:

Ղուգովիկոս իր բարեկամներովն ու հաւատարիմ ընկերներովը, որոնք էին, Վալդեր Արայֆէնշդայնցի, Ռուգուլիոս Վարիլացի, Լէնտուլի Պէրլզգէդդինցի, ու Վալդեր Հարգուսկ Էլպացի,

ամենն ալ ազնուական մարդիկ ու կայսեր սիրելիները, Ֆրիտրիշ անուամբ կայսերական նաւուն մէջն էր: Օրուան մեծ մասը առ նաւուն մէջ ընկերութեամբ կ'անցընէին, եւ անհաւատներուն դէմ ընելու պատերազմներուն յատակագիծները իրենց խօսակցութեան ու զբաղմանց գլխաւոր նիւթերն էին:

Բայց Վալդեր ու Լուդովիկոս իրենց խուցին մէջ, զօրն որ եղբայրաբար իրարու հետ բաժնած էին, եւ կամ նաւուն յարկին վրայ, անբաւ ու անսահման ծովուն վրայ, արեւուն ելլելուն ու մտնելուն չքնաղ տեսարանը կը դիտէին, եւ աս առեն, իրենց միտքն ու սիրտը ծովերուն, գաւառներուն, լեռներուն ու գետերուն վրայէն դէպ ի թուրինգիա կը թռչէին, իրենց սիրելիներուն հետ ընտանեբար զուարճանալու համար: Աս կերպով մտերիմ բարեկամներն իրենց Պրինտիգիէն ելլելուն երրորդ իրիկունը, ընտանեբար մէկտեղ կը նստէին: Լուդովիկոսին սիրտը Եղիսաբեթին վրայ կը մտածէր, եւ իր բերանը մինակ անոր վրայ կը խօսէր: Երկինքը խիստ գեղեցիկ անբաւ աստղներ կը շողային, ու նաւն ալ կամաց կամաց ծովուն երեսին վրայէն կը սահէր կ'երթար. բայց իր սիրտը թէ ուրախ էր ու թէ տրտում: Առաւ քնարը եւ հետեւեալ տուները երգեց:

Կը սահին ջրերը,
Կենալ կը դողան.
Չըւարթ աստղները
Երկինք կը շողան.
Չըւարթ ալ ամպերը
Կը սրբանան ժիր:
Բայց կը մընայ սէրը,
Չի սահիր անցնիր:

Կը սահին ջրերը,
Ամպերը կ' սրանան.
Բայց 'կենան աստղերը,
Կ' գառնան անասան.

Ա՛յսպէս ալ է սէրը:
 Սէրն այսպէս ծընաւ.
 Կ'նայ ալ նէ, կայ ալ նէ,
 Չի փոխուիր բընաւ:

Առջի երեք օրերը խաչակիր ասպետները յաջող նաւագնացութիւն մ'ըրին: Բայց քիչ մ'ետքը բախտը իրենց հակառակ ելաւ: Սկսաւ կամաց կամաց հովը դադրիլ, առագաստները պէտք էին ամփոփել, նաւը հաղիւ յառաջ կը շարժէր: Զերմութիւնն ան աստիճանի եղաւ, որ նաւաստիները հարկադրեցան, նաւուն կայմերը շարունակ ջրել, որպէս զի չի բռնկին: Խմելու ջուրն սկսաւ նեխիլ ու բոլորովին չի խմուելու եղաւ: Նաեւ պահեստի կերակուրներն ալ անմիջապէս որդնոտեցան: Սոսկայի էր աս վիճակը. ամէն կողմանէ մահը դիմացնին կը կենար բերանաբաց: Ուրիշ բան չի մնաց իրենց, բայց եթէ ջրոյ մէջ կամ ծարաւով նուաղիլ եւ կամ անօթիութենէ մեռնիլ: Եւ ինչ որ դեռ ուտուելու կերակուր ու խմելու ջուր կար նէ, այնպէս պզտիկ պզտիկ մասեր այնչափ բազմութեան բաժնուեցաւ, որ հաղիւ կրնար բաւական ըլլալ իրենց կեանքն երկայն ատեն պահելու: Ուստի եւ այսպէս դժբախտները անխուսելի մեծ տաքէն եւ ուտելիքի պակասութենէն մահաբեր հիւանդութեանց տակ ինկան: Սոսկայի ու զարհուրելի կոտորած կ'ընէր մահը բոլոր նաւերուն մէջ: Ամէն օր ծովը հարիւրէն աւելի դիակ իր մէջը կ'ընդունէր, եւ ամէն օր ժանտախտը նոր զոհեր կը յափշտակէր: Խմելու ջրոյն աւելի եւս խնայելու, ու մնացած մարդկան կեանքն երկայն պահելու համար, ամէն օր որոշեալ քիչ չափով մը ջուր բաժնուեցաւ: Ո՛հ, ան անտանելի տաքին այնչափ ոչինչ ջուրն ինչ էր:

Նաեւ կայսերական նաւուն մէջն ալ խեղճութիւնը նուազ չէր: Արդէն քաջ ասպետներէն

ու ճամբորդներէն շատերն իրենց գերեզմանը ծովուն մէջ գտած էին: Կաեւ Լուդովիկոսն ու Վալդեր, մեռելի պէս, իրարու քով մահուան անկողինը պառկած էին: Ծարուած լեզուով, ու չորցած շրթունքներով ամենեւին մէկը միւսին մխիթարական խօսք մը չէր կրնար ըսել: Ո՛հ, խեղճութիւնը չափէ դուրս էր: Մինակ բժիշկ մը դեռ կ'ապրէր աս նաւուն մէջ, եւ ան ալ բժշկելու դեղեր չունէր: Շատ կը ցաւէր, աս բարի մարդը, որն որ Ղուդովիկոսն անհամեմատ կը սիրէր, որ անոր ալ այսպէս առանց ազատել կրնալու մեռնելը պիտ'որ տեսնէ: Ոչ, ամուսին եւ ոչ ալ որդի մը կու լար անոր մահուան անկողնոյն քով, ամենեւին բարեկամ մը չկար որ անոր գունատ աչուրները գոցէր:

Երբ որ Լուդովիկոսին դիակն ալ, միւսներուն պէս ծովուն ալեքներուն մէջ թաղել կ'ուզէին, մէկէն այնպէս երեւցաւ որ իբր թէ բարեկամութեան սերտ սէրը Վալդերին կէս մեռած կեանքը նորէն քիչ մը կենդանացուց. վերջին կենաց զօրութեամբ մը պառկած տեղէն ելաւ եւ իր բարեկամին դիակին վրան ինկաւ, ջրածգութեամբ մը զանիկա հաստատուն բռնեց, եւ վերջին ճգամբ մը գոչեց, յառաջ քան զիս մի նետէք:

Լուդովիկոսին դիակը դեռ երկայն ատեն նաւուն մէջ պահուեցաւ, կայսեր հրամանաւը, որն որ նոյնպէս հիւանդ պառկած էր, եւ հազիւ իր հաւատարիմ սիրելւոյն վրայ լալու զօրութիւն ունէր: Երկրորդ իրիկունն երկնքէն օգնութիւն եկաւ, բայց Լուդովիկոսին համար շատ ուշ էր:

Արեւմտեան կողմանէ պայծառ հորիզոնին վրայ թուխ փոքրիկ ամպ մը բարձրացաւ, որն որ երթալով մեծցաւ եւ ինչուան իրենց մերձեցաւ: Վերջապէս երկինքն ամպերը պատուեցան, ու կայծակով եւ որոտմամբ սաստիկ անձրեւ մըն է սկսաւ, եւ ամէն նաւերուն մէջ աս ուրախութեան

ձայնը հնչեց, Ազատութիւն ազատութիւն: Անմիջապէս անձրեւի ջուրն ամաններու մէջ ժողովեցին ու խմելով զովացան ու կենդանութիւն առին: Նաեւ յաջող հով մ'ալ ելաւ, եւ անհատալի արագութեամբ նաւն առաւ ու Օդրանդո նաւահանգիստը տարաւ:

Յամաք ելան: Բայց ո՛հ, ինչպիսի զգածմամբք եւ ցաւով: Չկար մէկը, որ բարեկամի մը կորուստեան վրայ չլայ. չկար մէկը, որ ինքն ալ մահուան վտանգի մէջ եղած չըլլար:

Երբոր ամենն ալ ծնկան վրայ եկած Աստուծոյ՝ կեանքերնուն ազատութեան համար շնորհակալ կ'ըլլային, Ալադեր գրեթէ բոլորովին ցաւոց ու արտասուաց մէջ ընկզմած, ամենասիրելի բարեկամին դիակին քով երեսին վրայ ինկած ու ցաւալից սրտիւ գոչեց. Ո՛հ, Տէր Աստուած, ինչու համար ալ ես անկից աւելի ապրիմ, զորն որ իզմէ աւելի կը սիրէի: Ի՞նչու իրեն հետ կամ իրեն տեղ չխմեռայ: Ստուգիւ աս բարեկամէս զատ մէկն ինձի այնչափ ցաւ չէր պատճառեր. ոչ ամուսին, ոչ որդի ինձի իրենց վրայ անմխիթար արցունք թափել չէր ի տար: Ով սիրելի Աստուած, թող որ ես ալ մեռնիմ, ինչու որ առանց Լուգովիկոսիս ոչ կ'ուզեմ եւ ոչ ալ կրնամ ապրիլ:

Շատ դժուարաւ կրցան մէկդի առնել Ալադերը իր բարեկամին դիակին քովէն, որն որ արդէն նեխելու փտելու սկսած էր: Խիստ պատուով ու ցաւով եւ անկեղծ արտասուօք թաղուեցաւ: Նոյն իսկ կայսրը Լուգովիկոսին գերեզմանին վրայ կու լար, իբրեւ գորովալից հայր մը, որմէ մահը սիրելի որդին յափշտակած էր: Ալադեր շատ քիչ անգամ գերեզմանը թող տուաւ. որովհետեւ մեռնելէն զատ բանի մը բաղձանք չունէր, որպէս զի իր բարեկամին քով հանգչի: Բայց Աստուած ուրիշ կերպ կ'ուզէր, այս ինքն Ալադեր առողջանայ, եւ իր բարեկամէն աւելի երկայն

ապրի: Իր բարի կամքն Աստուծոյ անհուն եւ ամենիմաստ Տեսչութեան հետ միաբան էր, հեղ մ'ալ ջերմ արցունք թափեց իր բարեկամին գերեզմանին վրայ եւ անկից ետքը զօրաց հետ ընկերացաւ Պաղեստին արշաւելու, այսու յուսով որ պատերազմի մը մէջ կ'ընայ կը մեռնի, որպէս զի շուտով մ'իր սիրելւոյն հետ երթայ յաւիտեանս միանայ:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ .

Յոյս եւ ողորմութիւն.

Երբ որ Լուզովիկոս բացակայ ծովուն վրայ, բարեկամին քով, հիւանդ պառկած մահուան հետ կը պատերազմէր, եւ որուն որ վերջապէս աւար եղաւ, Եղիսաբեթ իր անդադար զբաղմանց մէջ դեռ միշտ քաղցր ակնկալութեամբ՝ իր ամուսնէն արագ ու յաջող լուրի մը կը սպասէր: Աս քաղցր ակնկալութիւնը, մէկ գաղտնի եւ անիմանալի գուշակութեամբ մը մէկէն ի մէկ պրղտորեցաւ, բայց բոլորովին սրտէն չելաւ: Ինչպէս որ նաւակոծութեան մ'ատեն նաւաբեկեալները լողացող տախտակամածներն ու գերանները հաստատուն կը բռնեն եւ թող չեն ի տար, այսպէս նաեւ Եղիսաբեթ տարակուսանաց ժամանակները, յոյսը գործածեց: Երբ որ չարագուշակ մտածութիւն մը զինքը անհանգիստ կ'ընէր, անմիջապէս յուսոյ կ'ապաւինէր, եւ յԱստուած վստահանալով հաստատուն կը կենար:

Նաեւ իր ամենասիրելի մօրը կորստեան վրայ ունեցած ցաւը, անոր գործունեայ կեանքը շատ կարճեցուցած էր, եւ կամաց կամաց սրտին մէջ բաղձանք մը ծնանել կու տար, զինքը երանելոց գաւառին մէջ նորէն տեսնելու: Շատ անգամ հանգուցելոյն վրայ ծածուկ կու լար, եւ աս արցունքները անոր սրտին սիրովութիւն մը կը պատճառէին:

Աշնան գեղեցիկ իրիկուն մը, Եղիսաբեթ, իր բարեկամ Աննային հետ ժուռգալ երթալ ուզեց, որովհետեւ նոյն օրը սիրտը սաստիկ կը ճմլէր: Առջի գիշերը տեսած սոսկալի երազը սիրտը խիստ անհանգիստ կ'ընէր, այնպէս որ բոլոր օրը տարտամ ու տրտում տխուր ամէն կողմ հանգիստ կը փնտռէր, եւ չէր գտներ: Ա'աղօթէր, կ'աշխատէր, կ'ուզէր միտքը ցրուել, բայց հոգւոյն վիճակն ամենեւին չէր փոխուեր: Այսօրուան պէս, սիրտն անհանգիստ ընող գուշակութիւն, մտածութիւն դեռ չէր ունեցած: Ա՛հ, կարծես թէ, այսօր Լուդովիկոսին մեռնելու օրն ըլլալը սիրտն իրեն կը գուշակէր: Անիմանալի բան մը անոր սիրտն իրեն կը քաշէր, անծանօթ տեղ մ'երթալու բաղձանք մը կ'ունենար, եւ այնպէս ալ կու գար իրեն որ իբր թէ մտօք ու հոգւով բաղձացած տեղը կրնայ քալելով հասնիլ: Ուստի դուրս ժուռգալ երթալու ստիպուեցաւ, եւ չէր կրնար իր սրտին մղմանը երկայն ատեն դէմ դնել: Ինք եւ Աննան պզտիկ Հերմանին հետ գացին:

Աս անգամ սովորականէն շատ աւելի հեռու տեղ գացին, եւ Եղիսաբեթ միշտ առջեւէն կը վազէր, իբրեւ թէ, գիշերը վրայ չհասած շատ երկայն ճամբայ ունենայ ընելու: Խել մ'ատեն քալելէն ետքը, բարձր տեղ մը կեցան, ուր որ ընդարձակ ու գեղեցիկ տեսք մ'ունէր, եւ մամապատ ժայռէ բլրոյ մը վրայ նստան: Եղիսաբեթ երեսն ան կողմը դարձուց, ուր որ իր սիրելի ամուսինը կը կարծէր թէ ըլլայ: Իր խօսակցութիւնն անով սկսաւ, եւ միշտ անի էր իր խօսակցութեան նիւթը:

Վայէ սիրելի Հերման, ըսաւ Եղիսաբեթ իր տղուն, հոն հեռուն, հեռուն լեռներէն անգին, եւ գուցէ ծովուն վրայ կը գտնուի սիրելի հայրդ: Գուցէ հիմակ իր բարեկամ Վալդերին հետ ա-

ուանձին տեղ մը կը նստի, եւ երկուքն ալ մեր վրայ կը մտածեն ու մեր վրայ կը խօսին:

Սիրելի հայրս երկայն ատեն պիտ'որ չի գայ՝ հարցուց պզտիկ Հերմանը:

Ա՛խ, չէ, սիրելի տղաս, կրկնեց մայրն արցունքն աչուըները, դեռ սուրբ երկիր երթալու համար ճամբան է, եւ երկայն ատեն, գուցէ ամենեւին պիտ'որ չի գայ:

Սիրելի մայր, մի լար, ըսաւ տղան, ապա թէ ոչ ես ալ կու լամ: Սիրելի հայրս դարձեալ պիտ'որ գայ, որովհետեւ այնպէս խոստացաւ: Ա՛հ, ինչպէս ան ատեն պիտ'որ ուրախանամ, եւ ինձի սիրելի հայրս ինչ գեղեցիկ բաներ պիտ'որ պատմէ սուրբ երկրին վրայ: Բայց ինքն ալ պիտ'որ ուրախանայ, երբ տեսնէ որ մեծցեր եմ, եւ բաւական ալ զօրութիւն ունիմ իմ հաւուս սուրբ երկու ձեռուըներովս տանելու, որուն համար պիտ'որ աղաչեմ որ տայ: Եւ, երբոր հօրս պէս մեծ կ'ըլլամ, եւ երբոր մեծ սուրբ կրնամ դիւրութեամբ խաղցընել, սա իմ խարազանիկիս պէս, ան ատեն իրեն հետ սուրբ երկիր կ'երթամ այնպէս չէ, սիրելի մայր:

Փոխանակ պատասխան տալու մայրը տղան բազկացը մէջ առաւ ու կրծոցը վրայ ճնշեց: Ուրախութեան արցունք մը մարգրտի պէս աչուըներուն վրայ սկսաւ շողալ, եւ զուարթ ծիծաղ մը իր սրտին քաղցր ակնկալութիւնը կը յայտնէր: Շատ այլայլած էր, ուստի առաւ քնարը ձեռքը, զորն որ Աննան ետեւէն կը տանէր, դրաւ մատուըները աղեաց վրայ եւ հետեւեալ սուները երգեց:

Ի՞նչ է այս նոր ըզգածում,
Խառըն պարզէ՛ միբրկէ .
Մէյ մը ցաւ՝ մէյմը խընտում,
Սիրտըս կ'երէ ու մըրկէ:

Կէս վախ կը զգամ, կէս մը յոյս,
Պահ մը խընտում, պահ մը հոգ .

Կը տենչայ սիրաս ամուսնոյս,
Խառն է անձուկս ու մորմոք:

Ե՛րբ պիտի մէյ մը դառնայ
Ուրախութեամբ՝ յոյսը ուիշք,
Մըխիթարանքն ե՛րբ բառնայ
Պիտի աս հոգս ու աս վիշտ:

Մայր, սիրելի մայր, ասպետ մը. հոն ձորին մէջ. պոռաց ուրախացած ու ցածկուտելով պըզտիկ շերմանը, որն որ, մօրը երգած ատեն, խոտաւէտ բլրոյն վըայ կը վազէր կը վազվուտէր, եւ անդիէն ասդիէն աշնան ծաղիկներ կը ժողվէր: Հետաքրքրութեամբ Եղիսաբեթ անմիջապէս քնարը գետինը դրաւ, եւ Աննային հետ քիչ մը յառաջ այնպիսի տեղ մը գնաց, ուսկից կարծուած ասպետը աղէկ կրնային զննել ու չեկած ճանչնալ:

Մեր ճամբորդներէն մէկն է, ըսաւ Աննա, որն որ սուր աչք մ'ունէր, թէ որ չեմ սխալիր, մեր քաջ Ալպրեխզն է:

Ալպրեխզը կ'ըսես, երկանս ախորապետը: Առանց կարծեաց Իդալիայէն կու գայ, եւ Լուդովիկոսէն ու Վալդերէն լուր կը բերէ: Ո՛հ, աղէկ լուր մ'ըլլար:

Թաշկինակով ու ձեռքով սկսան անոր նշան ընել: Ծառան անոնց նշան ընելը տեսաւ իմացաւ, եւ դէպ իրենց սկսաւ գալ: Իրենք ալ աճապարեցին, բլրէն վար ինջան, ծառային դիմացը կ'երթային, որուն յոգնած ձին հազիւ կրնար վազել: Արդէն հեռուանց զկոմսուհին ճանչցաւ, երկու մեծ նամակ վեր վերցուց ցուցուց, եւ կրօցածին չափ պոռաց, բարի լուր: Որովհետեւ նոյն մարդը իրօք Ալպրեխզ, կոմսին ախորապետն էր, զորն որ Պրինտիզիէն նամակներով Թուրինգիա խաւրած էր:

Ո՞վ կրնայ Եղիսաբեթին զգացած ուրախութիւնը ստորագրել, երբ որ իր սիրելի երկանը նամակը կարգաց, եւ տեսաւ որ աղէկ ուինտ է, եւ թէ կայսեր առաջին սիրելին եղած է: Ուրա-

խութեան արտասուօք, միացուցած ձեռուրներով
Աստուծոյ շնորհակալ եղաւ, կրկին կրկին անգամ
նամակը կարդաց, եւ մէյ մը շրթանցը վրայ եւ
մէյ մը կրծոցը վրայ կը դնէր:

Եղիսաբեթին նամակը կարդալու զբաղած ա-
տեն, անդին Աննա ու Հերման կը խօսէին Ալ-
պրեխոյին հետ, որն որ ձիէն վար ինջած էր, եւ
իրեն ետեւէ ետեւէ այնչափ հարցումներ կ'ընէին
որ հազիւ կրնար ամենուն պատասխան տալ: Մա-
նաւանդ պզտիկ Հերմանը, կ'ուզէր շատ բան գիտ-
նալ, զորոնք եւ ոչ ինքը Ալպրեխո գիտէր: Թէ-
պէտեւ ասիկայ կրկին անգամ ըսած էր, որ սուրբ
երկիրը դեռ ամենեւին աչօք տեսած չէ, ի վերայ
այսր ամենայնի հետաքրքիր տղան կ'ուզէր գիտ-
նալ, թէ արտաքուստ ինչպէս կ'երեւայ, եւ թէ
անոր մէջի մարդիկներն ու տուները ինչպէս են:
Ալպրեխո շատ ուրախացաւ որ կոմսուհին՝ խօ-
սած ատեննին վրայ գալով հարցումներուն վերջ
մը տուաւ:

Աս համբոյրը, սիրելի տղաս, քու արհիւ հայրդ
կը խրկէ քեզի ըսաւ մայրն ուրախութեամբ լը-
ցուած, բազկացը մէջ առաւ Հերմանը եւ համ-
բուրեց: Շատ շատ բարեւ ընելով կը բաղձայ որ
աղէկ ու բարեպաշտ ըլլաս, եւ քու մօրդ միշտ
անսաս, որպէս զի քու վրադ աղէկ լուրեր առ-
նու, եւ զքեզ ուրախութեամբ իր բազկացը մէջ
առնու, երբոր Աստուծոյ օգնութեամբը, հայրե-
նիք դառնալու ըլլայ: Քեզի ալ նոյնպէս արհուա-
կան Ալպրեխո աս երկրորդ համբոյրը կը խաւրէ,
ու քեզի արաբացի ձի մը կը խոստանայ, զորն որ
յաջողութեամբ դարձած ատեննին սուրբ երկրէն
պիտ'որ բերէ:

Մ'օրն աս վերջին խօսքերուն վրայ, ցնծու-
թեամբ սկսաւ ցաթկոտել զուարթ տղան, որով-
հետեւ կենդանեաց մէջէն ձին ամենէն աւելի կը
սիրէր, մանաւանդ պզտիկն ու սիրունը: Արդէն

սկսաւ նոր ախոր մը, պատեանք, ձիու զարդեր պատրաստելու վրայ խօսիլ, այնպէս որ միւսները ծիծաղելէն իրենք զիրենք չէին կրնար բռնել:

Եղիսաբեթ գորովալից եւ ուրախալից էրկանը նամակը նաեւ իր բարեկամին Աննային տուաւ, որուն առջին ամենեւին ծածուկ բան չունէր: Բարի Աննան, ուրիշ անգամներուն պէս անոր ուրախութեան ներքուստ մասնակից եղաւ, եւ Աստուծոյ շնորհակալ եղաւ, որ դարձեալ իր բարեկամին տխուր սիրտն ուրախութեամբ լեցուց: Բայց ո՛հ, բարի ու հաւատարիմ անձը, ամենեւին չէր գիտեր եւ ոչ ալ կը կարծէր, որ Աստուած, որն որ իրենները շատ անգամ խիստ ու ցաւալի կերպով կը փորձէ, Եղիսաբեթին ուրախութիւնը մի եւ նոյն օրը մեծ սգոյ դարձուցած ըլլայ:

Չանաղան հարցումներ ընելով ու պատասխան ընդունելով, դղեակն եկան. ուր կոմսին կողմանէ եկած լուրը, մեծ ուրախութիւն պատճառեց ամենուն, վասն զի ամէնքն ալ կոմսը կը սիրէին ու կը յարգէին: Եւ աս օրէս ի վեր կոմսուհին հանդարտ, ուրախ ու զուարթ էր:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Անգթորթիւն, սոսկոռմն ու մեծ սող:

Չմեռն անցած գացած էր: Բայց նոյնը բարի կոմսուհւոյն՝ իբրեւ տրտում ամուսին մը, առջի եւ անցած ձմեռներուն պէս գեղեցիկ ու հաճոյական չէր. բայց իբրեւ գորովալից մայր ու բարբար ժառանգ տիկին մը, անոր քիչ մը խաղաղ ու քաղցր ուրախութիւններ դեռ կը շնորհէր: Երբ որ Աննային եւ յուսալից տղուն հետ բոցեղէն կրակի մը քով կը նստէր, եւ աղքատ տղու մը համար զգեստ շինելու զբաղած կ'ըլլար, նոյն ատեն խօսքը Լուդովիկոսին, իր սիրելւոյն եւ անձկալւոյն վրայ կ'ըլլար: Եւ երբ որ իր գթած

Նայուածքը, ծիծաղկոտ տղուն երեսը կը դարձընէր, որն որ իր հօրը հաւատարիմ պատկերն էր, ո՛հ, ան ատեն իր աչուընէրէն մարգարտի պէս ուրախութեան արցունք կը թափէր: Ամէն անգամուն որ ասիկա կը նշմարէր տղան, գթած մօրը վիզը կ'իյնար, զինքը կը շոյէր, եւ անոր արցունքը կը համբուրէր: Այսպիսի երանելի վայրկեաններն ու ժամերը իր խոցուած սրտին բաղամովն մըն էին, եւ զինքը օրերով դարձեալ ուրախ զուարթ կ'ընէին:

Անգամ մը գեղեցիկ գարնան առտու մըն էր, Եղիսաբեթ Աննային ու պզտիկ Հերմանին հետ դղեկին պարտէզը ժուռգալու գնաց: Թուշունները կ'երգէին, ծառերը կը ծաղկէին, կանանչ խոտին վրայ հազարաւոր ծաղիկներ կը փայլէին, իբրեւ գարնան երախայրիքը հոս ժիր մեղունները ծաղկանց բաժակներուն չորս դին կը վաղէին, որոնց վրայ, ցօղը արեւուն հեշտ ճառագայթներէն գեղեցիկ մարգարտի պէս կը փայլէին, եւ հոն, գոյն զգոյն թիթեռները ծաղկէ ծաղիկ կը թռչթռչէին. բովանդակ բնութիւնը նոր կեանք կը շնչէր, եւ ամէն բան Աստուծոյ փառքը, յոյս եւ ուրախութիւն կը յայտնէր:

Երբ որ զուարթ տղան մէյ մը թիթեռներուն ետեւէն կը վազէր, եւ մէյ մը մէկ ծաղկէն միւս ծաղիկ կը ցաթկոտէր, եւ անոնցմէ ամենէն գեղեցիկները կը ժողվէր ու մօրը կը բերէր, Եղիսաբեթ եւ Աննա, իրենք զիրենք բարեպաշտ մտածմանց ու խաղաղ ուրախութեանց տուին:

«Այս, ինչ գեղեցիկ է Աստուծոյ զարմանալի բնութիւնը գոչեց Եղիսաբեթ ուրախութեան արցունքով մը,»: Ամէն բան դարձեալ յուսով կը լեցուի ու կ'ուրախանայ: Ե՞ս մինակ իմ սիրտս առանց յուսոյ եւ ուրախութեան տրամութեան պիտ'որ տամ: Չէ, ես ալ կը յուսամ եւ ինծի ալ օր մը էրկանս ուրախութիւնը պիտ'որ ծաղկի,

այնպէս նոր ու գեղեցիկ, ինչպէս է Հիմն զուարթ գարունը, որն որ դարձեալ երկայն ու խիստ ձմեռուան մը յաջորդեց:

Այժմ յուսան, սիրելի բարեկամ, կրկնեց Աննա, Յոյսը ծաղիկ է, իսկ ուրախութիւնը պտուղ, որն որ շատ քիչ անգամ չի յաջողեր:

Այլ է նայէ սիրելի մայր, գեղեցիկ կարմիր ծաղիկները սիրելի հօրս համար ժողվեցի, զանոնք ջրոյ մէջ գնենք, որ գեղեցիկ, թարմ, ու կարմիր մնան, մինչեւ որ սիրելի հայրս գայ: Արդեօք սուրբ երկրին մէջն ալ այսպէս գեղեցիկ կարմիր ծաղիկներ կ'աճին: Աեցիր ուրիշ ալ ժողվեմ, քեզի համար, քեզի համար սիրելի մայր: Այսպէս խօսեցաւ տղան ու զուարթութեամբ ցաթկրուտելով քովէն գնաց:

Արդեօք սուրբ երկրին մէջ ալ այսպէս կարմիր ծաղիկներ կը գտնուին, կը հարցընէ ինծի բարի տղան անմեղութեամբ ըսաւ Եղիսաբեթ. եւ ո՛հ չ'գիտեր որ ինչ տխուր ու զարհուրելի մտածմունքներ կը յարուցանէ սրտիս մէջ աս իր անմեղ հարցումները: Այժմ, ան երկիրը, խոտն ու ծաղիկները, ուր որ խաչակիրք Հիմն կը պատերազմին եւ արիւն կը հեղուն, բիւրաւոր արեան կաթիլներով կարմիր գունաւորուած պիտ'որ ըլլան: Ա՛խ, գուցէ իմ սիրելի Աուդովիկոսիս արիւնն ալ թափուած է, եւ . . . :

Մէյ մ'ալ Եղիսաբեթին տխուր խօսակցութեան ատեն ծառայ մ'եկաւ եւ ընդհատեց զինքը: Աս ծառան կոմսուհոյն թուղթ մը տուաւ, որուն վրայ իրեն՝ երեւելի կալուածատիրոջ մը շուտով գալուստը ծանուցուած էր: Ծառան ծռելով հեռացաւ գնաց, եւ Եղիսաբեթ զարմացմամբ լցուած ապշեցաւ մնաց: Թուղթը կրկին անգամ կարդաց, եւ ետքէն զարմանալի ուրախութեամբ մը իր բարեկամին տուաւ:

Ասիկա առաւ ու կարդաց, եւ յանկարծ երե-

սին վրայ պատճառած կարմրութիւնը անոր զարմացումն ու ներքին անհանգստութիւնը մատնեց: Զարմանալի բան. կրկնեց գլուխը ցնցելով: Ուրեմն այսօր, երկուք ուկէս տարիէն ետեւ առջի անգամ Գոնգորտիա կոմսուհին ձեզի այցելութեան պիտ'որ գայ: Տես ինչպէս քաղցր ու շողքսրդական է իր ծանուցանելու եղանակը: Ա՛վ, սիրելի բարեկամ, աս խորամանկ օձը դարձեալ միտքը չար բան մ'ունի: Ասիկա դարձեալ արքունիք շփոթութիւն ու անհանգստութիւն պիտ'որ բերէ, ասոր փորձը անմիջապէս պիտ'որ առնուք:

Չէ, աս անգամ այնպէս չէ, կրկնեց Եղիսաբեթ. իմ սկեսրիս վրայ, սիրելի Աննա խիստ դատաստան կ'ընես, եւ աս անգամ քու երկիւղը անհիմն կ'երեւայ: Ընդ հակառակն ես աս այցելութենէն շատ բարիք կը յուսամ:

Իսկ ես ամենեւին բանի մը չեմ յուսար. բայց ամէն բանէն վախցիր պատասխանեց Աննա:

Իայց ինչո՞ւ, աւելցուց Եղիսաբեթ, թուղթին տակը չկարգացիր, որ խաչակիր ասպետ մ'ալ մէկտեղ պիտ'որ գայ, որն որ, նոր Պաղեստինէն դարձած պիտ'որ ըլլայ, եւ աղէկ լուրեր պիտի բերէ:

Այնպէս է, սիրելի բարեկամ պատասխանեց Աննա, բայց աս բանս իմ վախս կ'աւելցընէ:

Աս անգամ, սիրելի Աննա, կրկնեց Եղիսաբեթ, իրաւունք չունիս, ստուգիւ անիրաւ է: Աս անանուն խաչակիրն իմ հայրս չի՞ կրնար ըլլալ, որն որ երկայն ժամանակէ ի վեր կը սպասուի: Եւ չի՞ կրնար ըլլալ որ իմ հայրս, սկեսրին ու մեր մէջը եղած չհաճութիւնը Լուգովիկոսէն տեղեկացած ըլլայ, եւ ուզէ զինքը մեզի հետ հաշտեցընել, եւ զիս կրկին ուրախացընէ: Աս գեղեցիկ ակնկալութեան մեջ զիս կը հաստատեն, յայտագրին ան վերջին խօսքերը... եւ կը յուսամ, սիրելի հարսս, որ երկայն ատեն թուրինգիա կը մնամ:

Ա՛հ սիրելի բարեկամ, ըսաւ Աննա, խորին հա-

ուաչմամբ եւ արցունքն աչուրները. Գուք ձեզի երկինք մը կը շինէք, որմէ որ ստուգիւ շուտ, եւ ձեր մեծ սարսափմամբը պիտ'որ իյնաք: Ի՞նչպէս կրնաք ձեր մահացու եւ անհաշտ թշնամիէն բարի բան մը յուսալ: Ո՛հ, Աստուած չընէ որ մէյ մ'ալ արքունիք գայ անիկա: Չար գուշակութիւն մ'ինծի կ'ըսէ թէ, աս հեղ անիկա, մեծ եւ ստուգիւ մեծ չարիք պիտ'որ հասցընէ, ձեր ու բոլոր Թուրինգիային: — Ո՛հ, ազնիւ բարեկամ, ես ձեր բարիքը կը խնդրեմ. աս այցելութենէն բարի բան մը մի սպասէք, հապա աւելի վախցէք:

Աննա, Աննա, աս անգամ ինծի դէմ խիստ ու անգութ կ'երեւաս, որովհետեւ իմ սրտէս քաղցր ակնկալութիւնն յափշտակել կ'ուզես, կրկնեց Եղիսաբեթ քիչ մը նեղացած, եւ գղեակ դարձան, որպէս զի մեծ հիւրերն ընդունելու համար պատշաճ պատրաստութիւնը տեսնեն, որոնք կէս օրէն յառաջ պիտ'որ գային:

Աննան աս անիրաւ յանդիմանութեան վրայ լռեց, եւ աս անգամ շատ աւելի կը բաղձար որ ինք անիրաւ յանդիմանութիւն կրած ըլլայ, քան թէ տեսնել ան դէպքը՝ որուն մէջ Եղիսաբեթ ըրած յանդիմանութեան վրայ զղջար:

Քիչ մը ետքը փառաւոր ու վեց ձիով կառքի մը ձայնը հիւրերուն գալուստն աւետեց: Բոլոր պալատականք ու անոնց գլուխը տիրող կոմսուհին, անպաճոյճ զարդերով զիրենք ընդունելու համար դղեկին մէջ պատրաստ կեցան: Կառքը կեցաւ, ու սէգ եւ ամբարտաւան Գոնգորտիան խիստ փառաւոր զարդարուած կառքէն վար ինջաւ, եւ իբրեւ սիրելի մայր մը՝ հարսին բաց բազկացը մէջ թռաւ: Ամէնն ալ, Աննայէն զատ, Գոնգորտիային փոփոխութեանը վրայ քիչ զարմացած եւ ուրախացած չէին: Երեսը կը փայլէր, եւ իր աչուրներն ուրախութենէն կը պլպլար: Ի վերայ այս ամենայնի Աննային սրատեսութիւ-

նը՝ սուտ հրեշտակին փառաւորութեան տակ խորամանկ օձը նշմարեց: Բայց Եղիսաբեթն ալ քիչ մը ետքը իր երեւակայած երկինքէն կէս մը վար իյնալը տեսաւ: Որովհետեւ սկեսրին բազկէն կ'ուզէր իր հօրը բազուկը վազել երթալ: Բայց ինչպէս իր ակնկալութեան մէջ խաբուեցաւ, երբ որ իր կարծեցեալ հօրը տեղ մինակ Գոնգորտիային եղբայրը կառքէն վար ցածքեց: Առանց ուզելու, սրտէն ցաւալի հառաչանք մ'ելաւ. Աննային դարձաւ նայեցաւ եւ երկուքն ալ իրար աղէկ հասկրցան:

Գոնրատ, Մայսէնի կոմսը, Գոնգորտիային եղբայրը, երիտասարդ կոմսուհոյն շատ մտերմութիւն կը ցուցնէր. բայց իր սիրտն ալ քրոջը սրտին պէս չար էր:

Գլեակը մտան, սեղանի գացին, ելան, եւ Պաղեստինի վրայ դեռ բառ մ'ալ չի խօսուեցաւ, թէպէտեւ Գոնրատ կոմսը իսկապէս քանի մ'օր յառաջ Պաղեստինէն նոր դարձած էր: Աս բանս Եղիսաբեթին կասկածն աւելցուց, ներքուստ կը դողար, եւ չէր համարձակեր ոչ էրկանը եւ ոչ ալ սիրելի հօրը վրայ բան մը հարցնելու: Պարտեզը պտրտեցան, եւ անկից Եղիսաբեթին խուցը դարձան: Հոս կը բաղձային Գոնգորտիա եւ իր եղբայրը Եղիսաբեթին հետ առանձին ըլլալ, անոր շատ ծանրակշիռ բաներ հաղորդելու համար: Եղիսաբեթ բոլոր ծառաները մէկդի ըրաւ, մինակ Աննան ու պզտիկ իշխանը խուցը մնացին: Բայց անգութները կ'ուզէին որ Աննան ալ հեռանայ, իսկ իշխանին ներկայութիւնն իրենց անտարբեր էր: Պարապ տեղ Եղիսաբեթ իրենց համոզընել ուզեց, որ ինք Աննային առջին ամենեւին գաղտնի բան չունի, եւ թէ անոր ներկայ գրտնուիլն ամենեւին վախնալու բան մը չունի. եւ թէ ինք կը բաղձայ որ անիկա հոն ըլլայ, եւ շատ ընդդիմութեամբ զինքը կը թողու: Բայց միւս

երկուքը իրենց խնդիրքին մէջ կը հանապազոր-
դէին, եւ վերջապէս Աննան ինքնակամ խուցը
թողուց գնաց, Եղիսաբեթին նայելով, որն որ ա-
նոր միտքն աղէկ հասկըցաւ: Անդ ասոր հեռանալը
հետեւեալ խօսակցութիւնն սկսուեցաւ:

Գոնգորտիս. Սիրելի դուստր, շատ զարմանալի
բան է որ դուն, իմ եղբօրս, որն որ գիտես, Պա-
ղեստինէն դեռ նոր դարձած է, սիրելի էրկանդ
ու հօրդ վրայ ամենեւին հարցում մը չըրիր: Ինք
անոնց քովն էր, եւ անոնց վրայ շատ բան գիտէ:

Եղիսաբեթ. Ազնիւ մայր, յայտնի պէտք եմ
խոստովանիլ, որ անհաճոյ եւ դժբախտ բան մը
լսելու երկիւղը, զիս անկից ետ կեցուց:

Գոնգորտիս. Ո՛հ, սիրելի աղջիկս, ի՞նչու այս-
պէս միշտ կը վախնաս, մանաւանդ թէ պէտք է
յոյս ունենալ, որովհետեւ երկիւղը կը դառնա-
ցընէ, իսկ յոյսը կեանքը կը գեղեցկացընէ: Եղբօրս
նայէ, հարցուր, որն որ ձեզի Պաղեստինի վրայ ա-
մէն բան կը պատմէ: Այնպէս չէ՞, ազնիւ եղբայրս:

Գոնրատ. Ա՛յո՛. Բայց նախ առաջին մեր պա-
տուական աղջկան բաղձանքը լեցընեմ, եւ իրեն աս
ուրախալի լուրը կու տամ, որ ես ազնիւ Հուն-
գարիայի թագաւորին քովն էի եւ անոր պատերազ-
մէն ու քաջութեան զարմանալիքները տեսած եմ:

Եղիսաբեթ. Ուրեմն ձեր անկից բաժնուած
ատեն, հայրս դեռ կ'ապրէր:

Գոնրատ. Ա՛յո՛, անկից նամակ մ'ալ ունիմ:

Եղիսաբեթ. Ի՛նչպէս կըցար աս ուրախութիւնն
իզմէ երկայն ատեն պահել: Ո՛հ, կ'աղաչեմ ինձի
տուէք գրուածքը:

Գոնրատ. Տիկին. պէտք էք ներել, ինչու որ
իմ դիտաւորութիւնս, այնպիսի եղանակաւ մը աս
ուրախալի լուրը տալ էր, որ ձեր առողջութեանը
վնաս մը չի հասցընէ: Ուրիշ գրուածք մ'ալ ձեր
սիրելի Լուդովիկոսէն ունիմ:

Եղիսաբեթ. Լուդովիկոսէն, իմ սիրելի էրկա-

նէս: Ա՛խ, Տէր ասպետ, այնպէս անգուժ մի լու-
յաք, եւ համբերութիւնս ալ երկայն մի փորձէք:

Գոհրատ. Լ՛ղնիւ տիկին, Ձեր բաղձանքն ինծի
հրաման է: Ահաւասիկ երկու գրուածն ալ:

Եղիսաբեթին անհամբերութեամբ նամակներն
առած ատեն, ամբարիշտ սկեսրին, չափազանց ու
վնասի վրայ ուրախացող ծիծաղելը տեսաւ, որն
որ իրեն սոսկում պատճառեց: Գողգոթուն ձե-
ռուրներով, թղթին մէկը բացաւ, իր էրկան մա-
հը Փրեգերիկոս թագաւորին ձեռքովը նշանա-
կուած տեսաւ: Մէկ զարհուրելի աղաղակաւ մը
մեռելի պէս գետինն ինկաւ:

Լ՛ս ձայնէն Աննան, որն որ դուրսի խուցը կե-
ցած էր, եւ ամէն ամարդի եւ անշնորհ խօսակ-
ցութիւնները լսած էր, ներս մտաւ, եւ Եղիսա-
բեթն այնպէս գետինն ինկած տեսնելուն պէս
սոսկալով ետ ետ քաշուեցաւ: Իր զարմացումն
աւելցրնողը, ամպարիշտ Գոնգորտիային չափազանց
ծիծաղն ու զարհուրելի խօսքերն էին: Ի՞նչ քաղցր
վրէժ, գոչեց ամպարիշտը, ու չարագործին հետ
արհամարհելով ու ծաղր ընելով հեռացաւ գնաց:

Տէր Աստուած, այսպէս զարհուրելի բան մը
գուշակած էի, գոչեց Աննան զարմացմամբ, եւ
խեղճ Եղիսաբեթին օգնութեան վազեց: Ո՛հ, բա-
րերար Աստուած, մեռած է:

Այն մը մարած բազմոցին վրան ինկաւ, ու խեղճ
տղուն ողբալի աղաղակէն դարձեալ ինք իրեն
եկաւ:

Լ՛խ, մայրս, մայրս, սիրելի մայրս, մեռա՛ւ, մե-
ռա՛ւ, կը կանչէր խեղճ տղան, ու տարակուսանօք
անոր վրան ինկած, կը շարժէր եւ անոր երեսը
արցունքով կը թրջէր, եւ հազար անգամ կը գո-
չէր, ո՛հ, աղնիւ մայր, մի մեռնիր դեռ, կենդա-
նացիր, եւ քու Հերմանդ մի թողուր:

Երբ որ պղտիկ Հերմանն այսպէս խեղճ կը պո-
ռար, կ'ողբար ու կու լար, Աննան, գացած օգ-

նութեան մարդ բերած էր: Իշխանական տան վիրաբուժը ամէն միջոց ի գործ դրաւ մեռելը նորէն կենդանացընելու համար: Երկայն ատեն ամէն միջոցներն անօգուտ երեւցան: Աւերջապէս հայրի մ'առին ու բերնին մօտիկցուցին, եւ ուրախութեամբ տեսան որ դեռ կենդանի է: Երկու ժամու չափ ալ ամէն փորձերն ըրին, մինչեւ որ խեղճն աչուրները բացաւ, եւ իր խորունկ ու մահուան նման նուաղութենէն արթնցաւ: Ո՞վ կրնայ, Աննային ու Հերմանին զգացած ուրախութիւնն ստորագրել: Բարի տղան ան աստիճանի յափշտակուած էր, որ շարունակ մօրը ձեռքը կը պագնէր եւ ուրախութեան արցունքով կը լերջէր: Իսկ Աննան գետնէն թուղթն առաւ ու լուութեամբ կարգաց, եւ սկսաւ դողալ ու վախնալ իր խեղճ բարեկամին համար:

Ո՛հ Աստուած, կ'ըսէր Աննան, ինչ ողբալի բան պիտ'որ ըլլայ, երբոր խեղճ ու դժբախտ տիկինն ինքն իրեն գալու ըլլայ, եւ յայտնի իր էրկանն ու հօրը մահը յիշատակելու ըլլայ: Աս բանս այնպիսի գորովալից սրտի մը համար շատ խիստ բան է: Եւ ասիկակ ինչպէս կրցաւ մայր մը՝ իր աղջկանը յաղթանակող սրտով ու ծիծաղելով հաղորդել: Ո՛հ, ինչ զարհուրելի գործք, ինչ սատանայական գործք: Խեղճ բարեկամ, ո՛հ, ինչպէս խստիւ կը փորձէ զքեզ Նախախնամութիւնը: Զօրացընէ զքեզ Աստուած, որ նոր վշտաց համար կ'արթննաս, որպէս զի քու վշտացդ բեռան տակ չընկճիս, ու տառապանաց մէջ չի յուսահատիս:

Աննային այսպէս լուութեամբ հառաչանք ըրած եւ աղօթած ատեն, Եղիսաբեթ կատարեալ ինքն իրեն եկաւ, եւ իր անպատմելի դժբախտութիւնը դարձեալ պայծառ իր մտաց առջին եկաւ: Ո՛հ, ո՞վ կրնար իր անպատմելի ցաւն ու անպայման ողբը նկարագրել: Շատ դժուարաւ կրցան Աննան

եւ իր մեծօրոյ հոգեւոր հայրը աստուածային կրօնին մխիթարութիւններով զանիկա խաղաղցունել: Եղիսաբեթ ձեռուրները գալարելով, կ'աղօթէր, կու լար կ'ողբար եւ դարձեալ աղօթք կ'ընէր: Բայց բարերարն Աստուած, որն որ խրկած վէրքը նորէն կը բժշկէ, խեղճին վրան ողորմեցաւ, անոր սիրտը զարմանալի կերպով մը զօրացուց ու մխիթարեց: Գարձեալ անիկակ այնպիսի խաղաղութիւն ու զօրութիւն մ'ունեցաւ, որ քովը եղողներն անոր վրայ կը զարմանային, եւ իբրեւ Աստուծոյ մէկ գործքը կը համարէին:

Գ Լ Ո Ւ Ս Ժ Զ.

Դժբախտներուն փախուստը:

Դժբախտ Եղիսաբեթին խուցէն ելաւ ամպարիշտ Գոնգորտիան եղբօրը հետ իր խուցը վազեց գնաց, որ իր հեռաւորութեան ատեն անբնակ մնացած էր, որպէս զի հոն առանց մէկը տեսնելու իրենց յատակագծին յաջողութեան վրայ խայտան ու ցնծան:

Ահա սիրելի եղբայր, գոչեց անիծեալը խայտալով, իմ բորբոքած վրէժխնդրութիւնս քիչ մը զովացաւ: Գուն ալ քու խաղդ շատ աղէկ խաղացիր: Ընդունէ աս համբոյրն անոր իբրեւ շնորհակալութիւն: Թշուառականը շատ դժուարաւ մէյ մ'ալ կ'արթննայ, ինչու որ զարհուրելի գոյժն անոր սրտին ապահով մահուան հարուածը տուաւ: Այսպէս ահաւասիկ մեր ապագայ երջանկութեան գլխաւոր արգելքը մէջ տեղաց վերցաւ: Իշխանը մեզի ամենեւին արգելք մը չի կրնար ըլլալ. ինչու որ ես անոր մահն ալ հաստատուն որոշած եմ:

Բայց ժողովրդեան սէրն ու հակումը դեռ մեծ արգելք մըն է, կրկնեց Գոնրատ: Եւ թէ որ կասկած մ'ունենալու ըլլայ:

Ժողովուրդն ալ քիչ մը ետքը մեզի կը վաս-

տրկինք, պատասխանեց Գոնգորտիա: Կերպարանելը, հարուստ պարգեւներն ու քանի մը մեծանձն գործքերը ժողովրդեան հակումը անմիջապէս մեզի կը քաշեն: Այնպէս որ ոչ ոք կրնայ կասկած մ'ունենալ, որուն համար արդէն ամէն բան հոգացուած է եւ պիտ'որ հոգացուի ալ: Եղիսաբեթին մահը մեզի յանցանք չի կրնար համարուիլ, սարսափը զինքը մեռցուց. եւ թէ ինչպէս ասի պատահեցաւ, տղէն զաա, մէկը չի տեսաւ: Եւ իշխանին սպանումն ալ այնպիսի եղանակաւ մը պիտ'որ ըլլայ, որ ամենեւին փոքր կասկած մ'ալ վրանիս չ'իյնար: Ասի իմ ընելու բանս է, անիկակ իմ խոհեմութեանս թող տուր:

Ի այց թէ որ իշխանուհին նորէն կենդանանալու ըլլայ նէ, հարցուց Գոնրատ անձկութեամբ:

Ան ատեն ան ալ իշխանին պէս ուրիշ եղանակաւ մը պիտ'որ մեռնի, պատասխանեց ամպարիշտ կինը քինախնդիր աչուրներով:

Գոնրատ, որն որ քրոջը պէս դեռ ան աստիճանի ապականած մարդ չէր, աս վերջին խօսքերուն վրայ սոսկաց, բայց նոյն ատեն չէր համարձակեր անոր հակառակելու:

Ասկից ետքը ուրիշ բաներու վրայ ալ խօսակցեցան, որոնք աս չար յատակագծին հետ յարաբերութիւն ունէին: Որովհետեւ իրենց մէջ որոշած էին թէ չի հանգչին մինչեւ որ Թուրինգիայի կալուածներն իրենց ձեռքը չանցնին: Գոնգորտիան կ'ուզէր տիրող իշխանուհի ըլլալ, եւ Գոնրատն ալ իր աջ բազուկը, եւ իր մեռնելէն ետքն ալ յաջորդ պիտ'որ ըլլար: Ասոր վրայ Մայսենի մէջ արդէն երկայն ատենէ ի վեր նիւթած էին, մինչեւ որ վերջապէս աս ճամբորդութեան յաջող գէպքը պատահեցաւ: Քանի որ Լուդովիկոսն եւ Հունգարիայի թագաւորը կենդանի էին, աս յատակագծին կատարումն անկարելի էր: Անոր համար շատ յաջող բան երեւցաւ իրենց աս իաշա-

կրաց արշաւանքը, եւ թէ մեծապէս կ'ուրախանային, որ աս երկու իրենց վախցած թշնամիները մէկտեղ Պաղեստին կ'երթան: Գոնրատ չէր ուզած արշաւանաց մասնակից ըլլալ, բայց որովհետեւ իրենց յատակագծին մէջ աս ալ կար, եւ քոյրն ալ զինքը կը յորդորէր, անոր համար խաչակրաց դրօշին մէջ մտաւ եւ Լուզովիկոսին հետ Պրինտիզին գէպ ի Օդրանդո նաւեց: Իր դիտաւորութիւնը, անհաւատներուն հետ վտանգաւոր կռիւներու մասնակից ըլլալ չէր, հապա մեծ յուսով թագաւորին եւ իր քաջ քեռորդւոյն մահուան վկայ ըլլալ, եւ ուրախութեամբ հայրենիք դառնալ իր քրոջը բաղձացած լուրը բերել էր: Բախտն իսկզբան սպասածէն աւելի իրեն յաջողելու պէս կ'երեւար: Երբոր շողոքորդը, Օդրանդոյի մէջ իր քեռորդւոյն գերեզմանին վրայ անոր բարեկամին հետ կը սգար ու կու լար, միւս կողմանէ ներքուստ սրտին մէջ կը ցնծար: Թէ որ Հունգարիայի հզօր թագաւորը մեռած ըլլար, հաւանական էր որ դէպ ի Մայսէն ետ կը դառնար: Անոր համար ալ Փրեդերիկոսին դնդին մէջ մնաց, որն որ վերջէն Հունգարիայի թագաւորին դնդին հետ միացաւ: Ասիկա շնորհք ու բարեկամութիւն կը փնտռէր, զորն որ, Լուզովիկոսին մօրեղբայրն ըլլալով շատ դիւրաւ գտաւ: Թագաւորը Լուզովիկոսին մահուան վրայ շատ կը ցաւէր, անոր վրայ կ'արտասուէր, եւ իր աղջկան դժբախտութեան վրայ կ'ողբար: Իսկ Գոնրատ ներքուստ մասնակից ըլլալ կը ձեւացընէր: Նաեւ ճշմարիտ բարեկամութիւն կը կերպարանէր ազնիւ Ալզբերին զորն որ սրտանց կ'ատէր, որպէս զի ասով թէ իր ու թէ քրոջը վրայէն ամէն կասկածները կարող ըլլայ հեռացընել:

Այն օրը, որուն մէջ Հունգարացւոց թագաւորը իր ամուսնոյն մահուան գոյժն առաւ, իր լենացն ալ վերջին օրն էր: Սովորականէն շատ

աւելի քաջասրտութեամբ նոյն օրը կը պատերազմէր, եւ վտանգի մը մէջ ինկաւ, որմէ որ կրնար Գոնրատ զանհիկակ ազատել, բայց թող տուաւ որ թշնամեաց կռուոյն մէջ մեռնի: Երբ որ թաղաւորին իյնալը տեսաւ, աւելի ուրախութեամբ մը քան թէ մեղկութեամբ, թող տուաւ փախաւ: Որովհետեւ երկու վախցուած հակառակորդները մեռած էին, եւ քրոջը յատակագիծը կէս մը յաջողած էր: Գոնրատն ալ աօ վերջին կռուոյն մէջ վէրք առած էր. բայց վէրքը կարծուածին չափ վտանգաւոր չէր: Աս իր վէրքը պատճառ եղաւ որ հրաժարականն ընդունի. եւ շուտ մ'ալ ընդունեցաւ: Նաեւ իր շողքորդութեամբն ու կերպարանելովը, թագաւորին ու քեռորդոյն մահուան ստորագրութիւնը, Փրեդերիկոս կայսերմէ ստորագրուած կրցաւ առնուլ: Եւ այսպէս չարազործն իր ամպարիշտ քրոջը դարձաւ եկաւ: Ասիկա կ'ուրախանար, ինչպէս որ ամպարիշտ մարդիկ կ'ուրախանան, երբ որ իրենց սրտերնուն պէտ չար բաղձանքը կատարուած կ'ըլլայ: Ամպարիշտ մայրն իր բուն որդւոյն՝ ինչպէս նաեւ հարսին ու թոռանը մահուան վրայ կը խայտար: Իր նենգաւոր գործողութիւններն մինչեւ հիմա տեսանք իմացանք: Բայց Նախախնամութիւնն անոնց խորամանկ յատակագիծը դերեւ հանած էր, եւ անոր՝ Եղիսաբեթին մահուան վրայ ունեցած յաղթութիւնը քիչ ժամանակ տեւեց:

Արբ որ ծառայ մ'եկաւ ու լուր բերաւ, թէ Եղիսաբեթ դարձեալ կենդանացած ու ազատած է, ան ատեն Գոնգորտիօյին գոյնը նետեց, ու ծառան հեռանալուն պէս, կատաղւոյ մը պէս, այնպիսի անէծքներ ու չարամաղթութիւններ ըրաւ, որ Գոնրատ սարսափած էր:

Պէտք է որ մեռնի անիծեալը, գոչեց կատաղութենէն փրփրալով. կամ անի կամ ես պէտք է որ մեռնինք: Քանի որ անի կ'ապրի, ոչ հան-

գիտտ եւ ոչ ալ կենաց զբօսանք կրնամ ունենալ: Ինք եւ իր որդին իմ վրէժխնդրութեանս զոհ պէտք են ըլլալ, եւ անկից յառաջ պիտ'որ չի հանգչիմ:

Սիրելի եղբայր, գժբախտ քրոջդ ողորմէ, ըսաւ Գոնգորտիան շինծու լալով ու ողբալով. զիս անօգնական մի թողուր: Թէ որ մեր յատակագիծը չի յաջողիր, եւ անիծեալ Եղիսաբեթն երկրորդ անգամ իմ վրաս յաղթութիւն կը կանգնէ, ան ատեն կամ կատաղի մը եւ կամ գիակ մը Մայսէն պիտ'որ տանիս: Պէտք է որ կամ յաղթեմ եւ կամ մեռնիմ: Եղբայր կ'ուզե՞ս ինծի սիրով օգնել:

Գոնրատ ամէն բան խօսաացաւ, կատաղի քոյրը խաղաղցրնելու համար. որովհետեւ ինքն ալ Թուրինգիայի կալուածներուն կը ցանկար, եւ որն որ չարութեան մէջ յառաջ գացած էր, եւ զօրութիւն չունէր քրոջը գէմ գնելու եւ մոլորութեան ճամբէն ետ կենալու:

Երբ որ աս ամպարիշտները զարհուրելի սպանութիւն մը կը նիւթէին, ասգին Եղիսաբեթ իր խուցին մէջ կու լար, կ'ողբար ու կ'աղօթէր: Իր քովը Աննայէն ու պզտիկ Հերմանէն զատ մէկը չկար: Աննան կ'ուզէր միտիթարել, բայց իր արցունքը չէր կրնար ծածկել: Աս տխուր տեսարանն աղէկ ստորագրելու համար, պէտք էր անոր ներկայ ըլլալ: Թէ որ Եղիսաբեթ կրօն չունենար, անտարակոյս իր ցաւոցը ծանրութեան տակ կ'ընկճէր: Իր խորունկ նուազութենէն արթննալուն առջի բոպէն, երանի թէ նորէն չարթննայի այնպիսի կենաց մը ըսած էր, որն որ իրեն առանց Լուդովիկոսի անտանելի կ'երեւար: Բայց երբոր նայուածքն իր լացող տղուն վրայ նետեց, ո՛հ, ան ատեն իր նորէն արթննալուն վրայ շնորհակալ եղաւ եւ զԱստուած օրհնելու սկսաւ, որ իր որդւոյն համար գեռ կ'ապրի:

Ո՛հ, սիրելի, բարի տղայ, գոչեց ցաւալից, ես ալ ո՛չ ծնողք եւ ո՛չ ալ ամուսին ունիմ, եւ դուն ալ Հայր չունիս: Ասոնք ըսած ատեն աչուերնէն հեղեղի պէս արցունք գալու սկսաւ, որն որ իրեն անպայման ցաւերը դարձեալ կը մեղմէր:

Իայց դեռ սիրելի, բարի մայր մ'ունիմ, պատասխանեց տղան լալով ու զանիկա շոյելով, այնպէս չէ՞ մի սիրելի մայր, դուն ալ պիտ'որ չի մեռնիս: Ո՛հ, դուն գոնէ քովս կեցիր, տես, կ'ուզեմ զքեզ աղէկ սիրել, եւ ամենեւին չեմ ուզեր տրամեցընել:

Կը մնամ, սիրելի տղաս, կրկնեց մայրը, քովդ կը մնամ, որչափ որ Աստուած կ'ուզէ:

Անիկա կ'ուզէ որ դուն իմ քովս մնաս միշտ, պատասխանեց տղան եւ արցունքը սրբելով գնաց մօրը ծնդարանին վրայ ծնկան վրայ եկաւ, եւ սկսաւ բազկատարած այնպէս սրտանց աղօթել, որ ամենակարծր սիրտ ունեցող մարդն ալ արցունք թափելու չափ կ'այլայլէր:

Այսպիսի աղօթք մը մարդասպանի սիրտ մ'ալ կը կակղացընէ, ըսաւ դողդոջուն ձայն մը, եւ նոյն վայրկենի մէջ օթոցով ծածկուած դռնէն Գոնրատ ներս խուցը մտաւ: Ատիկէն դողալով ու լալով, տղան ոտք ելաւ ու մօրը վազեց, որն որ նոյնպէս այսպիսի յանկարծական երեւութէն մը քիչ չէր վախցած: Իսկ Աննան, որն որ զԳոնրատ մարդասպանի տեղ կը դնէր, գունատեցաւ:

Մի վախնար սիրուն տղայ ըսաւ Գոնրատ, ես անոր համար եկած եմ, որ քեզի ըսեմ, թէ քու աղօթքդ լսուեցաւ, եւ քու մայրդ դեռ երկայն պիտ'որ ապրի:

Ասոր վրայ պզտիկ Հերմանը սիրտ առած, վըստահութեամբ մը կոմսին մօտիկեցաւ, շնորհակալութեամբ ձեռքը պագաւ եւ ըսաւ, հիմա, բարի մօրեղբայրս, հիմակ դարձեալ կը սիրեմ զքեզ, չատ կը սիրեմ:

Այսպէս, ըսաւ կոմսը, եւ սկսաւ կարմրնալ ու գունատիլ: Երկու տիկնայք անձկութեամբ կը դողային: Գոնրատ նորէն ինքն իրեն եկած էր, ու հետեւեալ խօսքերը ըսաւ Եղիսաբեթին, Տիկին, ես ինք զինքս ձեր քովն արդարացրնելու համար չեմ եկած, հապա իմ այսպէս գիշերատեն երեւնալս ուրիշ վախճան մ'ունէր: Հոս երեսին գոյնը նետեց ու ծնկուրները չէին բռներ: Բայց քիչ մ'ատենէն քանի մը ըրոպէէն ձեր բախտը փոխուեցաւ: Գուք պիտ'որ ապրիք եւ պիտ'որ չի մեռնիք. ես իսկ ձեր որոշեալ ս... սպանող կ'ուզէր ըսել. բայց խօսքը դողդոջուն շրթանցը վրայ մնաց. ես իսկ կ'ուզեմ զձեզ ազատել:

Ազատել. կանչեց Եղիսաբեթ զարմացմամբ, եւ Աննային բազկացը մէջ ինկաւ:

Այ՛ սիրելի մայր, կրկնեց պզտիկ Հերմանը, բարի մօրեղբայրս Գոնրատ զքեզ մահուանէ պիտ'որ ազատէ, եւ այնպէս պիտ'որ ընէ որ մէյ մ'ալ չի մեռնիս, եւ անոր վրայ մի վախնար, հապա ուրախացիր: Նայէ, ես մեծապէս ուրախ եմ, եւ մօրեղբայրս դարձեալ շատ պիտ'որ սիրեմ:

Աս անմեղ տղուն տղայական խօսակցութեանց վրայ Գոնրատ կոմսին աչուրներէն արցունք գալու սկսաւ, եւ սրտին մէջ սկսաւ խօսիլ. աս անմեղ տղան ես պիտ'որ մեռցընէի. Չէ, իմ նոր առաջադրութիւնս հաստատուն է, պիտ'որ ապրի, անոր սիրոյն համար նաեւ մայրն ալ իր կեանքը պիտ'որ շարունակէ:

Հանգարտեցէք, ազնիւ տիկին, եւ շուտով փախչելու պատրաստութիւն տեսէք. ինչու որ, թէ որ ես զձեզ ու ձեր տղան պիտ'որ ազատեմ նէ, ան ատեն պէտք չենք հոս ըրոպէ մ'ալ ատեն կորսընցընել, ըսաւ կոմսը քիչ մը հեզ ձայնով: Շատ բան, եւ գուցէ ամէն բան պիտ'որ փորձեմ, ի գործ պիտ'որ դնեմ. եւ որովհետեւ անգամ մը

զիս առ այն որոշեցի, պէտք է որ կատարուի: Մինակ ձեր յապաղումն ու յանձն չառնուլը իմ որոշումն դերեւ կրնան հանել, եւ զձեզ ու ձեր որդին առանց ազատելու կորստեան մէջ դնել:

Ո՛հ, Տէր Աստուած, գոչեց Եղիսաբեթ զարմացմամբ, ուրեմն ես՝ ու տղաս մեր տանը մէջ ապահով չե՞նք: Ի՞նչ յանցանք գործեցինք որ մեր կենացը կը ցանկան:

Տիկին, պատասխանեց Գոնրատ կոմսը հիմա ձեզի պատճառն ըսելու ոչ ժամանակն է եւ ոչ ալ տեղը: Ասի բաւական է ձեզի գիտնալ, որ դուք ու ձեր տղան առանց ազատելու պիտ'որ կորսուիք, թէ որ այս վայրկենիս մէջ դղեակը չէք թողուր:

Ո՛հ, Աստուած, ո՞ր կողմը դառնանք, հարցուց հառաչելով դժբախտ տիկինը:

Որ կողմը որ կ'ուզէք, պատասխանեց պաղու-թեամբ կոմսը, մինակ պէտք չէք Թուրինգիայի մէջ մնալ, թէ որ կ'ուզէք ապահով ըլլալ: Եւ բաց ասկից ինծի երկու բան պիտ'որ խոստանաք, որոնք մէկիկ թէու-թիւններ են, որոնցմով որ ես զձեզ կրնամ ազատել: Առջինը է ասի որ ամենեւին պիտ'որ չի յայտնէք որ ես զձեզ ազատած եմ, եւ երկրորդ ալ որ, երբեք ձեր որդւոյն հետ Թուրինգիական երկիր պիտ'որ չի մտնէք, թէ որ ատենօք անոր սահմանները գալու ըլլաք: Թէ որ ասոնք ինծի երդմամբ չէք խոստանար, շատ կը ցաւիմ որ զձեզ չեմ կրնար ազատել:

Ուրեմն աս աստիճանի՞ հասած է որ մինակ փախուստն եւ աքսորն զիս իմ խեղճ ու անմեղ որդիս կրնան ազատել: Հոս արտասուաց հեղեղ մ'անոր ձայնը կարեց:

Աննան, որն որ արդէն յառաջուց կէս մը գուշակած, կէս մ'ալ տեսած էր աս բաներուս այսպէս պատահելիքը, աս ալ նշմարեց, որ արագ փախուստը մէկիկ միջոց մըն է իր դժբախտ կա-

լուածատիրութեան: Անոր համար ջանաց, իր դժբախտ բարեկամը շուտով փախ-
չելու յորդորել: Աերջապէս յաջողցուց. Եղի-
սաբեթ պահանջուած երգումն բրաւ, եւ դրժ-
բախտները, դառն արտասուօք եւ անպայման
ցաւով, իրենց սիրելի իրերէն հրաժարուամ ընդ-
ունեցան յաւիտեանս, ինչպէս որ կը կարծէին:

Գոնրատ կոմսը պզտիկ իշխանը գիրկն առաւ,
եւ առջեւէն կանթեղով մը կ'երթար, իսկ անոր
ետեւէն դժբախտ ու տառապեալ կոմսուհին Ան-
նային կ'առնած արտաքոյ կարգի կը դողար: Ճամ-
բան սոսկալի գետնափորէ մ'անցնելով էր: Պըզ-
տիկ Հերմանը ստէպ կու լար, եւ միշտ ետեւը
կը նայէր անձկութեամբ, որ սիրելի մայրն ալ
կու գայ: Տասն անգամի չափ հարցուց որ կու
գայ, եւ չէր հանդարտեր մինչեւ որ անոր ձայնը
չլաէր:

Ա երջապէս Գոնրատ երկաթէ դուռ մը բա-
ցաւ, կանթեղը մարեց, եւ սոսկալի գետնափորէն
բաց տեղ մ'ելան: Բայց հոս ալ քիչ զարհու-
րելի չէր, որովհետեւ թանձր կաղնիի անտառ մը
զերենք ընդունեցաւ: Բարեբախտութեամբ ան-
համար աստղներ երկինքը կը շողային, եւ արեւե-
լեան հորիզոնին վրայ, արծաթափայլ լուսինը, ի-
բրեւ միգապատ ծովէն վեր կը բարձրանար:

Հոս, տիկին, ըսաւ Գոնրատ քիչ մ'այլայլած,
հոս զձեզ ձեր բախտին կը թողում: Աս ճամ-
բէն յառաջ գացէք, եւ միշտ դէպ ի հիւսիս,
մինչեւ որ սահմանը հասնիք: Նայեցէք որ որչափ
կարելի է փութով հասնիք, որովհետեւ հոն գա-
րանքէ ազատ եւ ապահով կ'ըլլաք:

Եղիսաբեթ կուզէր իր ազատչին շնորհակալ
ըլլալ, բայց անիկա շուտ մը նոյն մութ ճամբէն
աներեւոյթ եղաւ, եւ երկաթէ դրան ձայնը դրժ-
բախտներուն՝ զարհուրելի անտառին մէջ առան-
ձին ըլլալը կը յիշեցընէր:

Մէկ ցրտաշունչ սարսուռ մ'իրենց բոլոր անդամները դողացուց, եւ պզտիկ Հերմանը լալով մօրը վրայ կ'իյնար: Նաեւ Եղիսաբեթն եւ Աննա կու լային:

ԳԼՈՒԽ ԺԷ.

Անայստասկան մը:

Ղուսինը բացակայ թուխ լեռներուն ետեւէն վեր բարձրացած էր, եւ իր արծաթեզօծ կլոր սկաւառակը՝ նուազ լոյս մը կ'արձըկէր բարձրաբերձ կաղնիներուն թանձր ոստերուն մէջէն դժբախտներուն վրայ, որոնք դեռ կ'ոմնին թող տուած տեղը, գալարած ձեռուրներով երեսի վրայ ինկած երկնաւոր Հօր աղօթք կ'ընէին, որն որ աստեղաց վրայ կը բնակի: Աչուրներնէն հեղեղի պէս արցունք կու գար, եւ սրտանց կ'աղօթէին:

Ո՛հ, գթած երկնաւոր Հայր, կ'աղաչէր կը պաղատէր դժբախտ Եղիսաբեթ. ինչպէս դժբախտ եմ. իմ ողբոցս վախճանը չեմ տեսներ: Հարուած հարուածի վրայ եկաւ, եւ չեմ գիտեր թէ ինչպէս աս խաչէն օգուտ հանեմ: Առանց էրկան, առանց ծնողաց, առանց բնակարանի, իմ խեղճ տղուս հետ դուրս հեռու աշխարհք մ'աքսորուեցայ: Ո՛հ, առանց պաշտպանի եւ առաջնորդի ո՞ր երթամ: Ամէնն ալ զիս թողուցին, եւ ոչ ոք զիս կը պաշտպանէ: Ո՛հ, Տէր Աստուած, թէ որ դուն ալ զմեզ կը թողուս նէ, ան ատեն ստուգիւ աս խաչէն ու վշտէն կը յուսահատինք: Եւ սկսաւ բարձրաձայն լալ, նոյնպէս միւսներն ալ իրեն հետ կու լային:

Իայց չէ, չէ, դարձեալ աղօթքը յառաջ տարաւ. դուն բարի ու գթած Հայր, զմեզ պիտ'որ չթողուս, չի մերժես: Ա՛խ, դուն գիտես մեր տառապանքը, դուն մինակ կրնաս մեզի օգնել, եւ պիտ'որ օգնես ալ: Նայէ, ո՛հ Հայր սյրեաց եւ որ-

բոց, գթութեամբ աս անմեղ տղուն վրայ: Առանց հայրենեաց, ժառանգութենէ զրկուած, խեղճ եւ անհայր որբը կ'աքսորուի, ու մայրն ալ այնչափ աղքատ եւ ողորմելի է որ իր խեղճ տղուն կտոր մը հաց չի կրնար տալ անոր քաղցը յագեցընելու համար, եւ ապահով տեղ մը չունի, ուր կարենայ հանգչիլ ու քնանալ: Ով ողորմած Աստուած, բարի Հայր երկնաւոր, դուն եղիք ուրեմն տղուն հայր, առ զանիկա քու հայրենի պաշտպանութեանդ տակ եւ ազատէ զինքը իր թշնամեաց ձեռքէն: Արդարեւ, դուն ունիս իշխանութիւն երկնից ու երկրի վրայ, քեզի ամէն բան կարելի է: Ես սիրով ամէն բանի կը համբերեմ, ամէն բան կը կրեմ, ինչ որ դեռ իմ վրաս կը խրկես, միայն իմ խեղճ անմեղ տղուս ողորմէ: Ստուգիւ դուն իրեն եւ նաեւ մեզի պիտ'որ ողորմիս. դուն ես մեր հայրը, մեր մի միակ պաշտպանն ու մխիթարութիւնը: Իմ բոլոր վստահութիւնս ի քեզ է: Լսէ իմ աղաչանքս սիրելի որդւոյդ մեր Փրկչին սիրոյն համար:

Վմէն. ըսաւ Աննան, եւ տառապելները ոտք ելան, իրենց Աստուծոյ վրայ ունեցած վստահութեամբ զօրացած: Քաղցր ու բարերար արցունքը Եղիսաբեթին աչուրներէն կը հոսէր, երբ որ տղան գրկեց ու կրծոցը վրայ ճնշեց:

Ուրեմն դուն, սիրելի տղաս, եւ դուն սիրելի Աննա, դուք է որ զիս աս հեռաւոր աշխարհքիս մէջ կը սիրէք, եւ ես ալ զձեզ կը սիրեմ, ըսաւ Եղիսաբեթ քիչ մ'աւելի հանդարտած: Ստոյգ է որ հայրենիքս եղբայր մ'ունիմ, զորն որ սաստիկ կը սիրեմ, բայց անիկա զիս չի ճանչնար, եւ ան ալ ինձի պէս լքեալ թողեալ որբ մըն է: Ո՛հ Աստուած, ո՛վ գիտէ թէ արդեօք ան ալ իր քրոջը բախտին չէ հանդիպած: Բարերար Աստուած. անոր ալ օգնական ու պաշտպան հայր մ'եղեր:

Սիրելի մայր, ալ մի լար, ըսաւ պզտիկ Հեր-

մանը, ապա թէ ոչ աս մութ անտառին մէջ աւելի եւս կը վախնամ: Եկու, սիրելի մայր, քու հայրենիքդ ու քու եղբայրդ փնտաելու ելլանք, ինք զմեզ անտարակոյս կը սիրէ, եւ ան ատեն ալ լալու բան չես ունենար:

Ո՛հ սիրելի տղաս, կրկնեց գորովալից մայրը, Աստուած տար որ մենք հայրենեքիս մօտ ըլլայինք, ինչպէս որ դուն տղայական գաղափարովդ կը կարծես: Ո՛հ, ո՛ր է, հայրս ու մայրս կենդանի ըլլային, ան ատեն, իմ բաղձանքս սիրելի հայրենեացս ուղղուած կ'ըլլար: Բայց հիմակ իմ սիրտս երկնաւոր հայրենեաց կը բաղձայ, ուր որ սիրելի ծնողքս կը բնակին, ուր նաեւ քու սիրելի հայրդ, իմ սիրելի . . . հոս արցունքն իր խօսքը կտրեց:

Ո՛հ, Աստուած, ձայն մը կը լսեմ, գոչեց Աննան սոսկալով, մարդիկ կու գան, ելիր անտառին ներսերը փախչինք, ապա թէ ոչ կորսուած ենք:

Ստանգին մերձենալը, կենաց սէրը, եւ մանաւանդ իր տղուն ունեցած սէրը տառապեալ Եղիսաբեթին նոր զօրութիւն ու քաջասրտութիւն մը տուին: Տղուն աջ ձեռքէն բռնեց, ձախ ձեռքէն ալ Աննան, տղան մէջերնին առած սկսան անտառին ներսերը փախչիլ: Ամենեւին ոչ ետեւ, ոչ աջ եւ ոչ ձախ կը նայէին, միշտ յառաջ կ'երթային, եւ այնպէս շուտ կը վաղէին, որ իբր թէ զիրենք հալածողներն արդէն մօտիկցած ըլլան: Ամենեւին մէկը բառ մը չէր խօսեր, եւ մէկն ալ, սրտին անձկութենէն, գիշերուան մթութենէն եւ անտառին սարսափէն ամենեւին վախ մը չէր ցուցըներ: Բայց երբոր ստիպուեցան կամաց քալել, նոյն ատեն զարհուրելի եւ երկիւղալի անտառէն սկսան սոսկալ: Բայց ի վերայ այսր ամենայնի, ոչ Եղիսաբեթ եւ ոչ ալ Աննա վախնալու նշան մը ցուցրցին, տղուն անձկութիւնը չաւելցընելու համար: Եւ իրօք ալ տղան երկուքէն շատ քիչ անձկութիւն կը կրէր: Քաջութեամբ, եւ Կռանց

փոքր տրտունջ մ'ընելու յոգնութեան վրայ, անոնց հետ կը քալէր: Մինակ հեղ մը ցաւով պոռաց, երբ որ ոտքը բանի մը զարկաւ ու վիրաւորեց: Թէպէտեւ երկայն ատեն ոտքը կը ցաւէր, բայց ամենեւին անոր տրտնջալը կամ ողբալը չի լսեցին: Մինակ երբոր քանի մը հեղ մօրը կամացուկ մը հառաչելը լսեց, ինքն ալ սկսաւ քաջալերութիւնը կորսնցընել: Իսկ Աննա միշտ քաջասիրտ կը ցուցընէր ինք զինքը, եւ իր օրինակը տղան դարձեալ կը քաջալերէր:

Ա՛հ, Տէր Աստուած, ալ չեմ կրնար յառաջ երթալ, ըսաւ վերջապէս Եղիսաբեթ աչուրներս ու գլուխս կը դառնան, եւ ոտքերս ալ յառաջ չեն երթար:

Հիւանդ ես, սիրելի մայր, հարցուց տղան խեղճուկ մը:

Չէ, սիրելի տղաս, հոգ մ'ըներ, պատասխանեց մայրը ծանր շունչ մ'առնելով, մինակ զօրութիւնս կտրեցաւ: Ափսէն, անձկութենէն ու շուտով վազելէն եղաւ: Հոս քիչ մը պէտք եմ նստիլ, ալ չեմ կրնար յառաջ երթալ: Այս ժամ մը հանգչելով գուցէ կրնամ դարձեալ ճամբան յառաջ տանիլ ձեզի հետ: Ա'երեւայ որ թշնամին ալ զմեզ չի հալածեր, եւ կրնանք քիչ մը հոս ապահովութեամբ հանգչիլ: Եւ այսպէս նստաւ: Եկէք սիրելիք, դուք ալ քովս նստեցէք: Գուք ալ աղէկ յոգնած պիտ'որ ըլլաք, եւ ինծի պէս դուք ալ հանգչելու հարկաւորութիւն ունիք:

Աւստի բազմաճիւղ կաղնիի մը տակ կանանչ խոտին վրայ նստան: Եղիսաբեթ եւ Աննա մամուռապատ ծառին բունին կռթնեցաւ, եւ տղան տրտուամ գլուխը մօրը ծնկան վրայ դրաւ: Աս հինաւուրց կաղնին, որուն ճիւղերուն տակ տառապեալները կը հանգչէին, միւս չորս կողմը եղած ծառերէն կղզիացեալ ծառ մըն էր, եւ իրենց առջին քիչ մ'ընդարձակ տեղ կար: Արծաթա-

փայլ լուսինը հեռուանց ճեղքուածի մը մէջէն իր հեշտ լոյսն ասոնց վրայ կը ցոլացընէր: Ասիկակ առանձնութեան սոսկումն ու գիշերուան երկիւղը քիչ մը կը մեղմացընէր: Բայց գիշերուան խոր լուութիւնը եւ միանգամայն այսպիսի վայրենի եւ անբնակ տեղոյ մը մէջ ըլլալը դժբախտներուն եւ անպատասպարան ճամբորդներուն համար բաւական զարհուրելի էր: Երկու բան ամէն բոպէ իրենց անձկութիւնը կ'աւելցընէին, մէյ մը հոն տեղերը ճիւղաղներու բնակութիւն ըլլալու կարծիքը, որմէ ամենէն գիտուն մարդն ալ ազատ չէր, եւ երկրորդ թշնամիէն հալածուելնուն վախը: Իրենց երեւակայութիւնը, շարժող ճիւղերուն շուքին մէջ ճիւղաղներ կ'երեւցընէր, եւ տերեւներուն խարշափելը վախով զերենք կը դողացընէր: Եղիսաբեթ եւ Աննա լուութեամբ կ'աղօթէին, ու միշտ դողալով աղէկ մ'իրարու կը փաթտուէին: Իսկ պզտիկ Հերմանը, որն որ մօրը գիրկը ամենեւին երկիւղ կամ անձկութիւն մը չունէր, հանդարտ եւ անոյշ կը քնանար:

Քիչ մ'ատեն այսպէս աղօթելէն ու յոգնութիւն առնելէն ետեւ, եկու սիրելի Աննա ըսաւ Եղիսաբեթ, դարձեալ մեր փախուստը շարունակենք:

Քիչ մը ատեն յոգնութիւն առնելէն ու իրենք զիրենք Աստուծոյ յանձնելէն ետեւ: Մենք դեռ միշտ մեր հալածիչներուն մօտ ենք, եւ մինչեւ որ բաղձալի օրը ծագի, պէտք ենք քանի մը ժամ իրենցմէ հեռացած ըլլալ: Ես, փոքր Աստուծոյ, դարձեալ կազդուրած եմ, բայց շատ կը ցաւիմ որ խեղճ տղան, որն որ այսպէս անոյշ գիրկս կը քնանայ, իր քաղցր քունէն անհանգիստ պիտ'որ ընեմ: Խեղճ տղան, շատ կանուխ ձախող բախտին ձեռքը աս կենաց դառնութիւնը պիտ'որ ձաշակէ: Ո՛հ, չի գիտեր, թէ ինչպիսի վտանգներ իր գլխուն վրայ կը դառնան, եւ ինչչափ դեռ

դժբախտ ու տառապեալ կրնայ ըլլալ: Հիմա քնանալով շատ երջանիկ է, եւ ես հիմակ անոր երջանկութիւնը պիտ'որ խոսովեմ, որպէս զի նոր թշուառութեանց, վշտաց ու տրտմութեան համար արթննայ, որոնց տակը իր փափուկ հասակը պիտ'որ իյնայ: Ասի ըսած ատեն աչքէն կարեկցութեան արցունք կու գար:

Ես տղան կը տանիմ, կրկնեց Աննա, եւ իմ բազուկներս որրոցի տեղ կը ծառայեն, որոնց վրայ թող անոյշ քնանայ: Աս պատրաստականութիւնը կոմսուհին շատ շարժեց, բայց չէր կրնար յանձն առնուլ, որովհետեւ հինգ տարուան տղան բարի աղջիկը շատ կը յոգնեցընէր եւ անոր զօրութիւնը կտրել կու տար: Ուստի քնացող տղան արթընցուցին, որն որ երկայն ատեն քունը գլուխն էր եւ ողբալից կու լար: Բայց երբ որ ինք զինքը մօրը բազկացը մէջ տեսաւ, որն որ անոր աչքէն արցունքը կը համբուրէր, լալէն դագրեցաւ, եւ յառաջուան պէս զուարթացաւ: Իսկ տառապեալները Աստուծով դարձեալ իրենց ճամբան յառաջ տարին: Տղուն շարունակ զուարթութիւնը միւս երկուքն ալ զուարթացուցին, եւ անտառն ու գիշերը իրենց ալ զարհուրելի չէր ի գար: Ան տեղէն ըրած գիշերային ճամբորդութիւնը առանց մէկ անհանգստութեան կատարուեցաւ: Բայց յոգնած ճամբորդները միշտ փափաքանօք առտու ըլլալուն կը սպասէին:

Ս' երջապէս օրը ծագեցաւ, լուսինն եւ աստղները երթալով տժգունեցան, ու հաճոյատեսիլ կարմրութիւն մ'արեւելեան հորիզոնին վրայ արեւուն ելլելը կ'աւետէր: Զուարթ օրը, աս անմարդի առանձնութեան դարձեալ նոր կեանք բերաւ: Ասդին անդին զուարթ թռչուններն իրենց բոյները կը սրանային, ու ծառէ ծառ ու ճիւղէ ճիւղ ոստոստելով Արարչին առաւօտեան երգ մը կ'երգէին: Պզտիկ Հերմանն ուրախութենէն կը

խայտար, եւ շատ կը բաղձար այսպիսի գեղեցիկ երգիչ մ'ստանալ: Եւ շարունակ Աննային ետեւէն ինկաւ որ անկից հաստ մ'իրեն բռնէ: Եւ աղաչելէն չդադրեցաւ, մինչեւ որ մայրն իրեն համոզցուց, որ աս անտառաց երգիչները, որոնք կ'ուզեն ազատ ըլլալ, այնպէս դիւրաւ չեն բռնուիր, եւ թէ անգթութիւն է, աս առոյգ ու մատաղ կենդանիները բռնելը, որոնք աս զարհուրելի առանձնութիւնն իրենց քաղցր երգովը կը գեղեցկացրնեն:

Հիմակ ոսկեճաճանչ արեգակը, իր քաղցրահայեաց ճառագայթներովը, որոնք ընդհանուր ու բարձրագոյն զօրութեամբ մը թաւ անտառին թանձր խաւարը փարատելով կը թափանցէին, մեր ճամբորդները կը բարեւէր: Մէկէն ի մէկ բոլոր սարսափն աներեւելի եղաւ, եւ չորս կողմն եղած ամէն բաները զուարթ կերպարանք մ'ստացան: Անտառը, բիւրաւոր ճրագներով լուսաւորուած ընդարձակ տաճարի մը կը նմանէր: Աս բնութեան խաղաղ փառաւորութիւնը, ճամբորդներուն սրտին սուրբ երկիւղ մը ծնաւ: Եղիսաբեթ կեցաւ, ու միացուցած ձեռուններով եւ աչուրներն երկինք ուղղած, գոչեց. Ամենակալ Արարիչ, անապատին մէջն ալ քու գործքերդ գեղեցիկ ու զարմանալի են: Աստուածային մեծ վայելչութեան վրայ զարմացումէն, յափշտակուած եւ շնորհակալութեան զգածմունքէ մը բոլորովին բորբոքած, Եղիսաբեթ ծնկան վրայ եկաւ, եւ իր բոլորովին երկրպագութեամբ լցուած սրտէն, ջերմեռանդ առաւօտեան աղօթք մը բխեց: Աննան ալ անոր օրինակին հետեւեցաւ, նոյնպէս սղան չորեցաւ ու սրտանց թոթովելով Արարչին իր շնորհակալութիւնը կը մատուցանէր:

Եւ սրտաշարժ տեսարանն անապատական մը գաղտուկ տեսած էր: Ասիկակ իր զօրաւոր մարմինը պանդխտի զգեստով մը ծածկած էր, եւ

Հինծու սպիտակ մօրուքը մինչեւ գօտին կ'իջնար: Աս ամէն բան անոր տարիքն առած ու յարգելի ծերունւոյ մը կերպարանք կու տար: Ներքուստ այլայլած եւ արցունքն աչուրները, մերձաւոր կաղնիի մը ետեւէն դուրս ելաւ, ու կէս մը ուրախութեամբ եւ կէս մ'ալ սարսափած գոչեց. Ո՛հ ազնիւ տիկին, հո՞ս ուրեմն գտայ զձեզ: Աս խօսքերն ըսած ատեն, արցունքն անգագար իր երեսէն ու ճերմակ մօրուքէն հեղեղի պէս վար կը վազէին: Տառապեալներն անապատականը տեսնելուն պէս վախերնէն զարհուրեցան:

Մի վախնաք, պատուական սիրելի ու դժբախտ տիկին, ըսաւ անապատականն իրենց մօտենալով: Ասիկա Աստուծոյ նախասնամուտութեամբն է որ ես զձեզ հոս եւ աղէկ ատենին գտայ: Որովհետեւ դուք այնպիսի ճամբու մը ձեռք զարկեր էք որ միշտ զձեզ խորին եւ անմարդաբնակ անապատ մը կը տանի, եւ անխուսելի քաղցէն ու ծարաւէն կը նուաղիք: Աս խօսքերուն վրայ տառապեալները զարհուրելի վայնասուն մը փրցուցին:

Մեծարգոյ հայր, կ'երեւայ որ զմեզ կը ճանչնաք, ուստի դուք ո՞վ էք, հարցուց Եղիսաբեթ միշտ վտանգէն դողալով, որն որ իրենց կորուստ կը սպառնար:

Անմիջապէս զիս կը ճանչնաք, ազնիւ տիկին, կրկնեց քաղաքավարութեամբ կարծեցեալ անապատականը: Աս ըսելով շուտ մը վերարկուն մէկ գի նետեց, ծնօտին վրայէն Հինծու մօրուքը վար առաւ ու զարմացմամբ եւ ուրախութեամբ լցուած երեքն ալ միաբերան կանչելու սկսան, Տէր քարտուղար, աէր Ֆլանգ: Պզտիկ Հերմանը, որն որ արքունեաց քարտուղարը հօր պէս կը սիրէր, զմայլած անոր բաց բազկացը մէջ վաղեց: Եւ ասոր վրայ քարտուղարը յարգութեամբ իր տիկնոջը մօտեցաւ, անոր ձեռքը պագաւ ու խօսելու սկսաւ: Ազնիւ, սիրելի տիկին, այնպէս այլայլած

եմ, որ իմ հիմակուան սրտիս որպիսութեանը անուն մը չեմ կրնար տալ: Ար ցաւակցիմ ձեր դժբախտութեան վրայ, եւ կ'ուրախանամ Աստուծոյ վարմանալի տեսչութեան վրայ, որ զիս ձեզի ազատիչ ու պաշտպան ընտրեց եւ իմ սիրտս ուրախութեամբ լեցուց: Արեկցութենէ եւ ուրախութենէ լալս կու գայ: Քանի մը բոպէ յառաջ, յառաջ քան զձեզ գտնելը, սիրելի տիկին, շատ դժբախտ էի, բայց ալ կը մոռնամ: Ասոր վրայ ալ ուրախ եմ, որ իմ ազնիւ ու սիրելի տիկնոջս կրնամ ծառայել: Ստուգիւ, ազնիւ տիկին, իմ կենացս մնացած օրերը, ձեզի ու սիրելի իշխանին նուիրուած ըլլան: Ես հիմակուընէ սկսած, փոյթս անի պիտ'որ ըլլայ, որ իմ սիրելի տիկնոջս վտարանդութիւնը որչափ որ կարելի է դիւրատար ընեմ, մինչեւ որ արդար Աստուած չարք պատժէ եւ հալածեալ անմեղը դարձեալ իր իրաւունքին մէջ հաստատէ: Ասոր համար կ'աղաչեմ ձեզի ազնիւ տիկին, որ իմ ետեւէս գաք մինչեւ սաքսոնիական սահմանը, ուր ես եղբայր մ'ունիմ, որն որ զմեզ, ածխավաճառ ըլլալովն ալ, մեծ ուրախութեամբ կ'ընդունի եւ զմեզ կը հիւրընկալէ, մինչեւ որ կուսանաց վանք մը գրտնեմ, որուն մէջ դուք կրնաք հանդարտութեամբ ու ապահովութեամբ ձեր օրերն անցընել սիրելի իշխանին ու հաւատարիմ բարեկամուհւոյն հետ:

Ազնիւ ու պատուական մարդ, գոչեց այլայլութեան ու շնորհակալութեան արտասուօք. ինչպէս կրնամ, ձեր սէրն ու հաւատարմութիւնն իմ կենացս մէջ վարձատրել: Լաւ է, սիրելի, մենք կը վստահինք ձեր վրայ, եւ ձեր ետեւէն կու գանք, ուր որ տանիք զմեզ: Եւ ան որ ես չեմ կրնար ձեզի հատուցում մ'ընել, ստուգիւ Աստուած զձեզ անվարձ պիտ'որ չի թողու: Միայն նախ շնորհք ըրէք պատմեցէք մեզի, թէ ինչպէս դուք անապատական եղաք եւ ինչպէս հոս եկաք:

Կանանչ խոտերուն վրայ նստան, համարօտ պատմութեան ժամանակ քիչ մը հանգիստ առնելու համար: Քարտուղարն սկսաւ:

Այրի կոմսուհին, արքունիք դալէն քիչ մ'ետքը զիս իր խուցը կանչել տուաւ: Ես անմիջապէս գացի երեւցայ իրեն: Բայց, ո՞ սիրելի տիկին, ինչչափ ծանր նստաւ ինձի, երբ որ սատանայական եւ անողորմ յատակագիծ մը յայտնեց, որն որ ազնիւ տիկնոջ եւ իր անմեղ տղուն մահը իրեն նպատակ ունէր. եւ այնպիսի բան մը կը պահանջէր ինձմէ, որ չէի կրնար անոր մասնակից ըլլալ: Իմ երկայն ատեն ընդդիմանալուս հետեւութիւնն աս եղաւ որ կոմսուհւոյն սենեակը շղթայի զարնուեցայ, եւ երբոր աղեղնաւորները զիս բանտ կը տանէին, ամպարիչտը կրկին անգամ ապսպրեց, որ երկու ժամու մէջ անոր արիւնոտ գլուխը պիտ'որ տեսնեմ: Մէկ ցրտագին սարսափ մը բուր անդամներս ցնցեց: Բայց ես դարձեալ ինք իրենս եկայ, եւ շատ սիրով կը մեռնէի, թէ որ իմ մահուամբս իմ սիրելի տիկնոջս կեանքը կըրնայի գնել: Որչափ որ դժբախտ ու զարհուրելի էր իմ բանտս ու մնացած քիչ մը ժամանակը, աւելի զարհուրելի էր ազնիւ տիկին ձեր, ու անմեղ իշխանին վտանգներուն մտածմունքը: Արցունք թափելով Աստուծոյ կ'աղաչէի, չէ թէ ինձի համար, հապա անոնց համար, որոնք որ իմ պաշտպանութեանս յանձնուած էին, զորոնք դժբախտութեամբ ալ չէի կրնար պաշտպանել: Երբ որ այսպէս ծնկան վրայ կ'աղօթէի, բանտին դուռը խշրտոցով մը բացուեցաւ, եւ պանդուխտ մը ձեռքը լապտեր՝ առջեւս եկաւ կեցաւ: Ասիկա բանտապահն էր: Արայէս շղթաները քակեց, եւ հրամայեց որ շուտով ետեւէն երթամ եւ առաւ զիս գետնափոր ճամբով մը անտառ բերաւ: Եւ ես շնորհակալութեան արտասուօք իմ աղատիչս բազկացս մէջ առի: Բայց ինք շուտով բազկացս

մէջէն սրացաւ, եւ զիս ալ շուտ փախչելու յորդորեց, եւ իր բաժնուելու ատենն աս համառօտ խօսքերն ալ ըսաւ. սիրելի բարերար, թէ որ ինձի յաջողելու ըլլայ ձեր կեանքն աղատելու, երբ որ ուխտի երթամ՝ աստուածեղէն փրկչին գերեզմանին վրայ, սրտանց շնորհակալ կ'ըլլամ: Զիս անգամ մ'ալ ողջագուրեց, ու թաւ անտառին մէջ աներեւոյթ եղաւ: Ուստի իմ աղատչիս խորհրդին հետեւեցայ եւ ուրիշ ուղղութեամբ մ'սկսայ արտորնօք երթալ: Եւ որոշած էի, որ իմ եղբօրս քովը, սաքսոնիական սահմանին մէջ ապաստան մը փնտռեմ, եւ թէ որ հոն ապահով չեմ ըլլար նէ, աս պանդխտի զգեստով, զորն որ ինձի բանտապետը տուաւ, սուրբ երկիր պանդխտիմ: Ես յառաջագոյն հոս անտառներուն մէջ ըրած որսերէս, հոս տեղուանքս կը ճանչնամ, եւ անոր համար ալ դիւրաւ չեմ կորսուիր:

Իմ հալածիչներուս ձեռքը չիյնալու համար, մասնաւոր աս անտառին վայրենի կողմերն ընտրեցի, եւ ըստ ամենայնի նոյն ատենն էր որ միտքս դրած էի աւելի հաճոյական կողմ մ'երթալու, երբոր գաղտուկ այսպէս սրտաշարժ տեսարանի մը հանդիսատես եղայ: Բայց ո՛հ, ի՛նչպէս սիրտս կը զարնէր, երբ որ տեսայ թէ աղօթողները իմ սիրելի տիկինս եւ իրեններն են: Արովհետեւ կը խոստովանիմ, որ իմ սիրելի տիկինս եւ սիրելի իշխանս բանտի մէջ եւ կամ թէ մեռնողներուն կարգը կը կարծէի: Բայց հիմա ներքին ուրախութեամբ կը տեսնեմ որ Աստուած իմ աղաչանքս լսեր եւ ազատութիւն խաւրեր է: Ուրեմն ի՛նչպէս ազնիւ տիկին աս մօտակայ վտանգէն պրծաք:

Միջոցաբեթ իր հաւատարիմ քարտուղարին ազատութեան վրայ կ'ուրախանար եւ շատ կը ցաւէր որ, անոր հետաքրքրութիւնը չի կրնար գո՛հ ընել, որովհետեւ չյայտնելու երդում ըրած էր: Քարտուղարն անոր համար չի վշտացաւ:

Աստի նորէն փախստականներն ոտք ելան, իրենց առաջնորդը զիրենք ծանօթ ածխավաճառի տնակ մը տարաւ, ուր բնակիչքը, զիրենք շատ սիրով ընդունեցան, հիւրասիրութեամբ անոնց բնակելու տեղ հոգացին եւ առանձին խուց մը տուին: Քարտուղարին խորհրդովը, որն որ դարձեալ անապատական ձեւացած էր, միւսներն ալ երկրին զգեստը հագան: Աննան որն որ ոսկեզօծ բանուած քսակ մը հետը կը կրէր, հիւրասէր ածխավաճառի ընտանեաց առատ ստակ տուաւ. ճամբորդները հրաժարական տուին, անծանօթ եւ առանց վտանգի յաջողութեամբ սահմանը հասան, եւ քարտուղարին եղբօրմէն շատ սիրով ընդունուեցան:

ԳԼՈՒԽ ԺԸ.

Քշմարիտ ուրախութիւն:

Աս բաներէս շուրջ տարի մ'ետքը, երբ որ Գոնրատ կոմսը, Հունգարիայի թագաւորին մահուրնէ ետեւ, Պաղեստինէն հայրենիք դարձաւ, ամպարիչտ քրոջն անօրէն յատակագծին կատարմանը թեւ թիկունք ըլլալու համար, Պաղեստինի մէջ պատերազմը խաչակրաց վեասովը լմընցած էր: Իրենց բազմաթիւ զօրաց մեծ մասը կորսուած էր, ու հազարաւոր քաջ մարդիկ անպտուղ իրենց արիւնը թափած ու կեանքերնին զոհած էին: Մինակ փոքրիկ գունդ մը եւ անոնց գլուխը Փրեդերիկոս օրինաւոր կայսրը, մնացած էր: Բայց աս փոքր խումբն ալ, որոնք մահուրնէ պրծած էին, այնչափ շատ վէրքեր ունէին, որ պատերազմը յառաջ տանելու համար, ոչ սիրտ եւ ոչ ալ զօրութիւն մնացած էր վրանին: Անոր համար Փրեդերիկոս իր փոքրիկ գնդովն հայրենիք դառնալու պատրաստուեցաւ: Աս գարձողներուն մէջ կը գտնուէին Լուգովիկոսին անմահ բարեկամն-

րը, գորոնք Նախախնամութիւնը դժբախտ Եղիսաբեթին պաշտպանութեանը համար ողջ պահած էր: Ալլղերին անդադար աղաչանացը համար՝ դառնալու ճամբան Օդրանդոէն ըրին, ուր Լուգովիկոսին ոսկրոտիքը կը հանգչէին:

Հոս անմոռաց բարեկամին գերեզմանին քով դարձեալ սիրոյ ու բարեկամութեան նոր արցունքներ թափուեցան: Հանգուցելոյն ոսկրներն հանեցին, մէկ նոր մեծագին դագաղի մը մէջ դրին, մէկտեղ Թուրինգիա տանելու, ու ընտանեաց գերեզմանը դնելու համար:

Տխուր ու ցաւալի յիշատակներով նաւարկեցին ու յաջողութեամբ Պրինտիգիին նաւահանգիստը հասան: Ճամբան Հոռոմի վրայէն ըրին, եւ Քահանայապետը խաչակրաց արիւնահեղ ու դժբախտ ելքին վրայ ապշեցաւ մնաց: Բայց Գերմանիայի մէջ եղած ողբը շատ մեծ էր, երբ որ հայրենիք դարձողները այնչափ պատերազմի զոհերուն գոյժը բերին: Չկար դղեակ մը որուն մէջ հօր մը կամ որդւոյ մը վրայ չի լային: Ամէն կողմ անթիւ անհամար այրիներուն եւ որբերուն տըրտունջը կը հնչէր: Ալլղեր նոյն ատեն տիկնոջ ու իր բարեկամին տղուն ողբը կը մտածէր, եւ դառն ու ջերմ արտասուք կ'ինջեցընէր աչուրներէն: Բայց Աստուած զինքը կը մխիթարէ, կ'ըսէր, եւ իմ մնացած բոլոր օրերս զինքը մխիթարելու եւ անոր դժբախտութիւնը մեղմելու նուիրուած պիտ'որ ըլլան: Ստուգիւ կ'ուզեմ որք մնացած տղուն հայր ըլլալ, եւ զինքը մօրը մխիթարութիւն ըլլալու ու բոլոր Թուրինգիայի բարւոյն համար պիտ'որ կրթեմ: Այսպէս ինք զինքը կը մխիթարէր Ալլղեր, քանի անգամ որ սիրտը կ'ելլէր:

Լուգովիկոսին բարեկամները՝ նաեւ Պամպերկի պատուական Էքպէր Եպիսկոպոսին եկան, որն որ իշխանական տան հետ մերձաւոր ազգականութիւն ունէր: Եւ հոս ազնուական ասպետները մեծ զար-

մացմամբ դժբախտ Եղիսաբեթին եւ անոր մէկ-
 հատիկ որդւոյն զարհուրելի պատմութեան լուրն
 առին: Ալադեր գրեթէ բոլորովին ողբոց ու ցաւոց
 մէջ ընկղմած էր, որովհետեւ այսպիսի դժբախտ
 լուրի մը չէր սպասեր:

Այս սիրելի Լուդովիկոս, երջանիկ բարեկամ
 գոչեց Ալադեր իր ցաւոց առաջին զգածման մէջ,
 շատ գոհ եմ որ Աստուած զքեզ կանուխ իրեն
 առաւ, որպէս զի դուն աս ողբերը չի տեսնես
 որոնց տակ պիտ'որ հեծէիր: Ո՛հ դժբախտ տի-
 կին, խեղճ աղայ, ի՛նչ պիտ'որ ըլլայ ձեր թշուառ
 վիճակը: Ո՞ր բանտին մէջ արդեօք կը հեծէք, եւ
 կամ թէ աշխարհքիս որ անկիւնը աքսորուած,
 առանց հայրենեաց, աղքատ եւ ամէն հարկաւոր
 բաներէն զրկուած ու թշուառ կեանք կը վարէք:
 Կամ թէ արդեօք շատ բան կրելով, անգիի աշ-
 խարհք ձեր սիրելիներուն հետ միացած էք: Չէ,
 ամենակարող ու բարերար Աստուած այսպէս բարի
 եւ անմեղ մարդիկները թող տուած պիտ'որ չըլլայ:

Այսպէս կը հառաչէր ու կը քանքատէր ազ-
 նիւ Ալադեր, ու խելքն ու միտքը գիշեր ցորեկ
 աս դժբախտներուն վրայ էր: Ասպետները, էք-
 պէր եպիսկոպոսին քով քանի մ'որ ալ կեցան,
 որպէս զի դժբախտ տիկնոջ պաշտպանութեան
 համար պատրաստութիւն տեսնեն, թէ որ, իր
 տղուն հետ դեռ կենդանի է, ինչպէս որ կը յու-
 սացուէր: Ամէնը մէկտեղ յայսմ միաբանած էին
 որ ասպետաց մէջէն ամենէն ծերագոյնն ու զօրաւո-
 ըրը, այսինքն Ռուդոլփոս Պարիլացին, յառաջուրնէ
 թուրինգիա երթայ, եւ ամպարիշտ Գոնդորտիա կոմ-
 սուհին յօժարակամ կալուածներէն հրաշարելու եւ
 աքսորեալներն իրենց իրաւանցը մէջ հաստատելու
 յորդորէ: Եւ թէ որ խաղաղական ճամբով առ այն
 չի յորդորուիր նէ, ան ատեն բռնութեան ձեռք
 զարնուի, եւ նոյն իսկ հզօր կայսրը օգնութեան
 կանչուի:

Բայ Ռուզուլիոսը Վալդերին առաջնորդու-
թեամբն եւ միւս ասպետաց բարեմաղթուածին
ներով Պամպերկէն ճամբայ ելաւ, եւ իրենց ե-
տեւէն պատուական եպիսկոպոսին խորհրդովը
խուճը մը ճամբորդներ գացին դագաղով մէկ-
տեղ, որուն մէջ հանգուցեալ Լուզովիկոս կոմ-
սին պատուական մնացորդներն ամփոփուած էին:
Երգէն Թուրինգիայի սահմանին վրայ դժբախտ
ժողովրդեան տրտունջը կը լսուէր: Եւ որչափ
յառաջ կ'երթային, նոյնչափ բազմաթիւ ժողո-
վուրդ ասպետին ու դագաղին քով կը ժող-
վուէին: Գարձեալ հազարաւոր ջերմ արցունքներ
թափուեցան անմոռաց կոմսին դագաղին վրայ, ու
բիւրաւոր քանքատներ եւ ողբեր եղան դժբախտ
կոմսուհւոյն եւ անմեղ իշխանին բախտին վրայ:
Ոմանք իբրեւ մեռած՝ անոր վրայ կու լային, ու-
մանք ալ իբրեւ վտարանդեալ, ինչու որ անոր
վիճակը դեռ երկրին մէջ ամենուն անստոյգ էր:
Նաեւ շատերն ալ Գոնգորտիա կոմսուհին կ'անի-
ծէին, ու վրէժխնդրութիւն կը պոռային:

Շուտ մը չէ թէ մինակ թագաւորանիստ քաղ-
քին, այլ նաեւ բովանդակ գաւառին մէջ համ-
բաւը տարածուած էր, որ դժբախտ կոմսուհւոյն
եւ իշխանին բարեկամներն եկած են վրէժ առ-
նելու համար: Ուստի գունդ գունդ ժողովուրդ
ամէն կողմանէ քաղաքը կը թափուէին, անգութ
եւ անողորմ Գոնգորտիային իշխանութենէն մեր-
ժուիլը տեսնելու համար, որն որ ամբողջ տարի
մը խեղճ ժողովուրդը ընկճած ու չարչարած էր:
Նաեւ պատրաստ էին, ի հարկաւորութեան աս-
պետաց զէնքով օգնելու: Արովհետեւ բոլոր եր-
կրին մէջ, չկար մէկը որ Գոնգորտիային սէր ու-
նենար, եւ չկար մէկը որ Եղիսաբեթին նորէն իշ-
խանութեան հասնելուն չի բաղձար:

Ռուզուլիոս ու Վալդեր միայն անակնկալ ա-
պրտտամբութենէ մը կը վախնային, եւ որչափ որ

կարելի էր ժողովուրդը չափաւորութեան մէջ բռնելու կը ջանային:

Ասպետաց ու ճամբորդներուն իշխանական քաղաքը մտած ատեն, ամէնն ալ շարժման մէջ էր: Արք եւ կանայք, ծերք ու տղաք սգոյ զգեստ հագած դագաղին քով ժողովուեցան, ու բարձրաձայն կու լային կ'ողբային: Երկու ասպետաց, եւ մանաւանդ զգայուն Ալաղերին սիրտը կու տրած էր:

Իսկ իշխանին դղեկին մէջ մեծ շիտթութիւն ու վարանք կը տիրէր: Ամէնն ալ, պաշտօնեաներէն սկսեալ մինչեւ ստորին ծառան, ահ ու դող մէջ էին: Որովհետեւ աղէկ գիտէին թէ տիկնոջ կործանումը իրենցն ալ է միանգամայն: Տկարներն ու թոյլերը միտքերնին դրած էին, որ փախչին եթէ գործքերը գէշնալու սկսին: Ամենէն աւելի անարժան Գոնգորտիան աս մտաց վրայ էր: Եւ երբոր իրեն ծանուցին թէ եկողները մինակ երկու ասպետ ու քանի մը ճամբորդներ են, ծիծաղով մ'իրենց այսպէս պատասխան տուաւ. թող որ գան, ան երկու սէգ եւ ամբարտաւան ասպետները զիս կարծածներէն աւելի հաստատուն պիտ'որ գտնեն: Եւ եթէ հարիւր հոգի ալ ըլլային, աներկիւղ ու համարձակ անոնց դիմացը կ'ելէի:

Աւստի անմիջապէս փառաւոր զարդարուեցաւ, որչափ որ կրնար, ունկնդրութեան սրահը գնաց, եւ ասպետներուն թոյլ տուաւ որ ներս մտնեն:

Աւնկնդրութեան սրահին դուռը բացուեցաւ, եւ երկու ասպետաց տեղ մինակ մէկ հատ մը մտաւ, այս ինքն Ռուդոլփոս Պարիլայի կոմսը: Ասիկակ ամբարտաւան տիկնոջ իշխանութեամբ ու ծանրութեամբ մը մտտիկցաւ, որն որ զինքը խոռվութեան մէջ ձգեց. ինչու որ եկողը Պարիլայի կոմսն էր, որն որ երկրին ազնուականներէն ամենէն մեծն էր, եւ որմէ որ ամէն մարդ կը վախ-

նար ու զինքը միանգամայն կը սիրէր : Բայց ի վերայ այսր ամենայնի, երկայն ատեն մտածելով դարձեալ ինքն իրեն եկաւ ու շողորորական բարեկամութեամբ եւ ուրախութեամբ կոմսին ընդունելութիւն ըրաւ :

Բարով եկաք ազնիւ կոմս, ըսաւ խորամանկ օձը, բարեկամաբար ասպետին թեւէն բռնեց, ու կ'ուզէր զանիկա մէկ փառաւոր արծաթէ ու ոսկիէ վարդարուած սրահ մը տանիլ, որուն մէջ զինքն իր քովը պիտ'որ նստեցընէր : Բայց քաջ ու համարձակ Ռուդոլփոս, որն որ Գոնգորտիային կարծածէն շատ աւելի պայծառ կը տեսնէր եւ աղէկ կը մտածէր, ամենեւին աս մեծարանքներէն չչլացաւ, հապա ծանր կերպարանքով մ'աս իրեն տրուած մեծարանքը իրմէ մերժեց, եւ իշխանական կերպով ու ծանրութեամբ մը կեցաւ կոմսուհւոյն առջեւը :

Ռուդոլփոս ծանր դէմքով ու վեհութեամբ մը սկսաւ : Տիկին, քիչ օր է որ ես բարեպաշտ Լուդովիկոսին, ձեր ազնիւ, բայց հանգուցեալ որդւոյն բարեկամներուն եւ ուրիշ քաջ ասպետներուն հետ Պաղեստինէն դարձած եմ : Եւ մենք անմոռաց բարեկամին գերեզմանին վրայ երգում ըրինք, որ յաջողութեամբ դառնալէն ետեւ մեր առաջին քայլը դէպ ի Թուրինգիա դարձընենք, եւ մեզի առաջին ու փութով ըլլուելու գործք համարինք տառապեալ պրին, ազնիւ Եղիսաբեթը մխիթարել, զինքն իբրեւ տիրող կոմսուհի յարգել, եւ իբրեւ հայրենի բարեկամներ երիտասարդ իշխանին, իբրեւ ազագայ կոմս, կրթութեանը հոգ տանիլ : Տիկին, ո՛ւր է ազնիւ Եղիսաբեթը. եւ ո՛ւր կը գտնուի երիտասարդ իշխանը, մի միակ ժառանգ եւ օրինաւոր յաջորդ իր բարեպաշտ հօրը :

Ես անակնկալ հարցման, եւ հզօր կոմսին բողեղէն նայուածքին եւ ահարկու ձայնին վրայ, որն

որ զինքը սարսափեցուց, Գոնգորտիան տժգունեցաւ եւ քանի մը քայլ ետեւ գնաց :

Ուր են Եղիսաբեթ ու Հերման, հարցուց անգամ մ'ալ որոտման ձայնով, ու բարկացած նայուածքով մ'իշխանուհւոյն մօտիկցաւ, իսկ անիկա միշտ դողալով ետ կը քաշուէր, մինչեւ որ ան տեղը հասաւ ուր որ դրան զանգակին չուանը կախուած էր : Քանի մ'անգամ զօրաւոր զանգակը զարկաւ, բայց ոչ ծառայ եւ ոչ ալ աղախին մ'երեւցաւ : Ոչ որ կ'ուզէր երեւնալ :

Ո՛հ չորս կողմն մատնիչները պաշարած են, պոռաց Գոնգորտիան բարկութեամբ բորբոքած :

Չէ, ըսաւ հեղութեամբ Ռուդոլփոս, իմ բարի իշխանիս մայրն ասկից պէտք չէ վախնալ : Զձեզ իբրեւ իշխանուհի կ'ատեմ, բայց իբրեւ իմ բարեկամիս մայր, կը մեծարեմ : Թէ որ կրնաք իմ առջի հարցմանս բարի խղճիւ պատասխան տալ, ան ատեն ամենեւին վախնալու բան չունիք, թէպէտեւ զձեզ բոլոր ծառաները թողուցած ըլլան :

Գոնգորտիա երբեմն կը ճերմկնար, երբեմն կը կարմրնար, եւ սրտին մէջ մեծ պատերազմ կար : Քայց քանի մը ըրպէ տքն առջի յամառ եւ ասպարիշտ կինն եղաւ :

Լ'զնիւ կոմս, իր սովորական անամօթութեամբը խօսելու սկսաւ. Գուք զիս խռոված ու վախցած տեսաք, այնպէս է. բայց չէ թէ ձեր հարցումը, հապա ձեր բորբոքած աչուրները, որոնց մէջ մատնութիւն ու սպանութիւն կը նըշմարէի, զիս խռովութեան եւ երկկիւղի մէջ ձգեցին : Ուստի հիմա ներեցէք, սիրելի կոմս. իմ սխալմունքս կը ճանչնամ, եւ հիմա դարձեալ հանդարտած եմ : Նաեւ ձեր սրտին վրայ ապահով եմ որ ասոր համար չէք բարկանար :

Կոմսը, աս անամօթ շողոքորդութեամբ թշնամանուած, կ'ուզէր քանի մը բան ըսել, բայց շօթութունքները խածաւ ու լռեց, անոր խօսքը չընդ-

միջելու համար: Եւ շողքորդը յառաջ տարաւ
խօսքը:

Ա՛ռւղէք ինձմէ գիտնալ Տէր կոմս, թէ ո՞ւր են
իմ հարսս ու թոռս, ասոր վրայ դուք ինչ որ
գիտէք ես ալ նոյնչափ գիտեմ, մինակ Աստուած
գիտէ: Տարիէ մ'աւելի է որ երկուքն ալ դղե-
կէն աներեւոյթ եղած են, ամէն կողմ մարդ
խրկեցի, բայց ամէն խուղարկութիւններն անօ-
գուտ եղան, մինչեւ հիմակ իրենց վրայ ամենեւին
հետք մ'ալ չյայտնուեցաւ: Տէր կոմս, հաւատա-
ցէք ինձի որ անկից ի վեր անոնց համար շատ
լացի: Եւ քանի մը ժամ անոնց վրայ մտածեցի
եւ գլուխս ճաթեցուցի, իրենց այսպէս յանկարծ
աներեւոյթ ըլլալուն պատճառը գտնելու համար,
բայց չի յաջողեցաւ: Ծառայիցս մէջէն մէկ քա-
նին կը հաստատեն թէ տիկնոջ, իր էրկանն ու
հօրը մահուան լուրը առած օրէն ի վեր, խելքը
կորսնցուցածի պէս դղեկին քովերը պտրտելը
տեսած ըլլան: Եւ ան օրէն ետեւ աներեւոյթ ե-
ղած են: Խեղճները: Գժբախտները: Եւ սկսաւ
աչուրներէն արցունք գալ:

Իաւական է, տիկին, հերիք համբերութիւնս
փորձեցիր, ահարկու ձայնով մը այնպէս մը որո-
տաց Ռուդոլփոս, որ խոշոր սրահը զարհուրելի
արձագանք կու տար: Ի՞նչ դիմացիննիդ խենդ-
կամ տղայ կը կարծէք, որուն խաբէութեամբ
ու շողքորդութեամբ լեցուն սուտ պատմութիւն
մը, իբրեւ ստոյգ հաւտացընել տար: Ի՞նչ, կը յու-
սայիք որ ձեր ծանր յանցանքը ծածկուած կը
մնայ: Չէ, արդէն յայտնի ու ծանօթ է, բոլոր
քաղաքը գիտէ, եւ անոր համար երկիւնքէն զա-
նոնք սպանողներուն վրայ վրէժխնդրութիւն կը
խնդրէ:

Աս րոպէիս մէջ կոմսուհին պատուհան բանալ
ձեւացուց, կէս մը երեսը կոմսէն ծածկելու կէս
մ'ալ օդ առնելու համար: Նոյն ատեն վարը բա-

կին մէջ բազմութիւնը պողած, տենէք մարդասպանը, թշուառական, ուր է Եղիսաբեթն ու Հերման, կ'ուզենք զիրենք:

Աղաղակաւ մը կոմսուհին մարած կոմսին բազկացը մէջ ինկաւ: Ասիկա զինքը բազմոցին վրայ տարաւ, ուր դարձեալ ինք իրեն եկաւ: Արթըննալուն պէս, վայրենի աչուրներով կոմսին վրայ ինկաւ:

Ղեռն հոս ես, անիծեալ մարդ, հարցուց կինը զկոմսը հրելով:

Հրամբես տիկին, պատասխանեց Ռուդոլփոս, եւ զձեզ պիտ'որ չի թողում մինչեւ որ իմ դժբախտ կալուածատիրոջս վիճակը չտեղեկանամ: Խօսէ, աղէկ կամ գէշ, մեռած է թէ ողջ:

Անգամ մ'ըսի ձեզի Տէր կոմս, որ ես ալ ձեզի չափ գիտեմ անոր վիճակը, պատասխանեց յամառ յանցաւորը, եւ կ'ուզէր սրահը թողուլ երթալ:

Տեղէդ մի շարժիր, որոտաց իրեն բարկութեամբ Ռուդոլփոս, հոս կեցիր եւ խօսէ: Գիացած ըլլաս որ բոլոր գերմանացի ասպետներն եւ նոյն իսկ կայսրը գիտեն, որ գուն եւ քու եղբայրդ բռնութեամբ ու նենգութեամբ եւ գուցէ սպանութեամբ իշխանութիւնը քեզի գրաւած ես: Ապահով եղիր որ աս յանցանքն անպատիժ պիտ'որ չմնայ: Եթէ չես հաւատար որ յաւիտենական դատաւորին առջեւ համար պիտ'որ տաս՝ գոնէ մեր վրէժխնդրութեան սուրէն վախցիր:

Գոնգորտիա սաստիկ խռոված էր, անդամները կը դողային, շրթունքները ջղաձգութեամբ իրարու կը զարնէին, բայց ամենեւին չխոստովանեցաւ:

Տիկին, ըսաւ կոմսը ծանրութեամբ, դժբախտներուն վիճակը վերջին անգամ մ'ալ կը հարցունեմ: Խաւար բանտի մէջ կը հեծեն, թէ աքսորուած են կամ թէ սպանուած:

Ղեկէն աներեւոյթ եղած են, չեմ գիտեր ուր, պատասխանեց յամառութեամբ:

Յամառ զբեղ, պուռաց Ռուդոլփոս բարկութեամբ: Ներեցէք ինձի, վերէն երանեալ բարեկամ, որ այսպէս ձեր մայրը կը ստիպուիմ նախատել, գոչեց Ռուդոլփոս այլայլած եւ արցունքն աշուրները:

Եւ վերջին խօսքերը կ'երեւայ որ Գոնգորտիային սրտին մեծ ազդեցութիւն ըրին, ինչու որ աշուրներէն ջերմ արտասուք գալու սկսաւ եւ կը հեծկտար:

Ռուդոլփոս ուզեց ասկից օգուտ հանել, եւ նշան մը տալուն պէս սրահին դռները բացուեցան, որմէ չորս բեռնակիր սեւ ծածկուած դագաղով ներս մտան:

Եւ հաւաստիկ ձեր որդւոյն պատուական ոսկրոտիքը ըսաւ կոմսը լալով: Ալալդերն ալ կ'ուզէր կոմսուհւոյն մօտիկնալ, բայց անիկակ երեսը բազմոցին բարձին մէջ ծածկեց, ու կտրած ձայնով շատ անգամ գոչեց, թող տուէք զիս, խնայեցէք տկարութեանս, ամէն բան կը խոստովանիմ: Բեռնակիրները դագաղով հեռացան գացին, մինակ Ռուդոլփոս ու Ալալդեր հոն մնացին:

Եւ նանկ է նէ, ըսէ տեսնենք ըսաւ Ռուդոլփոս, հոս ես ու իմ բարեկամն կանք:

Ի այց յամառ կինը, խաբէութեամբ աղաչեց որ մէկ քանի ժամ խելքը գլուխը գալու համար պառկելու սենեակն երթայ եւ վերջէն մանրամասն կը խոստովանի: Այնպէս այլայլած աղաչեց, եւ այնպէս ինք զինքը տկար ցուցուց որ ազնուական ասպետներն ի գութ շարժեցան ու խնդիրքը կատարեցին:

Երբ որ կոմսուհին իր խուցը գնաց հանգիստ առնելու համար, երկու ասպետներն իրենց բարեկամին պատուական մնացորդներուն փառաւոր թաղման պատրաստութիւն տեսան: Բոլոր ներկայ եղող ժողովուրդը անկեղծ արտասուք ինջեցընելով տխուր հանդիսին ներկայ էին: Յաւը դար-

ձեալ մեծ էր, եւ երկու բարեկամները խիստ շատ կու լային: Այնիւ իշխանին անգին մնացորդներն հօրն ու մեծ մօրը մնացորդներուն քով զեռեղեցին:

Ասոր վրայ գրեթէ երկու ժամ անցած էր: Երկու ասպետները, սրտի բախմամբ, կոմսուհւոյն խուցը գացին, ու վախերնէն կը դողային, որ դժբախտ բան մը պիտ'որ տեսնեն: Բայց ինչպէս ապշեցան մնացին, երբոր խուցը բաց ու պարապ գտան: Գոնգորտիան դղեկին ամէն խուցերը փրնտուեցին, անոնք ալ նոյնպէս դատարկ գտան: Ո՛չ կոմսուհին, ո՛չ եղբայրը եւ ո՛չ ալ ծառաներէն հատ մը դղեկին մէջ գտան: Ամէնն ալ աներեւոյթ եղած էին: Ասոր վրայ ասպետներն ու ժողովուրդը խիստ զայրացած փախստականներուն ետեւէն զանազան ուղղութեամբ մարդ խաւրեցին:

Բայց ամէնն ալ մէկիկ մէկիկ պարապ ետ դարձան: Միայն՝ ամէն բանտերը գացին նայեցան որ գուցէ դժբախտ Եղիսաբեթն եւ իր որդին անոնց մէկուն մէջ կը գտնեն: Բայց բոլոր աշխատութիւննին անօգուտ եղաւ: Ամենուն համար աստառապեալներուն վիճակին վրայ ունեցած աստուգութիւնը տանջանք մըն էր:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ.

Կոռսսուսաց վանքը:

Բոլոր Թուրինգիա խիստ սիրելի Եղիսաբեթին ու յուսալից իշխանին վրայ ողբացած ատեն, ասոնք սաքսոնիայի սահմանին մէջ տարիէ մ'աւելի ապահովութեան մէջ էին, եւ Աննային հետ ծածկուած անծանօթ կ'ապրէին, խաղաղ ու գոհ բարեպաշտ Բենետիկտեանց մէկ վանքին մէջ: Աս վանքն առանձին գեղեցիկ ձորի մը մէջ էր, հազիւ քանի մը ժամ հեռու նոյն հիւղէն, որուն խաղաղ յարկին տակ քանի մ'օր անապատականին հետ քաջ եւ առաքինի ամխափաճողին հիւ-

րասիրութիւնը վայելած էին: Աս առաքինի մարգր, եւ նոյնպէս իր բարի ամուսինը, աշխատած էին իրենց պատուական, բայց դժբախտ հիւրերուն, իրենց խաղաղ յարկին տակ տուած բնակութիւնը, որչափ կարելի է հաճոյարար ընելու: Քանի մ'օր հանգչելէն անմիջապէս ետքը, անպատականը մերձակայ կուսանաց վանքը գացած էր, աբասուհւոյն, որն որ բոլոր ան կողմերը, իբրեւ բարեպաշտ եւ հիւրասէր կին մը ճանչցուած էր, աս դժբախտ հալածեալները ընդունելու աղաչելու համար: Իր աղաչանքն անմիջապէս լսելի եղաւ, եւ դժբախտները քանի մ'օրէն Աստուծոյ տան մէջ սիրով ընդունուեցան:

Աբասուհին սաքսոնիացի հարուստ կոմսի մը աղջիկն էր, շատ կանուխ՝ հայրն ու մայրը կորսընցուցած էր, եւ իբրեւ թողեալ լքեալ որբ մը, իր ընչաքաղց հօրեղբօրը զոհ եղած էր: Ուստի եւ այսպէս ծաղիկ հասակին մէջ վշտաց բաժակը խմելու սկսած էր, եւ աս վանքին պատերուն մէջ իր համբերող սրտին համար ան ներքին խաղաղութիւնը գտած էր, զորն որ իրմէ ազահութիւնն ու մարդկային անգթութիւնը յափըշտակած էին: Իր հոգւոյն առաւելութիւնները եւ իր առաքինութիւնները կուսանք աղէկ ճանչցած էին ու կը յարգէին, եւ զինքը իր նախորդին մահուրնէ ետեւ միաբերան յաջորդ ընտրած էին: Բոլոր վանքն այնպիսի իմաստութեամբ, սիրով ու հեզութեամբ կը կառավարէր, որ ճշմարիտ քրիստոնէական հոգի մը աս խաղաղ Աստուծոյ տան մէջ կը բնակէր: Անոր մէջ կը տիրէր, անգորր խաղաղութիւն, քեռական միութիւն ու սէր: Բարեպաշտ եւ աղնիւ աբասուհին ծերագոյն կուսանքները քրոջ պէս կը սիրէր, իսկ կրտսերները աղջկանը պէս, նոյնպէս ասոնք ալ զինքը մօր պէս կը սիրէին ու կը մեծարէին: Ալօթել, երգել ու բարեգործութիւն ընել իրենց

օրական կանոններն էր, եւ իրենց դուռը բաց էր ամէն դժբախտ կանանց՝ որոնք հոն մխիթարութիւն ու պաշտպանութիւն կը գտնէին: Քանի քանի հալածեալ այրիներ, ու քանի քանի մերժուած որբեր աս Աստուծոյ տան մէջ ապահով ապաստանարան ու հանդարտ բնակութիւն գտած էին: Աս Բենեդիկտեան կուսանաց բարեպաշտութիւնն ու բարեգործութիւնը բոլոր գեղին մէջ ծանօթ էր եւ շատ համարում ստացած էին:

Աս սիրոյ, խաղաղութեան ու միութեան տան մէջ մտան դժբախտ հալածեալները, առաքինի ածխավաճառին ընտանիքէն շնորհակալութեամբ հրաժեշտ ընդունելէն ետեւ: Ո՛հ, ինչպէս աս ընդունելութիւնը դժբախտներուն սրտին վէրքին զիւրութիւն տուաւ: Մարդասէր արասուհին, որն որ դժբախտութեան ու վշտաց ինչ ըլլալն անձնական փորձովը գիտէր, զերենք իբրեւ օտարական չընդունեցաւ, այլ իբրեւ քոյր: Իրենց խուց մը ցուցուց, որն որ ստոյգ է փառաւոր չէր, բայց մաքուր շտկուած հանգիստ եւ ընդարձակ էր: Տառապեալները շնորհակալութեամբ նոյն խուցը ընդունեցան, եւ ամէն օր ալ նոր նոր բարերարութիւններով կը լեցուէին: Աբասուհին իրենց ամէն օր այցելութեան կ'ելէր, առանց հետաքրքրական հարցումներ ընելու, իրենց ո՛վ ըլլալն իմանալու համար: Անոնց առաքինի մարդիկ ըլլալը գիտնալը իրեն բաւական էր: Եւ շուտ մ'ալ իմացաւ տեսաւ որ իր հիւրերը հասարակ մարդիկ չեն, այլ բարձր եւ ազնուական ցեղէ են: Բայց իր յարկին տակ բնակողները Թուրինգիայի կոմսուհին ու ժառանգ իշխան ըլլալը չէր կարծեր: Ինք ամենեւին քննած չէր, մինակ նոյն իսկ տառապեալ Եղիսաբեթին բերնէն լսեց:

Եղիսաբեթ իրեններովն աս բարերար արասուհիէն այնչափ շատ սէր, բարեկամութիւն ու վստահութիւն վայելեց, որ մեծ ապերախտութիւն

ըրած կ'ըլլար, թէ որ աս ազնիւ տիկնոջ երկայն
 ժամանակ սիրտը չյայտներ: Ասոր համար ալ աս
 բարերարութեան բոլոր սիրտը բացաւ, եւ անիկակ
 ամէն բանի տեղեակ ըրաւ: Բարի արասուհին քիչ
 չէր զարմացած ասոր վրայ, եւ կ'ուրախանար որ
 Նախախնամութիւնն իրեն աս բախտը տուեր է,
 որ կարենայ ծառայել Թուրինգիայի դժբախտ իշ-
 խանութեան, որուն վրայ որ շատ գեղեցիկ ու
 համբաւաւոր բաներ լսած էր, եւ այսպիսի առա-
 քինի ու բարեպաշտ կնոջ մը հիւրասիրութիւն
 ընէ իր Աստուծոյ տան մէջ: Ստոյգ է որ անոր
 գաղտնիքը յայտնելէն ետեւ քանի մ'որ վրան
 կասկածներ ունեցած էր, բայց աս կասկածը բո-
 լորովին փարատեցաւ, եւ Եղիսաբեթ, արասուհին
 ու Աննան քանի մ'օրէն իրարու ներքին ու մտե-
 ըրիմ բարեկամ եղան: Ո՛հ, ինչպէս ստեպ շնոր-
 հակալ կ'ըլլար Եղիսաբեթ Աստուծոյ զինքն աս
 սուրբ տունը բերելուն եւ անոր մէջ այսպէս
 հրեշտակային եւ անգին բարեկամ մը գտնել տա-
 լուն համար: Իր տրտմութեան ժամանակ կրնար
 աս նոր բարեկամին երթալ եւ անոր մխիթարա-
 կան խօսքերէն իր վիրաւորուած սրտին բուժիչ
 բաղասմովն գտնել: Աս նոր բարեկամութեան հա-
 մար շատ շնորհակալ կ'ըլլար, որովհետեւ ասով
 իր սիրելի ամուսինն ու ծնողքը կորսնցընելով
 ունեցած սրտին ցաւը ան օրէն ի վեր մեղմացաւ,
 եւ իր տխուր սիրտը դարձեալ խաղաղ ու տնա-
 կան ուրախութեան ընդունակ եղաւ: Եւ երբ որ
 դարձեալ տխրութիւն կու գար վրան, ան ա-
 տեն կ'առնուր քնարը, զորն որ արասուհին պար-
 գեւ տուած էր, ու վարժ ձեռուրներով քաղ-
 ցրածայն կը հնչեցընէր, միանգամայն քաղցր եր-
 գելով: Եւ երգածը բարեպաշտ երգ մըն էր,
 զորն որ ամէն անգամ երգելուն, դարձեալ կը
 մխիթարուէր կը զօրանար ու կը հանդարտէր:

Մ'այլայլիր, անձն իմ, Փրօղկչիդ մըտիկ 'րէ .
 Յորչափ Տէրն ուզէ, կ'ըսէ, համբերէ .
 Ինքն է որ ամէն մահացուաց կրբած
 Վըշտերուն՝ սահման, վախճան է գըրած :

Ինչպէս մաղերը մարմնոյդ կատարին,
 Նոյնպէս ալ կենացդ ամէն մէկ տարին,
 Բոպէն, վայրկեանը, համրուած են ճիշտ,
 Սիրտ առ, քաջ եղիր, մ'ըներ հոգ կամ վիշտ :

Կըռուէ, տար սիրով, ինչպէս ես տարի,
 Քանի մը օր չէ՝ երեսուն տարի:
 Թէպէտ եւ մարդիկ արիւնըս տեսան
 Չիթենեաց լեռնէն մինչեւ Գողգոթան,

Բայց ես Բեթղէճէմ, թեեւ անմըռունչ,
 Երուսաղեմի վշտացն անտրրտունջ
 Բաժակը խմեցի՝ կանխատեսութեամբ,
 Երբ կ'առնոյի կոյս մօրըս կաթին ջամբ :

Կ'ընծայէ՞ Աստուած քեզի լի բաժակ,
 Ու շատ մը վըշտաց կը զըրկէ ճաշակ .
 Ո՛հ . խոնարհական հոգւով ընդունէ,
 Ու "իմ" չըկրցածս (ըսէ) ինք կ'ընէ" :

Ըստպէս նաեւ օր մը Եղիսաբեթ սփոփութիւն
 ու զօրութիւն փնտռելով աս երգը քնարով եր-
 գած ատեն, մէյ մ'ալ արասուհին վերջի տունին
 ներս մտաւ: Շատ կը ցաւիմ որ զձեզ սիրելի
 բարեկամ ընդմիջեցի, ըսաւ արասուհին ինք զինքն
 արդարացընելով: Բայց հարկաւոր էր, զարմանալի
 գէպը մ'ստիպեց որ աս բոպէիս մէջ ձեզի հետ
 խօսիմ: Աս առտու խել մը գեղացիներ եւ քանի
 մ'ածխավաճառներ վանքին դուռը եկան, եւ ա-
 ղաչեցին որ իրենց անտառին մէջ խեղճ վիճակի
 մէջ գտած գժբախտ կնիկն ընդունիմ: Գունապան
 աղջիկն անմիջապէս ինձի ծանոյց, ես ալ դուռն
 ինջաց, բայց ինչ զարհուրելի տեսիլ: Չափաւոր
 մարդկան բազմութեան մէջ, որն որ ամէն բոպէ
 երթալով կը շատնար, կատաղի կին մը զօրաւոր
 ածխավաճառներու հետ կը կուռէր, որոնք հաղիւ
 կրնային զինքը կապել: Աս կատաղի կնոջ մաղերն

անկարգ ցիր ու ցան ուսերուն վրայ կախուած էին, եւ հագած մեծագին զգեստը խառնաշփոթ եւ ամէն կողմանէ բռնութեամբ պատռած էր: Տառապեալ կնոջ աս խեղճ վիճակը, որն որ բրած զարհուրելի հայհոյութիւններովն ու չարամաղութութիւններովն աւելի սոսկալի կերպարանք մը կ'ունենար, զիս այնպէս մը խռովեց որ բոլոր անդամներովս դողալու սկսայ: Ժողովուրդը կ'աղաչէր որ Աստուծոյ սիրոյն համար աս դժբախտին վրայ ողորմիմ եւ զինքը վանք առնում:

Աս տառապեալն անմիջապէս առանձին հիւրանոցը տանել տուի, մեր բժիշկը կանչեցի, եւ ամէն հարկաւոր բաները հոգալու պատրաստութիւնը տեսայ:

Բժիշկը եկաւ եւ ծանոյց որ ստուգիւ խենթեցած է: Եւ այնպէս սաստիկ կը կատողէր կինը որ բժիշկը ձեռուրներէն ու ոտուրներէն կեցած տեղը կապել տուաւ: Ինչու որ երեք զօրաւոր մարդ հագիւ կրնային հաստատուն բռնել:

Արբոր կապուեցաւ, եւ ալ չէր կրնար կատաղութիւն ընել, կամաց կամաց խաղաղցաւ: Իր վայրենի աչուրները խուցին մէջ չորս կողմը կը պտըտցընէր, սպանութեան եւ ամէն տեսակ սոսկալի բաներու վրայ կը խօսէր: Զանազան արտաբերած անուններուն մէջ ձեր եւ իշխանին անունները շատ անգամ կ'արտաբերէր: Ասոր վրայ զարհուրեցայ, բայց անմիջապէս ինք զինքս ժողվեցի, բժշկին ու ներկայ եղողներուն չիմացընելու համար: Անմիջապէս հեռացայ ու վաղեցի եկայ որ աս սոսկալի տեսարանը ձեզի հաղորդեմ: Միւրելի տիկին դուք զինքը ձանչնաք պիտ'որ, ինչու որ ձեր եւ իշխանին անունները յիշատակեց:

Աբասուհւոյն պատմութիւնը՝ կոմսուհւոյն սոսկում պատճառած էր: Եւ որովհետեւ շերման Աննային հետ պարտեղն էր, անոր համար ամենեւին դժուարութիւն չի ցուցուց իրեն հետ տա-

ուսուցանելու կնոջ խուցն երթալու : Զարհուրելի խորհուրդներ ու մտածմունքներ իր ներսիդին տակն ու վրայ կ'ընէին :

Աբասուհուցն աղաչանօքը քիչ մ'ատենուան համար ամէն մարդ խուցը թող տուին դուրս ելան : Երկու տիկնայք դողդողալով ներս մտան : Խելագար կնիկն իր աչուրները դէպ ի դուռ դարձուց : Երբ որ Եղիսաբեթ աս խեղճ կնոջ մօտիկնալ կ'ուզէր, ահարկու ձայնով մ'աբասուհուցն բաղկացր ձեջ ինկաւ կէս մը մարած, որն որ նոյնպէս զարհուրելի ձայն մը հանեց : Ասոր վրայ բժիշկն եւ իրեն հետ միւսներն ալ խուցը վազեցին : Անմիջապէս Եղիսաբեթն աս խուցէն առին եւ իր խուցը տարին, ուր դարձեալ խելքը գլուխն եկաւ :

Բժիշկը հեռանալէն ետեւ Եղիսաբեթ կարեկցութեան արցունք թափելով սաստիկ ցաւով մը գոչեց . Ո՛հ Աստուած ողորմի, դժբախտ կինը իմ մեծ մայրս է, թուրինգիայի այրի կոմսուհին, որն որ իմ ու որդւոյս կենաց ետեւէն ինկած էր : Տէր Աստուած, ինչպէս խենթեցեր է, եւ ինչպէս առանձին հոս կրցեր է գալ : Ի՞նչ ձախող բան պատահեր է արդեօք թուրինգիայի մէջ : Արդեօք ժողովուրդն իրեն դէմ ապստամբած է զինքն անհետ ընելու համար, եւ ինքն ալ հպարտութենէն ու յուսահատութենէն աս խենթութեան վիճակին մէջ ինկեր է : Ո՛հ, ողորմի իրեն Աստուած, եւ զինքն աս խենթութեան մէջ մեռնելու չթողու, որպէս զի անոր անմահ հոգին յաւիտեանս չկորսուի :

Երբոր Եղիսաբեթ կ'ողբար ու կ'աղաչէր, Աննան ու Հերմանն անապատականին հետ ներս մտան, որն որ իրեն կ'ուզէր այցելութիւն ընել : Բայց ինչպէս զարմացաւ մնաց աս զարմանալի դէպքին վրայ : Բարեպաշտ անապատականը ձեռուրները միացուց, աչուրները դէպ ի երկինք վերցուց ու լալով գոչեց . Աստուծոյ գործքն է

ասի, այսպէս կը պատժէ մոլութիւնը՝ եւ առաքինութիւնը կը պաշտպանէ: Ասոր վրայ ելաւ անձամբ տառապելոյն գնաց, իր աչքովը տեսնելու ու համոզուելու համար:

Ի այց նորէն դարձաւ եկաւ, ճշմարտութիւնը հաստատեց եւ ըսաւ. Զարմանալի են Աստուծոյ ճամբաները, ինք իրենները չի թողուր: Ազնիւ տիկին, սիրելի իշխան, ուրախացէք. ինչու որ ես այսպէս կը կարծեմ թէ Աստուծոյ վրէժխնդրութեան օրը, եւ ձեր ազատութեան ու սիրելի հայրենիքը դառնալու ժամանակն եկած է: Այսօրուքնէ, սիրելի տիկին, ձեզմէ կը հրաժարիմ եւ Թուրքիա կ'երթամ եւ Աստուած կ'ուզէ նէ, աղէկ լըով մը դարձեալ ձեզի կը դառնամ:

Անպատականն իրօք ալ նոյն ժամանակը հրաժեշտ ընդունեցաւ, եւ միւսներէն զանազան բարեմաղթութիւններ ընդունելով գէպ ի Թուրքիա ճամբայ ելաւ:

Գ Լ Ո Ւ Ն Ի .

Ռուսիոն թիւնն ու ցնծոն թիւնն թոյր երկրին մէջ:

Գոնգորտիա կոմսուհւոյն եւ իր բոլոր պալատականներուն այսպէս յանկարծ աներեւոյթ ըլլալէն ետեւ, գումարուած ժողովուրդն հզօր եւ ամենէն սիրուած Ռուզորիոս Պարիլայի կոմսը տէրութեան խնամակալ անուանեցին, եւ ազնիւ Վալդերն ալ դժբախտ ու տառապեալ Եղիսաբեթն ու սիրելի իշխանը փնտռելու պատրաստութիւն տեսնելու սկսաւ: Զանազան ուղղութեամբ թէ ձիով ու թէ ոտք սուրհանդակներ գացին. նոյնպէս Վալդերն ալ Ռուզորիոսէն հրաժեշտ ընդունեցաւ, եւ իրեն Թուրքիայի ընդարձակ անտառին վայրենի կողմերը ընտրեց, հաստատուն յուսով որ զտառապեալները, Աստուծոյ առաջնորդութեամբ ծածկուած ճգնարանի մը մէջ կը

գտնէ: Աս իշխանական տան այնպէս հաստատուն կապուած էր, որ անոր ջնջուելը մտքէն չէր անցներ:

Չէ, չէ, գոչեց Վալդեր Աստուծոյ վստահութեամբ, այսպիսի ազնիւ ու բարեպաշտ իշխանական ընտանիք մը Աստուած ջնջելու կորսուելու թող տուած պիտ'որ չըլլայ: Խորհուրդներս ինձի կ'ըսեն թէ Եղիսաբեթն ու Հերման դեռ կ'ապրին, եւ Աստուծոյ նախախնամութիւնը որ անմեղներուն ու առաքինիներուն վրայ կը հսկէ զիրենք պաշտպանած է, եւ ես զիրենք դարձեալ պիտ'որ գտնեմ եւ տեսնեմ: Ո՛հ Տէր, թող որ, յառաջ քան մեռնելս, աս աշխարհքիս մէջ աս ուրախութիւնս ալ ունենամ: Այո՛, դեռ պիտ'որ ապրիմ, եւ շուտ մը իմ սիրելի հայրենիքս Եղիսաբեթին մայրական կառավարութեան տակ երջանիկ պիտ'որ տեսնեմ: Ո՛հ, ան ատեն ուրախութեամբ գլուխս վար կը դնեմ, եւ սիրով կը մեռնիմ: Արովհետեւ աղէկ կը զգամ որ իմ անմոռաց բարեկամիս ու սիրելի Հերմանիս ու Լուգովիկոսիս մահուընէն ի վեր, գրեթէ կէս մարդ եմ, որն որ քանի մը տարի յառաջ այնպէս չէի, եւ թէ կը տեսնեմ որ արագ ընթացքով գերեզման կ'ընթանամ: Բայց Աստուած ինչպէս որ կ'ուզէ այնպէս ըլլայ, միայն աս ուրախութիւնս կը բաղձամ, անկից ետքը ալ շատ սիրով աս աշխարհքէս կը հրաժարիմ:

Աս խօսքերը ըսելով Վալդեր, շատ յոգնած ըլլալով կաղնիի ծառի մը տակ նստաւ ու կռնակը անոր մամռապատ բունին կռթընցուց, խորունկ մտածմանց մէջ ընկղմած:

Ո՛հ, թէ որ գիտնար, կամ հեռուանց միայն գուշակէր, որ իր կեցած տեղը տարի մը յառաջ, գոթախտ Եղիսաբեթին Աննային ու Հերմանին հետ հանգչած տեղն է: Բայց ան բանը որ ինք ո՛չ կրնար գուշակել եւ ո՛չ ալ գիտնալ Աստուծոյ նախախնամութիւնն անոր իմացուց:

Գարձեալ մայրաքաղաքը դառնալու ճամբան սկսած էր երթալ, որպէս զի երթայ ծանուցանէ թէ մինչեւ հիմակ ըրած խուզարկութիւնն անօգուտ եղած է, բայց հաստատուն յուսով որոշած էր, որ ուրիշ ուղղութեամբ նորէն փնտռելու ելլէ: Երբ որ կանանչ խոտերուն վրայէն ոտք ելաւ, ու քովը խոտին վրայ դրած շիշը կ'առնուր, տեսաւ որ ոսկոյ ու պտուական քարի նման բան մը կը փայլի: Առաւ զանիկա գետնէն, բայց ինչպէս զարմացաւ մնաց, երբ տեսաւ թէ իր իշխանուհւոյն ադամանգով զարդարուած հարսանեաց մասնին է: Անոր ուրախութիւնն ու շնորհակալութեան զգածմունքը իմ գրիչս չի կրնար ստորագրել: Ջարմացած եւ ուրախացած գոչեց. Ջինքը դեռ չեն սպաննած, մահուրնէ ազատած են եղեր, հոս եկեր են, եւ դեռ կ'ապրին, եւ ես զիրենք, Աստուած կ'ուզէ նէ, անմիջապէս պիտ'որ գտնեմ, գարձեալ պիտ'որ տեսնեմ. ո՛հ, ինչ ուրախութիւն: Ներքին զարմացմամբ լցուած, ծընկան վրայ եկաւ, աչուրներն ու գալարած ձեռուրները դէպ ի երկինք վերցուց, եւ շնորհակալութեան աղօթք մ'սկսաւ ընել:

Աստի հիմա յանկարծ որոշումը փոխուեցաւ, եւ իր քայլերը դէպ ի մայրաքաղաք չուղղեց, հապա անտառին մէջերն սկսաւ երթալ նոր յուսով ու քաջալերուած, իր խուզարկութեան ձեռք զարկաւ: Ամէն անխափաճառի հիւղերն, ամէն ժայռերու խոռոջները գնաց փնտռեց: Եւ երկու օր ալ անցան, բայց Վալդեր դժբախտներուն եւ ո՛չ մէկ հետքը տեսաւ: Երրորդ օրն ուրիշ ուղղութեամբ բացուած ճամբէ մը սկսաւ երթալ: Հազիւ թէ աս ճամբէն հարիւր քայլի մը չափ յառաջ գացած էր, մէյ մ'ալ հեռուած ականջին ողբալու ձայն մը հասաւ: Հոն կեցաւ եւ ահանջ գրաւ, եւ սկսաւ դէպ ի ան ուղղութեամբ յառաջ երթալ: Եւ ինչ տեսնէ, մէկ ծեր, հիւանդ

տկար ու անօգնական անապատական մը կաղնիի ծառի մը տակ կարծր գետնի վրայ պառկած է: Տկար ծերը, իր մարած աչուքները վեր վերցուց, եւ յառաջ քան Վալդեր իրեն հարցում մ'ընելու, գոչեց ասիկա վերջին ճգամը մը. իմ Վալդերս, իմ բարեկամս, Երկինք ինձի ազատիչ մը մը խաւրեց: Եւ իր կէս մարած աչուքներէն սկըսաւ ուրախութեան արցունք գալ:

Վալդերին ապշուածիւնն ու զարմանքը կարգացողը կրնայ մտածել: Անմիջապէս ուրախութենէն լալով իր բարեկամին, ազնիւ քարտուղարին վրան ինկաւ: Իր ուրախութիւնը վերջին բարձրութեան հասաւ, երբ որ իր բարեկամին բերնէն լսեց թէ տառապեալները դեռ կ'ապրին, եւ սաքսոնիական սահմանին վրայ կուսանաց վանքին մէջ կը գտնուին: Վալդեր հիւժած ու տկարացած բարեկամն իր շիշին մէջի եղած գինւով ու մախաղին մէջ գտնուած կերակրով կազդուրեց:

Երբոր անապատականը զօրութիւն ստացաւ, իր բարեկամին պատմեց, թէ ինչպէս շուրջ տարի մը յառաջ դժբախներն աս անտառին անմարդաբնակ կողմերը գտնուեցան, եւ ապահով ապաստանարան մը տարուեցան, եւ թէ հիմա կուսանաց վանքը գացած են: Եւ թէ ինչպէս ինք շուտով դէպ ի Թուրինգիա ճամբայ ինկաւ, եւ ուրախութենէն սաստիկ վազելով ու յոգնելով աս կաղնիին տակ մահուան աւար կ'ըլլար թէ որ Աստուծոյ տեսչութեամբը Վալդեր զինքը չազատէր:

Եւ երկու բարեկամներն Աստուծոյ շնորհակալ ըլլալէն ետեւ, Վալդեր աճապարեց գնաց հեռու գտնուած ածխափածառի հիւղէն իր հիւանդ բարեկամին օգնութիւն մը բերելու: Քիչ մը ետքը նորէն քանի մը մարդիկներով դարձաւ եկաւ, որոնք տկարացած անապատականն իրենց բնակարանը տարին, եւ հոն զինքը շատ սիրով հոգացին:

Ինչպէս ուրախացաւ բարի ընտանիքը՝ մեռած կարծուած Եղիսաբեթին եւ իշխանին վրայ անապատականին տուած ծանօթութեան: Եւ աս ընտանիքին ըրած թախանձեցուցիչ աղաչանացը համար ալ քարտուղարն ստիպուեցաւ մինչեւ որ կատարեալ առողջանայ հոն իրենց հիւզը մնալ, ուր որ Վալդեր ուրախացուցիչ լրով քաղաք աճապարեց գնաց:

Երբ որ մայրաքաղքին մէջ՝ ուրախութեամբ ու ցնծութեամբ պատուական իշխանուհւոյն ու սիրելի իշխանին փառաւոր ընդունելութեան համար պատրաստութիւն կը տեսնուէր, ասդին Եղիսաբեթ ու Աննա Գոնգորտիա կոմսուհւոյն մահուան անկողնոյն քով կարեկցութեան անկեղծ արցունք կը թափէին: Ամենակարողն Աստուած, որն որ, չուզեր մեղաւորին մահը, հապա անոր դարձն ու յաւիտենական փրկութիւնը, երկիւղած Եղիսաբեթին եռանդնալից աղաչանքը լսած էր, ու մոլեկան սկեսրին աս աշխրհքէս ելլելէն յառաջ դեռ դարձի եւ ապաշխարութեան ժամանակ շնորհած էր:

Ուստի եւ հրաշքով մը դժբախտ Գոնգորտիային վրայէն խենթութիւնը գնաց, ու նորէն խելքը գլուխն եկաւ, որպէս զի անդիի աշխարհքը յաւիտենական դատապարտութեան մէջ չարթըննայ: Իր աչուքները սենեկին չորս կողմը պըտըտուց, եւ ներկայ եղողներուն մէջ ճանչցաւ նաեւ զԵղիսաբեթն ու Հերմանը, եւ ահարկու ձայնով մը նորէն մարեցաւ:

Աստուած իր գթութեամբը թող տուաւ որ նորէն արթըննայ, որպէս զի անով նաեւ հոգին ալ մեղաց սոսկալի քունէն արթըննայ: Եւ իրօք ալ Գոնգորտիան քիչ մը ետքն արթընցաւ, ու սաստիկ ատելութեամբ իր անցուցած ողորմելի կեանքը տեսաւ: Խեղճ տեսիլ մըն էր, թէ ինչպէս տառապեալ տիկինը յուսահատութեամբ ձե-

ոււրները իրարու միացուցած, մինչեւ հիմակ ան-
ցուցած գէշ կենացը վրայ կը զղջար եւ երկու
ձեռուրները թողութիւն խնդրելով Եղիսաբեթին
ու Հերմանին երկնցուց, ու սրտաշարժ ձայնով
մը գոչեց. կը ներէ՞ք արդեօք ձեր սպանչին:

Իոլոր սրտանց, տառապեալ մայր, պատասխա-
նեց ներքուստ այլայլած ազնիւ Եղիսաբեթ, եւ
ինք զինքն անոր տարածած բազկաց մէջ նետեց,
եւ երկուքն ալ կու լային: Նոյնպէս ներկայ ե-
ղողներուն աշուրներէն ալ արցունք սկսաւ գալ,
այսպիսի սրտաշարժ տեսարանին վրայ:

Ուրեմն նաեւ Աստուած ալ ինծի կը ներէ,
ըսաւ տառապեալը զղջման արտասուք թափելով:

Եղիսաբեթ ու հոն եղող քահանան կը ջա-
նային՝ աստուածեղէն կրօնին մխիթարութիւննե-
րովը, վստահութեան վառեալ բոցը միշտ վառ
բռնելու, որպէս զի երբեք չի մարի: Կնոջ վստա-
հութիւնն իսկզբան շատ տկար ու թոյլ էր, եւ
շատ հեղ ալ յուսահատութեան մէջ իյնալու
վախ կար: Բայց վերջապէս զղջման արտասուք
թափելով բարի քահանային իր յանցանքը խոս-
տովաննեցաւ, եւ վերջէն ալ ամենուն շինութեամբն
եւ այլայլութեամբ իբրեւ զղջացեալ անձ մը քա-
հանային ձեռքէն կենաց հացը, վերջին դոշակն
ընդունեցաւ:

Հիմակ ալ ապաշխարող կնիկը սրտին մէջ
հանգստութիւն մը կը զգար, եւ հանդարտ էր,
զղջման բայց կեցուցիչ արտասուքը շարունակ ա-
շուրներէն կը վազէր, ու կրնար ալ աղօթել եւ
յուսով լեցուած էր: Ինչպէս որ նաւակոծեալ
մը ծովուն ամեհի ալեացը մէջ լողացող գերան-
ներուն ձեռքը կ'երկրնցընէ ու կեանքին ունեցած
սիրովը զօրաւոր զանոնք կը բռնէ, այսպէս ալ
զղջացեալ կինը բոլոր սրտանց սուրբ եկեղեցւոյն
փրկութեան հարկաւոր միջոցներն եւ աստուա-
ծեղէն կրօնի մխիթարութիւնները գրկեց: Որով-

հետեւ աղէկ կը զգար որ մահուան կը մօտիկնայ, եւ թէ բաղձանք մը կ'ունեննար, որ Աստուծոյ արգար դատաւորին առջին շնորհք ու ողորմութիւն գտնէ:

Եղիսաբեթ եւ Աննա իրենց անհաշտ թշնամւոյն հետ կատարեալ հաշտուած ներքուստ լռութեամբ տառապելոյն դարձին վրայ կ'ուրախանային, եւ իրենց տեղէն ամենեւին չէին հեռանար: Այնպէս սիրով ու գորովով զինքը կը հոգային, իբր թէ իրենց հին բարերարն եղած ըլլար: Գոնգորտիա անոնց ազնուամտութիւնը ճանչցաւ, ու հարիւր անգամէն աւելի զղջման ու շնորհակալութեան արցունք թափելով թողութիւն խնդրեց: Եւ իշխանն ալ, զորն որ սպաննել ուզած էր, կրկին կրկին անգամ համբուրեց ու սիրով զղջացեալ սրտին վրայ ճնշեց: Եւ յայտնապէս խոստովանեցաւ որ Եղիսաբեթն ու Հերմանը իրօք մեռած կը կարծէր, եւ իր խիղճն ալ զինքը իբրեւ մարդասպան կ'ամբաստանէր: Որովհետեւ եղբայրն անոր փախուստը չէր յայտնած: Ո՛հ ինչպէս Աստուծոյ շնորհակալ կ'ըլլար որ աս սպանութիւնն արգելեց, եւ իրեն ալ զղջման ու դարձի ժամանակ շնորհեց:

Քանի գնաց սկսաւ տկարանալ, բայց իր Աստուծոյ վրայ ունեցած վստահութիւնը կենդանութիւն ու զօրութիւն կ'առնուր, եւ իր վերջին ժամը հնչեց: Աս ատեն քարտուղարը, անապատական ըսուածը, մեռնողին խուցը մտաւ, հիւանդը զինքը ճանչցաւ, ու ցրտացած ձեռքն անոր երկրնցուց թողութիւն խնդրելով. ասիկա կ'այլայլած անոր ձեռքը բռնեց, ու թողութիւն ըսաւ. Գոնգորտիա շուտ մը հոգին աւանդեց:

Ողորմած Աստուած ու գթած դատաւոր ողորմէ իրեն, գոչեցին ամէն ներկայ եղողները լալով եւ այլայլութեամբ:

Նաեւ վարդերն ալ ուրիշ ասպետներու ու

Ճամբորդներու հետ կուսանաց վանքն եկած էր: Ո՛հ ինչ այլայլութիւն պատճառող տեսիլ էր աս վերստին տեսութիւնը: Վալդեր ուրախութեան արցունք թափելով կու լար երբ որ իշխանուհւոյն ձեռքը պագաւ. ու սիրելի Հերմանը գիրկն առաւ: Հերմանն ալ ուրախութենէն կու լար, որովհետեւ զՎալդերը անհամեմատ կը սիրէր: Բայց Եղիսաբեթ աւելի ցաւէն կու լար քան թէ ուրախութենէն. որովհետեւ իր բովանդակ մեծութեան մէջ իր սիրելի էրկանը աննորոգելի կորուստը զգաց:

Հետեւեալ օրը հանգուցեալ Գոնգորտիային թաղումը կատարուեցաւ: Ամէնն ալ դագաղին ետեւէն գերեզման գացին, եւ նոյն իսկ ան ասպետներն ու ճամբորդները, որոնք քանի մ'օր յառաջ հանգուցելոյն, իբրեւ մարդասպան, անէծք կը կարգային, հիմա դարձած ու զղջացած հանգուցեալ ու սիրելի իշխանին մօրը բարիք կը բաղձային, անոր մոխրոյն հանգիստ ու հոգւոյն յաւիտենական խաղաղութիւն կը խնդրէին:

Ասկից ետքը Թուրինգիա դառնալու պատրաստութիւն տեսնուեցաւ, եւ Եղիսաբեթ ստիպուեցաւ աս մտերիմ ու սիրելի բարեկամէն, աղնիւ ու պատուական արասուհիէն բաժնուիլ: Երկու կողման ալ հրաժարման ցաւը մեծ էր, ու նաեւ բոլոր մնացած կուսանք, որոնք զԵղիսաբեթ իբրեւ սուրբ կը յարգէին, ցաւերնէն կու լային, երբ որ անիկա Աննային ու Հերմանին հետ կառք մտաւ:

Չեր խաղաղ պատերուն մէջ վայելած բարիքները, Աստուած վարձատրէ, գոչեց բաժնուած ատեն երախտագէտ Եղիսաբեթ, ու կառքն սկըսաւ դառնալ:

Փառաւոր կառքը, բոլոր գաւառին մէջ գեղէ գեղ անցած ատեն շատ կամաց կը քալէր, որովհետեւ ամէն կողմ ճամբաները մարդիկներով լեցուած էին, որոնք եկած էին, նորէն գտնուած

ամենասիրելի երկրին մայրն ու յուսալից իշխանը տեսնելու : Հինաւուրց ծերերն ու հիւանդներն իրենք զիրենք անկողնով ճամբաները տանել կուտային, եւ մայրերն իրենց որդիքը գիրկերնին առած մատով բարեպաշտ իշխանուհին ու պղտիկ իշխանը կը ցուցունէին : Նոյն իսկ մերձակայ վանքերուն բարեպաշտ հայրերը իրենց խաղաղ խղիկներն թող տուած էին եւ ուրախ ժողովրդեան հետ միացած Ձեղ Աստուծոյ գոհութեան երգը կ'երգէին : Ամենուն աչուրներէն ուրախութեան արցունք կը հոսէին :

Ահ տեսէք ինչպէս բարի իշխանուհին նիհարացեր է. խեղճը շատ բան կրած պիտ'որ ըլլայ, շատ բանի համբերած պիտ'որ ըլլայ, կ'ըսէին մէկ կողմանէ, միւս կողմը Մեր սիրելի իշխանուհին սուրբի մը կը նմանի. իսկ ամէնը միաբերան այսպէս կ'ըսէին. Փառք Աստուծոյ, դարձեալ երջանիկ ենք, ինչու որ երկրիս մայրը նորէն ստացանք :

Եղիսաբեթ ասոնք լսելով, սիրան երախտագիտութենէ եւ ուրախութենէ ելած էր, եւ աչուրները արօտասուաց մէջ կը լողային :

Ա երջանակէս ժողովրդեան ցնծութեան աղաղակներով գեղեցիկ ու փառաւոր զարդարուած կամարէ մ'անցնելով դղեակը մտան : Մէջինները դուրս ցաթքեցին, ու ճերմակ զգեստներ հագած աղջիկներ անոնց առջեւ ծաղիկ կը սփռէին :

Ժողովուրդը գղեկին առջեւ շարունակ կեցցէ Եղիսաբեթ, կեցցէ Հերման աղաղակներով օգը կը թնդացրնէին, երբոր անոնք վերը սրահն էին, ուր որ ժողովուած անուականք ուրախութեամբ զինքն ընդունեցան ու իշխանուհւոյն նորէն իրենց մեծարանքը ցուցուցին :

ԳԼՈՒԽ ԻԱ.

Ողորմած քոյրերը:

Բարեպաշտ Եղիսաբեթը, որուն սրտին մէջ աշխարհքիս սէրը բոլորովին մարած եւ անոր տեղ երկնաւոր զգացմունքներ եկած էին, չէր ուզեր որ իշխանական պատիւը նորէն ընդունելու վրայ խօսուի: Շատ աւելի կ'ուզէր, որ կրօնի մը մէջ աշխարհքիս փառաւորութիւններէն ու խռովալից ուրախութիւններէն հեռու, անծանօթ իր կենաց մնացած օրերն անցընէ: Բայց իր ապագայ իշխան ըլլալու որդւոյն եւ անոր որդւոցն իրեն ունեցած հարկաւորութիւնը մտածելով, միտքը փոխեց: Ժողովրդեան հասարակաց ձայնը Աստուծոյ ձայնը համարելով՝ անոնց ազաչանաց զիջաւ, ու դարձեալ կառավարութիւնը ձեռքն առաւ, որուն վրայ բոլոր Թուրքիա, Հէսսէն կը խայտար ու կը ցնծար:

Ուղղովոս Պարիլայի կոմսը, Վալդեր կրայֆէնշդայնի կոմսը, ու Ֆլանք քարտուղարը, ամէնն ալ երեւելի ու հայրենեաց բարեկամ մարդիկ, իշխանուհւոյն առաջին խորհրդականներ անուանուեցան: Ուստի նորէն արքունեաց մէջէն արդարութիւնն, ուղղութիւնն ու բարերարութիւնն սկսաւ բղխել, եւ հպատակաց երջանկութիւնը նորէն ծաղկեցաւ: Աղքատներն ու տառապեալները բարերար երկրին մօր քով նորէն ազատ կրնային երթալ, եւ ինք ամենեւին մէկն ալ անպարգեւ եւ անմխիթար չէր թողուր: Եւ այսպէս աղքատաց խրճիթներուն, տնակներուն մէջ՝ գործունէութեան, գոհութեան եւ երախտագիտութեան առաքինութիւնները դարձեալ մտան: Ամէն կողմ հպատակաց բերնէն ասի կը հնչէր, Գարձեալ երջանկացանք:

Ամէնն ալ երջանիկ էին, բաց ի Եղիսաբեթէն,

որն որ ուրիշները երջանիկ ընելու համար կ'ապրէր: Սիրելի Լուգովիկոսը, ազնիւ ամուսինը չէր կրնար մոռնալ: Իրեն երկրորդ անգամ ամուսնանալու խորհուրդ տուին, բայց ինք բացայայտ իր որոշումն ըսաւ, որ երբեք պիտ'որ չամուսնանայ: Սգոյ զգեստը ամենեւին չի մերկացաւ: Օր չանցաւ, որուն մէջ իր սիրելի էրկանը գերեզմանին վրայ չլայ կամ չաղօթէ, կամ քնարով սգալի երգ մը չերգէ:

Երկու գեղեցիկ ու երջանիկ տարիներ անցած էին, երբ որ մեծ դժբախտութիւն մ'եկաւ բոլոր Գերմանիայի վրայ, եւ Աստուած առանձին թուրինգիան խստիւ փորձեց ու նեղեց: Երկու ձախող տարիներ իրարու յաջորդեցին եւ ասոր վրայ նաեւ սղութիւն, քաղց ու տարափոխիկ ախա մ'ալ եկաւ: Եղիսաբեթ ազնիւ, մարդասէր տիկինը իր խեղճ հպատակաց վրայ կ'ողբար, որոնք հաց կը պոռային, որոնց ինք ուզելովն ալ բաւական չէր կրնար հասցընել: Հասարակաց ցորենի շտեմարանները դատարկ էին, եւ մինակ օտար երկիրներէն կրնար ցորեն գնուիլ եւ ան ալ սուղ:

Բայց ինչ ընէ բարի ու մարդասէր Եղիսաբեթ: Արքունեաց գանձը պարպեց, ու ցորեն գնեց, որպէս զի քաղցեալ երկրին տղաքը հացով յագեցընէ: Եւ վերջապէս նաեւ իր զարդերն ալ ծախեց, եւ ամէն օր իր պալատին մէջ աղքատները կը կերակրէր: Ինք աղքատ կ'ապրէր որպէս զի աղքատները կարենայ կշտացընել: Աս բանս իրենք ալ գիտէին եւ ասոր համար ալ ջերմ արտասուօք հացը անոր ձեռքէն կ'ընդունէին: Պալատը աղքատանոց կամ որբանոց մը դարձած էր, ուր ամէն օր հարիւրաւոր քաղցեալներ անօթի կը մտնէին ու կուշտ դուրս կ'ելէին:

Ամէն կողմանէ, երկրին մօրը երթանք, եւ անի զմեզ անօթի չի թողուր կ'ըսէին: Այսպէս ամէն օր աղքատաց թիւը կ'աւելնար, որոնք իրենց մօրը

կ'երթային հաց խնդրելու: Խեղճութիւնը մեծ էր, բայց ազնիւ իշխանուհւոյն սրտին ցաւն ալ նուազ չէր: Որովհետեւ աղքատներէն շատերը կը հիւանդանային, հեռու տեղերէն եկած ըլլալով: Բայց ի՞նչ պէտք էր ընել: Մէկ հատիկ, պզտիկ հիւանդանոցը արդէն հիւանդներով լցուած էր, եւ հիւանդներուն թիւն ալ օրէ օր կ'աւելնար:

Բայց ի՞նչ ըրաւ դարձեալ ազնիւ իշխանուհին: Իր պալատին մեծ խուցերը տուաւ որ հիւանդանոց ընեն, իրենց անկողին ու կերակուր կը հոգար ու պալատը բժիշկ ալ կանչեց: Բայց ասկից ալ աւելի բան մ'ըրաւ: Որովհետեւ հիւանդները հոգացողներ կը պակսէին, իր աղախիններով քաղքին կըրթեալ աղջիկները իր քովը ժողվեց, եւ իրենց հետ այնպէս սրտանց խօսեցաւ, որ ամենուն ալ աչքէն արցունք գալու սկսաւ: Շատ աղու խօսքերով նկարագրեց անոնց տառապեալներուն նեղութիւնն ու թշուառութիւնը, իրենց պարտուց հարկաւորութիւնը, եւ թէ ինչպէս Աստուած կը հաճի այսպիսի բարեգործութեանց վրայ, եւ թէ վարձք խոստացած է անոնց՝ որոնք իր սիրոյն համար ընկերին բարեգործութիւններ կ'ընեն: Եւ աս ալ ըսելու չմոռցաւ, որ այսպիսի բարեգործութիւնները դժուար ըլլալուն համար արտաքոյ կարգի եղբայսիրութիւն, անձնուրացութիւն եւ անձնանուիրութիւն կը պահանջեն: Եւ քրիստոնէական սիրոյ գործքերուն մէջէն անոնք նաեւ յառաջ բերաւ, որոնց որ՝ Աստուծոյ գեղեցիկ խոստումներն եղած են: Խօսքը մընցընելէն ետեւ իրենց ըսաւ, ուրեմն ով որ ձեզմէ մեր աստուածեղէն փրկիչը կը սիրէ ու թողեալ լքեալ հիւանդներուն խեղճութեանը շուրթ ունի, թող իմ օրինակիս հետեւի ու տառապեալներուն օգնութեան փութայ:

Ասկից ետեւ մարդասէր տիկինը հիւանդանոց շնաց, եւ ողորմած քերց գործքերը սկսաւ ընել:

իր օրինակն աւելի ազդեցութիւն ըրաւ քան թէ իր խօսքերը, որովհետեւ օրիորդներէն մէկն ալ ետ չկեցաւ: Եւ այսպէս մէկ օրուան մէջ ողորմած քերց ընկերութիւն մը կազմուեցաւ, որոնք արտաքոյ կարգի անձնուրացութեամբ պատրաստ էին, իրենց եղբարցը կարօտութիւնն ու թշուառութիւնը մեղմելու, ու զանոնք՝ Աստուծոյ օգնականութեամբ, անոնց հիւանդութեան գարշութենէն չզգուելով, մահուան ձեռքէն ազատելու:

Աղիսաբեթ իշխանուհի ըլլալով ամենեւին չէր ամբշնար, աս առաջին ողորմած քերց ընկերութեան գլխաւոր անուանուելու: Մանաւանդ թէ ինք միւսներէն աւելի գործունեայ էր, եւ իր բարի օրինակը միւսներն աւելի եւս կը բորբոքէր: Ո՛հ որո՞ն սիրտն առանց շարժելու, եւ որո՞ն աչուքները առանց արտասուքի կրնար մնալ, որն որ այսպիսի մէկ արտաքոյ կարգի եղբայրսիրութիւն մը տեսնէր:

Աս ազնիւ քոյրերը, որոնք իրենց եղբարցը այսպիսի անշահասէր բարեգործութիւն մը կ'ընէին, առողջացածներուն շնորհակալութեան արտասուաց եւ իրենց զուարթ խղճին մէջ արդէն քաղցր վարձքերնին կը գտնէին: Հիւանդներէն մինակ մէկ քանին մեռած, իսկ մեծ մասը դարձեալ առողջացած էին: Ո՛հ ինչպէս շնորհակալ կ'ըլլային, իրենց կենաց ազատիչներուն, եւ ինչպէս կը գովէին, բարերար ու հրեշտակային տիկինը:

Աս մեծ կարօտութիւնն ու հիւանդութիւնն անցնելէն ետքն ալ, ողորմած քերց ընկերութիւնը չլուծուեցաւ: Եղիսաբեթ իր ստակովը հիւանդանոցը մեծցրնել տուաւ, գլուխ դրամոց հաստատեց, ազնուական ընկերութեան օրէնք տուաւ զորոնք քոյրերը հաւատարմութեամբ պահեցին, եւ իրենց յաջորդացը համար մեծ արդիւնք ստացան:



29712

